

ԵՐԾԱՆԻԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ  
ՍՈՒՍԱՆՆԱԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ

[ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱՆՍԱՐԱՆ ]

ԳԱՐԵԳԻՆ ՆԺՊԵՅԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ  
ՔՆՈՐՈՇ ԼԵՃՈՒՂՈՏԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՋԱՆԻԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ  
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՒՈՐԳԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ  
ԲՆՈՐՈՇ ԼԵԶՈՒԱՈՃԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2015

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3(5Հ)  
Գ 479

Հրատարակութեան է երաշխաւորել  
ԵՊՀ Հայագիտական հետազոտութիւնների  
ինստիտուտի գիտական խորհուրդը

**Խմբագիր՝** Բան. գիտ. դոկտոր Ա. Մադոյեան

**ԳԵԻՈՐԳԵԱՆ ԵՐՁԱՆԻԿ**

Գ 479 ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻԻՆՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ  
ԼԷԶՈՒԱՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ/ Ե. ԳԵԻՈՐԳԵԱՆ, Ս.  
ԳԵԻՈՐԳԵԱՆ.- ԵՐ.: ԵՊՀ ՀՐԱՏ., 2015.- 194 էջ + 1 էջ ՆԵՐՂԻՐ:

Աշխատութիւնն ամբողջական ուսումնասիրութիւն է՝ նուիրում Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւնների լեզուին ու ոճին: Կատարում է փաստական առատ նիւթի հիման վրա, սիրով ու ջերմութեամբ՝ որպէս երախտիքի ու գնահատանքի խօսք: Առաջին անգամ ընթերցողին են ներկայացուած հեղինակի ճոխ ու յուզառատ լեզուի եւ ոճի աչքի զարնող կողմերը (գրաբարի եւ արեւմտահայերէնի տարրերի գործածութիւն, պատկերաւորման եւ ճարտասանական միջոցներ, կուտ ու մատչելի շարադրանքի եղանակներ): Յոյց է տրուած, որ դրանք հաւասարապէս առկայ են գիտական, հրապարակախօսական, յուշագրական երկերում, պաշտօնական գրութիւններում, նամակներում, զինուորական կոչներում ու հրամաններում:

Ի տարբերութիւն մամուլի եւ սոցիալական ցանցերի որոշ հրապարակումների, որոնցում կարծես ձգտում են թարգմանել Նժդեհին ժամանակակից լեզուով, փոխում են ուղղագրութիւնը, այստեղ պահպանուած է թէ՛ նրա լեզուն, թէ՛ աւանդական ուղղագրութիւնը:

Գիրքը նախատեսուած է բանասերների համար ընդհանրապէս, նժդեհագիտութեան հարցերով զբաղողների համար՝ մասնաւորապէս եւ, իհարկէ, բոլոր այն հայերի, որոնց համար թանկ է Գ. Նժդեհի անուան հետ կապուած ցանկացած ուսումնասիրութիւն:

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-5-8084-2002-1

© ԵՊՀ հրատ., 2015  
© Երջանիկ Գեւորգեան,  
Սուսաննա Գեւորգեան, 2015



## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կարդալով Գարեգին Նժդեհի ստեղծագործությունները՝ առաջին ընդհանրացումը, որ ծագում է լեզուի ու ոճի շուրջ առաջացած մտքերի յորձանուտում, գուգորդությունն է մի հնավայր պեղելու հետ: Բացուող հնավայրի հողի ամեն մի շերտի հետ աչքիդ առաջ են շարունակ յառնում մի մշակոյթի տարբեր կողմեր՝ նորանոր կառոյցներ, այլեւայլ գանձեր, գեղեցկություններ՝ հոգեւոր ու նիւթական արժէքներ: Նոյն կերպ էլ Գարեգին Նժդեհի գրուածքների իւրաքանչիւր պարբերութիւնում, շատ հատուածների իւրաքանչիւր տողում (հէնց այդպէս՝ տողում), յայտնաբերում ես մտքի մի գոհար, ոճական միջոցի շողշողուն կիրառութիւն եւ կամ, մեծն բանաստեղծի բնորոշմամբ՝ «բառ, որ աշխարհ արժէ», եւ այս ամէնը կուռ տրամաբանութեան հոսանքն ի վար, որն ընթերցողին տանում է դէպի հեղինակի նպատակակէտը:

Կարելի է հակամէտ կամ հակադրամէտ լինել նրա այս կամ այն գաղափարին. տարբեր ժամանակների եւ ուղղութիւնների մտաւորականներն այսպիսի վերաբերմունք էլ հէնց ունեցել են եւ ունեն: Մենք, որ ջատագովներն ենք հայրենանուէր մտածողի գաղափարախօսութեան, նրա բազմանիստ գրական ժառանգութեան բովանդակային, գաղափարական, ժամանակներին տրուած գնահատանքների վերլուծութիւնը թողնելով գրականագետներին, պատմաբաններին, փիլիսոփաներին, քաղաքագետներին, խնդիր ենք դրել կատարելու **լեզուական ու ոճական քննութիւն**: Մի այսպիսի նպատակ է յառնում առջեւդ, երբ կարդալով Գ. Նժդեհի գիտական աշխատութիւնները, հրապարակախօսական յօդուածները, յուշագրութիւնները, խոհագրութիւնները, նամակները, նաեւ պաշտօնական գրութիւնները, զինուորական կոչերը, զգում եւ ապրում ես նրանով, թէ ինչ հսկայական

նշանակութիւն է տրուած լեզուին եւ ինչ խնամքով ու ճշտութեամբ է ընտրուած ոճական միջոցը՝ ժանրին համապատասխան:

Այս ուսումնասիրութեան շրջանակներից դուրս է Գարեգին Նժդեհի լեզուական հայեացքների ամբողջական քննութիւնը: Ստորեւ կանգ կառնենք երեք հիմնադրոյթային սկզբունքների վրայ՝ իբրեւ առաւել կարեւորների, որոնցով առաջնորդուել է նա իր ոգեշունչ խօսքը կառուցելիս:

**ա. Լեզուն՝ հայրենասիրութեան առաջնորդ:** Հայրենասիրութիւնը եւ մայրենի լեզուն փոխադարձաբար պայմանաւորուած են մէկը միւսով: Մերը դէպի մայրենի լեզուն, դրա իմացութիւնը, ուսումնասիրումը, իրենց հետ բերում են հայրենասիրութիւն. իր հերթին հայրենասէր լինել նշանակում է սիրել մայրենի լեզուն: Մարդիկ չեն կարող հայրենասէր լինել, եթէ ջանքեր չեն թափում իւրացնելու մայրենի լեզուն: Իր *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ Գ. Նժդեհը, *մայրենի* լեզուն նկատի ունենալով, պատգամում է. «Լեզուն ժողովրդի յարատեւման պայմանն է: Լեզուի մահը արագացնում է ժողովրդի հոգեւոր մահը: Ահա թէ ինչու մասնաւորապէս ցեղակրօնը հայ մարդու հետ պէտք է խօսի հայերէն: Իսկ լեզուն կենդանի է ու զարգանում է, երբ ամենուր ու մշտատեւ գործածութիւն ունի, այսինքն՝ պետական է, իշխանութիւնների ու ժողովրդի յոգածութեան առարկան է»<sup>1</sup>: Ելնելով այս ճշմարտութիւնից՝ 1921 թ. յունիսի 7-ին հաշտութեան եւ ռազմական գործողութիւնները Միւնիքում դադարեցնելու մասին ուղերձում՝ ուղղուած Խորհրդային Հայաստանի յեղկոմին, ի շարս սոցիալական, իրաւական, քաղաքական եւ այլ դրոյթների, Գարեգին Նժդեհը Ջ. կետում պահանջում էր՝ հայ լեզուի պետական իրաւունքի վերականգնում եւ նրա պարտադիր գործածութիւնը պետական հիմնարկութիւններում ու բանակում: Այլ առիթով, *Բանտային գրատումներ*-ում, Նժդեհը մատնանշում է, որ համեմատական ուսումնասիրութիւններով

---

<sup>1</sup> Գ. Նժդեհ, *Հատրնտիր*, «Ամարաս» հրատ., Երեւան, 2006 թ.: Այսույետեւ սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [Հ, էջ] տեսքով:

կարելի է որոշել հայ ժողովրդի լեզուի «... որ ասել է՝ նաև նրա գիտակցութեան, նրա ոգու հասակը, ապա՝ նրա տեղը մարդկութեան մեծ ընտանիքում» [Հ, էջ 400]:

Այսպէս, լեզուի եւ հայրենասիրութեան կապը լավագոյնս երեւում է նախ հեղինակի ստեղծագործական ժառանգութեան մէջ: Սոյն կէտի վերջում մէջբերենք մի հատուած *Անձնավկայութիւն* յօդուածից, որտեղ համատեղ հնչում են խանդադատանք ու հպարտութիւն դէպի հայրենիքը եւ հայերէնը. «Կեանքիս գարնան՝ պատանու իմ միտքն ու սիրտը իրենց սնուցիչներն ունէին. - Արարա՛տը, ... - Հայ լեզուն, որ օտար լուծ ու նւաստութիւն չճանաչէց, ու մնաց ստեղծագործ անգամ պատմութեան ամենամօթին դարերում, երբ օտարը կ'իշխէր Հայաստանում» [Հ, էջ 657]:

**բ. Լեզուն եւ անհատի բարոյական կերպարը:** Միմեանցով պայմանաւորուած են նաև լեզուն, խօսքը եւ մարդու հոգու բովանդակութիւնը: Առաջինը արտայայտում է մեր մտածումները, ասլոյումները, ուրեմն՝ ամբողջութեան մէջ՝ մեր բարոյական նկարագիրը: Մէկին մոտիկից ճանաչելու համար պէտք է լսել նրա խօսքը: Խօսքն իր հերթին ազդում է մեր մտքերի վրայ, մեր հոգեկան ներաշխարհի վրայ. «... չի կարելի ծաղրել սրբութիւնը եւ շարունակել երկիւղած լինել նրա նկատմամբ: Չի կարելի քամահրել մէկին եւ շարունակել յարգալից լինել դէպ նրա անձը: ... Չի կարելի զազրախօս լինել եւ բարձր ու կիրթ նկարագիր ունենալ: Ինչպէս եւ չի կարելի անբարոյական, բայց եւ սրբախօս լինել: Գոռեկաբանելով, մարդս խրախուսում է եւ սնուցանում իր ստոր մտածումները ...» [Հ, էջ 105]: Ելնելով յիշեալ դիտարկումից՝ Գ. Նժդեհը, իր *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ երիտասարդութեանը յորդորում է. «**Ազնւացրո՛ւ լեզուդ, խօսքդ**, իսկ այդ անելու համար, նախ ազնւացրո՛ւ մտաւոր կեանքդ» [Հ, էջ 105]: Աւելին. հեղինակը հասնում է մեծ ընդհանրացումների. ինչպիսի անհատներից է բաղկացած հանրութիւնը, այդպիսիք են վերջինիս վարքը, ըմբռնումները եւ լեզուն ու խօսքը: Այստեղից էլ յետեւեալ դիտարկումը. «Մի ընտա-

նիք, մի հասարակութիւն, մի ժողովուրդ ճանաչելու համար **պէտք է լսել նրա մէջ հնչող խօսքը**» [Հ, էջ 543]:

Խօսքը նաեւ ցուցիչն է այն բանի, թէ խօսողն ինչ չափով է տիրապետում քննարկուող նիւթին. «Երբ մէկը լեզուական տարազները գործածում է առանց որոշ բովանդակութիւն դնելու նրանց մէջ, մատնում է, որ իրեն պակասում է անսխալ հասկացողութիւնը այն բանի մասին, որից նա խօսում է» [Հ, էջ 543]: Պէտք է լինել ստեղծագործող եւ ո՛չ օրինակող (ուսուցանում է նա), ունենալ սեփական ասելիքը եւ այդ ասելիքը ներկայացնելու սեփական եղանակը:

**գ. Խօսքի ազդեցութիւնը զանգուածների վրայ:** Իր տարբեր ստեղծագործութիւններում տարբեր առիթներով Գ. Նժդեհը պարզաբանում է խօսքի թէ՛ դրական, թէ՛ բացասական ազդեցութիւնը զանգուածների վրայ: Այստեղ վճռական դերակատարութիւն ունի մտաւորականութիւնը: Նախ խօսքը կարող է գրգռել, պառակտել, բաժան-բաժան անել ժողովրդին: Ե՛րբ է դա տեղի ունենում, երբ խօսքը կորցնում է «իր լոյսն ու ջերմութիւնը», երբ ներքին հոգեւոր իրականութեան արտայայտիչն ու արտայայտութիւնը չէ, երբ սնամէջ է, անիմաստ: Այդպիսին է այն, երբ կորչում են մտաւորականութեան խօսքի յստակութիւնը ու որոշակիութիւնը: Այդպիսի խօսքը չարիք է նորահաս սերունդի համար. «Պէտք է խոստովանել, որ մեր ժողովրդի անմիաբանութեան պատճառներէն մէկն էլ հենց նման խօսքն է» [Հ, էջ 543], - գրում է Գ. Նժդեհը 1938 թուին իր ժամանակի մասին *Ինչո՞ւ տարօնակա- նութիւն* յօդուածում:

Բայց խօսքը լինում է ե՛ւ միաբանող եւ ժողովրդին տանում է դէպի հաղթանակներ: Այդ այն խօսքն է, որը, հեղինակի բնորոշմամբ, հաղորդութեան ազդեցութիւն է ունենում, օժտուած է երկաթէ տրամաբանութեամբ ու զրնգում է որպէս դամասկոսեան սուր. «... միշտ պատկերաւոր ու սեղմ, սրտերին՝ կրակ, բազուկներին՝ թափ, կամքերին մղում տվողը խօսքն է: ... որքան զօրա-



ւոր, այնքան մեծ է նրա հմայքը»<sup>2</sup>: Ահա նման յատկանիշներով օժտուած խօսքով միաբանող հոգեբանական ազդեցութիւն են ունեցել զանգուածների վրայ այն ժողովրդների առաջնորդները, զօրավարները, որոնք հասել են մեծ ձեռքբերումների կամ հերոս-տրատեան փառքի, ոսկե կամ արնաթաթախ գրիչներով պատմութեան էջերում գրելով իրենց անունները (Վարդան Մամիկոնեան, Ալեքսանդր Սուվորով, Նապոլեօն Բոնապարտ, Ադօլֆ Հիտլեր եւ այլք): Նժդեհը, եղավ այնպիսին, ինչպիսին ինքը պահանջում էր լինել առաջնորդներից, երբ սպարապետն էր Լեռնահայաստանում կամ հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախօս, բոցալեզու մտաւորական՝ արտասահմանում, ընդհուպ մինչեւ իր երկրային կեանքի աւարտը՝ 1955 թիւը: Բնակավայրերում տարածուող նրա կոչերը ոգեշնչում ու սատարում էին սովեալ բնակչութեանը՝ գրեթէ երկու տարի դիմագրաւելու թշնամիներին: Մարտերից առաջ կարդացած յորդորները գրոհի էին տանում գրեթէ առանց ռազմամթերքի զինուորներին՝ հաղթելու շատ աւելի բազմաքանակ ու զինավառ հակառակորդին: Գործում էր յիշեալ երրորդ սկզբունքը. «Այն ինչ որ յաճախ դժուարանում է կատարել արդիական հրձիգ թնդանոթը, հեշտութեամբ կատարում է դեկավարի զօրաւոր խօսքը: Խօսքը, երբեմն հրամայող ու իշխող, երբեմն կանչող ու մղող ... **խօսքը – դա ինքը դեկավարն է: Յաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, պէտք է ե՛ւ զօրաւոր խօսքը:** ... առանց զօրաւոր խօսքի՝ չկայ իշխանութիւն հոգիների վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն» [ԼԳ]:

**Եւ այսպէս. հայրենասէր լինել, նշանակում է՝ սիրել մայրենի լեզուն:** Լեզուն արտայայտում է մարդու բարոյեական կերպարը, իսկ խօսքը Վճռորոշ ներգործութիւն է ունենում զանգուածների վրայ՝ նրանց մղելով ի գործ: Այս երեք առաջնահերթ սկզբունք-

---

<sup>2</sup> Գ. Նժդեհ, *Լեռնահայաստանի գոյամարտը*, «Հայրենիք» ամսագիր, թիւ 11, 1923 թ.: Այսույետեւ տոյն ստեղծագործութեան վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ԼԳ] հապաման տեսքով:

ների հետ է անցնում ընթերցողը Նժդեհի գրական ժառանգութեան ուսումնասիրութեան իր ուղին:

Նշուածը գուգակցում է ճարտասանական արուեստի հետ, որն արտացոլուած է խօսքը կառուցելու եւ շարադրելու հմտութիւններում, ինչը մեր յետագայ քննութեան խնդիրներից է, իսկ Նժդեհի բանաւոր խօսքի ուժը մշտապէս յիշատակում է նրա ժամանակակիցների յուշերում:

Որպէս ճարտասանական միջոց է օգտագործում շէշտը՝ ընդգծելու, առանձնացնելու համար հատկապէս որեւէ բառ՝ վերջինիս վրայ ընթերցողի ուշադրութիւնը կենտրոնացնելու նպատակով: Այս հնարն ակնբախ կերպով շատ ու շատ յաճախ է գործածում եւ բոլոր ստեղծագործութիւններում, իհարկէ առաջին հերթին կոչականներում ու բայի հրամայականի բառաձևերում, սակայն, թերեւս ոչ պակաս, նաեւ մյուս խօսքի մասերի պատկանելութեան բառերում:

Նիւթի բերումով տուեալ համատեքստը կուռ դարձնելու, ասելիքը հատու լինելու, խօսքային գունատրում տալու եւ այլ նպատակներով յիշում են առաւելապէս լատիներէն, ապա նաեւ ֆրանսերէն, ռուսերէն, անգլերէն, իտալերէն, բուլղարերէն թեւաւոր խօսքեր եւ զանազան արտայայտութիւններ, փոխառեալ բնորոշ բառեր:

Առանձնակի հիացմունքով կարելի է խօսել նժդեհաստեղծ հարիւրաւոր բառերի մասին, որոնք կազմուել են խորիմաստօրէն եւ նրբօրէն՝ հաշուի առնելով հայերէնի բառաբարդման հնարաւորութիւնները: Մենք խնամքով հաւաքել ենք լեզուական վարպետութեան մի-մի նմուշ այդ բառերը, քննութեան առել՝ առանձին գրքով ընթերցողին ներկայացնելու նպատակով:

Վերջապէս լեզուաոճական միջոցները ...՝ մարգարիտների նման շաղ եկած հեղինակի ողջ գրական անդաստանում, որոնք եւ մտադիր ենք այստեղ քննութեան առնելու: Մուտք գործենք, ուրեմն, ընթերցողի հետ Գարեգին Նժդեհի լեզուաշխարհը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

#### § 1. Բաներ

Գարեգին Նժդեհի գրական ժառանգությունն ուսումնասիրելիս անմիջապես աչքի են զարնում մայրենի լեզուի՝ հեղինակի քաջիմացությունը՝ ոչ միայն իր ժամանակի արեւելահայերենի, այլև գրաբարի ու արեւմտահայերենի, ինչպես նաև բառային ճոխությունը, գրելու իւրօրինակ ոճը, բառապաշարի բոլոր շերտերին դիմելու սկզբունքը: Հարկ է յիշատակել, որ նա հայեցի կրթություն ստացել է միայն իր ծննդավայր Կզնուտ գիւղի ծխական դպրոցում, ապա սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնում (նոյնպէս՝ ռուսերէն) եւ ապա Սօֆիայի ռազմական սպայական ուսումնարանում՝ բուլղարերէն: Լինելով զինուորական՝ նրա գիտակցական կեանքի մի հատուածը՝ մօտ ութ տարի, անցել է ռազմադաշտերում, մեկ այլ հատուածը՝ տասնհինգ տարի, բանտերում՝ որպէս յեղափոխական ու հասարակական գործիչ:

Ուրեմն՝ նրա լեզուի հարստությունը բնատուր նաեւ բանասիրական գերօժտուածութեան, ինքնազարգացման արդիւնք է, եւ ապա պայմանաւորուած է մայրենի հայերէնի ու հայրենասիրութեան փոխկապակցութեամբ: *Ինքնակենսագրություն* [Հ, էջ 430] յուշագրությունից տեղեկանում ենք, որ 1921 թ. կեսերին, Հայաստանից հեռանալիս, իր հետ է վերցնում Արաքսի ափին խփուած վագրի մորթին. « ... Սիւնեաց Դրօշակը, ... եւ մի հին Հայկազեան բառարան – իմ միակ մխիթարիչը տարագրանքի մէջ» [Հ, էջ 432]: Ինչպէս ցոյց կտան սոյն յօդուածում բերուելիք փաստերը, նա

հիմնովին ուսումնասիրել է այդ բառարանը եւ իր երկերը շարադրելիս մշտապէս դիմել դրանում մատուցուած բառագանձին: Նժդեհի ստեղծագործութիւններում, ինչ ժանրի էլ պատկանելիս լինեն, հնաբանութիւններն աչքի են զարնում: Նկատի ունենք մասնաւորապէս այն բառերն ու բառային տարբերակները, որոնք սկսած արդէն Սո. Մալխասեանցի *Հայերէն բացատրական բառարան*-ից (1944 -1945 թթ.), համարում են հնացած՝ ունենալով համապատասխան նշան՝ շրջանագիծ կետով, իսկ յետագայ հայերէնի այլեւայլ կարգի բառարաններում «հնց.» (հնացած) ոճական նշումը: Գլխում կքննուեն նաեւ գրաբարից ժառանգած, բայց այժմ անգործածական քերականական տարրերը:

Սոյն ենթագլխում կանդրադառնանք բառերին: Գարեգին Նժդեհը հնաբանութիւնների է դիմում սկզբունքօրէն՝ հետամուտ ազգի բոլոր սերունդների յաջորդափոխութեան անխզելի կապին՝ իր բոլոր դրսեւորումներով՝ պատմական, աշխարհագրական, բնախօսական, հոգեբանական, մշակութային եւ, ինչ խօսք, լեզուական: Դրանք մեզ համար են հնաբանութիւններ, քանի որ ներկայումս կամ չեն գործածուում, կամ հազուադէպ են գործածուում, բայց ոչ Նժդեհի, ով համարում է նոյնքան պահանջուող, որքան իր ժամանակի այլ կարգի բառերը: Նա գործնականում ներկայացնում է ժամանակների շարունակական լինելը լեզուական առումով, համընդգրկուն բնոյթը: Խնդրոյ առարկայ հարցի հետ կապուած հարկ կլինի կանգ առնել հետեւեալ իրողութիւնների վրայ.

*ա.* Նոյնանիշ բառերի առկայութեան դէպքում նախապատուութիւնը տրուում է հնացածի, յաճախ մոռացուածի գործածութեանը: Ինչպէս. անուղղելի || *անուղղայ.* «Մեր ժողովուրդը **անուղղայ** է իր անփութութեան մեջ ... » [Հ, էջ 55]: Անգոր || *սպազոր.* «Հայաստանը չի կարող աւազահիմն **սպազոր** եւ դըժբախտ լինել» [Հ, էջ 113]: Աղբ, ցելի || *գռեհ.* «Սրբութեան բարձունքներից մինչեւ գոյութեան **գռեհը** – ահա՛ ուղիների այն աշխարհը, ուր դեգերում է մարդկային ոգին» [Հ, էջ 364]: Եւ կամ յետեւեալ օրինակներում: Մենամարտ, մրցութիւն || *գուպար.* «...մի մասերե-

տյո՞ն է ահարկու **գուպարի** ...ազգայնական եւ հակազգային տարրերի ...» [Հ, էջ 159]: Անպատուել, վիրաւորել||*թշնամանել*. «... այսօր Գարիբալդիի դէմ սուգտանող ու **թշնամանող**, երբ նա լքած է Նէպոլը» [Հ, էջ 281]: Նկունութիւն, պարտութիւն||*կորանք*. «Շատ բան խնայուած կլինէր հայութեան – տառապանք, արիւննէ՛ր, **կորա՛նք**, եթէ ...» [Հ, էջ 340]: Կուտակել||*կուտել*. «... ժողովուրդ, որ նիւթական բարիքներ **կուտել** եւ ամբարել գիտէ ...» [Հ, էջ 56]: Յանկարծակի, անսպասելի||*յեղաղարծ*. «Ահա՛ հասաւ գուժկանը ... ով է այդ եղերականը եւ ինչ է խորհրդանշում նրա երեւումը **յեղակարծ**» [Հ, էջ 341]: Այսպէս յիշեալ մօտեցմանը համապատասխանող միւս դէպքերում: Այժմ նման բառազոյգերի մի շարք. ծոյլ||*հոյլ*<sup>3</sup>, մեծաբանել, ճոռոմաբանել||*ճառատել* [Հ, էջ 103], նախանձ || *մախանք* [Հ, էջ 404], կեղծաւոր, բամբասող||*շոգմոց* [Հ, էջ 183], պարծենալ, հպարտանալ||*սոնքալ* [Հ, էջ 399], չնչին, խղճուկ||*փանաք* [Հ, էջ 634], թուլանալ անզօրանալ||*փանաքիանալ* [Հ, էջ 512], քծնանք||*քծինք* [Հ, էջ 279], մարշալ||*մարաջախտ* [Հ, էջ 383]:

Գործածուել են նաեւ հնացած յղովական ու խոնարհական բառաձևեր՝ *ազինք*, *սոնեց*, փոխանակ՝ ցեղեր, առաւ. «...ազգեր եւ **ազինք** մտքով կը ծնրադրեն ու կը խոկան մի նուիրական հողաթմբի առջեւ» [Հ, էջ 444], «Եավորով երգեց իր «Հայեր»-ը եւ իր երգը թեւ **սոնեց**, թռավ ...» [Հ, էջ 592]:

Ասուածը վերաբերում է նաեւ կայուն բառակապակցութիւններին, որոնցից շատ յաճախ դարձեալ նախընտրուում է հինը կամ գրաբարեանը: Մի խօսքով||*ի մի բան*. «... **ի մի բան**՝ բիրապատկի՛ր հոգեկան ոյժերդ» [Հ, էջ 384]: Վեճ ու կռիւ, տուրուղրմփոց||*կազ ու կռիւ*. «... աստ եւ անդ **կազ ու կռիւ** կը սերմանէ ...» [Հ, էջ 183]:

Նախընտրած բառերի մի մասը ոչ միայն հնացած է, այլեւ ընդհանրապէս հազուադէպ, երբեմն խիստ հազուադէպ գործա-

---

<sup>3</sup> **Գ. Նժդեհ**, *Նորահայտ նամակներ*, «Հայաստանի ազգային արխիւ» հրատ., Երևան, 2011 թ., էջ 7: Այսույետեւ սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ՆՆ, էջ] տեսքով:

ծութիւն ունի: Բայց Նժդեհը դրանք հրապարակ է բերում՝ անցեալի հետ եւս մի կապ ունենալու համար: Այդպիսիք են՝ անարգ-  
 || *անարգու*, անհետանալ || *անհետել*, սաստիկ զայրոյթ || *զայրուցք*, թատերաբեմ, թատրոն || *թատր*, խորհրդաւոր || *խորհրդօրէն*. «... **անարգու** արարքների մասին ...» [Հ, էջ 177], «... ելել են նուաճելու ... անապատը, այնպէ՛ս, որ դա **անհետի** ... իրենց երկրի քարտէսէն» [Հ, էջ 528], «... եւ տառապանքի **զայրուցքի** մեջ յաճախ աղաղակեց ...» [Հ, էջ 590], «Առաւելապէս Ամերիկան է այդ պայքարի **թատրը**» [Հ, էջ 186], «Աստղէ ըր **խորհրդօրէն** ու տխուր ի՛նչ են փսփսում ...»<sup>4</sup>:

**բ.** Հնացած բառերի դիմելու երկրորդ շարժառիթն այն է, որ ժամանակակից լեզուն դրանց նոյնանիշները կամ ընդհանրապէս չունի, կամ սակավ դէպքերում ունի եւ կամ էլ ունի կայուն բառակապակցութիւնների տեսքով: Ուստի առաւել եւս այդպիսի բառերը կրկին պէտք է գործածել եւ հարստացնել խօսքը: *Չիեցնել* (կրծքով կերակրել, ծիծ տալ). «Մտածումս սիրաշատ մօր պէս **կը ղիեցնէ** ազգային հպարտութեան իմ զգացումը» [Հ, էջ 163]: Բառը գործածուած է փոխաբերաբար՝ *նիւթեր, փաստեր տալ* իմաստով: *Հրաժարիմք* (հրաժարուելու, մերժելու սկզբունք): Վերցունելով գրաբարի խոնարհական ձեւից՝ գործածուել է գոյականաբար՝ բայական *հաւատամք* բառի համաբանութեամբ. «Բոլշեւիկը իր **հրաժարիմքն** ունի ...» [Հ, էջ 516]: *Մերազնեա* (մեր ազգին, ցեղին պատկանող, մեր ցեղի). «**Մերազնեա** ներքին ամեն մի հակառակորդ անծանօթ մի եղբայր է, որին հոգեփոխելու պարտականութիւն ունինք» [Հ, էջ 155]: *Ոգէխառնուիլ* (հոգով միմեանց հետ կապուիլ). «... կ'ոգէկոչեմ հայ զինուորին ու զօրավարին ... **կ'ոգէխառնուիմ** նրանց հետ ...» [Հ, էջ 163]: *Յվերջ* (մինչեւ վերջ). «Ես երկար բաղձացի եւ գուցէ **ցվերջ** պիտի բաղձամ ...»<sup>5</sup>: *Աստու-*

<sup>4</sup> **Գ. Նժդեհ**, *Գրական երկեր*, «Նախիջեան» հրատ., Երեւան, 2003 թ., էջ 13: Այսույետեւ սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ԳԵ, էջ] տեսքով:

<sup>5</sup> **Գ. Նժդեհ**, *Գրական երկեր*, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2012 թ., էջ 106: Այսույետեւ սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ԳրԵ, էջ ] տեսքով:

*ածագարդ* (Աստծով զարդարուած, փառաւորուած, սրբազան). «... իր (Ահարօնեանի /հեղ.հեղ./) խօսքը Հայաստանի **Աստուածագարդ** բնութեան թախծութիւնն ունի» [Հ, էջ15]:

**գ.** Այս կէտն առնչութիւն ունի բազմիմաստութեան հետ: Հանդիպում են այնպիսի բազմիմաստ բառեր, որոնց որոշ իմաստներ XX դարի առաջին կէտերին գործածութիւնից դուրս գալու ճանապարհին էին, իսկ մեր օրերում արդէն մոռացուած են: Այդպիսի, եթէ կարելի է կոչել, ակամա հնաբանութիւնները քանակով այնքան շատ են, որ մեզ համար ոճական արժէք են ձեռք բերել: Ահա համապատասխան օրինակներ: Հանդիպում ենք *անցք* բառի հետեւեալ իմաստներին – 1. անց կենալը, անցում: 2. Դէպք, պատահար: Բնչպէս. «Պարսից կառավարութիւնը ... Արաքսի հայկական ափում կուտակուած բազմութիւնից յանկարծակիի եկած՝ կարգադրեց դադարեցնել գաղթականութեան **անցքը**»<sup>6</sup>: *Ինչու պայքարեց Լեոնահայաստանը* յուշագրութիւնից բերուած այս հատուածում *անցք* բառը գործածուած է /1./ իմաստով, հետեւեալ մէջբերումներում՝ /2./ իմաստով. «... **անցքերն** եկան հաստատելու, թէ ... քանդուած են հոգով» [Հ, էջ 209], «... կան քաղաքական **անցքերի** այնպիսի ձախող դասաւորումներ ...» [Հ, էջ 288]: Ներկայումս *անցք* բառի ամենագործածական իմաստն է՝ *ծակ* ու նմանողութեամբ եւս մի քանի իմաստ – 2. ասեղի անցք: 3. Ելքի համար տեղ: *Արուեստ* բառի հնացած առաջին իմաստն է՝ արհեստ: Ածանցելով սրանից՝ Նժդեհը գործածում է *արւեստագիտութիւն*՝ արհեստների, տեխնիկական մասնագիտութիւնների տիրապետում, իմացութիւն, ինչպէս նաեւ՝ *էլեկտրօարւեստագիտութիւն*, *արւեստագիտաբար* (տեխնիկապէս արհեստներին վերաբերող մասնագիտութիւնների իմացութեամբ), *արւեստական* (տեխնիկական) եւ նման կազմութեամբ մի քանի այլ բառեր. «**Արւեստագիտութեան, ... էլեկտրօարւեստագիտութեան** արագ և հրաշագործ յառաջադիմութեան մեր օրերում» [Հ, էջ 130], «... որդիները աւելորդ դարձնէին Հայաստանը պաշտպանող **արւեստական** ամրութիւնները» [Հ, էջ 125], «... ցեղամիջեան պայքա-

---

<sup>6</sup> «Հայրենիք» ամսագիր, թիւ 8, 1923 թ.:

րում չկորչելու համար պետք է սպառազինել հոգեբանօրէն եւ **արեւստագիտաբար ...**» [ն.տ.]: *Բաննալ* (վերացնել, ոչնչացնել) բայի հիման վրա կազմուած՝ գործածուած է *բարձում* գոյականը (1.վերացում, ոչնչացում: 2. Բեռներ բարձելը, բեռնում )։ «Ցաւերը վերացնելու համար՝ հիւանդութիւնը պատճառներ են, որ պետք է **բաննալ**», [Հ, էջ 138], «... նպաստում է ... չարութեան, եսականութեան **բարձումին ...**» [Հ, էջ 609]: Ներկայումս *բարձում* գոյականի առաջին (վերացում) իմաստը հնացած է, գործածուում է երկրորդ (բեռնում) իմաստը: *Բնաւորութիւն* բառը հանդիպում է մի իմաստով, որն այժմ արտայայտում է *բնոյթ* բառով: Ինչպէս. «Դէպքերը Ղափանում աստիճանաբար զարգանում ու խիստ վտանգալից **բնաւորութիւն** են ստանում ...»<sup>7</sup>, «... կռիւներին ... ծրագրուած լուրջ **բնաւորութիւն** տալ անկարելի է»<sup>8</sup>: Ընկալում ենք՝ *վտանգալից բնոյթ, լուրջ բնոյթ՝ բնաւորություն*-ը թողնելով հոգեբանութեան ոլորտին: *Դալար* գոյականական բառը հանդիպում է իր նախնական ( խոտ, սեգ) իմաստով. «Զգո՛յժ ... **Դալարների** տակ յաճախ մահաթոյն օձ է թաքնուած լինում» (1927 թ.) [Հ, էջ 99]: Այժմեան տարածուած իմաստը ածականային է՝ 1. մատղաշ, ոչ թօշնած: 2. Ճկուն: *Տղա* բառի երեխա, մանուկ իմաստից կազմուած գործածուած են *տղայաբար, տղայամիտ, տղայութիւն*, այն է՝ երեխայաբար (մանկօրէն), երեխայամիտ, մանկամիտ, երեխայաթիւն, մանկամտութիւն. «Ժողովրդի մի մասի անունից հայիոյել միւսին՝ հակառակորդին եւ **տղայաբար** ժխտել նրա գոյութեան իրաւունքը ...» (1929 թ.) [Հ, էջ 69], «... լեռնականի ոգուն անծանօթ մի **տղայամիտ** պետի գլխաւորութեամբ կը մտնէր Սիւնիք ...»<sup>9</sup>, «... բոլշեիկների ձախ **տղայութիւնը**, որի երեսից այնքան տուժեց հայ ժողովուրդը» [ԱՄ]: 1923 թուին

<sup>7</sup> Վրեժստանի Կենտրոնական Կոմիտէին գրած նամակից, սեպտեմբեր, 1920 թ.:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետութեան զինուորական նախարարին գրուած նամակից, սեպտեմբեր, 1920 թ.:

<sup>9</sup> «Հայրենիք» ամսագիր, *Ազատ Սիւնիք*, թիւ 12 (հոկտեմբեր), 1925 թ.: Այսույետեւ տոյն հրապարակման վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ԱՄ] հապաւման տեսքով:



Նժդեհը գործածել է *մարզադաշտ* բառը՝ 1.պոլիգոն: 2. Հրաձգարան: 3. Զանազան զենքերի փորձարկման ընդարձակ դաշտ իմաստներով: 1960-ական թուական-ների վերջից այն առնչում է միայն սպորտի հետ՝ նշանակելով մարզական վարժանքների եւ մրցումների դաշտ: «Թշնամիները – դեռ **մարզադաշտում** ու զորանոցում, նա ներշնչում է իր զօրքին ...» [Հ, էջ 43], «Կարողանալ իշխել հոգիների վրա, ... առանց որին զօրանոցն ու **մարզադաշտը** հաղթանակներ ստեղծելու կարողությունից շատ են հեռու» [ԼԳ]:

## **§ 2. Բառային տարբերակներ**

Հանրայայտ է, որ ժամանակների ընթացքում բառերի հնչյունակազմերը փոփոխություններ են կրում՝ ենթարկում են հնչյունափոփոխութեան, փոփոխում է ուղղագրությունը, հնչյուններ են աւելանում կամ պակասում, մի հնչյուն փոխարինում է ուրիշով: Նշուած բոլոր իրողությունների հետ առնչուող բառային տարբերակներ գտնում ենք ուսումնասիրուող ստեղծագործություններում: Քանի որ իւրաքանչիւր ժամանակի հարազատ է բառի իր ձեւը, իր հնչյունակազմը, ուստի նախընթաց տարբերակները հնանում են եւ դուրս գալիս գործածությունից: Գ. Նժդեհը բառային տարբերակներին միախառն է դիմում՝ մե՛րթ գործածելով իր ժամանակի, մե՛րթ հնացածներ՝ հաւատարիմ իր սկզբունքին, չընդհատելու սերունդների լեզուական պատմական ուղին: Կանգ առնենք մեզ համար արդէն հնաբանություններ դարձած բառային տարբերակների վրա, ըստ քիչ վերը յիշատակած պատճառների՝ առանձին-առանձին:

### ***ա. Արտասանութեան եւ ուղղագրութեան փոփոխություններ:***

Գարեգին Նժդեհը գրել է դասական ուղղագրութեամբ ու մեծ մասամբ արեւելահայերենով: Մակայն այստեղ խօսքը մեր երկու ուղղագրությունների կամ երկու լեզուաճիւղերի պատմական սկզբունքային տարբերությունների մասին չէ, ինչպիսիք են՝ *է-է, օ-ո, յ-հ* ուղղագրական անցումները եւ միւսները կամ բաղաձայնային տարբեր համակարգերը, այլ խնդրոյ առարկայ գրուածքնե-

րում արտացոլուած այն բառերը, որոնց հնչիւնակազմերն արեւելահայերէնում վերջնականապէս տարորոշուեցին XX դարի ընթացքում՝ պատճառ դառնալով բառային հին ու նոր տարբերակների:

Արտասանական եւ ուղղագրութեան փոփոխութիւնների յետեւանքով առաջացած բառային հին տարբերակներ հանդիպում են թէ՛ որպէս բառակապակցութիւններ, թէ՛ որպէս անկախ բառեր: Առաջինի պարագայում կապակցութեան բաղադրիչները ներկայումս համաբարդուած են, ներառուած մէկ բառի շրջանակում, այլեւս գրում են միասին. կատարուել են որոշ արտասանական փոփոխութիւններ: Ունենք մէկ բառ, ուրեմն եւ՝ մէկ բառաշէշտ: Բառակապակցութիւնների մի խմբում նկատելի է *էւ* շաղկապի մասնակցութիւնը իրողութեանը: Ներկայիս *այլ էւ* շաղկապի փոխարէն հանդիպում ենք *այլ* դերանունն ու *էւ* շաղկապի կապակցութեանը՝ *այլ էւ*: Ինչպէս. «Սպորտը մարմնակրթանք չէ միայն **այլ էւ** հայրենիքի ինքնապաշտպանութեան ... զօրաւոր ազդակ» [ՆՆ, էջ 23], «... ոչ թէ միայն կասեցնում, **այլ էւ** յաճախ անկարելի են դարձնում ...», [Հ, էջ 490], «... Նա տիրեց ոչ միայն նուաճուածի... իրաւունքներին, **այլ էւ** ժողովրդի...ինչքին ... **այլ էւ** ֆիզիքական գոյութեան արմատին իսկ» [Հ, էջ 152]: Ներկայիս տարբերակում *էւ*-ը գրուելով *այլ* բառի հետ միասին (այլեւ/ւ/) հնչում է *էվ՝ այլէվ*: Այժմեան երբևիցե բառի դիմաց գտնում ենք *երբ էւ իցէ* կապակցական տարբերակը. «... մի այլ սերունդ իր ցեղէն **երբ էւ իցէ** տառապէ՞լ է իր չափ» [Հ, էջ 193]: Ուղղագրական փոփոխութիւնների հետ *էւ* շաղկապի նույն արտասանական տարբերութիւնն է մէկ այլ խումբ բառակապակցութիւններում: Նկատելի է *էւս* բաղադրիչի մասնակցութիւնը: Այժմեան *այլ էւս*, *դէռ էւս* համաբարդութիւններն ունեն իրենց *այլ էւս*, *դէռ էւս* բառակապակցական տարբերակները. «... դարձել էին հայ կեանքի հետ **այլ էւս** օրգանական կապ չունեցող քարացած յիշատակներ» [Հ, էջ 163], «Ահա՛, **դէռ էւս** ... որոշ տարրերի ... ստրկամտութեան մէջ է ողբերգութիւնը» [Հ, էջ 155]: Իր նախորդների հետ ձուլուելու պատճառով *էւս* բառի բառաշէշտը դրում է

հենց նրա է հնչիւնի վրա, քանի որ արտասանում է *այլէ՛ւս, դեռէ՛ւս*:

Բառակապակցութիւնների մի երրորդ խմբում էլ բառային տարբերակների առաջացման մէջ նկատելի է *ի* նախդիրի մասնակցութիւնը: Որոշակի դէպքերում գրուելով յաջորդող բառից առանձին, այն դիտուել է իբրեւ սպասարկու բառ: Այնուպէսէլ, նոյն այդ դէպքերում, լեզուական օրէնքների ազդեցութեամբ (արտասանական էներգիայի խնայողութեան ձգտում եւ դադարի վերացում)՝ ձուլուել է յաջորդող բառին. առաջ են եկել համաբարդութիւններ: Այս կերպ այժմեան *իհարկէ, իսպառ* բառերն ունեն իրենց տարբերակները, որոնք հանդիպում են քննուող ստեղծագործութիւններում: Օրինակներ. «...ունի՞ն այդ յոյսը...: **Ի հարկէ՛**՝ ոչ» [Հ, էջ 104], «...նրա համար, որ ցաւում է, գնահատում – ոչ, **ի հարկէ՛**» [Հ, էջ 223], «...գոյութեան կոհիւր **ի սպառ** չի անասնացրել մարդը» [Հ, էջ 182], «... **ի սպառ** մոռացում է ճշմարտութիւնը...» [Հ, էջ 105]:

Ինչպէս քիչ վերը նշուեց, հին ու նոր տարբերակների գոյացումն առնչում է նաեւ ինքնուրոյն, անկախ բառերի հետ եւ, ի դէպ, քանակով անհամեմատ շատ են բառակապակցութիւններից առաջ եկածներից: Արտասանական եւ ուղղագրական փոփոխութիւններն իրենց զգալ են տալիս ամենուրեք՝ բոլոր բառակազմական եղանակներում, ուստի դրանց կհանդիպենք թէ՛ այս, թէ՛ յաջորդ կէտերում: Առայժմ հարկ է կանգ առնել մի քանի դէպքի վրայ:

XX դարի առաջին կէտերին որոշ բառերում գրւում էր *ջ* եւ արտասանւում *չ*: Վաղուց արդէն այդպիսի բառերում նաեւ գրւում է *չ*, որով առաջացել են հին ու նոր բառային տարբերակներ: Դրանցից են՝ հաչել եւ հաչոց, նախկիններն են՝ *հաջել* եւ *հաջոց*: Օրինակներ. «... նա **հաջեցնում** էր իր շները ...» [Հ, էջ 161], «... արհեստ են դարձրել իմ անձի դէմ **հաջելը**» [Հ, էջ 280], «... շնութիւն կ'ունենար **հաջելու** ...» [Հ, էջ 293], «... որի հակազգայնական **հաջոցին**, որպէս պատասխան, գրւում են այս տողերը» [Հ, էջ 278]:

Մինչեւ XX դարի երկրորդ կէտը հայերէնում զուգայեռաբար

գործածում էին միեւնոյն արմատի *թագ* եւ *թաք* տարբերակները ու դրանցով կազմուած նոյնական բառերը՝ *թագցնել* || *թաքցնել*: Նշուած ժամանակամիջոցից արեւելահայերէնում նախընտրութիւնը տրուեց *թաք* ձեւին ու դրանով կազմուած բառային տարբերակներին: Այնպէս որ, եթէ Ստ. Մալխասեանցի *Հայերէն բացատրական բառարանում* (1944-1945 թթ..) յիշատակուում են նշուած արմատի երկու ձեւերն էլ, ապա քառահատոր *Ժամանակակից հայերէնի* բառարանում (հ. 2, 1972 թ.) արդէն միայն *թաք* տարբերակն է: Նժդեհի երկերում հանդիպում է *թագցնել* մեր օրերի համար հնացած բառային տարբերակը. « ... այլեւս չեն **թագցնում**, որ ... » [Հ, էջ 228]: *Գ-ք* անցումը տեղի է ունեցել նաեւ Բաքու տեղանունան մէջ, նախկին տարբերակն է *Բագու*. «... **Բագուի** ... փայտիկով շարժուող Կարմիր բանակը ... » [Հ, էջ 336]:

Մի շարք բառերի սկզբում կատարուել է պատմական *n-o* անցումը՝ *ովասիս*||*օագիս*, *ովկիան*||*օվկիան*, *ովսաննա*||*օվսաննա*: Զոյգերի առաջին անդամները հնացած, երկրորդները նոր տարբերակներ են. «... նա **ովասիս** է փընտռում...» [Հ, էջ 168], «Պայքա՛ր կայ հայոց գաղթաշխարհում՝ ... մեր մէնաւոր **ովասիսներում**» [Հ, էջ 186], « ... դէպի համամարդկայնութեան **ովկեանը** ...» [Հ, էջ 148], « ... մտասուզուեց մեր պամութեան ալեծուփ **ովկիանում** ...» [Հ, էջ 244], «... **ովսաննա՛** կանչում այս կամ այն ... ըմբիշին» [Հ, էջ 587]:

*բ. Հնչիւնների կրճատում:* Այստեղ անմիջականօրէն նկատելի են պատմական հնչիւնափոխութեան յետեւանքները: Հանդիպում են *-ոււն* վերջածանցով բառեր, մինչդեռ XX դարի սկզբից դրանք արդէն կորցրել էին *-ն* վերջահնչիւնը, եւ ունէինք *-ոււ* վերջածանցը: Ճիշտ է, Ստ. Մալխասեանցի *Հայերէն բացատրական բառարան*-ում այս կարգի բայանուն գոյականները ներկայացուած են *-ն* վերջահնչիւն ունեցող ածանցով, սակայն այդ որպէս միայն պատմական իրողութիւն: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*-ում (1969 - 1980 թթ..) վերոնշեալ ածանցի *-ն* հնչիւնը չկա: Այս կերպ բացասում, լքում, պղծում բառերը ներկայ դէպքում ունեն իրենց հնացած տարբերակները՝ *բացասումն*,

*լքումն, պղծումն*. « ... **բացասումն** բոլոր տեսակի պարտակա-  
նութեանց» [Հ, էջ 32], « ... դա հայրենասիրութիւն չէ, այլ՝  
**պղծումն** նրա հասկացողութեան» [Հ, էջ 397], «... մեծ **լքումըն** է ա-  
ռաջացնում ժողովրդի մէջ»<sup>10</sup>:

Միւս շարք բառերում արեւելահայերէնում կրճատուել է  
յետնալեզուային շփական *ղ* հնչիւնը՝ անմիջականօրէն յաջորդող  
նմանահունչ յետնալեզուային ու շփական *խ* հնչիւնի ազդեցու-  
թեամբ: Այդ բառերն են՝ բախել, բախում, բխել, բխում, սրտա-  
բուխ. Նախկին տարբերակներն են՝ *բաղխել, բաղխում, բղխել,*  
*բղխում, սրտաբուղխ*. «Չափում են, **բաղխում են** քանակները ...»  
[Հ, էջ 85], «... ռազմական **բաղխումների ժամանակ** ... » [Հ, էջ 42],  
«Ամէն ժողովուրդ իր կրթական իդեալն ունի, որ **բղխում** է իր  
ոգուց եւ կարիքներից» [Հ, էջ 644], «... օգնութեան կը կանչեն ...  
**սրտաբուղխ** ...» [Հ, էջ 448]: Մեր բացատրական բառարաններում  
թէեւ յիշատակում են նշուած հին տարբերակները, սակայն  
«տե՛ս» նշումով՝ յղում կատարելով դէպի առանց *ղ* հնչիւնի  
գործածական ձեւերը, իսկ բերուող վկայութիւնները գեղարուես-  
տական գրականութիւնից, բնականաբար, իրենց ժամանակների  
հեղինակներից չեն, այլ՝ անցեալի: *Ալլէլ* բառում ժամանակին  
գրուել է արմատական *է* երկհնչիւնը՝ արտասանուելով *է՛ աւէ-*  
*լէլ*, ինչը գտնում ենք հազուադէպ գործածուած. «... Առիւծը ...  
պոչով **աւելում** է իր հետքերը» [Հ, էջ 388]:

**գ. Հնչիւնափոխութիւն:** Այս լեզուական երեւոյթի հետ կա-  
պուած մեզ հետաքրքրում են աղէտ, արգել, մեռոն արմատները:  
Առաջինի կազմութեամբ մասնաւորապէս ունենք՝ աղէտալի,  
աղէտավոր ածականները, իսկ երկրորդով՝ արգելել բայը: Քննու-  
թեան առնուող ստեղծագործութիւններում յաճախ գործածում  
են *աղիտալի, աղիտաւոր, արգիլել* տարբերակները. «... **Աղի-**  
**տալի** է տկարութեան ինքնաներշնչումը ...» [Հ, էջ 114], «**Աղի-**  
**տաւոր** չէ կորուստներ ունենալը, **աղիտավոր** է գուր կորուստներ

---

<sup>10</sup> **Գ. Նժդեհ**, *Նամականի*, «Ազգայնական Ակումբ» հրատ., Երեւան, 2002 թ.,  
էջ 7: Այսույետեւ սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [Ն,  
էջ] տեսքով:

ունենալը ... **աղիտաւոր** է վերագնահատումների անընդունակ լինելը» [Հ, էջ 58], «Զօրավար Ղազարովը ... **արգիլեց** իմ արշաւանքը ...» [ Հ, էջ 287], «... նա **արգիլում** է ձերբակալութիւններ ... նա **արգիլում** է բարբարոսութիւնը ...» [Հ, էջ 311]: Սակայն յիշեալ հնչիւնափոխութեամբ բառաձեւերը գրական արեւելահայերէնում գոյութիւն չունեն. *աղէտ* բառում ու դրանով կազմութիւններում *է*-ն չի փոխուում *ի* հնչիւնի, իսկ *արգել* արմատում առկայ է *է* երկհնչիւնը, որ ընդհանրապէս *ի* չի դառնում: Ստ. Մալխասեանցի արդէն յիշատակուած բացատրական բառարանում, առաւել եւս յետագայ բառարաններում մեջբերուած *ի*-ով տարբերակները չեն յիշատակուում: Գ. Նժդեհը, իր սկզբունքին համաձայն, բառային տարբերակների մեջ էլ իր նախընտրութիւնը կարող է տալ աւելի հնին, երբեմն հնագոյնին, հազուադէպին՝ ներկայ դէպքերում հետեւելով Նոր Հայկազեան բառարանին, որտեղ յիշատակուում են *աղիտ* եւ *արգիլ* հնչիւնափոխուած արմատներով բարդութիւններ: Նոյն կերպ մեռն բառի փոխարէն մեկ անգամ գտնում ենք գործածուած հազուադէպ հանդիպող *միւռն* նախնական անհնչիւնափոխ տարբերակը. «...**միւռնով** օծուած նրա ճակատը» [Հ, էջ 592]:

**դ. Բառի մի հնչիւնի փոխարինում մեկ ուրիշով:** Այստեղ անդրադարձ կլինի մի շարք այնպիսի դէպքերի, երբ ներլեզուական օրէնքների ազդեցութեամբ (առնմանում, տարնմանում, համաբանութիւն, բարբառների ներգործութիւն, նկատելի է նաեւ պատահականութեան դերը) բառի հնչիւնակազմում մի հնչիւն փոխարինուում է մեկ ուրիշով: Առաջ են գալիս հին ու նոր տարբերակներ: Նախորդ հնչիւնով բառաձեւը աստիճանաբար մոռացուում է, բայց ոչ Նժդեհի երկերում, որտեղ, ինչպէս միշտ, դրանք դիտուում են որպէս լեզուական հարստութիւն եւ, յատկապէս, կապող օղակներ լեզուի հին ու նոր վիճակների միջեւ, ուստի ժամանակ առ ժամանակ գործածուում են նոր բառաձեւերի հետ զուգընթաց: Ահա այդ շարքը՝ իր հնչիւնական անցումներով.

**Լ-ռ:** Իրողութիւնն առնչուում է գրաբարեան այն յայտնի լեզուական օրէնքի հետ, ըստ որի բառում *ն* հնչիւնից առաջ ունե-

նում ենք *ռ*, իսկ միւս դիրքերում նոյն բառերում՝ *ր*: 1920 թուից յետոյ, երբ գրուել են Նժդեհի երկերի մեծագոյն մասը, յիշեալ օրէնքն այլևս չէր գործում, նախորդ՝ *ր*- ով բառաձևերը հնացել էին, եւ բառերում բոլոր դիրքերում արդէն ունենում ենք *ռ*՝ ամառ – ամռան, ամառանոց, ձմեռ – ձմռան, լեռ – լեռան, դուռ – դռան: Քննութեան առնուող խօսքաշարերում գործածուում են նշուած բառերի *ր*-ով ձևերը՝ *ամրան, ամարանոց, ձմրան, լերան, դրան*: Օրինակներ. «... եթէ մէկը **ամրան** գեղեցկութեամբ հիանայ եւ չմտածէ **ձմրան** մասին ...» [Հ, էջ 56], «... հայ **ամարանոցի** վրայ թշնամին դեռ ոտք չի կոխել ..., ... **հայ ամարանոցի** վրայ տիրող ... լուռութիւնը ...» [Հ, էջ 565], «... վերահաս **ձմրան** դաժանութիւնից սարսափահար... » [Հ, էջ 448], «... Նպատ **լերան** վրայ ...» [Հ, էջ 487], «Վոլա **լերան** վրայ անիծեց Բոտեւը ...» [Հ, էջ 200], «... դատարանի **դրան** ... կարելի է տեսնել մի խումբ կանանց ... ապագայի **դրան** արթուն հսկող ...» [Հ, էջ 210, 232]:

**Ղ-ւր**: Խօսքը երկու բառի մասին է՝ *ճիշդ* եւ *ճշդել*: Այս նախնական ձևերից արեւելահայերէնում ունենք՝ *ճիշտ* եւ *ճշտել*. խուլ *ջ* հնչիւնի առնմանութեամբ՝ խուլ *ւր*: *Ղ*-ով տարբերակները պահպանուել են արեւմտահայերէնում ներկայ դէպքում ուսումնասիրուող գործերում: Ինչպէս. «**ճիշդ է**, սուրբ է հայրենի հողը ... **ճիշդ է** եւ այն ...» [Հ, էջ 525]: «**ճիշդ է** չկան անտականք ազգեր ...» [Հ, էջ 194], «Պէտք է **ճշդել** մեր ցեղի այն գիծը,...: ... **ճշդենք** խնդիրների կարեւորութեան չափը ...» [Հ, էջ 535, 548]:

**Յ-ւր**: Գործածուած է *ե* խոնարհման երէք բայ՝ *դղրդել, խլրտել, մոնչել*, ներկայումս պատկանում են *ա* խոնարհման՝ դղրդալ, խլրտալ, մոնչալ, ինչը յետեւանք է համաբանութեան: *Մ* խոնարհման բայերի մեծագոյն մասը չեզոք սեռի է, նշուած երէքը նոյնպէս, իսկ բնաձայնական բայերն ուղիղ ձևերում ընդհանրապէս ունեն *-ալ* վերջաւորութիւնը: Բայց հանդիպում են. «...նրա ձայնն է **դղրդել** ...» [Հ, էջ 14], «... աւելի եւս **դղրդեց** նրանց ազգայնական մոլեռանդութիւնը ...» [Հ, էջ 227], «Մալականները կարող են ... **խլրտել** մեր զօրամասերի թիկունքում ...» [Ն, էջ 17],

« ... վագրը կը **մոնչեր** ...» [Հ, էջ 530], «Արդարութեան առիծը **մոնչեց** ...» [Հ, էջ 590]:

**Ղ-լ:** Այս անցումը նկատելի է յունարէնի երէք յատուկ անուններում՝ Պլատոն, Թալես, Օլիմպոս եւ դրանցով կազմուած քարդութիւններում՝ պլատոնական, օլիմպիական: Մեզ համար հնացած տարբերակներում շ հնչիւնին նախորդել է *ղ*՝ *Պղատոն, պղատոնական, Թաղես* (Նժդեհը կազմել է նաեւ՝ *թաղեսաբար* ), *Ողիմպոս, Ողիմպիական*: Նկատենք, որ երկու բառում միաժամանակ առկայ է նաեւ ուղղագրական գործօնը՝ ո-օ անցումով: Մէջբերումներ. «Իմաստասեր ես՝ եղի՛ր **Պղատոն**» [Հ, էջ 366], «...**Պղատոնի** գաղափարների մասին ...» [Հ, էջ 373], «...**պղատոնական** սեր քարոզելով ...» [Հ, էջ 31], «Իմաստասերներից **Թաղեսը** սովորութիւն ուներ... մենք **թաղեսաբար** նոյնը կատարենք» [Հ, էջ 444], «... **Ողիմպոսի** աստուածները չքացան» [Հ, էջ 402], «... ձեզ տեղ կտան **Ողիմպի** վրայ» [Հ, էջ 25], «Ի՞նչ արժէ հանճարը, երբ իր **ողիմպիական** մեծութեան մէջ ... անկարեկիբ է» [Հ, էջ 146], «... որոնց համար չէ **ողիմպիական** մեծութիւնը» [Հ, էջ 472]:

**Ձ-ք:** Այստեղ հարցը *զ-ք* հանրածանօթ ուղղագրական-ուղղախօսական կանոնը չէ: Նկատի ունենք արձագանք ապայ նաեւ արձագանքել բառերը, որոնք ի սկզբանէ գրուում եւ արտասանուում էին *արձագանգ* եւ *արձագանգել*: Ըստ Հր. Աճառեանի մեկնութեան, բաղկացած են *գանգ* բնաձայնական արմատից, որից *գանգիւն* ձեւը (հնչիւն, իրերի բախման ձայն), իսկ *արձագանք* ձեւով տարբերակը համարում է սխալ գրչութեան յետեւանք: Արեւելահայերէնում այս սխալ գրչութիւնը եւ արտասանութիւնը հաստատուեց՝ իսպառ դուրս մղելով նախնական տարբերակը: Վերջինս պահպանուել է արեւմտահայերէնում, բայց այստեղ էլ շատ է զանազանուում արտասանութիւնը՝ *արցաքանք*: Ինչպէս եւ սպասելի էր, Նժդեհը շարունակում է գործածել սկզբնական *արձագանգ* տարբերակը: Եւ քանի որ գրում էր արեւելահայերէն, կարելի էր ենթադրել, որ յետեւում էր գրութեան եւ արտասանութեան նոյնութեանը՝ *արձագանգ*. «Իբրեւ օտարի կենդանի **արձագանգը** ...» [Հ, էջ 308], «... մէկի ստուերն



են, միւսի **արձագանգը ...**» [Հ, էջ 570], «... Նրանց բրիչների ձայնն **արձագանգում է ...**» [Հ, էջ 489], «... առաջինը լինելով **արձագանգեց** Բոստոնի ուսանողութիւնը » [Հ, էջ 253]:

**Ա-է:** Առնչում է մէկ բառի հետ՝ *աժան* || էժան: Հանրայայտ է, որ աւելի հին տարբերակն է՝ *աժան*, որովհետեւ առաջ է եկել *աք-ժան* բառից *ք* հնչիւնի կրճատումով: Երկրորդ *ա-*ի ազդեցութեամբ, տարնմանութեամբ, բառասկզբում ունենք *է:* *էժան* տարբերակը հաստատուել է արեւելահայերէնում, *աժանն* իսպառ դուրս է մղուել: Պահպանուել է քննուող գործերում. «**Աժան** ձեռք չէ բերում առիծի մորթին» [Հ, էջ 569] «... կեղծ եւ **աժան** հաշտութիւն քարոզել ...» [ՆՆ, էջ 20], «Մխալ հասկացած սպորտը ... տանում է ամբոխից իլած **աժան** դափնիներ» [Հ, էջ 23]: Նկատենք, որ առաջին մեջբերումը *Ձաւակս* լրագրային յօդուածից էր, գրուած 1940 թուին, յաջորդ երկուսը՝ բարեկամներին ուղղուած նամակներից՝ 1936 թ. եւ 1937 թ., երբ վաղուց միակ տարբերակն էր՝ էժան:

**Կ-գ:** Առնչում է *գանկ* || գանգ տարբերակների հետ, որոնցից նախնականը, մոռացուածը առաջինն է: Երկրորդում առնմանում է նախորդող ձայնեղներին. միակ գործածականն է: Կատարուող մեջբերումներում, անշուշտ, նախնական տարբերակն է. «...սաղաւարտն ու **գանկը ...**» [Հ, էջ 537], «... բացէ՛ք սրանց **գանկն** ու կուրծքը ...» [Հ, էջ 181]:

**Ս-գ:** Բառային տարբերակներն են՝ *քարտէս* || քարտեգ: Առաւել շատ հանդիպող բառային տարբերակների գոյգերից վերջինը: Քանի որ փոխառութիւն է յունարէնից, ուստի հարազատը *էս* վերջավորութիւնն է, ուրեմն եւ նախնական տարբերակն է՝ *քարտէս*: Անցումը *գ-*ի աւելի ուշ շրջանի փոփոխութիւնն է, եւ *քարտեգ* տարբերակը՝ ավելի նոր: Մեզանում միակ գործածականն է, որը լրիվ դուրս է մղել նախնական տարբերակը: Վերջինս պահպանուել է արեւմտահայերէնում՝ *քարդէս* արտասանութեամբ եւ Նժդեհի երկերում, բնականաբար, գրութեանը համապատասխանող արտասանութեամբ. «... աշխարհի **քարտէսից** անհետանալու վտանգը ...» [Հ, էջ 107], «...բացէ՛ք **քարտէսը ...** դիմէ՛ք **քարտէսին ... քարտէսը** ցոյց կտայ ...» [Հ, էջ 27]:

### **§ 3. Գրաբարեան քերականական տարրեր**

Գրաբարի՝ մեր նախնեաց լեզուի ներկայութիւնը ամենուրեք է: Շարադրուող գաղափարներին, հարցադրումներին համապատասխան շարունակ կատարում են մէջբերումներ Աստուածաշնչից, հայոց բանահիւսութիւնից, Խորենացուց, Նարեկացուց, Շնորհալուց եւ ուրիշներից, արտայայտուած մտքերն ընդգծելու համար լրացում են գրաբար ասոյթներով, նախադասութիւնների կառուցուածքում ներառնում են գրաբարեան բառաձեւեր: Իր գաղափարախօսութեան համաձայն Գ. Նժդեհը վճռորոշ նշանակութիւն էր տալիս հայոց հին լեզուին՝ յետամուտ, որ ցեղի սերունդները անցեալ ժամանակը զատ-զատ չդիտեն, եւ ամբողջական լինի մեր պատմութիւնը. «Թոյլ մի տար, որ ցեղիդ ստեղծագործութեան եւ հայրենաշինութեան շղթան ընդհատուի» (*Զօրավար Գարեգին Նժդեհը Տարօնականութեան մասին*) [Հ, էջ 554]: Ազգերի ճակատագիրը կռում է ոգին՝ ստեղծիչը ազգերի արժէքների, փառքի: Իսկ ոգին սնուում է անցեալով, արդիւնք սերունդների ապրումների, ոգորումների, բարոյականութեան, պաշտամունքի, ոյժի, ինչպէս յիմնաւորած է *Ինչո՞ւ Տարօնականութիւն* յօդուածում: Դիմելով գրաբարին՝ հեղինակը նպաստում է իր առջեւ դրուած խնդրի լուծմանը, ապա նաեւ շարադրանքին տալիս հանդիսատրութիւն, ինչը յատուկ է բարձր ոճին: Գործածուած են թէ՛ յղովական, թէ՛ խոնարհական հնացած քերականական տարրեր՝ խառն աշխարհաբար նոյնիմաստ բառաձեւերի հետ, յաճախ միեւնոյն նախադասութեան մէջ: Կանգ առնենք դրանց վրայ առանձին - առանձին:

**ա. Յղովական բառաձեւեր:** *Ուղղական յղովով* գրաբարեան բառաձեւերը քիչ են: Հանդիպում են յոգնակի թւում՝ *կայծակունք, այլք, նոքա*: Շատ են միւս յղովներում: **Մեռական յղովում** *n* յղովման բառաձեւերը, ի տարբերութիւն միւս յղովումների պատկանողների, աւելին են թէ՛ եզակի, թէ՛ յոգնակի թւում: Իր ժամանակի հայերէնի եզակիում՝ յոյսի, պատուի, տարւայ, եկեղեցու բառաձեւերի փոխարէն գործածել է *յոյսի, պատւոյ, տարւոյ*,

*եկեղեցւոյ* գրաբարաձեւ բառաձեւերը: Ինչպէս. «Որպէս **յուսոյ** եւ փրկութեան միակ խարիսխ մնում էր մարտնչող Չանգեզուրը» [ԱՍ], «... առանց մի հատիկ **պատուոյ** վերք ստանալու ...» [Հ, էջ 134], «... **տարւոյ** եղանակների նման ...» [Հ, էջ 80], «Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդի – ահա՛ հայ **եկեղեցւոյ** նոր հաւատամքը» [Հ, էջ 66]: Յոգնակի **սեռականով** ու **տրականով** բառաձեւերից են՝ *այլոց, բիրոց, գործոց, մարդոց*. «Նուազ զբաղուիր **այլոց** թերութիւններով ... մտածել **այլոց** ցաւերի մասին ...» [Հ, էջ 363, 368], «... իր (Սիւնիքը /հեղ.հեղ./) մէջքը կամուրջ էր դարձրել նահանջող **բիրոց** համար ...» [Հ, էջ 159], «Դեռ երէկ էր, ... ներքին **գործոց** նախարարը ...» [Հ, էջ 226], «Այս ... սպանութիւնը վերագրուեց ինը անմեղ հայ **մարդոց** ...» [Հ, էջ 221]:

Մի շարք բառաձեւեր յոգնակի սեռականում իր ժամանակի բնորոշ *-երի* կամ *-ների* քերականական մասնիկների փոխարէն ունեն *-աց* վերջաւորութիւնը, որը յատուկ է գրաբարեան *ա* յղովմանը՝ *կայսերաց, թուրքաց, չարեաց, պատանակրաց, փառաց*. «... Հայաստանը դաստակերտ **կայսերաց** ... կը կոչուէր ...» [Հ, էջ 457], «... անարիութիւնը՝ մայրը բոլոր չարագործների եւ **չարեաց**» [Հ, էջ 442], «Մի դրօշակ, այսպիսի մակագրութեամբ – ... «Պատանակրաց արշաւանք ...»<sup>11</sup>, «Մեր ցեղն էլ է կրել իր անկախութեան ու հզօրութեան ծիրանին՝ իր **փառաց** զգեստը» [Հ, էջ 462]:

Սակայն յոգնակի սեռականում ու տրականում քանակով անհամեմատ շատ են այն բառաձեւերը, որոնք, կազմուած լինելով *-ութիւն* վերջածանցով, պատկանում են *ա* ներքին թեքման եւ ունեն *-ց* վերջաւորութիւնը: Այսպէս, տեղեկութիւնների, պարտականութիւնների, մանրամասնութիւնների, պետութիւնների, տրամադրութիւնների՝ իր ժամանակի տարածուած ձեւերի փոխարէն գործածուած են *տեղեկութեանց, մանրամասնութեանց, պարտականութեանց, պետութեանց, տրամադրութեանց*. «Շնոր-

<sup>11</sup> **Գ. Նժդեհ**, *Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից*, «Հայրենիք» ամսագիր, թիւ 2, Սօֆիա, 1923 թ.: Այսույետեւ սոյն յուշագրութեան վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [ԷԼԳ] հապաման տեսքով:

հակալուծին տուածդ **տեղեկութեանց** համար ...: ... դաւի **մանրամասնութեանց** մասին կը գրեմ շուտով» [ՆՆ, էջ10, 20], «...**պարտականութեանց** անթերի կատարում» [Հ, էջ 648], «... եւրոպական **պետութեանց** անհամաձայնութիւնների շնորհիւ ...» [Հ, էջ 268], «Այս դէպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր **տրամադրութեանց**, արտաքին իրողութիւնների թելադրութեամբ» [Հ, էջ 54]: Այլ օրինակներ. կազմակերպութիւնների, կուսակցութիւնների, իրողութիւնների, թերութիւնների, խորհրդածութիւնների, յաջողութիւնների, պարտութիւնների ձեւերի փոխարէն՝ *կազմակերպութեանց, կուսակցութեանց, իրողութեանց* (քիչ վերը գործածուծ էր իրողութիւնների), *թերութեանց, յաջողութեանց, պարտութեանց, խորհրդածութեանց*. «... կը հրաւիրեն երիտասարդական **կազմակերպութեանց** ներկայացուցիչներին ...»<sup>12</sup>, «Մեր **կուսակցութեանց** ... մարտական միջոցը» ... **իրողութեանց** խեղաթիւրումը ... իր հակառակորդի **թերութեանց** քննադատութեամբ ...» [Հ, էջ 62], «**Խորհրդածութեանց** այս էջերն ..., ... իրենց **յաջողութեանց** եւ **պարտութեանց** պատճառները ...» [Հ, էջ 75, 82] եւ այլն:

**Հայցական յղով:** Այս յղովով եւ *զ* նախդիրով բառաձեւերն առնչում են դերանունների հետ, որոնք են՝ *ամենայն, որ/ը/, այն: Ամենայն* բառով օրինակները հազուադէպ են հանդիպում. «Նրա համար գրականութիւնը, նախքան **գամենայն**, եղավ մարզարեացումների միջոց ...» [Հ, էջ 148]: Աւելի շատ են *որը* դերանունով օրինակները՝ թե՛ եզակի, թե՛ յոգնակի թուով. «Այդ քաղցրութիւնը, **գոր** զգալու համար հայ մարդը ...» [Հ, էջ 172], «...**գոր** շատ շատերը, գուցէ եւ չեն էլ ճանաչում ...» [Հ, էջ 103]: Կամ. «... կան աւելորդ կարիքներ, ... **գորս** սնուցում ենք որպէս մակաբոյծներ ...» [Հ, էջ 99], «... որքան հպարտ, այնքան տխուր է շեշտը զէնքի իմ եղբայրների, **գորս** կ'ոգեկոչեմ ...» [Հ, էջ 164]: Նախորդ երկուսից *զ* նախդիրով անհամեմատ շատ է գործածուած *այն* դերանունը. «... Յեղակրօն շարժման եւ **գայն** սկսող անձի դեմ ...»

---

<sup>12</sup> «Ազգ» օրաթերթ, 12.02.2011 թ.: Այսույետեւ թերթի այս համարի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում [Ազգ] տեսքով:

(Նժդեհի նամակներից) [Ազգ], «... հեռացնել հայութեան ուշադրութիւնը եւ **գայն** զբաղեցնել Նժդեհով, ... այդ շարժումը ապրեցնելու եւ **գայն** համագաղութայնացնելու համար...» [ՆՆ, էջ 6], «... տարագիր հայութեան մէջ արթնացնելու ցեղը ... **գայն** մի եւ անբաժան ազգի վերածելու համար» [Հ, էջ 600]:

Հայցականով դրուող միւս՝ գրաբարը յիշեցնող բառաձեւն առնչում է *ի* նախդիրի հետ, երբ արտայայտում է ներգոյական յոլովի իմաստ: Նկատելի է *յաչս* յոգնակի թուով բառաձեւի յաճախակի գործածութիւնը՝ *յաչս* մարդկութեան, *յաչս* օտարների, *յաչս* հայութեան, *յաչս* ժողովրդի եւ այլն, փոխանակ իր ժամանակի համար սովորական եզակի ներգոյական *աչքում* ձեւի. «...փորձելով **յաչս** մարդկութեան արդարացնել թուրքը» [Հ, էջ 192], «... մեռած Ղեւոնդի արժէքը **յաչս** օտարների բարձրացնելու նպատակով ... **յաչս** ազգայնական հայութեան այլեւս կնքած էր իր բարոյական մահկանացուն ...» [Հ, էջ 211, 222]:

**Չորձիական յոլով:** Այս յոլովով դրուած բառաձեւերն ունեն յետեւեալ դրսեւորումները: Նժդեհն իր գրութիւններում գործածում է *այս*, *այդ* դերանունների *այսու*, *այդու* յոլովաձեւերը, որոնք յատուկ էին գրասենեակային, պաշտօնական ոճերին եւ ընդունուած XX դարի առաջին կէսերին: Քանի որ ներկայումս արեւելահայերէնում գրութիւններում համապատասխան տեղեկատուական նախադասութիւնները կազմում են առանց *այսու*, *այդու* բառաձեւերի (բաւարար են համարում *յայտնում ենք*, *տեղեկացնում ենք*, *հաղորդում ենք* եւ նմանօրինակ այլ բայեր), ուստի անցեալի գրականութեան մէջ դրանք մեզ համար դիտում են իբրեւ գրաբարեան քերականական քարացած ձեւեր: Կատարենք մէջբերումներ. «Յարգելի ընկեր Վրացեան **այսու** անհրաժեշտ ենք գտնում հաղորդակից անելու Ձեզ ... .. **այսու** հարկ ենք համարում անդրադառնալ այդ խնդրին ...»<sup>13</sup> (Նժդեհի նամակներից), «Մպայութիւնը դէմ էր տեղահանութեան, որովհետեւ **այդու** նոքա զրկւում էին հարստանալու հնարաւորութիւնից... **այդու** պատ-

<sup>13</sup> ՀՅԴ Գենտրոնական արխիւ, Դատական գործ թիւ 9698:

ճառ է դառել, որ ...»<sup>14</sup>, «Լեոնահայաստանի կառավարութիւնը եւ սպարապետութիւնը **այսու** անհրաժեշտ են նկատում յայտնելու Ձեզ յետեւեալը ...: ... **այսու** յայտնում եմ Ձեզ ...» [Ն, էջ 25]:

Կան գրաբարաձեւ գործիականի *-աւ* վերջավորութեամբ բառաձեւեր՝ *դժուարաւ, դյուրաւ, կանխաւ, հրապարակաւ*, որոնք նոյնպէս լինելով քերականական քարացած ձեւեր՝ մակբայական իմաստ են ձեռք բերել. «Նախանձողի աչքը **դժուարաւ** է տանում փառքի փայլը» [Հ, էջ 364], «Զանգուածը, որպէս այդպիսին, չի դադարում ամբոյս լինելուց, ասել է՝ **դիւրաւ** ազդելուց» [ԷԼԳ], «Ճակատամարտերից առաջ, **կանխաւ** պարտուած պիտի համարել այն ժողովուրդը ...» [Հ, էջ 529], «... **կանխաւ** գիտէր, թէ ինչ է լինելու մեր պատասխանը ...» [ԱՍ], «հայերի նոր ջարդի խնդիրը թուրքերը ծեծում են **հրապարակաւ** ...» [Հ, էջ 701], «Մի հայ սպա ... **հրապարակաւ** գոչում է՝ «Կեցցե՛ր երրորդ միջազգայնականը» եւ ձերբակալւում պարսից ոստիկանութեան կողմից» [ԱՍ]:

Այլ բառաձեւեր առնչում են գրաբարեան յոգնակի գործիականի հետ եւ ունեն *-օք* վերջավորութիւնը՝ *աճապարանօք, յարգանօք, մտօք, շնորհօք*. «Առաջանում ենք **աճապարանօք** ...»<sup>15</sup>: *Յարգանօք* բառաձեւը գործածուած է նամակներում՝ որպէս աւարտի խօսք. «**Յարգանօք**՝ գորավար Նժդէհ»:<sup>16</sup> Օրինակներ միւս բառաձեւերով. «Ների՛ր Տէր, ... հայրենիքիս օգտակար լինելու **մտօք** մեղանչեմ կամքիդ դեմ» [Հ, էջ 657], «... ճանաչում եմ **շնորհօքն** Լենինի հայազգի բոլշեւիկներ, որոնք ...» [Հ, էջ 204]:

Գրաբարեան *ի* յովովման գործիականի հետ առնչուող բառաձեւերից են՝ *բանիւ* (նաեւ *միով բանիւ* բառակապակցութեան մէջ), *խստիւ*. «Նա **բանիւ** եւ գործով հաստատել է Ֆիխտէի խօսքը...» [Հ, էջ 253], «... **միով բանիւ** – դա ասել է թշնամանել հա-

---

<sup>14</sup> ՀՅԴ Գենտրոնական արխիւ, Դատական գործ թիւ 9698, էջ 321-339:

<sup>15</sup> Գ., **Նժդէհ**, *Հայ բոլշեւիկեան կռիւները*, «Հայրենիք» ամսագիր, թիւ 12, 1923 թ.: Սոյն յուշագրութեան վերաբերեալ յետագայ յղումները կտրուեն շարադրանքում [ՀԲԿ] հապաման տեսքով:

<sup>16</sup> Նամակ Ս. Վրացեանին եւ ՀՅԴ Գերագոյն Կոմիտէին, 14.07.1921 թ.:

րագատ հայրենիքին» [Հ, էջ 378], «... ինքը պատուեց եւ պատրժեց **խստիւ** ...» [Հ, էջ 89]:

**բ. Բայաձեւեր:** Մի խումբ բայաձեւերի հնացած լինելն արտայայտուած է դրանց կազմութեան մէջ, որոնք ունեն *-ան-* սոսկածանցը, մինչդեռ XX դարի առաջին կէտերին այլեւս չունէին: Ինչպէս. *սպացուցանել* || ապացուցել. «... յանձնարարում է **ապացուցանել**, թէ մեր դժբախտ հայրենիքում էլ մարդիկ հաց են ուտում» [Հ, էջ 207]: *Կատուցանել* || կատուցել. «... Ի՞նչն է **կատուցանում** մեր ճակատագիրը» [Հ, էջ 156], «... **կատուցանել** աւելի լաւը ...» [Հ, էջ 356]: *Հատուցանել* || հատուցել. «Ո՛վ պիտի **հատուցանի** նրան, ո՛վ պիտի վճարի» [Հ, էջ 200]: *Մատուցանել* || մատուցել. «... «շնորհ» **մատուցանել** Աստուծոյ ...» [Հ, էջ 444]: *Մնուցանել* || մնուցել. « Թուլութիւնը ... ծնուած է **սնուցանելու** ուժը» [Հ, էջ 438]:

Ժխտական խոնարհման մէջ, երրորդ դէմքում, շատ ու շատ յաճախ գործածուած է *չէ* օժանդակ բայը, թէեւ նախորդ դարում երրորդ դէմքում հաստատուել էր *է-ի* հնչունափոխութիւնը եւ բայերից առաջ դրում էր *չի*: Մէջբերումներ երկերից. «... յայտարարեց, թէ **չէ** մասնակցելու ... տօնակատարութեան, ... որին **չէ** հաւատում». [ՆՆ, էջ 11,19], «... մեր կոիւնտերով **չէ** սկսուել եւ մեզանով **չէ** վերջանալու» [Հ, էջ 166], «... այսպէս **չէ** ուզում ապրել նորահաս սերունդը» [Հ, էջ 246]: *Չէ* ժխտական օժանդակ բայն է դրուած նաեւ *կարելի, կարող* բառերից առաջ. «... նրան **չէ** կարելի վախեցնել...» [Հ, էջ 374], «... **չէ** կարելի ներքնապէս ճանաչել կուսակցութիւնները եւ վճռապէս ժխտել կուսակցականութիւնը» [Հ, էջ 630], «Առանց այդ առաքինութեամբ մարդ **չէ** կարող անկախութիւն ունենալ» (Նժդեհի նամակներից) [Ազգ]: «Չայութիւնը ... **չէ** կարող ներել նրանց ...» [Հ, էջ 271]: Շատ դէպքերում օժանդակ բայի *չէ* ժխտականը միախառն գործածուած է *չի* ձեւի հետ, երբեմն մեկը միւսից մէկ-երկու տող անց կամ նոյն նախադասութեան մէջ: Իրողութիւնը ցոյց է տալիս, որ Նժդեհն այդ անում է նպատակադրուած՝ ոճ ստեղծելու եւ ժամանակ առ ժամանակ հնին վերադառնալու միտումով: Ահա. «Ով **չէ** տառապել՝ **չի՛** աճել, **չի՛**

հզորացել՝ ոգով» [Հ, էջ 372], «Նա **չէ՛**՝ տեսաբանում, **չէ՛**՝ լուսաբանում, նա միայն յարձակում է ... Նա ոչ միայն **չի** լուսաբանում, այլ եւ ...» [Հ, էջ 203]: Ահա նաեւ յօդուածի վերնագիր՝ *Ռազմիկը չէ՛ մեռնում*: Քիչ անց խօսքաշարում արդէն կարդում ենք. «Ռազմիկը **չի** մեռնում» [Հ, էջ 660]: Եւ այս միախառնութիւնը բազմաթիւ դեպքերում:

Ժամանակակից հայերէնին ոչ բնորոշ մի շարք խոնարհական բայաձեւեր երկերում գործածուած են մեկ-երկու անգամ, սակայն իրենց ամբողջութեան մէջ նպաստում են մեր լեզուի հին շրջանների ներկայութեանը: Այդ բայաձեւերից են՝ *կամիմ, պարտիմ*. գերադասուել են իր ժամանակի ընդունուած *կամենում եմ, պարտաւոր եմ* ձեւերից. «Ցեղակրօն եմ, ասել է՝ **պարտիմ, կամիմ**, կարող եմ գերազանցել, եւ պե՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին ...» [Հ, էջ 249]: *Ծնին* (գրաբարեան *ի* կրաւորաձեւ խոնարհում)՝ *ծնունեն*. «... քո աճիւնից շանթանման հերոսներ պիտի **ծնին**» [Հ, էջ 655]: *Արբ* (հրամայական եղանակ, եզակի թիւ) *իւմիր*. «... մարդկութիւնը ... կը պատասխանէր. – Ծարավ ես, **արբ** արցունքդ ...» [Հ, էջ 437]: *Ունենալ* անորոշ դերբայը գործածուած է *ունենա* դիմաւոր ձեւի փոխարէն. «... լուծման սերտ կապ պիտի **ունենալ** եւ մեր բախտի տնօրինումը ...» (Նժդեհի նամակներից):<sup>17</sup>

Երկու դիմաւոր բայաձեւ գալիս են ժխտական խոնարհումից՝ *չմատոյց* *իւմատոցեց*, *չիցէ* *իւիցի*. «Այդ կիւնը հարգանք **չմատոյց** ... իր հոր դիակին ...» [Հ, էջ 176], «... **չիցէ** քուն են մտել սրտերը հայոց ...» [Հ, էջ 407]:

---

<sup>17</sup> ՀՀ Պետական արխիւ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 11-13 և շրջ.:



Եւ այսպէս. Գարեգին Նժդեհը սկզբունքօրէն դիմում է հնացած բառերին, բառային տարբերակներին, քերականական տարբերին՝ դրանք միախառնելով ժամանակի լեզուին՝ առաջ տանելու համար իր գաղափարախօսութիւնը՝ մէկ ցեղ – սերունդների մշակոյթի ամբողջութիւն: Ցեղից անբաժան է լեզուն՝ իր բոլոր շրջաններով, նաեւ՝ ուղղագրութեամբ:

Գարեգին Նժդեհն իր ստեղծագործութիւնների հիմնական մասը գրել է 1905 -1955 թթ.. միջակայքում: Այս յիսուն տարիների ընթացքում մեր լեզուում կատարուել էին բառակազմի նշանակալից տեղաշարժեր, քերականական մասնիկների, բառաձեւերի մեծ թուով փոփոխութիւններ, որոնց մի մասին անդրադարձ եղավ սոյն գլխում: XX դարի առաջին կէսի հայերէնը որակապէս տարբերում էր XIX դարի երկրորդ կէսի հայերէնից: Գարեգին Նժդեհը, սկզբունքօրէն յետահայեաց դիմում է նաեւ ուղղագրութեանը: Որոշ հատուածներում, երբ գործածում է օժանդակ բայի չէ ժխտականը, եզակի երրորդ դէմքի դեռ չհնչիւնափոխուած բայաձեւերը, *-ան-* սոսկածանցով հնացած բայերը, նրա լեզուն յիշեցնում է XIX դարի երկրորդ կէսի գրողների՝ Մ. Նալբանդեանի, Բաֆֆու, Մուրացանի եւ այլոց լեզուն:

2002 թուին Արխիւային գործի գործակալութիւն հրատարակչութիւնը սպագրել է Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւնների երկհատորեակը՝ նոր ուղղագրութեամբ: Սոյն գլխում քննութեան առնուած բոլոր տեսակի հնաբանութիւնները՝ բառային, թէ քերականակական, փոխարինուած են մեր օրերի հայերէնի հոմանիշներով: Լեզուական փոփոխութիւնները հանդիպում են իւրաքանչիւր էջում, որոշ պարբերութիւնների իւրաքանչիւր տողում: Այս հրատարակութեամբ առաջնորդուող, կատարուածին անտեղեակ ուսումնասիրողը գործ կունենա մէկ այլ հեղինակի, այլ լեզուի ու ոճի հետ: Ինչպիսի՞ թիրիմացութիւն ... Կատարուել է շնորհակալ աշխատանք՝ սկզբունքային յեղաշրջիչ թերութիւններով: Վերահրատարակումներում Գ. Նժդեհի լեզուն թարգմա-

նելու ոչ մի հարկ չկա, քանզի նա ոչ գրաբարով է գրում, ոչ էլ մի անհասկանալի բարբառով: Պահպանել նրա լեզուն, նշանակում է պահել նրա ոգին: Ահա թե ինչու, փոխել Նժդեհի երկերի լեզուն նշանակում է ընթերցող սերունդին անհաղորդ թողնել մեկ ցեղային առանձնայատուկ մշակութային ամբողջութեան, նրա որդեգրած գաղափարախօսութեանը եւ դրանում լեզուին յատկացուող վճռորոշ դերակատարութեանը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՐԵՒՍՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՏԱՐՐԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՃԻ ԵՐԿԵՐՈՒՄ

#### § 4. Բառային տարբերակներ

Սոյն ուսումնասիրութեամբ, փաստական առատ նիւթի հիման վրա, բնական է արւում անդրադառնալու Գարեգին Նժդեհի գրելաձեւի մի կողմին՝ ծրագրային կերպով արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միատեղ գործածութեանը:

Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում արեւմտահայերէնն ամենուրեք է: Արեւմտահայութեան եւ նրա լեզուաճիւղի շունչը մեզ ուղեկցում է ընթերցանութեան բոլոր ճամփաներում: Գեղարուեստական գրականութիւնից կատարւում են մեջբերումներ արեւմտահայ գրողներից, օտար հեղինակներից արեւմրտահայերէնով կատարուած թարգմանութիւններից: Նրա երկերի որոշ հատուածներ, նաեւ զգալի թուով ամբողջական ստեղծագործութիւններ գրուած են արեւմտահայերէնով: Թէեւ Նժդեհը հիմնականում գրել է արեւելահայերէն, բայց արեւմտահայերէնից գործածուած են բառային տարբերակներ, բառեր, բառաձեւեր՝ յաճախ արեւելահայերէնի հետ համատեղ միեւնոյն կամ տարբեր նախադասութիւններում: Քննենք արեւմրտահայերէնի ներկայութիւնը մշտապէս յիշեցնող լեզուատարբերն առանձին-առանձին:

Եւ այսպէս, բառային տարբերակներ: Յու. Աւետիսեանը, իր *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն*<sup>18</sup> աշխատութեան մեջ մանրագնին կերպով քննութեան առնելով արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բառե-

---

<sup>18</sup> **Ավետիսյան Յու.**, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն*, « Զանգակ - 97 » հրատ., Երևան, 2011 թ.:

րում հնչյունների գրութեան եւ արտասանութեան տարբերութիւնները, նկարագրել է նաեւ այն պատճառները, որոնք հանգեցնում են երկու լեզուաճիւղերում նոյն բառի տարբերակներին: Հիմք ընդունելով նշուած աշխատութիւնը՝ պարզ է դառնում, որ այդպիսի բառային տարբերակների միայն մի մասն է տեղ գտել Նժդեհի երկերում, քանի որ նա գրել է ոչ թէ արեւմտահայերէն, այլ միայն վերջինիս տարրերն է գործածել իր երկերում: Արդ, տեսնենք, թէ ինչու եւ ինչ բառային տարբերակներ են մասնաւոր կարգով տեղ գտել քննուող ստեղծագործութիւններում: Տարբեր խօսքաշարերում, այս կամ այն նախադասութեան մէջ, հնարաւոր երկու՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն բառային տարբերակներից, որոշակի դէպքերում նախապատութիւնը տրւում է վերջիններին: Այդպիսիք շատ են, եւ հեշտութեամբ կարելի է գանազանել տեսակները:

*ա. Չհնչյունափոխուած տարբերակներ:* Երբ արեւելահայերէնում թեքման, ածանցման, բառաբարդման յետեւանքով *ի, ու* ձայնաւորները հնչյունափոխուում են, արեւմտահայերէնում մնում են անփոփոխ: Ահա այդպիսիք էլ յաճախակի հանդիպում են խօսքաշարերում: Պէտք է նկատել, որ մերթ գործածուում է արեւմտահայերէնի թեքուած բառաձեւը, մերթ արեւելահայերէնի, բայց արեւմտահայերէնի պէս անհնչյունափոխ՝ որպէս լեզուական խառնուրդի իւրօրինակ եղանակ: Նախ *ի* ձայնաւորի հետ կապուած մէջբերումներ. «... **հ/ինի** ւերակների վրայ ...» [Հ, էջ 581], «... **երկաթուղագ/ծից** դէպ հիւսիս ...» [Հ, էջ 565], «... շղթաները **արծ/ուի** թելերի վերածելու արուեստը ...» [Հ, էջ 482], «**Ք/չերը**, սակայն շատ **ք/չերն** են էաբանօրէն ճանաչում նրան» [Հ, էջ 343, «... ազատ **երկ/րներում** իսկ ...» [Հ, էջ 445], «... ուղղուած ոչ... հայ **մարմ/նին**, այլեւ հոգեկանին» [Հ, էջ 495]: Արեւելահայերէնում ընդունուած համապատասխան հնի, երկաթուղագծից, արծվի, քչերը, երկրներում, մարմնին բառաձեւերի փոխարէն:

*Ու ձայնաւորի հետ կապուած մէջբերումներ.* «... այսպէս ճանկոեց **թռչողի** վրայ» [Հ, էջ 500], «... յաղթանակի՝ **ստորի** դէմ ...» [Հ, էջ 628], «... օտար **լուծերի** ազդեցութիւնը ...» [Հ, էջ 638], «...

հաւատքի եւ **սուրբի** հերոսներ ...» [Հ, էջ 654], «... եւ ժողովրդի հօգը **շունչով** օծուած ...» [Հ, էջ 344], «... յաւիտենականի **շունչից** գուրկ է ...» [Հ, էջ 650]: Արեւելահայերէնում ընդունուած համապատասխան թղթի, սրբի, լծերի, սրի, շնչով, շնչից բառաձեւերի փոխարէն:

**բ. Ք, կ հնչիւններով զանազանում:** Այս կերպ տարբերակներն առաջ են գալիս այն հանրայայտ լեզուական իրողութեան յետեւանքով, որ արեւմտահայերէնը փոխառութիւններ կատարում է ուղղակիօրէն անգլերէնից ու ֆրանսերէնից, իսկ արեւելահայերէնը՝ նոյն լեզուներից նոյն բառերը ռուսերէնի միջնորդատրմամբ: Իւրաքանչիւր գերակայ լեզու թողնում է իր հնչիւնաբանական ազդեցութիւնը: Այդ պատճառով արեւմտահայերէնի շատ բառերում առկա է **ք**, իսկ արեւելահայերէնում՝ նոյն բառերի տարբերակներում **կ** հնչիւնը: Միատեղ կարող են լինել եւ ուրիշ հնչիւնների տարբերութիւններ: Ինչպէս. *մաթեմատիքական*||մաթեմատիկական, *մետաֆիզիք*||մետաֆիզիկ, *սյալքանեան*||*բալկանեան*, *Քալիֆորնիա*||*Կալիֆորնիա*, *քիլոմետր*||*կիլոմետր*, *թեքնիքա*||*տեխնիկա*, *դիալեքտիքական*||*դիալեկտիկական*, *ֆիզիքապէս*||*ֆիզիկապէս*. «*Թեքնիքան* զենքն է, միջոցը ...» [Հ, էջ 63], «Հինի եւ նորի միջեւ գոյութիւն ունի մի *դիալեքտիքական* հակասութիւն» [Հ, էջ 581], «Արդիական զենքերը *մաթեմատիքական* զենքեր են ...» [Հ, էջ 558] «... հարստահարում է իր *մետաֆիզիք* եութիւնը» [Հ, էջ 602-603], «... ոտքի հանեց *սյալքանեան* ազգերը» [Հ, էջ 592], «Մէկը տեղափոխուում է *Քալիֆորնիա* ...» [Հ, էջ 208], «... 28000 քառ. *քիլոմետր* տարածութեամբ» [Հ, էջ 54], «... մտաւոր թէ *ֆիզիքապէս* զօրաւորները ...» [Հ, էջ 452]:

**գ. Բայական տարբերակներ:** Արեւմտահայերէնի մի շարք բայերի եւ դրանց արեւելահայերէն տարբերակների միջեւ կան հնչիւնակազմական զանազանութիւններ: Պատճառները մի քանիսն են: Արեւմտահայերէնում հնչիւնափոխուում է մի շարք բայերի արմատի կամ բայածանցի *ա* ձայնաւորը՝ կատաղել||*կատողել*, հասկանալ||*հասկնալ*, ճերմակացնել||*ճերմկցնել*, մեծանալ||*մեծնալ*: Սղուում է սուկածանցի *ե* հնչիւնը՝ գիտենալ||*գիտ-*

նայ: Ե խոնարհման դիմաց ունենք ա խոնարհում՝ հնչյունական այլ փոփոխությունների հետ՝ ճանաչել **|| ճանչնալ:** Ե խոնարհման դիմաց՝ *ի* խոնարհում. ապրել **|| ապրիլ,** խօսել **|| խօսիլ:** Հնչյունական այլեայլ տարբերություններ՝ անել **|| ընել,** սպանել **|| սպաննել,** ընկավ **|| ինկաւ** եւ այլն: Արեւմրտահայերէնի ահա այս կարգի բայերը ժամանակ առ ժամանակ գործածուում են Նժդեհի խօսքում. «Ինչու՞ **զիտնալ,** թէ ո՞ր օրն է, ո՞ր ժամը ...» [ՆՆ, էջ 8], «... 19-րդ դարու վերջերին բաժին **ինկալ** Հայաստանին ...» [Հ, էջ 591], «... վշտի մէջ **կատողելու** փոխաբէն ...» [Հ, էջ 139], «Եթէ **չընէք** այդ, մեղանչած պիտի լինէք ... հաւատում եմ, որ **կընէք**» [ՆՆ, էջ 60], «... լաւ **հասկնանք** այդ ...» [Հ, էջ 539], «Ես կը **ճանչնամ** իմ ցեղը ...» [Հ, էջ 513], «Մեւամորթին աւելի հեշտ է **ձերմկցնել** ...» [Հ, էջ 35], «Իրենց ցեղի կաթով **չմեծցած** մի քանի հայեր ...» [Հ, էջ 433], «Մեր ցեղի կէսն **սպաննող** թուրքը չէր մնա անպատիժ» [Հ, էջ 520]:

**դ. Ուղղագրական - արտասանական տարբերակներ:** Այստեղ մտնում են այն բառերը, որոնք արեւելահայերէնում եւ արեւմտահայերէնում միմեանցից զանազանում են ուղղագրութեամբ կամ արտասանութեամբ: Ինչպիսիք են՝ բոբիկություն **|| բոպիկություն,** Բայրոն **|| Պայրոն,** Փամբակ **|| Փամպակ,** հեգ **|| հէք,** փափագ **|| փափաք,** դժգունել **|| տժգունել,** ցար **|| ձար,** բայց աւելի շատ նաեւ այնպիսի բառեր, որոնք հնչյունակազմերում ունեն ոչ նշուած կարգի տարբեր մէկ-երկու ձայնաւոր կամ, պստիկ **|| պգտիկ,** փնտրել **|| փնտռել,** իրարակերություն **|| իրերակերություն.** «Նա այստեղ ցոյց է տալիս ... իր **բոպիկությունը** ...» [Հ, էջ 213], «... **ձարի** եւ սուլթանի թակարդների միջեւ ... **ձարիզմից** եւ սուլթանիզմից ծնած մահը ...» [Հ, էջ 436], «...«... ինչ որ է **Պայրոնը** Հելլադայի համար» [Հ, էջ 591, «Նորէն խաչեր ... մեր **հէք** հայրենիքում» [ Հ, էջ 448], «... միակ **փափաքն** է ծառայել Ձեզ» [Հ, էջ 96], «**Փամպակի** ձորք սկսեց դողալ ռումբերի որոտէն» [Հ, էջ 567], «... **տժգունել** կըսկսէ ...» [Հ, էջ 447]: Ապա նաեւ. «... իր **բաղդին** թողնուած Հայաստանի դէմ» [Հ, էջ 272], «Նա յետ մղեց **անձնակէդրոն** իմաստասիրությունը ...» [Հ, էջ 147], «... մի անգօր **պգտիկ** սերունդ ...» [Հ, էջ 542], «... նրա բարեկամությունը կը **փնտռէն** բոլորը» [Հ, էջ

40], «Բնաւ կուլտուրական չէ ներքին իր հրակերութեամբ բռնուած ժողովուրդը» [Հ, էջ 643]:

Այս վերջին կարգի բառերում զգալի է փոխառութիւնները ռուսերէնից չկատարելու ազդեցութիւնը՝ մանաւանդ յատուկ անուններում: Եթէ արեւելահայերէնում ընդունուած են Արգենտինա, Տոլստոյ, Ռումինիա, Սիբիա, Շեյցարիա, Ֆրանսիա, ապա Նժդեհի երկերում գործածուած են *Արժենտինա, Թոլսթոյ, Ռումանիա, Սուրիա, Չուիցերիա, Ֆրանսա* եւ այլն. «Օրինակ՝ **Արժենտինայի, Չուիցերիայի ... եւն ...**» [Հ, էջ 192], «**Թուլսթոյի** երրորդ որդին սկսել էր մամուլի մէջ քննադատել **թուլսթոյականութիւնը**» [Հ, էջ 103], «... Յունաստան, **Ռումանիա ...**» [Հ, էջ 88], «**Ֆրանսան** գրաւած էր **Սուրիան**» [Հ, էջ 268]:

### **§ 5. Արեւմտահայերէն բառեր**

Ռ. Սաքապետոյեանն իր *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան*-ում<sup>19</sup> ներառել է ձեւաիմաստային առումով արեւելահայերէնից տարբեր 20.000 բառ: Իր *Արեւելահայերէնի և արեւմտահայերէնի բառապաշարային առանձնահատկությունները*<sup>20</sup> գրքում այդ բառերը խմբաւորել է ըստ ոլորտի պատկանելութեան (կրօնական, ընտանեկան, ծիսական, կրթական եւն)՝ 17 բառախումբ՝ ներկայացուած 37 էջում: Սոյն ենթազլխի համար հիմք ենք ընդունել Ռ. Սաքապետոյեանի վերը նշուած աշխատութիւնները: Արեւմտահայերէն բառերը ստուգել ենք թե՛ նրա, թե՛ Է. Աղայեանի բացատրական բառարաններով: Միաժամանակ հարկ է ասել, որ Գ. Նժդեհը գործածել է արեւմտահայերէնի բառապաշարի որոշ տարբեր, այսինքն վերոյիշեալ բառարանների բառաքանակի մի փոքր մասը միայն: Ուստի դրանց մասին խօսել ըստ Ռ. Սաքապետոյեանի դասդասման հնարաւոր չէ: Անհրա-

---

<sup>19</sup> **Սաքապետոյան Ռ.**, *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.:

<sup>20</sup> **Սաքապետոյան Ռ.**, *Արեւմտահայերէն -արեւելահայերէնի բառապաշարային առանձնահատկությունները*, ԵՊՀ հրատ., Երևան, 2004 թ., էջ 38-75:

ժեշտութիւն է առաջացել այլ խմբաւորման: Արդ, քննենք, թէ ինչու եւ ինչպիսի տեղ են գրաւել արեւմտահայերէն բառերը Նժդեհի երկերում:

Խօսքի մէջ հնարաւոր արեւելահայերէն եւ արեւմտահայերէն նոյնանիշների դէպքում Նժդեհը յաճախ նախապատուութիւնը տալիս է երկրորդին: Այդպիսի բառերը պատկանում են գրեթէ բոլոր խօսքի մասերին: Վերջիններիս վրայ կանգ առնենք առանձին-առանձին:

**Գոյականներ:** Արեւելահայերէնում ընդունուած ժամանակ, արցունք, վայրկեան, լեղապարկ, մեծախօսութիւն, միջակներ բառերի փոխարէն գործածուած են՝ *ատեն, արտօսք, երկվայրկեան, լեղուց, մեծխօսիկութիւն, միջակորեար*, ինչպէս յետեւեալ մէջբերումներում. «... այն **ատեն** դու կը վերլիշես քո հրամանատարին» [Հ, էջ 425], «... թոյն ու **արտօսք** է կաթեցնում ... մեր գինու ... բաժակի մէջ» [Հ, էջ 93], «... ունի իր ամենամեայ **երկվայրկեանի** դադարը, երբ ... կը ծնրադրեն ... մի նուիրական հողաթմբի առջեւ» [Հ, էջ 444], «Վճռած եմ օպերացիայի ենթարկել լեարդս եւ **լեղուցքս**» [ՆՆ, էջ 32], «**Մեծ խօսիկութիւն** էր իր՝ «Մենք աճում ենք երկաթից» աղմուկը» [Հ, էջ 627], «... տնտեսական տկարութիւն հայ **միջակորեար** դասի ...» [Հ, էջ 187]:

**Ածական:** Արեւելահայերէնում՝ կապուտաչեայ, արեւմտահայերէնում՝ *կապուտաչուի*.<sup>21</sup> «... կ'անցնեն օրեր ... եւ նա (բնութիւնը/հեղ.հեղ./) **կապուտաչուի** շուշանները կը վերածի աղբի» [Հ, էջ 147]:

**Ղեբանուններ:** Արեւելահայերէն նա, նրանք այդտեղ, ինքնիրեն բառերի հետ մեկտեղ հանդիպում ենք նաեւ *ան, անոնք, հող, ինքզինքը*. «... իսկ ստեղծագործող է **ան**, ով ..., իսկ արժէքներ ստեղծում է **ան**, ով ստեղծագործում է» [Հ, էջ 521], «**Անոնք**, որ դէմ են Ամերիկայում տեղի ունեցած սեւ դէպքին, եւ **անոնք**, որ կ'արդարացնեն եղածը ...» [ՆՆ, էջ 34], «Եթէ Կոպերնիկը **հող** է, համբուրէ իմ կողմից: ... քանի Վահանը **հող** է ինձ գրիբ յաճախ»

---

<sup>21</sup> **Աղայան Էդ.**, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, «Հայաստան» հրատ., Երևան, հ. 1, 1976 թ., էջ 895 (ԿԱՊՈՒՏԱՉՎԻ):



[ՆՆ, էջ 8, 17], «Մինչև որ հայ մարդը չկարողանայ **ինքզինքը** յաղթահարել ... մի ժողովրդի, որ **ինքզինքը** դեռ չի նուաճել ...» [ՆՆ, էջ 63, 244]:

**Բայեր:** Արեւելահայերեն կորչի, գնալ, անել, կորցնել, փաթաթունել, քնել բայերի փոխարեն գործածուած են *անկցի, երթալ, կորսնցնել, պլլուել, քնանալ*: Ինչպէս. «**Անկցի** սերը դէպի մերձատորը, մենք պէտք է ատենք ... (Լունաչարսկի)» [Հ, էջ 622], «... նրան ճանաչելու համար պէտք է **երթալ** նրա մօտ» [Հ, էջ 590], «... աստիճանաբար պիտի **կորսնցնէր** իր հօրութիւնը ...» [Հ, էջ 462], «... մագերի փոխարեն ... իրար **պլլուած** օձեր էին կրում» [Հ, էջ 210], «... որոնք գիշերները **քնանալ** գիտեն ...» [Հ, էջ 181]:

**Մակբայ:** Աչքի է զարնում *նորից*-ի փոխարեն *նորէն* մակբայի յաճախակի գործածութիւնը. «... կարգի բերելով իրենց շարքերը ... **նորէն** ու **նորէն** յարձակուում» [Հ, էջ 411], «**Նորէն** երկրի հայութիւնը ... սուգի մէջ: ... **նորէն** հազարաւոր որբեր ... » [Հ, էջ 448]:

**Շաղկապ:** *Որովհետեւ*- ից բացի հանդիպում է նաեւ *վասնզի*. «... **վասնզի** որքան բնական ու ճիշտ է այս կամ այն նպատակի ընտրութիւնը ... » [Հ, էջ 451], «... քեզ վայել չէ ցաւի նման արտայայտութիւնը, **վասնզի** դու մարդ ես, մարտի՛կ» [Հ, էջ 368]:

Արեւմտահայերէնի մի շարք զուտ հայեցի բառեր փոխարինում են արեւելահայերէնում գործածուող փոխառութիւններին, որպիսիք են՝ կուրտիզանուհի, նաւթ, քիմիա: Արեւմտահայերէն նոյնանիշներն են՝ *պերճաղիճ* \* *քարիւղ, տարրաբանութիւն*: Դրա-նով Նժդեհը թէ՛ մաքրում է արեւելահայերէնը, թէ՛ հարըստացնում է իր խօսքը, եւ թէ՛ միախառնում երկու լեզուաճիւղերը: Ահա. «Աւստրիական բանաստեղծ Եակովն է այդ **պերճաղիճը**, որ Գարիբալդիին կոչած էր «դժոխքի ծնունդ ...» [Հ, էջ 279], «... նրան տրուեց **քարիւղ** գնելու ... շահաշատ պաշտօնը ...» [Հ, էջ 282], «...**տարրաբանութեան**, ... հրաշագործ յառաջադիմութեան մեր օրերում ...» [Հ, էջ 130]:

Գ.Նժդեհի ստեղծագործութիւններում ներառուած են նաեւ արեւմտահայերէն այնպիսի բառեր, որոնք կան նաեւ արեւ-

---

\* Պերճ եւ աղիճ(աղջիկ) բառերից:

ելահայերէնում: Սակայն որոշ իմաստներով համընկնելով՝ դրանք մէկ-երկու իմաստով տարբերում են արեւմտահայերէնում: Արեւելահայերէնում այդ տարբերիչ իմաստներն արտայայտելու համար գործածուում են նոյնանիշ ուրիշ բառեր: Յիշատակենք ընդհանուր, բայց զանազան իմաստներով այդպիսի բառերի մի շարք: *Գետին*. «Ժողովը որոշած էր նորահաս սերունդը կազմակերպել անկուսակցական **գետնի** վրայ ...» [Ազգ]: *Գետին* բառի ներկայ իմաստի համար արեւելահայերէնում գործածուում են *հիւք*, *հող* բառերը: Բայց քանի որ Նժդեհը նամակը գրել է իր ամերիկահայ դաշնակցական ընկերներին, յարմար է տեսել նախադասութիւնը կառուցել արեւմտահայերէնի ոճով: *Յաճ*. «... մարդկային **ցած** հոգու բոլոր հնարամտութիւնները ...» [Հ, էջ 211]: Արեւելահայերէնում գործածուում է *ստոր* (ստոր հոգի): *Փափուկ*. «... պէտք էր ինձ համար Բալկանում առնուազն **փափուկ** դրութիւն ստեղծել, որպէսզի անկարելի դարձնեն ցեղակրօնութեան տարածումը ... իմ ապրած երկրում», «... բիւրօն գիտէ, որ այս տեսակէտից իմ ... դրութիւնը **փափուկ** է» [Ազգ]: Արեւելահայերէնում՝ *նուրբ*, *նրբին* (դրութիւն): *Հանել*. «Էջմիածինը ... սովորութիւն ունէր յաճախ ամենադատարկ բանի համար իր պատուիրակը գաղութ **հանելու** ...» [Հ, էջ 222]: Արեւելահայերէնում՝ *ուղարկել*:

Գ.Նժդեհն արեւմտահայերէնից վերցրել է նաև կայուն բառակապակցութիւններ՝ **յարադրութիւններ**: Արեւելահայերէնում կա՛մ դրանց բաղադրիչներն են փոփոխուած իրենց բառային տարբերակներով, կա՛մ արեւմտահայերէն իմաստն արտայայտում է արեւելահայերէն բոլորովին մի ուրիշ համադրական բառով: Ստորեւ բերուում է այդպիսի հարադրութիւնների շարքեր:

**ա. Բայական հարադրութիւններ**: Մրանք համեմատաբար աւելին են: *Ծափ զարնել* (արեւելահայերէնում՝ *ծափ զարկել*, *ծափահարել*, *ծափ տալ*). «... **ծափ կը զարնէ** եւ սրանց» [Հ, էջ 440]: *Քայլեր առնել* (քայլեր կատարել, միջոցներ ձեռնարկել). «... **քայլեր առէք** վայրկեան առաջ ..... իրազէկ լինեմ ձեր **առած քայլերին**» [Ազգ]: *Ձեռք ձգել* (ձեռք գցել, ձեռք բերել). «Անձնական ...

բարիքներ **ձեռք ձգելու** համար նա ... վնասներ հասցրեց հայ դատին» [Հ, էջ 199]: *Աչքէ անցնել* (աչքի անցկացնել). «Ընթերցողը կարող է գաղափար կազմել՝ **աչքէ անցնելով** ... խորհրդի յայտարարութիւնը ... » [Հ, էջ 318]: *Գլուխ ելլել* (գլուխ հանել, գլուխ դնել). «Բուլղարը մենակ չի կարող **գլուխ ելլել** սուլթանի հետ» [Հ, էջ 175]:

**բ. Անուանական վերլուծական կազմութիւններ:** Յոյց տանք **ածականական** եւ **դերանուական** մէկական կապակցական **յարադրութիւն:**

Ածականական յարադրութիւն: *Վրան բաց* (կատարուող մեջբերումներում նշանակում է *բացայայտ*). «Ահա՛ **վրան բաց** մի խոստովանութիւն այդ մասին. «Ռուսաստանը պէտք է ունենա մշտական ու անմիջական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է», «... թերթը **վրան բաց** կերպով կապառնա ինձ ... » [Հ, էջ 175], «Վերջինները կսկսին այլեւս **վրան բաց** կերպով գործել շրջանիս դէմ» [Ազգ]:

Դերանուանական յարադրութիւն: *Ոչ մէկ*՝ ոչ մի. «... փրկութեան համար **ոչ մէկ** իրական նշանանակութիւն ունին» [Հ, էջ 67]:

## **§ 6. Յոլովական ձեւեր**

Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում արեւմտահայերէնը ներկայանում է նաեւ իր քերականական ձեւերով եւ շատ աւելի յաճախ, քան բառային տարբերակներով ու բառերով: Նախ կանգ առնենք բառերի յոլովական ձեւերի վրայ: Այս եւ յաջորդ կետերում յետեւել ենք Յու. Աւետիսեանի *Արնելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*<sup>22</sup> աշխատութեան սկզբունքներին:

**ա. Մեռական, տրական յոլովներ:** Մի մեծ խումբ բառեր պատկանում են *ու* յոլովման, մինչդեռ նոյն բառերն արեւելահայերէնում *ի* յոլովման են՝ **պահի, դարի, շահի:** Գործածուած են

---

<sup>22</sup> **Ավետիսյան Յու.**, *Արնելահայերի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, ԵՊՀ հրատ., Երևան, 2007 թ.:

*պահու, դարու, շահու*, ինչպես յատուկ է արեւմտահայերէնին. «...իրենց դիրքերի վրայ՝ վտանգի **պահուն** ... » [Հ, էջ 344], «... լուսաւորութեան **դարու** մարդը ... [Հ, էջ 545], «... մղում անձնական **շահու** աստուածացման ... » [Հ, էջ 196]: Երբեմն հանդիպում է *գաղութահայու* յոլովածեր, բայց շատ ատելի՝ *հայու*, որը յաճախականութեամբ մրցակցում է *հայի* յոլովածելի հետ. «... **գաղութահայու** ազգային բարոյականը ... » [Հ, էջ 650], «... տեսայ ամենարնտիրը **հայու** ... ճանաչեցի եւ ամենավատը **հայու** ... » [Հ, էջ 107], «... ծնունդը նոր **հայու** ... ցեղաշունչ **հայու** ... » [Հ, էջ 177, 182]: Բառախումբը ստուարանում է նրանով, որ գոյականները յոգնակի թւում եւս ընդունում են *ու* յոլովամասնիկը, իսկ արեւելահայերէնում՝ *ի* յոլովամասնիկը. ուխտերի, ժողովուրդների, հանդէսների, իրերի, արժէքների դիմաց գործածուած են *ուխտերու, ժողովուրդներու, հանդէսներու, իրերու, արժէքներու*. «... ցեղակրօն **Ուխտերու** որոշումները ..... հնարաւորութիւն տալ բոլոր **Ուխտերուն** ... **ժողովներու** եւ **հանդէսներու** համար [ՆՆ, էջ 37-38], «... թէ **իրերու** բերումով ... » [Հ, էջ 440], «... սկսել է չակերտել հայկական բոլոր **արժէքներու** սրբութիւնը ... » [Հ, էջ 194]: Ահա նաեւ յօդուածի վերնագիր՝ *Ցեղակրօններուն* [Հ, էջ 519]:

Մէկ այլ խումբ գոյականներ արեւելահայերէնի *ի* յոլովման դիմաց գործածուած են արեւմտահայերէնի *ո* արտաքին յոլովմամբ: Սրանք տեղանուններ են՝ մեծագոյն մասը պետութիւնների անուանումներ՝ *Անգլիոյ, Սսիոյ, Ռումանիոյ, Բուլղարիոյ, Իտալիոյ* եւն. «**Անգլիոյ** կրունկը ծանրօրէն կըկոխեր ..... ընդունելով **Անգլիոյ** մանդատը [Հ, էջ 267], «Փոքր **Ասիոյ** ... ժողովուրդներից ... » [Հ, էջ 610], «... **Իտալիոյ** և **Գերմանիոյ** հետ բարեկամանալու համար [Հ, էջ 204], «... գրել **Ռումանիոյ** ... կոմիտէին» [ՆՆ, էջ 15]: «... **Բուլղարիոյ** մէջ պահելու նպատակով ...» [Ազգ]: Երկերում նկատելի է Թուրքիայ, Ռուսիայ տեղանունների յաճախակի լինելը, ինչը ինքնին հասկանալի է, եթէ նկատի ունենանք հեղինակի թեմատիկան, Հայաստանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւններին բազմաթիւ առիթներով անդրադառնալը. «Հայաստան երկիրը բաժանուած մնայ **Ռուսիոյ** եւ **Թուրքիոյ**

միջեւ» [Հ, էջ 116], «... **Թուրքիոյ** վախճանը ... **Թուրքիոյ** համար ... **Թուրքիոյ** պիտի պարտադրուէր ...» [Հ, էջ 267], «Վաղվայ **Ռուսիոյ** սարսափից խթանած ... .. օգուելով **Ռուսիոյ** ժամանակաւոր ... խռովայոյց վիճակից ...» [Հ, էջ 127]:

Տարբեր յոլովումների պատկանելը մատնանշող մի վերջին մեծ խումբ բառեր՝ արտացոլուած երկերում, վերաբերում են *-ոււ* ածանցով բայանուն գոյականներին: Վերջիններս արեւմտահայերէնում *ի* յոլովման են, իսկ արեւելահայերէնում՝ մեծ մասամբ *ա* ներքին թեքման: Այդպիսիներից են՝ **զգացման**, **մրցման**, **վերանորոգման**, **գնահատման**, **նուաստացման**: Գործածուած են՝ **զգացումի**, **մրցումի**, **վերանորոգումի**, **գնահատումի**, **նուաստացումի**. «... զարգանում է ... արժանապատուութեան **զգացումի** հետ ... » [Հ, էջ 29], «Գոյութիւն կ'ունենայ **մրցումի** մի հատիկ ձեւ միայն ...» [Հ, էջ 88], «... ինքնանորոգումի ճամբով սատար հանդիսանալ հասարակութեան բարոյական **վերանորոգումի** ... [Հ, էջ 92], «... հետեւանք է ... սխալ **գնահատումի**» [Հ, էջ 92], «...միշտ ենթակայ **նուաստացումի** ... » [Հ, էջ 102]: Քննի որ երկու լեզուաճիւղերը խառն են գործածուում, այս դեպքում էլ բազմաթիւ նախադասութիւններում հանդիպում են նշուած կարգի տարբերութիւններով բառաձեւեր: Այլ օրինակներ. «... ենթակայ է ... **բռնաջնջումի**, **ձուլումի**» [Հ, էջ 58], «... **բուժումի** մասին» [Հ, էջ 58], «... **պատկերումի** աղբիւրը ... պատճառը **հուսալքումի** ... **սպառազինումի** ահագանգը ... » [Հ, էջ 68]:

*բ. Տրական և ուղղական յոլովներում* նկատելի է որոշեալ յօդի բացակայութիւնը, մի իրողութիւն, ինչը բնորոշ է արեւմրտահայերէնին: Ըստ որում, ասուածը տրականում գրեթէ միշտ կապում է *-ուլթիւն* վերջածանցն ունեցող գոյականների հետ: Ինչպէս. «... կը սպառնար Հայաստանին եւ անոր **անկախութեան**» [Հ, էջ 275], «... նախապայմաններ է առաջարկել խորհրդային **պատգամաւորութեան** ... » [Հ, էջ 318], «... թողնելով իր նիւթեղեն անօթը երկրին, ոգին՝ **մարդկութեան**» [Հ, էջ 374], «...սեփական **պատմութեան** անձանօթ լինելը» [Հ, էջ 549], «... չէ մասնակցելու մայիս 28-ի **սօնակատարութեան**» [ՆՆ, էջ11]: Արեւելահայերէ-

նում՝ սպառնալ անկախութեանը, առաջարկել պատգամաւորութեանը, թողնելով ... ոգին՝ մարդկութեանը, պատմութեանն անծանոթ լինելը, մասնակցել տօնակատարութեանը: Նոյնը նաեւ կարելոր աշխատութիւններից մէկի վերնագրում՝ «Բաց նամակներ հայ մտաւորականութեան» [Հ, էջ 53] || Բաց նամակներ հայ մտաւորականութեանը:

*Ուղղական յղովում* երբեմն որոշեալ յօդ չեն ունենում ազգանունները կամ անձնանունները. «... Բիրոյի ներկայացուցիչը՝ **Ջամալեան**, խորհուրդներ կուտայ ... **Տէր-Մինասեան**, իբրեւ թէ մոռացել էր ... » [Ազգ]: Բայց նոյն նամակում քիչ վերը ուրիշ ազգանուն յօդով է. «**Նուսասարդեանը** կ'երթայ քննութեան»:

*գ. Ներգոյականի յղովական* իմաստը Նժդէիը գործածում է տրական յղովով ու մէջ կապով, ինչպէս ընդունուած է արեւմըտահայերէնում՝ արեւելահայերէնի *-ում* քերականական վերջաւորութեան դիմաց: Ըստ որում, դէպքերի մեծ մասում տեղանուններ են՝ **Գերմանիայում**, **Ամերիկայում**, **Դետրոյտում**, **Բուլղարիայում** յղովածուների փոխարէն հանդիպում են. «... **Գերմանիոյ մէջ** ... » [Հ, էջ 547], «... կուգեն կեղծել, որ ... **Ամերիկայի մէջ... Թուրքիոյ մէջ** ... » [ՆՆ, էջ 25 -27], «Իսկ **Դեթրոյիքի մէջ** գումարած... ժողովի առած մի քանի որոշումները... **Բուլղարիոյ մէջ** ինձ դաւողները ... » [Ազգ]: Ապա նաեւ *հայրենիքի մէջ* (որը տեղանուն չէ), «... վերջ տանք որբերին մեր **հայրենիքի մէջ**» [Հ, էջ 57]:

*դ. Հայցական յղով:* Այս յղովը հանդէս է գալիս արեւմտահայերէնին բնորոշ երկու իրողութեամբ. **առաջինը**, երբ անձի անունը լինելով ուղիղ խնդիր, դրում է իրի առումով եւ որպէս բառի ուղիղ ձեւ նմանում է ուղղական յղովածուին: Յետեւեալ մէջբերումներում այս կերպ են *գինուորը*, *կինը*, *մարդը*, *գործակալները*, *հակառակորդը* գոյականները. «... զենքերի հետ միաժամանակ, չի կատարելագործում նաեւ իր **գինուորը**» [Հ, էջ 558], «... յիշեցի հռոմէական զօրավար Անտոնիոսի **կինը** ... » [Հ, էջ 210], «Ես տեսայ հոգւով ազատը և սիրեցի **մարդը** ... » [Հ, էջ 278], «... Ամերիկա է ուղարկել իր **գործակալները** ... » [Ազգ], «... ձգտում է ահաբեկել իր **հակառակորդը** ... » [Հ, էջ 205]: Քանի որ

արեւելահայերէնում անձ ցոյց տուող գոյականները դրում են անձի առումով ու ձեւով նմանում են տրականին, այստեղ կարող էր լինել՝ կատարելագործել զինուորին, յիշել կնոջը, սիրել մարդուն, ուղարկել գործակալներին, ահաբեկել հակառակորդին: Նշուած լեզուական երեւոյթը շատ տարածուած է երկերում: Այլ օրինակներ. «Էջմիածինը չկարողացավ Բուլղարի-  
ոյ ... **արքեպիսկոպ ոսը** պաշտպանել» [Հ, էջ 222], «... մի քանի խօսքով օրհնեց մեր **գօրքը**» [Հ, էջ 564], «...արնոտ փորձերով եմ ճանաչել իմ **ժողովուրդը** ... » [Հ, էջ 540], «Օտար լուծերի ազդեցութիւնը **հայն** զգալիօրէն խորթացրել է իր էութիւնից ... » [Հ, էջ 638], «... ես տեսայ **ստրուկն** ազատութեան մէջ ... » [Հ, էջ 275]: Հարկ է հաւելել, որ իրողութիւնը տարածում է նաեւ յատուկ անունների վրայ: Ինչպէս. «... յիշեցի հռոմէական գորավար Անտոնիոսի կինը՝ **Ֆուլվիան**» [Հ, էջ 210], «Յիշեցի շէքսպիրեան տիպերից լէդի **Մակբետը** ...» [ն.տ.], «Ես եմ ընտրել **Ռուբէնը** ... **Ռուբէնին** նոր չէ, որ ճանաչում եմ» [ՆՆ, էջ 41] (խառն գործածութեան բնորոշ օրինակ է):

**Երկրորդ** իրողութիւնն առնչում է *զ* նախդիրի հետ, որը ներկայ երկերում դրում է *այն*, *իրար*, *ինքը*, բայց աւելի շատ *անոնք* դերանուններից առաջ, ուղիղ խնդրի դէպքում՝ *զայն*, *զիրար*, *զինքը*, *զանոնք*. «... կուզէ հարուածել **զայն** Ամերիկայի մէջ» [ՆՆ, էջ 13], «... տրամագծօրէն հակառակ, **զիրար** ժխտող ըմբռնումներ են» [Հ, էջ 216], «Այս ճամբով կարելի պիտի լինի փրկել **զինքը**, ... եւ **զայն** ծառայեցնել Հայաստանին» [ՆՆ, էջ 29], «Մեր կեանքի ներքին կնճիռները գտնել, լուսաբանել **զանոնք** ..... **զանոնք** մեր քաղաքական ձգտումների համընթաց դարձնելու ...» [Հ, էջ 67], «... իր հոգու անբաւ հարստութիւնները ... **զանոնք** փռում աշխարհի առջեւ» [Հ, էջ 485]: Այսպիսով, հայցական յոլովի *զ* նախդիրով դերանունական բառաձեւերը, որոնք յիշեցնում են գրաբարի քերականութիւնը, գործածում են արեւմտահայերէնում: Այդ կերպ Նժդեհը ներկայացնում է գրաբար, արեւմտահայերէն, արեւելահայերէն եռամիասնութիւնը՝ նախադասութիւնները կառուցելիս նշուած երեքին էլ դիմելով:

**ե. Բացառական յուրով:** Արեւմտահայերէնի յուրվաճէւերից ոչ մէկն այնքան շատ չի գործածուած, որքան բացառականը: Արեւմրտահայերէն բացառականով են գրուած ամբողջական գործեր, ինչպիսիք են 1938 թուին ամերիկահայ դաշնակցական ընկերնէրին ուղղուած ծավալուն նամակը [Ազգ], *Բաց նամակ Մայքլ Արլէնին* [Հ, էջ 461] հրապարակախօսական յօդուածը: Ահա եւ աշխատութեան վերնագիր՝ *Էջեր իմ օրագրէն* [Հ, էջ 21]: Արեւելահայերէնի *-ից, -ուց* վերջաւորութիւնների փոխարէն բացառականում հանդէս է գալիս անորոշ առումով *-է*, որոշեալ առումով՝ *-էն* վերջաւորութիւնները: Օրինակներ. «**Մէկէ** աւելի կեանք եւ **մէկէ** աւելի մահ ...» [Հ, էջ 148], «... **տարիներէ** ի վեր կորովաթափ կը լինէն ...» [Հ, էջ 128], «... ի՞նչ անել, որ դադարի մի խումբ մարդկանց հարստութիւնը **լինելէ** » [Ազգ ]: Ապա նաեւ. «Իմ ... **գրքերէն**, իմ **յօդուածներէն**, իմ արտասանած **խօսքերէն** ...» [Հ, էջ 537], «Նորահաս սերունդը կտրուե՞ց ... անցած **սերունդներէն** ... կտրուում է ցեղի **արժէքներէն** ու **սրբութիւններէն**, **կրօնէն** ու **բարոյականէն**» [Հ, էջ 242]: Յետեւեալ նախադասութեան մէջ միատեղ են արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բացառականի *-ից* || *-էն* վերջաւորութիւններով բառաձեւեր. «... այդ ըմբռնումն է մեզ քշել տալիս պատմութեան **առջեւից** կամ նրա **յետեւէն**» [Հ, էջ 231]:

Յիշատակենք նաեւ յատուկ անունների յուրվաճէւեր. «... **Ասիայէն** խուժած բարբարոսը ...» [Հ, էջ 152], «... **Լոզանէն** յետոյ ...» [Հ, էջ 513], «Այդ սպասելի չէր տիկին **Սիրանուշէն** ...» [ՆՆ, էջ 33], «... հեռու **Սպարտայէն** ...» [Հ, էջ 519]:

Որոշ բառաձեւերում առկա է *ւ*, ուրիշներում՝ *դ* յօդը. «... **խղճմտանքէս** զատ ... երկու գերագոյն դատաւորներ եւս ...» [Հ, էջ 656], «... Եգիպտոս **այցելելէս** յետոյ ...» [ՆՆ, էջ 33], «... չես խուսափի հարազատ **ցեղէդ**» [Հ, էջ 612], «Աշխատիր, որ փառքդ ... ընթանայ **յետեւէդ**» [Հ, էջ 364]:

**զ. Գործիական յուրով:** Թէեւ *-ով* վերջաւորութիւնը արեւելահայերէնում եւ արեւմտահայերէնում ընդհանրական է, բայց գործածուած են մի քանի բառաձեւեր, որոնց հնչիւնակազմերում



ի յայտ են գալիս տարբերություններ, քանի որ յոլովական վերջատրություններից առաջ առկայ են տարբերիչ հնչյուններ: Հոգի՝ *հոգով*, քայց արեւմտահայերէնում *հոգւով*, որոնց՝ *որոնցով*, արեւմրտահայերէնում *որոնցմով*. «Արիւնն ու արցունքը պիտի չդադարի, ... մինչեւ ... չհօգօրանայ **հոգւով**» [Հ, էջ 89], «Այդպիսին մըջտաջահել է **հոգւով**» [Հ, էջ 168], «... ճշմարտություններ, ... **որոնցմով** այնքան ուժեղ են եւրոպական ժողովուրդները ... գերագոյն ոյժեր, **որոնցմով** այնքան աղքատ է մեր կեանքը» [Հ, էջ 445]:

Անհամեմատ շատ են *-աւ/* վերջատրութեամբ բառաձեւերը՝ արեւելահայերէնի *-ով-*ի դիմաց: *Պայմանով|պայմանաւ*. «... **պայմանաւ**, Երկիրը» [Հ, էջ 90], «... **պայմանաւ**, որ ... ճիգ անէր որ ժամանակը տկարացրած չլինի սէրը, կարօտը դէպի Հայրենի ազատուելու... թշնամիների ազդեցութիւնից» [Հ, էջ 58]: Այստեղ աչքի է զարնում *միջոցաւ* բառաձեւը, որ հանդիպում է բազմաթիւ անգամ և խիստ սակաւ դէպքերում է լինում *միջոցով*, ինչպէս արեւելահայերէնում է: Այսպիսի նախապատուութիւն չի տրուած թերեւս ոչ մի այլ բառաձեւի: Արեւելահայերէնի որոշ բառաձեւեր յաճախականութեամբ գերագանցում են, իսկ ուրիշները՝ զիջում, ինչպէս այստեղ. «... իր մարդկանց **միջոցաւ** դաւեց ...» [Ազգ ], «Սատանայի իր գործը կատարում է «սուրբ» **միջոցաւ**» [ՆՆ, էջ 7], «...բողոքը ընդհանուր ժողովին յղել սրա **միջոցաւ**» [ՆՆ, էջ 32], «Այդ ճշմարտութիւնը ... իրենց շարքերի **միջոցաւ** պիտի ներշնչեն ...» [Հ, էջ 71]:

Յոլովաձեւերում աչքի ընկնող իրողութիւն է որոշեալ յօդի գործածութիւնը առաւել յաճախ սեռականի, տրականի, պական յաճախ գործիականի, ներգոյականի այն բառաձեւերում, որոնցում արեւելահայերէնում յօդն ընդունուած չէ: Խօսքը սեռականում պատկանելութեան, սերման հետ կապուած, իսկ տրականում կապերի գործածութեան դէպքերի մասին է: Գործիականում ու ներգոյականում գրական արեւելահայերէնում ընդհանրապէս յօդեր չեն լինում: Կատարենք համապատասխան մէջբերումներ. «Նա զավակն էր ... մեծ սրտի տէր **ժողովուրդի**...» [Հ, էջ 591], «Ստացած **մարմնի** մի գրութիւնը» [Ազգ], «Առանց այդ **պայ-**

**քարի՛ն** չի կարող ստեղծուիլ կատարելություն...» [Հ, էջ 453], «... առանց **որի՛ն** դաշնակցութեան ղեկավարութիւնը չէ կարող ...» [Ազգ], «Նա հիանում է **գեղեցիկի՛ն, վսեմի՛ն** գորեղութեան վրայ ...» [Հ, էջ 454], «Շնորհիւ Տաթևի ոյժերի մի նոր **սխալի՛ն** ...» [ՀԲԿ]: Ինչպէս նաեւ. «...անզիղջ վատերի սեւ **գործերով՛ն** է շնչել ...» [Հ, էջ 119], «... չի կարելի բացատրել իր **տզիտութեամբը** միայն» [Հ, էջ 84], «... յանձնարարում է ապացուցանել, թե՛ մեր դժբախտ **հայրենիքում՛ն** էլ մարդիկ հաց են ուտում» [Հ, էջ 207]:

### **§ 7. Բայաձեւեր**

Արեւմտահայերէնում բայաձեւերը նոյնպէս գործածում են առատօրէն (թերեւս աւելի առատօրէն, քան յղովական բառաձեւերը), միախառն արեւելահայերէնի բայաձեւերի հետ՝ կամ վերջիններիս յաջորդող նախադասութիւնների մէջ, կամ համատեղ՝ մէկ նախադասութեան մէջ: Առկայ են արեւմտահայերէնին բնորոշ խոնարհումները, առաւել մեծ յաճախականութեամբ՝ *ի* խոնարհումը: Նախ կբերուեն օրինակներ այս խոնարհումով. «Ես էլ պիտ **թառմ/իմ**, ես էլ՝ պիտ **մեռն/իմ**, - ասեց ծաղիկը ...» [ԳԵ, էջ 32], «... **ապր/ի, գործ/ի** և **մեռն/ի** որպէս ցեղակրօն» [Հ, էջ 513], «**Չսարսափ/ի նք**, բայց եւ **ընդուն/ենք** այդ ճշմարտութիւնը» [Հ, էջ 58], «... իրաւունք **ուն/ին** այսպէս վարելու: ... ստեղծագործելու պարտականութիւն **ուն/ենք**...» [Հ, էջ 64]: Կան կրաւորական *ւ, ու, լ* (արտասանութեամբ *վ*) ածանցով բայեր, ինչպէս նայել բայեր, որոնք, չունենալով յիշեալ ածանցը, արտայայտում են կրաւորական իմաստ: Ինչպէս. «Հայաստանի **ստեղծու/իլը**, ... կորուստները ...» [Հ, էջ 54], «Պէտք է այս մտայնութիւնից **ազատու/ինք**» [Հ, էջ 61], «**Շարժու/իլ կըսկս/ին** ... գրիչներ, կը **բացու/ին** աչքերը ...» [Հ, էջ 88]: Ապա նաեւ. «... այդ պայքարէն կը **ծն/ի** ՆՈՐ ՀԱՅՅԸ» [Հ, էջ 184], «... **չնման/ինք** յոռետեսին ...» [Հ, էջ 500], «... ինձ համար ամենաբարձր արարքը՝ **հնազանդ/իլն է** ցեղիս» [Հ, էջ 513]: Արեւելահայերէնում՝ կծնու/վ/ի, չնմանու/վ/ենք, հնազանդու/վ/ել:

*Ու* խոնարհումից գործածուած է *կ'երդնում* բայը: Յիշատակենք երկու դեպք, մէկը՝ «*Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տա-*

*կանքը*» աշխատութեան մէջ. «...**կ'երդնում** Վահագնի աջի վրայ...» [Հ, էջ 246], միւսը՝ *Յեղի արթնութիւնը* յօդուածում. «... ես ահա ... **կ'երդնում** Վահագնի աջի վրայ ...» [Հ, էջ 513]:

Արեւմտահայերէն գործածուած բայերից երկուսը՝ *թուել*, *ժպտել* է խոնարհման է, իսկ արեւելահայերէնում դրանք պատկանում են *ա* խոնարհման՝ *թուալ*, *ժպտալ*. «Այն ամէնը, որ երէկ կը թուէր անորոշ, մթին ու անտրամաբանական ...» [Հ, էջ 562], «...**ժպտել** գիտէ ճակատամարտի բոցերի մէջ ..... որ անմեռ հոգիդ **ժպտի** նաեւ մեր երկնքի տակ» [Հ, էջ 598]:

Դիմաւոր բայերից ակնյայտօրէն աչքի է զարնում *կը* եղանակիչով բայաձեւերի յաճախականութիւնը՝ ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներում: Որոշ հատուածներում դրանք այնքան շատ են, որ պէտք է արեւելահայերէնի *-ում* վերջատրութեամբ եւ օժանդակ բայով կազմութիւններ փնտրել: Ահա *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան սկզբնամասը. «... **կը ցուցադրեն** մահուան դատապատուածի հոգեբանութիւն: ...**կուզեն** եւ անկախ հայրենիք ունենալ, բայց նախապատրաստուելու փոխարէն **կը խօսեն** ու **կը գրեն** միայն: **Կը շարունակեն** զարմանալ, թէ ինչու աշխարհն անտարբեր **կը մնայ**. սպեղանու **կը սպասենք**, բայց նորանոր վերքեր **կը ստանանք**» [Հ, էջ 76]: Այսպէս է նաեւ *Նորահայտ նամակներ*-ում: Կատարենք առանձին մէջբերումներ. «... **կը դաւէ** ... իմ դէմ – **կ'աշխատէ** ... դժուարացնել ... **կուզէ** հարուածել զայն ...» [ՆՆ, էջ 13], «... մեր քարոզած դաշնակցութեան **կը մոտենայ** նորահաս սերունդը, իսկ միւսների քարոզածէն՝ **կը խորշի**, **կը փախչի**» [ՆՆ, էջ 20]:

Արեւմտահայերէնի այս կարգի կազմութիւնները հանդիպում են նաեւ պաշտօնական գրութիւններում: 1921 թ. մայիսի 20-ին կառուարութեան նախագահ Սիմոն Վրացեանին գրած նամակից. «Կառուարութիւնը... անհրաժեշտ **կը նկատէ** յայտնելու Ձեզ, որ նա եւս կարելոր **կը դատէ** մի լեզու գտնել հայ եւ թուրք վեճի շուրջ»:

*Բաւել* բայը արեւելահայերէնում արտայայտուում է *բաւական լինել* յարդարութեամբ եւ *բաւականացնել* նոյնանիշներով. «**Կը**

**բաւէ**, ամփոփենք մեր խօսքը» [Հ, էջ 208], «...**կը բաւէ**, որ օտարը աւելի զօրաւոր լինի ...» [Հ, էջ 39]:

Հարկ է առանձին յիշատակել *տալ* եւ *գալ* բայերը, քանի որ եղանակիչն է *կու*. «... սերունդին **կուտայ** սխալ դաստիարակութիւն» [Հ, էջ 492], «... ծնունդ **կուտայ** ներքին կուսակցական թընճուկներին» [ՆՆ, էջ 35], «... շուտով հերթը **կուգայ** անունին ...» [Հ, էջ 39]:

Երկերի այլեւայլ հատուածներում քննուող ժամանակների արեւելահայերէն եւ արեւմտահայերէն կազմութիւնները հանդիպում են ոչ թէ կուսակումներով, այլ փոխնիփոխ՝ տարբեր նախադասութիւններում կամ յաջորդաբար մէկ նախադասութեան մէջ: *Ինչո՞ւ տարօնականութիւն* յօդուածում նախ կարդում ենք. «Ինչո՞ւ ուխտաւորութիւն **կը քարոզեմ** – այդ մասին հարցրէք այն բոլորին..., որոնք... ճակատ ճակատի են եկած թշնամու դէմ» [Հ, էջ 540]: Մէկ-երկու տող անց. «...վերջինները **նետում են** իրենց դիմակը: ...արնոտ փորձով **եմ ճանաչում...**» [Հ, էջ 540]: *Հայու ճամբան*. *Մեծ գղջումի ճամբան* յօդուածում թուարկումներ են ըստ կետերի: ա) և բ) կետերում արեւելահայ կազմութիւններ են, իսկ գ) կետում՝ արեւմտահայ. « ա) ... երբ իրենց **վիճակում է** ապրել աննպաստ աշխարհագրական միջավայրում. բ)... **կորցնում են** բնականոն գոյութեան կարելիութիւնը. գ) երբ իրենց վտանգ **կը սպառնան...** հզօր... օտար հարեւանները ...» [Հ, էջ 618]:

*Կը* եղանակիչի հետ, բնականաբար, հանդես է գալիս եզակի երրորդ դէմքի արեւմտահայերէնին բնորոշ *-է* բայական վերջաւորութիւնը: Քանի որ այդպիսի բայաձեւերը առանց *կը* եղանակիչի վերաբերում են նաեւ ըղձական ապառնի եւ հարկադրական ապառնի ժամանակներին, ուստի առաջանում է մի տարբերութիւն եւս արեւելահայերէնից, որտեղ գրաբարից ժառանգած *-է* դիմային վերջաւորութիւնը հնչիւնափոխուել է *-ի*-ի: Մէջբերումներ ներկայ ժամանակի բայաձեւերով. «...**կ'ազնուացնէ, կը թեւաւոր, կը գօտեպնդէ...** հոգիները ..., վախը ... **կ'ենթարկէ, կը հպատակեցնէ, կը ստրկացնէ, կը լծէ** իր կառքին» [Հ, էջ 447]: Այժմ մէջբերումներ ըղձական ապառնի ժամանակի բայա-

ձևերով. «... թողնենք, որ այդ մարդը ... **մերկացնէ** ու **դատէ** իր անձը» [Հ, էջ 289], «Արդար է, որ մեր կեանքում **օրէնսդրէ** եւ **առաջնորդէ** ցեղը ...» [Հ, էջ 489], «...թող այդ **չսարսափեցնէ**, այլ **զգաստացնէ**, **խրատէ** մեզ» [Հ, էջ 455]: Եւ հարկադրական ապանոյի բայաձևերով մեջբերումներ. «...**պիտի չխախտէ** իր ստեղծած օրէնքները» [Հ, էջ 510], «... դա մեզ միայն սարսափի **պիտի մատնէ** եւ ոչ **ցնցէ**» [Հ, էջ 58], «... այս բարձունքների վրայ **պէտք է կռուէ, մեռնէ** ու **յաղթէ** վաղուայ հայութիւնը» [Հ, էջ 166]: Այժմ հարկ է կատարել այնպիսի մեջբերումներ, որտեղ խառն, յաջորդաբար հանդէս են գալիս երկու լեզուաճիւղերին բնորոշ տարբեր եղանակների երրորդ դէմքի եզակի բայաձևերը՝ մե՛րթ - է, մե՛րթ -ի վերջաւորութիւններով. «...կուսակցութեան ուշադրութիւնը **կը զբաղեցնէ** նրանցով եւ վարպետօրէն **կը փրկի** իր պոչը» [ՆՆ, էջ 35], «... հրապարակախօսութիւն, որ... **ախտանշէ** մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ **առաջարկի**, որ վերագնահատումի **ենթարկէ** մեր անցեալը եւ նոր ճշմարտութիւններ **որոնէ**, որ **լուսաբանի** մեր ժողովրդի կնճիռները, որ **կռահի** ... վտանգը ...» [Հ, էջ 68]: Վերը նշուեց, որ **կը** եղանակիչով կազմում է նաեւ արեւմտահայերէնի անցեալ անկատար ժամանակը: Դրան նոյնպէս բազմաթիւ դէպքերում դիմել է Գարեգին Նժդեհը. «...երէկ ճառիս մէջ **կ'ըսէի** ...» [ՆՆ, էջ 12], «... **կը գալարւէին** ... օձի նման: ... իրենց պատժած **կը համարէին**: ...ցեղակրօնութեան ալիքը **կը բարձրանար** ու **կըսպանար** հեղեղել մեր ... գաղութները» [ՆՆ, էջ 13], «...հարցրին, երբ ոտքի վրայ էինք եւ **կ'նղջագուրուէինք** բաժանուելու համար» [Հ, էջ 264]:

Գալ բայի դէպքում **կու** եղանակիչն է, ինչպէս ներկայ ժամանակի դէպքում. «... մայրս ինձ ... այցի **կու գար** ոտքով ...» [Հ, էջ 371]: Դաշնակցական ընկերներին գրած նամակից բերուող յետեւեալ հատուածում **կըբերէր**, **կուղարկէր** բայերը դրուած են պայմանական անցեալ ժամանակով, ինչպէս արեւելահայերէնում, իսկ **կհրաւիրէին** բայաձևը սահմանական անցեալ անկատար ժամանակով, ինչպէս արեւմտահայերէնում. «Բիւրօն գիտէր, որ ես դաւադրուած եմ: Եթէ իր հաշիւն գար այդ բանը, նա

ինձ դուրս **կը բերեր** այդ շրջանէն, **կուղարկեր** մի այլ երկիր, գիտեր, թէ մեր բոլոր գաղութները **կը հրաւիրէին** ինձ ...» [Ազգ]:

Ներկայացուած է սահմանական եղանակի ժխտական ներկան, որտեղ դերբայները, խոնարհումներին համապատասխան, ունեն **-եր, -իր, -ար** վերջաւորութիւնները՝ **չուզեր, համարեր, պաշտօնիր, մեռնիր, տենչար, մնար**. «... այսպէս **չուզեր** ապրիլ նորահաս սերունդը» [Հ, էջ 513], «... անդարձ պանդխտութիւն **չեմ համարեր** տարագրի կեանքս» [Հ, էջ 514], «... հայրենիքը **չի պաշտուիր** եւ նրա համար **չեն մեռնիր** ...» [ՆՆ, էջ 18], «... **չի տենչար** աւելի գերագոյն ճակատագիր ...» [Հ, էջ 183], «... հայրենիքը երկար **չի մնար** օտարների ձեռքին ...» [Հ, էջ 115]: Ապա նաեւ. «... **չապրեցներ** ...» [ՆՆ, էջ 18], «...**չի նպաստեր, ... չի սնուցաներ, ... չեն ձեռնարկեր, ... չեն դարձներ** ...» [Հ, էջ 91,146,181,183]:

**զ. Ժամանակների անհամապատասխանութիւն:** Շատ յաճախ գործածուած են յարակատար ներկայ եւ յարակատար անցեալ ժամանակները, որոնց դիմաց արեւելահայերէնում ընդունուած են վաղակատար ներկայ եւ վաղակատար անցեալ ժամանակները: Ինչպէս. **դիմած եմ, խնդրած եմ, դատած է, պատժած էր, փախած էր, բայց՝ դիմել եմ, խնդրել եմ, դատել է, պատժել էր, փախել էր**. «Մի գրութեամբ **դիմած եմ** վարչութեան եւ **խնդրած**, որ...» [ՆՆ, էջ 16], «Ուրացողներ կան, որոնց ժամանակին **դատած է** Եղիշէն» [Հ, էջ 275], «... որի խորամանկութիւնը մի արդար մտրակով **պատժած էր** Անդրանիկ» [Հ, էջ 281], «... թագաւորը **փախած էր** Նեապոլից» [Հ, էջ 279]: Յաջորդ մեջբերումներում երկու լեզուաճիւղերի նշուած իրողութիւնները հեռու չեն միմեանցից. «... հայութիւնը **վճռած է** այլեւս չմնալ... որպէս խաղալիք ...» [Հ, էջ 89]: Քիչ անց. «... եւ ահա **գործի է դրել** իր ցեղային հանճարը ...» [Հ, էջ 89]:

Այժմ **ժխտական խոնարհումներով** մեջբերումներ: **Չէ շիջած, գտած չէ, գրած չէ, չեմ տուած, չեմ մասնակցած, բայց նաև՝ չի շիջել, չի գտել, չի գրել, չեմ տուել, չեմ մասնակցել**. «Չէ, չէ, Մասիւր՝ հայոց ցեղայնութեան հրաբուխը, դեռ **չէ շիջած**» [Հ, էջ 489], «Նա դեռ **գտած չէ** իր ներքին կռուանը ...» [Հ, էջ 491],

«...ցայսօր մի հատիկ տող **գրած չէ** ցեղակրօն դաւանանքի մասին» [Ազգ], «...ոչ միայն որեւէ սպանութիւն կատարելու հրահանգ **չեմ տուած**, այլեւ առհասարակ դատական գործերին ամենեւին **չեմ մասնակցած**»<sup>23</sup>:

**է. Պատճառական բայեր:** Հանդիպում են թէ՛ սահմանական, թէ՛ հրամայական եղանակների խոնարհական ձևերի մէջ՝ *արթնցուց, ջերմացուց, դիրացուց, անմահացուց, քաղցրացուց, պետականացուցին*, արեւելահայերէնի արթնացրեց, ջերմացրեց, դիրացրեց, անմահացրեց, քաղցրացրեց, պետականացրին բայաձևերի դիմաց. «... եւ նրա մէջ **արթնցուց ...** ցեղը ...» [Հ, էջ 149], «Հայ այբուբենը լուսավորեց եւ **ջերմացուց** մեր որբերի կեանքը ...» [Հ, էջ 496], «... մեծապէս **դիրացուց** Հայաստանի անկումը եւ բաժանումը ...» [Հ, էջ 61], «Բոլջեիկները **պետականացուցին** եկեղեցին ...» [Հ, էջ 214], «... **անմահացուց** հայ վրիժակը... օրհնեց ու **քաղցրացուց** մահը հերոսների ...» [Հ, էջ 99]: Ահա նաեւ պատճառական հրամայականի բայաձևեր. *աւելցուր, կանգնեցուր, հանգչեցուր, միացուր, բարձրացուցէք*, արեւելահայերէնի *աւելացրու, կանգնեցրու, հանգչեցրու, միացրու, բարձրացրէք* ձևերի դիմաց. «Այդ յատկութիւններին **աւելցուր** ամենէն անհրաժեշտը՝ արիութիւնը ...» [ՆՆ, էջ 18], «**Կանգնեցուր** հանդիպած ամէն մէկին ...» [Հ, էջ 360], «... հաւերժութեան կրծքին **հանգչեցուր** յոգնած գլուխդ» [Հ, էջ 376], «Անհատ ոյժերդ **միացու՛ր** արիւնակիցներիդ ոյժերին ...» [Հ, էջ 645], «Ծաղիկ կեանքս զոհի սեղան **բարձրացուցէ՛ք**» [Հ, էջ 436]:

**ը. Ժխտումը նախադասութիւններում:** Քանի որ արեւմտահայերէնում ժխտական դերանունան հետ չի դրում ժխտական խոնարհման օժանդակ բայ, որեւէ ժխտական դիմաւոր կամ անդէմ բայաձև, այդպէս էլ հեղինակը գործածել է *ոչինչ, ոչ ոք, ոչ մէկը* դերանունները, այսինքն յաճախ չհետեւելով արեւելահայերէնի քերականութեան մէջ ընդունուած, այսպէս ասած, կրկնակի ժխտումին: Ըստ որում, ժամանակները կազմում են մե՛րթ *կը*

---

<sup>23</sup> Գարեգին Նժդեհի հարցաքննութիւնը: Դատական գործ 9698, թթ.. 321-339:

եղանակիչով, եւ որ յետաքրքիր է, մե՛րթ անկատար դերբայով, ինչպէս գրական արեւելահայերէնում. «**Ոչինչ ունէր** Միւնիքը ... կռիւ վարելու համար...» [Հ, էջ 163] (փոխանակ՝ *ոչինչ չունէր*), «**Ոչինչ կը խնայէ** զաւելջտի վերածելու մեր ողբերգութիւնը ...» [Հ, էջ 174] (*ոչինչ չի խնայում*), «**Ոչինչ է ուզում** աշխարհից ...» [Հ, էջ 495] (*ոչինչ չի ուզում*): Ապա նաեւ. «Ինձնից զատ իմ ոյժէն, իմ հացէն **ո՛չ ոք** իրաւունք **ունի** օգտուելու ...» [Հ, էջ 583] (*ոչ ոք* իրաւունք *չունի*), «Ծանօթ, բարեկամ, ազգական – **ոչ ոք** իր դուռը **կը բանայ** առջեւդ ...» [Հ, էջ 433] (*ոչ ոք... չի բացի*), «Անարի ժողովրդի հետ **ոչ ոք է կապում** ... իր ճակատագիրը ...» [Հ, էջ 41] (*ոչ ոք չի կապում ...*), «...Այլեւս **ոչ ոք է հաւատում** ...» [Հ, էջ 55] (*ոչ ոք չի հաւատում*): Եւ կամ. «Ժողովուրդներից **եւ ոչ մէկն է** առանձին բացարձակօրէն **ուժեղ ... եւ ոչ մէկն է** նոյն ձեւով **ամենաթոյլը ...**» [Հ, էջ 113] (*ոչ մէկն ուժեղ չէ ... ոչ մէկն ամենաթոյլը չէ*):

Ասուածով չի սահմանափակուում յոլովածելերին ու բայածելերին վերաբերող նիւթը: Կարելի էր անդրադառնալ նաեւ որոշ այլ յոլովածելերի, հրամայական եւ անցեալ կատարեալի բայածելերի եւ ուրիշ քերականական տարրերի, որոնք անհամեմատ քիչ են գործածուած: Այստեղ անհրաժեշտ համարուեց ծանրանալ շատ աւելի լայն գործածութիւն ունեցող քերականական տարբերութիւններին, ինչը բաւական էր հեղինակի՝ երկու ճիւղերին դիմելու լեզուական իրողութիւնն ի ցոյց դնելու համար:

Եւ այսպէս. Գարեգին Նժդեհն արեւելահայերէնի հետ միատեղ գործածում է նաեւ արեւմտահայերէնը՝ միեւնոյն մէկ նախադասութեան մէջ կամ յաջորդական նախադասութիւններում՝ ներառելով մեր միւս լեզուաճիւղի բառերը, բառային տարբերակները, քերականական տարրերը: Այս միտումն անցնում է նրա ամբողջ գրական ժառանգութեան միջով: Միաժամանակ հարկ է ասել (ինչպէս յիշատակեցինք գլխի սկզբում), որ որոշ ստեղծագործութիւնների հատուածներ գրուած են զուտ արեւմրտահայերէնով: Այսպիսիք են՝ *Յեղի ոգու շարժը* աշխատութեան *Իմ դաւանանքը* ենթագլուխը [Հ, էջ 156-158], *Զօրավար Գարեգին Նժդեհը* *Տարօրինակութեան մասին* յօդուածը [Հ, էջ 552-555],



բարեկամներին (օրինակ՝ Յովհաննէս Յովհաննէսեանին) ուղարկած նամակների առանձին մասեր [ՆՆ] : Աւելին. քիչ չեն այն երկերը, որոնք ամբողջովին գրուած են միայն արեւմտահայերէնով՝ *Բաց նամակ Մայքլ Արլէնին* [Հ, էջ 461-473] (այստեղ կարելի է հանդիպել անկատար դերբայով ժամանակային միայն մի քանի բայաձեւերի արևելահայերէնով), դաշնակցական ընկերներին գրած ծաւալուն նամակը [Ազգ]: Շատ են բանաստեղծութիւնները, յատկապէս որոնք գրուած են Արեւմտահայաստանում կոուելու ժամանակաշրջանում՝ *Հրթիռ, Հիասթափում, Կարոյ աւերակներու մէջ, Նամակ Կարսի Ռազմիկ թերթին, Մօրս, Եղբօրս, Քօնֆերանսին առջեւ...* [ԳրԵ, էջ 104-124] եւ ուրիշներ՝ պատերազմական տպաւորութիւններով ու մտահոգութիւններով Արեւմտյան Հայաստանի ճակատագրի վերաբերեալ: Ահա նաեւ նոյն ժամանակաշրջանի քնարական արձակ բանաստեղծութիւն՝ *Անվերնագիր* [ԳրԵ, էջ 127]: Ստորեւ զետեղում ենք *Մօրս, Եղբօրս, Քօնֆերանսին առջեւ.....* արձակ բանաստեղծութիւններից հատուածներ՝ հնարաւորութիւն տալով ընթերցողին անմիջականօրէն ծանօթանալու Նժդէհի՝ արեւմտահայերէնով ստեղծագործելու արուեստին.

\* \* \*

## ՄՈՐՍ

«.....Երջանկութիւնը տառապանքին, զրկանքին ու նեղութեան մէջ փնտռող հոգիէդ սովրեցայ, դժբաղդներուն մտերմանալ ու անոնց վշտի զգացումները քինայոյզօրէն ապրեցայ...

Ո՛չ մի հանճար քեզ չափ հրամայականօրէն չի կրցաւ մարդն ու մարդկութիւնը, պարտքն ու պարտականութիւնը ճանչցնել: Կը խոնարհիմ մեծութեանդ առջեւ, ինչպէս քուրմերը չաստուածին» [ԳրԵ, էջ 111]:

## ԵՂՈՐՄ

«Տեսայ և մօտեցայ մեր հայրենի տան պարիսպներու առջևէն մեղմիկ զարնան զով գիշերներուն սրսփալով անցնող առուակին մեղկութիւնը...

Մոռցա՛յ մեր թեթեւ, անվիշտ, անփուշ եւ անխարդախ կեանքի բոլոր ժպիտները ծաղկող... մեր գեղջուկի տունը, ուր ամեն ինչ պարզ, գեղեցիկ ու բնական էր, մեր սեղանը փայտեայ, մեր ամանը հողէ ու այն այգին, որուն երփներանգ խաղողի ողկոյզներուն հետ մեր մանկութիւնը խաղաց:

Այո՛ և մոռցայ այն հողը, ուրտեղ մեր ծնողքն իրենց քրտինքով յոյսեր ծլեցուցին, ուրտեղ հերկի ակօսներուն մէջ մեր ապագայ երջանկութիւնը կերտել ձգտեցան: Ի փոխարէն կաթիլ մ'արցունք չունեցան իրենց անշիբիմ ոսկորները...

Թո՛ղ ներէ ինձ ծանօթն ու անծանօթը, անհունն ու հիւլէն, ես զանոնք սարսափի ցասումի օրերուն մոռցայ: Ես մոռցայ, երբ արհաւիրք ու խաւար, հալածանք ու զուլում սկսաւ» [ԳրԵ, էջ 117-118]:

## ՔՕՆՖԵՐԱՆՄԻՆ ԱՈՋԵԻ...

«Տեսէ՛ք նայուածքներուս խորը, եւ այնտեղ անվեհերօրէն հոգիիս վճռականութիւնը պիտի կարդաք բարձրաբարբառ: Այս առաւօտ կանուխ ասպնջականօրէն, արդարօրէն և եղբայրօրէն բոլոր պանդուխտներուն, ցաւոտ հոգիներուն և արդարութեան մարտիկներուն դուռը կը բաղխեմ, երբ միւս կողմ շատեր յաղթանակէն հիասքանչացած քունով կը յափրանան:

Մախաղիս մէջ զղջումի գրեր ունիմ բոլոր հին դիւանագէտներէն և քաղաքական վարդապետներէն, որոնք լումային համար այնքան արդար և անշահախնդիր ազգիս սուրբ իրաւունքները զգետնեցին» [ԳրԵ, էջ 121-122]:

\* \* \*

Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մէկտեղումը, դասական ուղղագրութեամբ գրելը Գարեգին Նժդեհը ծրագրային էր համարում: Եթէ գրաբարին դիմելով՝ մեր հնացած բառերի ու քերականական տարրերի գործածութեամբ նա ձգտում էր վաղնջական ու ժամանակակից սերունդների պատմական կապին, ապա երկու լեզուաճիւղերի համատեղ գործածութեամբ՝ մեր ժողովրդի երկու հատուածների միասնականացման: Դա գաղափարախօսական պայքար էր ազգային հատուածականութեան ամէն կարգի դրսեւորումների դէմ:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ***§ 8. Համեմատություն կազմող եղանակներն ու կապակցական բառերը***

Իր խօսքը պատկերաւոր, իսկ շարադրանքը գեղեցիկ ու տպաւորիչ դարձնելու, մատնանշուող առարկաներն ու երեւոյթները բնութագրելու, առաջ քաշուած մտքերն ակնբախ կերպով, պարզօրէն մատուցելու նպատակով՝ Գարեգին Նժդեհը բազմաթիւ ու բազմաթիւ անգամ դիմել է համեմատութիւնների: Անշուշտ, հայոց լեզուի գանձարանից նա վերցրել է դարձուածքների տեսքով գոյութիւն ունեցող համեմատութիւնները՝ հայկական, թէ միջազգային տարածում գտած: Այդպիսիների վրայ մենք չենք ծանրանայ, այլ միայն մասնակի կյիշատակենք: Դրանցից են՝ *արեւի պէս պարզ* [ԱՍ], *սեւ ամպի պէս կախուել* [Հ, էջ 78], *դամոկլեան սրի նման կախուել* [Հ, էջ 76], *ասուպի պէս փայլատակել* [Հ, էջ 374], *հեղեղի պէս թափուել* [ՀԲԿ], *մագնիսի պէս քաշել* [ՀԲԿ], *մահու չափ դժուար* [Հ, էջ 226], *ուղտի պէս ծունկ ծռել* [Հ, էջ 330], *մի մարդու պէս<sup>24</sup>*, *պատի պէս բարձրանալ* [ԼԳ], *ստուերի պէս հետեւել* [Հ, էջ 432], *հեռու լինել այնքան, որքան երկինքը երկրից<sup>25</sup>* եւ այլն, եւ այլն:

Մենք մեծ մասամբ կծանրանանք Նժդեհի մտքի արգասիք համեմատութիւնների վրայ, որոնք մի-մի բանաստեղծական գիւ-

---

<sup>24</sup> **Գ. Նժդեհ,** *Իմ բացատրութիւնը Լեոնահայաստանի անկման պատճառների մասին*, ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 109-162:

<sup>25</sup> **Ռ. Համբարձումեան,** *Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ*, «Նախիջեւան» հրատ., Երեւան, 2005 թ., էջ 381:

տեր են, մտքի գոհարներ: Բայց նախ կանգ առնենք համեմատութիւններ կազմող այն եղանակների ու կապակցական բառերի վրայ, որոնք առկայ են քննութեան առնուող երկերում: Զարմանք է շարժում այն հեղինակի կողմից գործածուած դրանց մեծ քանակը:

**1.Բացառական յոլովի միջոցով կազմութիւններ:** Այն եղանակն է, երբ համեմատութեան եզրերից մեկը դրուում է բացառական յոլովով: Կազմութեանը մասնակցում են յատկանիշ ցոյց տուող բառը եւ երկրորդ եզրը. «...մահից էլ ուժեղ գիտենք ստել մեր դարաւոր թշնամուն...» [Հ, էջ 422], «...կայ մի քան քա՛րձր իրենցից, բարձր իրենց առօրեայ շահերից եւ ապրումներից...» [Հ, էջ 444], «Երկրորդը գտնում է, թէ թուրքից լավը բոլշեւիզմն է ...» [Հ, էջ 134], «Կայ բարոյեական ոյժը, ... որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նիւթապէս տասնապատիկ ոյժեղ թշնամու առաջ» [Հ, էջ 28]:

Մէջբերումներից էլ երեւում է, որ վերոյիշեալ համեմատութիւնները կազմուած են ածականի համեմատական աստիճանի սկզբունքով՝ ներկայ դեպքում առանց լրացուցիչ բառի կամ մասնիկի: Եւ քանի որ համեմատական աստիճանի միւս յեղանակը կազմուում է *ավելի, ավել* բառերով, ուստի, ինքին հասկանալի է, այդ կարգի պատկերաւոր կամ խորիմաստ համեմատութիւններ հեղինակը նոյնպէս ունի. «... կեանքից աւելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը...» [Հ, էջ 422], «Պատմական մոմենտներ կան ... երբ բռնաւորէն աւելի ստրո՛ւկն է զգուելի» [Հ, էջ 278]: *Թշնամուց աւելի վտանգաւոր* է համարում իր բանակի շարքերում եղած *վախկոտներին* [Հ, էջ 45]:

Համեմատութիւնների միւս խումբը ածականի գերադրական աստիճանի սկզբունքով կազմուածներն են՝ բացառական յոլովի եզրով եւ *ամենա*, քիչ դեպքերում՝ *գոյն* մասնիկներն ունեցող ածականներով. «Գինովութիւններից ամենազգլխիչը իշխանութեամբ գինովնալն է» [Հ., էջ 364], «Ամենափառաւորը տեսարաններից՝ դա ժողովն է մի ժողովրդի» [Հ, էջ 38], «Ես դեռ հաւատում եմ, ... որ ձեր բարեկամներից ամենաբարձրն ու ամենամոտիկն է

ու կը մնայ ճշմարտութիւնը»<sup>26</sup>: «Ազգերէն ամենախառնարիւնը ու բռնակալութիւններէ ամենաանասնականը – թուրքը» [Հ, էջ 610]:

Սակայն համեմատական աստիճանը միշտ չէ, որ ցոյց է տալիս եզրերից մէկի առաւել լինելը միւսի նկատմամբ, երբ հարկ է գործածել *ավելի* ածականը: Համեմատութեան հիմքում ընկած ընդհանուր յատկանիշի առումով եզրերից մէկը կարող է լինել թերի՝ պակասաւոր, եւ այդ ցոյց տալու համար գործածուում է *պակաս*, *նուազ*, *քիչ* կամ հոմանիշային այլ ածականներ: Այս կարգի համեմատութիւններ թէեւ հազուադէպ, բայց նոյնպէս կան. «...էրոպական անհոգի, կաշառուող դիւանագիտութիւնից **նուազ** հակահայ **չեղաւ** նաեւ կարմիր աշխարհակալութիւնը»<sup>27</sup>: Երբ համեմատական աստիճան ցոյց տուող բառին համադրուում է ժխտական խոնարհման բայ, ինչպէս վերը մէջբերուած նախադասութեան մէջ կամ *ոչ* վերաբերականը, ընդհանուր հատկանիշի թերին վերանում է՝ բերելով եզրերի հավասարութիւն:

## **2. Համեմատութիւն կազմող եզրերը կապակցող բառեր:**

Եզրերից մէկը չի դրում բացառական յոլովով: Գործածուած են համեմատութիւն ցոյց տուող մեծ խումբ բառեր: Վերջիններիս տեղը նախադասութեան մէջ էական չէ: Դրանք իրենց դերը կատարում են՝ լինելով եզրերից առաջ, եզրերի միջեւ կամ նախադասութեան վերջում: Կապակցական բառերը, որ բաժանել ենք իմաստային խմբերի, արտայայտում են.

**ա. Ուղղակիօրէն համեմատութիւն.** դրանք են՝ *բաղդատում*, *համեմատում*՝ դրուած գործիական յոլովով, նաեւ՝ *բաղդատել*, *համեմատել*: Պարզապէս մի եզր կապակցուում է մի այլ եզրի հետ. մատնանշում են դրանց ինչ-ինչ ընդհանրութիւններ: Ինչպէս. «Այլախի՛ն էիր դու – փառապանծ ընկեր, որի կեցուածքի **բաղդատմամբ** ոչինչ են շատ թագակիրներ, եւ շատ ու շատ մեծահարուստներ...» [Հ, էջ 597], «Հայ մարդը... կը զարգացնի իր ներքին թաքուն ոյժերը, իր ներքին մարդը, որի **բաղդատմամբ** ինքն այժմ թզուկ է միայն» [Հ, էջ 88], «Այն, ինչ որ ունինք, որպէս մշակոյթ եւ

<sup>26</sup> ՀՅԴ ԿԱ, Ս. Վ., թթ.. 5-22:

<sup>27</sup> «Ռեալմիկ» օրաթերթ, 1941թ., թիւ 23:

ազդեցութիւն, ոչինչ է, **բաղդատմամբ** ա՛յն բանի, որ ունի եւ պիտի տա մեր ցեղի անսպառ ոգին» [Հ, էջ 484], «Փորձեցէ՛ք **բաղդատել**... այդ կողոպտասէր ամբոխը ֆրանսական յեղափոխութեան զինուորների հետ – որոնք իրենց քաղցը մոռանալու համար «Սարսելեզ» կ'երգէին ...» [Հ, էջ 626], «Հայ մարդ, կարո՞ղ ես ... քեզ **բաղդատել** մի Սամիկոնեանի հետ – նմա՞ն ես նրան» [Հ, էջ 541]: Ապա նաեւ. «Յեղօրէն անխաթար ժողովուրդների մէջ՝ ինքնապաշտպանութեան բնագոր ուժեղանում է իրեն սպառնացող վտանգի **համեմատութեամբ**» [Հ, էջ 630]:

*բ. Նմանութիւն, գործողութեան ընդհանրութիւն.* Եզրերից իւրաքանչիւրը ներկայացնում է մի-մի առարկայ կամ երեւոյթ. յատկանիշի միջոցով մատնանշում են դրանց ընդհանուր գծերը, նմանութիւնը, իսկ եթէ ներկայացնում է գործողութիւն, ապա դրա կատարման կերպի ընդհանրութիւնը կամ նմանութիւնը եզրերում: Այդպիսի համեմատութիւնների կապակցական բառերից հանդիպում են.

*Զերդ.* Գործածուած է շատ հազուադէպ՝ միայն գեղարուեստական գրուածքներում. «Նայուածքիդ տակ բոցավառ Սիր-տըս **զերդ** մոմ կը հալի» [ԳրԵ, էջ 99]:

*Իբրեւ.* «Ժամանակին Իսլամը փոքրասիական աշխարհամասի վրայով անցաւ **իբրեւ** մի տարերային հեղեղ՝ իր ճամբին իրեն խառնելով բոլոր օտար գետերը ...» [Հ, էջ 353], «Սիրո՞ւմ եմ սուրը Հայոց արքայի, որը ... **իբրեւ** հրեղէն կանթեղ, մնաց կախւած Սեպուհ լեռների վրայ ...» [Հ, էջ 659], «...կը քանդակենք գերեզմանաժայռիդ վրայ՝ Այստեղ հանգչում է նա, որ գործեց **իբրեւ** կենդանի սուր ...» [ն.տ.]:

*Ինչպէս.* «**Ինչպէս** շերամն է հիւսում իր բոժոժը, ինքս պատրաստեմ իմ գերեզմանը» [ԳԵ, էջ 7], «... եւ տխուր էր Նա, տխուր, **ինչպէս** լռութիւնը Արաբիայի ավազուտ անապատների» [Հ, էջ 409], «Կ'ուզէի որ քեզ համար գրւած խորհրդածութեանց այս էջերն ընդունէիր, **ինչպէս** ծարաւ դաշտը ցօղն է ընդունում» [Հ, էջ 75]:

Համեմատությունների մի մասում *ինչպես* կապակցականը համադրում է *այնպես* դերանունան հետ՝ իւրաքանչիւրը եզրերից մէկում: Սա կատարում է բացառապէս գործողութիւնների առնչութեամբ. «Անպէտք են այն դասագրքերը, ցամաք եւ անհոգի, որոնց մէջ հայրենիքի մասին խօսուում է ճիշտ **այնպէս, ինչպէս** նկարագրում է Սահարայի անապատը կամ մի հեռաւոր կղզի» [Հ, էջ 52], «**Ինչպէս** աչքս՝ լոյսը, **այնպէս** էլ սիրտս Հայաստանն է փնտրում» [Հ, էջ 575], «Ցեղայնութիւն – դա՛ է այն շաղախը, որ սերունդներին **այնպէս** է իրար կապում, **ինչպէս** կիրը՝ հոյակապ շենքի քարերը» [Հ, էջ 485]:

*Այնպէս* դերանունը համադրում է նաեւ *կարծես* կապակցական բառի հետ. «... **այնպէս** են շարժում, **կարծես**, ներքնապէս մի ծանր բեռ կրէին» [Հ, էջ 263]:

*Որպէս*. «...*հայորդիի՞*, **որպէս** լեռան կատարեն պոկուած հըսկայ ժայռ, նետուեց դէպ առաջացող թշնամին...» [Հ, էջ 417], «Նա (Աւ. Ահարոնեան /հեղ.հեղ./) խօսքեր ունի, **որպէս** վառուող կերոններ» [Հ, էջ 149], «Ես արդէն լսում եմ քո ձայնը, Հա՛յ երիտասարդ, քո խօսքը, որ ազդում է **որպէս** ջահել գինի» [Հ, էջ 106]:

Առարկաների ու երեւոյթների նմանութիւն կամ երկու եզրերի գործողութիւնների ընդհանրութիւն ցոյց են տալիս նաեւ իմաստային մէկ այլ խմբի բառեր:

*Նման*. «Ճշմարտութիւնը բուժիչ ջրի **նման** սրբել, մաքրել է նրա աչքերը, պայծառացրել նրա հոգեւոր տեսողութիւնը» [Հ, էջ 90], «... Ժողովրդի լաւագոյն առաքինութիւնները, որոնց կատարումը Աքիլլէսի նիզակի **նման** բուժում է իր հասցրած վերքերը» [Հ, էջ 48], «Նա, որին դեռ երէկ էր, ինչ խլեցիր առիւծի բերնից ... վաղը կարող է իժի **նման** գարշապարդ փնտտել» [Հ, էջ 569]:

*Հանգոյն*: Խիստ հազուադէպ է գործածուած, այն էլ գեղեարւեստական գրուածքներում: Յետեւեալ մէջբերումը *Կորսուած սէրը* բանաստեղծութիւնից է. «Կարծես ամպ մը կը ծակի, հրեղէն սիւն մ՛ կիջնէ վար, Շատրուանի մը **հանգոյն** շող ու ճաճանչ կը թափէ ...» [ԳրԵ, էջ 126]: Դրդապատճառը, թերեւս, արեւմտահա-

---

\* Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:



յերէն գրելն է, որտեղ **հանգոյն** կապակցականը արեւելահայերէնի համեմատ շատ ու շատ աւելի է ընդունուած գործածել:

*Պէս.* «... ու տխրութիւնը թանձր ստուերի **պէս** ծածկեց Նրա դեմքը» [Հ, էջ 409], «... հրաբխի **պէս** արթնացած ժողովուրդը» [Հ, էջ 344], «Յաղթական չէ այն զօրամասը, եթէ նրա ղեկաւարը պատանու **պէս** ոգեւորել եւ Բոնապարտի **պէս** ոգեւորել չգիտէ» [ԼԳ]:

*Նմանութիւն.* «... **նմանութիւնը** մեր ժամանակի եւ Աւարայրի օրերի... հոգեւոր *բեւեռացումն է – ազգայնական եւ հակազգայնական*»\* [Հ, էջ 258]:

Կայ նաեւ եզրերի նմանութիւնը ցոյց տուող կապակցական երկու բայ՝ *նման/ու/ել եւ յիշեցնել*. «Նա **նմանեց** այն զօրամասին, որ ոչխարների հօտի բարձրացրած փոշու ամպը թշնամի համարելով, փախչում է ...» [Հ, էջ 133-134], «Մեծ մարդը՝ մեծ նաւի **կը նմանի**» [Հ, էջ 365], «... այդ կանայք **յիշեցնում էին** Գորգոնաներին – յունական դիցաբանութեան մէջ դժոխքի սարսափները մարմնացնող քոյրերին ...» [Հ, էջ 210 ]:

*գ. Չափ ու քանակ.* Այստեղ համեմատութիւնը կառուցում է ոչ թե ըստ նմանութեան կամ գործողութեան կերպի ընդհանրութեան, այլ ըստ եզրերի չափային յարաբերութեան: Ընդհանուր յատկանիշն ու կապակցող բառը ցոյց են տալիս, արդեօք հաւասարաչափ են եզրերը, թէ դրանցից մէկը առաւել է միւսի նկատմամբ: Նախ՝ հաւասարութեան պարագան: Այստեղ կապակցող բառերն են՝ *չափ*. «Հի՛ն է, աշխարհի **չափ** հի՛ն է այդ երեւոյթը: ... ամէն մեծ գաղափար ունեցել է իր մանր թշնամիները» [Հ, էջ 636], «Նման օրհասական ժամանակներում կռուողը իր շարժումների մէջ լինում է տարերայնօրէն արագ եւ վճռական սատանայի **չափ**» [ ՀԲԿ ], «Այդ թերթերի բովանդակութեան **չափ** ... զգուելի է իրենց բազարի լեզուն» [Հ, էջ 33]:

Եզրերի հաւասարաչափ լինելը ցոյց տալու համար շատ հազուադէպ գործածուած է *հաւասարապէս* կապակցական բառը. «Մասիս, թէ Մեսրոպ – **հաւասարապէս** սրբազան կատարներ,

---

\* Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

որոնց տրուած է գոյութեան բարձունքներում պահել հայ միտքն ու հայեացքը» [Հ, էջ 342]:

Բայց համամասնութիւն ընդգծելու համար հեղինակը սովորաբար դիմում է *այն չափով ... ինչ չափով, այնքան ... որքան* կամ փոխաստեղութեամբ՝ *որքան ... այնքան, նոյնչափ ... որքան, նոյնքան ... որքան* կապակցական բառերին: Յիշեալ գոյգերի մի անդամը դրուում է առաջին, երկրորդ անդամը՝ միւս եզրում. «Մեր ղեկավարութիւնը միայն **այն չափով** է ակտիւ եւ իմաստուն, **ինչ չափով** մեզ յաջողում է խանգարել մեր հակառակորդի ղեկավարութեան գործը» [Հ, էջ 386], «... պիտի գա՛յ ... այդ օրը, քանզի նա **այնքան** անխուսափելի է, **որքան** եւ արշալոյսը» [Հ, էջ 592], «**Որքան** գեղեցիկ, **այնքան** անսիրտ է կինը» [ԳԵ, էջ 18], «... հայը, իբրեւ ուրոյն ստեղծագործ ազգակ, **նոյնչափ** պետք է մարդկութեան, **որքան** եւ թւապէս եւ քաղաքականապէս հզորագոյնն ազգերից» [Հ, էջ 657], «Ինձ համար **նոյնքան** դժւար կլինի մի բոպէ անգամ հրացանիցս բաժանել, **որքան** եւ նշանածիցս» [ԳԵ, էջ 18]:

Այժմ այն եզրերի մասին, որոնցից մէկը չափային առումով առաւել է միւսի նկատմամբ: Այդպիսի հարաբերութիւն ցոյց տալու համար ամենագործածականը *աւելի* կապակցական բառն է: Վերջինս, ինչպէս վերը տեսանք, մասնակցում էր նաեւ այնպիսի համեմատութիւնների կազմութեանը, որտեղ եզրերից մէկը բացառական յոլովով դրուած գոյական է: Այժմ չկան նման գոյականներ, կան համադրուող եզրեր, որոնք կարող են ամբողջական նախադասություններ լինել. «Յիմարութիւն է թութակօրէն կրկնել ուրիշի խօսքերը: **Աւելի** մեծ յիմարութիւն՝ կուրօրէն բաժանել այլոց կարծիքը» [Հ, էջ 97], «Դաւանանքս է – մարդկայնութի՛ւն, **աւելի՛** մարդկայնութիւն» [Հ, էջ 656], «Քանդեցին, ահա՛ **աւելի** լաւը կը կառուցեմ» [Հ, էջ 356]: Հետաքրքրական է յետեւեալ համեմատութիւնը. երկրորդ եզրի առաւել լինելն ընդգծելու համար համատեղ գործածուած են թէ՛ հաւասարաչափութիւն, թէ՛ չափային առումով առաւելութիւն ցոյց տուող կապակցական բառեր՝ *որքան ... նոյնքան* եւ *ավելի*. «**Որքան** զգուելի է անդրօշ ժո-

դովորողը, **նոյնքան** ե՛ւ **ավելի** զգուելի է ե՛ւ անդրօջ եկեղեցին» [Հ, էջ 220]:

Նժդեհի ստեղծագործություններում շատ յաճախ *աւելի* կապակցականը համատեղում է *քան* բառի հետ՝ *աւելի ... քան*: Այսպէս է, օրինակ, յետեւեալ համեմատություններում. «Կառուցանել **աւելի** լաւը, **քան** էր կործանուածը ...» [Հ, էջ 356], «Զինուորի մեր բազուկից **աւելի** օտարն օգտուեց, **քան** հարազատ երկիրը» [Հ, էջ 164], «**Աւելի** հեշտ է մշակել, **քան** պաշտպանել հայրենի երկիրը» [Հ, էջ 390], «Զօրաւորի հետ չափուելն **աւելի** հեշտ, նաեւ՝ **աւելի** պատուաբեր է, **քան** նենգողի» [Հ, էջ 385]: Ըստ որում համեմատությունների մի մասում *աւելի* համեմատականը կրճատուած է եւ ենթադրում է տողերի արանքից: Որպէս եզրերը կապակցող միայն *քան* բառն է. «Մահը չունի մեծ թշնամի, **քան** մարդը...» [Հ, էջ 391], «Լա՛ւ է համր, **քան** թրքախօս լինել» [Հ, էջ 125], «Եօթնիցս հեշտ է պարտութեան մատնել մի կառաւարութիւն, ... մի բանակ, **քան** մի ժողովուրդ» [ԷԼԳ], «Նա յաճախ սրտի եւ գործողութեան մարդ է, **քան** մտքի» [Հ, էջ 42]:

Չափային առումով եզրերից մեկի առաւելութիւնը ցոյց տուող յաջորդ կապակցական բառն է *զերբազանցել*. «...եւ...նա (Ներոնը/հեղ.հեղ./) իր հրեշուրթիւններով **կը գերբազանցի** պատմութեան ծանօթ բոլոր բռնակալներին» [Հ, էջ 119], «Իր զագրելիութեամբ, սակայն այս բոլոր տիպերին **գերբազանցում է** ամերիկահայ ցեղուրաց կիւնը» [Հ, էջ 210], «Գործի վրայ տեսաւ թրքական սանձարձակ շնութիւնը, որ անասուններին իսկ **կը գերբազանցէ**» [Հ, էջ 613]:

Եւ վերջապէս, համեմատական աստիճանը միշտ չէ, որ ցոյց է տալիս եզրերից մեկի առաւել լինելը միւսի նկատմամբ, երբ հարկ է գործածել *ավելի* ածականը, ինչպէս տեսանք 1. կետում: Համեմատութեան հիմքում ընկած ընդհանուր յատկանիշի առումով եզրերից մեկը կարող է լինել թերի, պակասաւոր, եւ այդ ցոյց տալու համար գործածուում են *պակաս*, *նուազ*, *քիչ* կամ հոմանիշային այլ ածականներ՝ այս անգամ առանց բացառական յղովով դրուած գոյականների: Այս կարգի համեմատություններ թէև հա-

զուադեպ, բայց նոյնպէս կան. «... հացի մի կտոր է ցոյց տալիս մի-ամիտներին հաւատացնելու, թէ՛ Խորհրդային Հայաստանն էլ հաց ունի, թէ «կարմիր հացը» **նուազ** չափով աւագ ունի եւ աւելի համով է, **քան** էր «Դաշնակցութեան սեւ հացը»» [Հ, էջ 207]:

**դ. Նոյնութիւն:** Այժմ համեմատութիւնը ցոյց է տալիս ոչ թէ եզրերի ինչ-ինչ նմանութիւններ, չափային-քանակային յարաբերութիւններ, այլ ուղղակի նոյնական լինելը: Եզրերի կապակցական բառերն են՝ *նոյնն է* կամ հոմանիշը՝ *միեւնոյնն է*: Դրվում են երկու եզրերի միջեւ. «Գետերը՝ որքան էլ որ մեծ լինեն, թափուելով ծովերը՝ կը կորչեն: **Նոյնն է** հայ գաղթականութիւնը այն ժողովուրդների նկատմամբ, որոնց հետ կը խառնուի այսօր» [Հ, էջ 449], «-Մոռացի՛ր Մայիս Քսանութը, - գոռում են, ... առանց հասկանալու, որ դա **միեւնոյնն է՝** թէ ասէին Մասիս լեռան – գնա՛, կորի՛ր տեղիցդ» [Հ, էջ 120]:

*Սսել է.* «Հողն առանց ցեղի, **ասել է՝** մարմին առանց հոգու» [Հ, էջ 602]:

*Այն... ինչ:* Ինչպէս կերելա յետեւեալ մեջբերումներից, համեմատութիւններում *այն* դերանունը մտովի կարելի է փոխարինել *նոյն* դերանւամբ, քանի որ երկուսի դէպքում էլ նոյնականութիւնը չի փոխուում. «Ցեղը – ժողովրդի կենսաբանական անփոփոխելի տարրը – վերջինի համար խաղում է **այն** դերը, **ինչ** դեր որ կատարում է ուղեղը օրգանիզմի համար» [Հ, էջ 635], «... քաջութիւնը հայու համար եղել է **այն**, **ինչ** որ է համը պտուղի համար...» [Հ, էջ 355], «Ամերիկահայ ուսանողութիւնը... հայ կեանքում պիտի կատարէ **այն**, **ինչ** դեր կատարում են ուղեղն ու սիրտը մարդկային էակի համար» [Հ, էջ 257]:

Հազուադեպ, համեմատութիւններում նոյնական լինելը ցոյց է տրւում եզրերի միջեւ տարբերութիւն չլինելը նշելով: Ինչպէս. «Գիտակից ստրուկի եւ հանցագործի մէջ **չկայ տարբերութիւն**» [Հ, էջ 413]:

## § 9. Տեղ գտած կառուցուածքային յատկանիշներ

Այժմ հարկ է ուշադրութիւն դարձնել համեմատութեան, որպէս կառոյցի, մի քանի յատկանիշի վրայ: Նախորդ ենթագլխում եզրերն ունէին գրեթէ միշտ մէկ ընդհանուր յատկանիշ, որով եւ համեմատում էին մէկը միւսի հետ: Բայց այլ համեմատութիւններում եզրերն ունեն երկու, երեք կամ ասելի ընդհանուր յատկանիշներ: Այդպիսիներից են. «Եւ ո՛չ մի տուրք այնպիսիների ազդեցութեան, **որոնք ասելի բարի չեն, արի չեն, անձնէր չեն քեզնից**» [Հ, էջ 97]: Այստեղ չափանիշ է վերցուած միատեղ երեք յատկանիշ՝ *բարի, արի, անձնէր*: Յաջորդ համեմատութեան մէջ նոյնպէս երեք ընդհանուր յատկանիշ է. «Պատմութիւնը չգիտէ **ասելի մեծ, ասելի վսեմ, ասելի սուրբ** գործ, **քան** ապագայով վտանգուած մի ժողովրդի վերանորոգումը» [Հ, էջ 587]: Այսպիսի պարագայում հեղինակն ընտրում է որակական տարբեր յատկանիշներ, եզրերը բազմակողմանիօրէն, սպառիչ կերպով համադրելու համար. «Զօրաւորի հետ չափուելն **ասելի հեշտ**, նաեւ **ասելի պատուաբեր** է, **քան** նենգողի» [Հ, էջ 385], «Զրի **պէս շարժուն**, ջրի **պէս ամէն ձեւ ու գոյն առնելու ընդունակ**՝ սրանք (սինլքոր մարդիկ/հեղ.հեղ./) մէկի ստուերն են, միւսի արձագանգը, երրորդի՝ կապարճակիրը» [Հ, էջ 570], «Ես դեռ հաւատում եմ, ... որ ձեր բարեկամներից **ամենաբարձրն** ու **ամենամոտիկն** է ու կմնայ ճշմարտութիւնը»<sup>28</sup>: Ըստ որում, նոյն ընդհանուր յատկանիշը կարող է յաջորդաբար կրկնուել այլ սաստկական բառի հետ. «... ամբողջութիւնը **մեծ է, շա՛տ** է իր մի մասից » [Հ, էջ 35]:

Մինչ այժմ մեջբերուած համեմատութիւններում առկայ էր համադրուող երկու եզր: Ըստ որում, մի եզրը կարող է կրճատուել, քանի որ մտովի ինքնին վերականգնում է: Ինչպէս. «Հայը կ'ունենայ **ասելի բարձր** ըմբռնում կեանքի մասին...» [Հ, էջ 88]: Ինքնին հասկանալի է, որ ժամանակի ըմբռնումը համադրւում է ապագայում ունենալիք ըմբռնման հետ:

<sup>28</sup> ՀՅԴ ԿԱ, Ս. Վ., թթ.. 5-22:

Շատ այլ համեմատություններում մի եզրը համադրում է երկու կամ երեք եզրի հետ՝ դրանց հետ ունենալով կա՛մ մեկ ընդհանուր յատկանիշ, ինչպես յետեւեալ երկու մեջբերումում, կա՛մ իւրաքանչիւր եզրի հետ մի-մի առանձին՝ տարբեր բնոյթի յատկանիշ, ինչպես դրանց յաջորդող երրորդ ու չորրորդ մեջբերումներում. «... փայփայիչ անունը՝ զինուո՛ր՝ բարձր է ամէն **տիտղոսից, պաշտօնից, շքանշանից**» [Հ, էջ 404], «Հայրենասիրութի՛ն ... Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մէջ, **որքան փոքր է** այդ ժողովուրդը եւ **որքան ամբարիշտ են** նրա հարեւանները» [Հ, էջ 28]: Եւ ապա. «Ազգերէն ամենախառնարհինը ու բունկալութիւններէն ամենաանասնականը – **թուրքը**» [Հ, էջ 610]: Ասուածի առումով ամենաարտայայտիչը չորրորդ՝ ծաւալուն համեմատութիւնն է, ուր մտովի վերականգնում է կրճատուած առաջին եզրը, որը տարբեր յատկանիշներով համադրում է երեք այլ եզրի հետ. «Օր. Ն-ի վրայ (Էպիգրամ): Չքնա՛ դ ես, դիւթող, որպէս **մայիս**, Տաք ու այրող, **որպէս յուլիս**, Եւ անհաստատ, **որպէս սայրիլ**, Անխի դճ, դու շատերին ես խաբել» [ԳԵ, էջ 29]:

Աւելի բարդ են այն կառոյցները, որոնք բաղկացած են երկու գոյգ եզրից, այսինքն՝ երկու համեմատութիւնից, որոնք ներառուած են մէկ նախադասութեան մէջ: Երկրորդ համեմատութիւնը, որը կարելի էր եւ որպէս ինքնուրոյն դիտել, լրացնում, բացատրում է առաջին համեմատութիւնը: Ընդամին, համեմատութիւններում կարող են կրճատուած լինել եզրերից մէկը կամ դրանց ընդհանուր յատկանիշը, որոնք, սակայն, մտովի վերականգնում են: Մեջբերենք այդպիսի կառոյցներ. «Փոքր **ազգերը** պարտադրօրէն **աւելի հայրենասէր** պիտ լինեն, **քան մեծերը, մենք՝ աւելի՛, քան բոլորը**» [Հ, էջ 29]: Այստեղ եզրերն են *փոքր ազգերը* եւ *մեծերը*, ապա նաեւ՝ *մենք* եւ *բոլորը*: Երկրորդ համեմատութեան մէջ կրճատուած է *հայրենասէր պիտ լինեն* ընդհանուր յատկանիշը. «Յեղակրօնութեամբ, ցեղակրօնութեամբ միայն հայ հոգին պայքարի, դժբախտութեան ու կռուի մէջ **աւելի յանդուգն ու կատաղի կը դառնայ**, ինչպէս առիծը, երբ իր արնահոս վերքերն է տեսնում» [Հ, էջ 501]: Առաջին համեմատութեան մէջ

յիշատակուած չէ երկրորդ եզրը, դիցուք *քան է* (հայ հոգին պայքարի մէջ աւելի հանդուգն ու կատաղի կդառնայ, **քան է**): Երկրորդ համեմատութեան մէջ կրճատուած է *հանդուգն ու կատաղի կդառնայ* ընդհանուր յատկանիշը (ինչպէս առիծն է **աւելի յանդուգն ու կատաղի դառնում...**): Յաջորդ համեմատութեան մէջ նոյնպէս գտնում ենք կրճատում. «**Դու** պիտ չնմանւես այն **սերունդներին**, որոնք կորչել են առանց ազգային օգտակարութեան, ինչպէս խոռոչներում ընկած **արեւի ճառագայթը**» [Հ, էջ 94]: Հեղինակն այսպէս է դիմում ժամանակի երիտասարդութեանը. առաջին գոյգ եզրերն են *դու եւ սերունդներ*: *Սերունդներ* եզրն իր հերթին համադրուում է *արեւի ճառագայթի* հետ: Երկրորդ եզրում չի կրկրնուում *կորչել են առանց ազգային օգտակարութեան* ընդհանուր յատկանիշը (ինչպէս խոռոչներում ընկած արեւի ճառագայթն է **կորչում առանց որեւէ (ազգային/հեղ.հեղ./) օգտակարութեան**): Յետեւեալ երկու կառոյցներում երկու ամբողջական համեմատութիւններ են՝ իւրաքանչիւրն իր ընդհանուր յատկանիշով, բայց եւ իմաստային առումով փոխկապակցուած, իբրեւ բարդ ստորադասական նախադասութիւններ, որոնցում երկրորդ համեմատութիւնը ամբողջացնում, պարզաբանում է առաջինը. «**Մեամորթին** աւելի հեշտ է ճերմակցնել, **քան սրան** (կուսակցամոլին/հեղ.հեղ./) ընդունել տալ ամենապարզ ճշմարտութիւնը, օրինակ՝ համոզել, թէ **ամբողջութիւնը** մեծ է, շա՛տ է իր **մի մասից**» [Հ, էջ 35], «Կայ **հոգեբանական գերադասութիւնը**, կայ **բարոյական ոյժը** – **աշխարհի պէս հին**, բայց միշտ էլ թարմ եւ հրաշագործ, որին տիրապետող **ազգը** քիչ անգամ է գլուխ ծռել **իրենից** նիւթապէս տասնապատիկ ուժեղ **թշնամու** առաջ» [Հ, էջ 28]:

*Ամերիկահայութիւնը՝ ցեղը եւ իր տականքը* աշխատութեան 14-րդ գլխում Գ. Նժդեհը դիմել է համեմատութեան ամենաճաւաղուն՝ էջեր զբաղեցնող տեսակին: Գլուխը վերնագրուած է՝ *Մի բաղդատական*: Համառոտակի անդրադառնանք դրա բովանդակութեանը. «Մեր օրերը շատ տեսակէտներով յիշեցնում են Հայոց պատմութեան V դարը», - սկսում է նա ու ապա համապատասխան համեմատութիւններ անցկացնում. «... Աւարայրի շրջանի

պատմագիրը ... ազգայնական հայութիւնն անւանում է՝ *ուխտապահ*, հակազգայնականը՝ *ուրացոյ*: Մասանեան Հարստութիւնը, ... ճգնում էր հայութիւնը բաժանել երկու անհաշտ հատուածների, ինչպէս վարում է ե՛ւ խորհրդային իշխանութիւնն այսօր: ... Հայաշխարհի գլխին գալիք փորձանքների նախազգացումը հրդեհել էր ազգը, ինչպէս ե՛ւ այսօր: Վարդանը յանուն համօրէն հայութեան էր բարձրացրել դրօշակը, ինչպէս ե՛ւ Ղաշնակցութի՛ւնն այսօր: Ազգային շարժմանը մասնակցում էին ժողովրդական բռն՝ բ խաւերը՝ հոգեւորական, իշխան, ազատ, սեպուհ, ռամիկ, ինչպէս ե՛ւ այսօր: Արտաքին թշնամին գործ ունէր հայ ժողովրդի ծառայած խղճմտանքի հետ, ինչպէս Խ. Իշխանութիւնն՝ այսօր»: [Հ, էջ 258-259]: Այսպէս, բաղկացած լինելով կապակցական բառերով փոքրածուալ համեմատութիւններից եւ առանց կապակցական բառերի համադրումներից՝ ամբողջ գլուխը մի ծաւալուն համեմատութիւն է իր ժամանակի եւ 5-րդ դարի միջեւ: Այնուհետեւ համադրում են Ղեւոնդ Երեցը եւ իր ժամանակի «ղեւոնդատիպ» եկեղեցականը, Վասակը եւ իր ժամանակի հայ ազգայնական պայքարն ուրացողը, 5-րդ դարի տիկնայք եւ կարմիր խաչուհիները, Վարդանի պէս հայրենիքն ու կրօնը պաշտպանողը եւ ցեղակրօնը, 5-րդ դարի եւ իր ժամանակի պատմութեան գնահատականները:

### ***§ 10. Համեմատութիւնների բովանդակային կողմը***

Ենթագլխում ներկայացում է Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններից կատարած համեմատութիւնների մի ծաղկաքաղ: Այն հեղինակի բանաստեղծական մտածողութեան մի կողմի արգասիքների ընդհանուր պատկերն է միայն (միւս կողմերի պատկերները յաջորդ երկու ենթագլխում): Համեմատութիւնները բաժանուած են խմբերի, ըստ վերջինների բովանդակային թեմաների, եւ կրում են յետեւեալ անուանումները.

***Քնարական:*** Այս փնջիկն արտայայտում է Նժդեհի բանաստեղծական խոր զգացողութիւնը եւ տաք վերաբերմունքը դէպի



բնութիւնը, դէպի սիրո զգացումն ընդհանրապէս ու զգայական սէրը՝ մասնաւորապէս.

«Մայիսեան հրաշագեղ առաւօտներից մէկն էր... Գեղեցիկ էր այդ օրը, գեղեցիկ կոյսի կոկոն կրծքի նման, կոյսի առաջին սիրոյ նման...» [ԳԵ, էջ 12]:

«Սիրում եմ քեզ աւելի, քան արծիւր՝ բարձր ժայռերը»:<sup>29</sup>

«Երկու տարին կը բոլորէ, մայր, որ հեռու եմ քեզմէ, կարօտ եմ անգուգական սիրոյդ ու ծարաւի եմ քեզ՝ որպէս անապատը անձրեւի» [ԳրԵ, էջ 113]:

«Որքան գեղեցիկ, այնքան անսիրտ է կինը» [ԳԵ, էջ 18]:

«... նայում էր նրա ծով աչերին, նայում ու յուզում ծովի պէս...» [ԳԵ, էջ 87]:

«...կռով փախցրեց երազին տեսած արեւի պէս տաք, էն արեւ Գիւղէլին» [ն.տ.]:

«Արեւմարին երկնքի կամարէն առաջին փայլող աստղին չափ մենակ՝ եւ խոժոր ամպերու փոթորիկ անձրեւով յղի կուրծքը ձեղքելէն անցնող փայլակին չափ առանձին ըլլալս զգացի» [ԳրԵ, էջ 117]:

«... եւ տխուր էր Նա, տխուր, ինչպէս լռութիւնը Արաբիայի աւազուտ անապատների» [Հ, էջ 409]:

«Բաներ կան, որոնց էութիւնը տկար խօսքը արտայայտում է այն չափով միայն, ինչ չափով կաթիլն արտացոլում է անսահմանութիւնն ու վեհութիւնը աստղալից երկնքի» [Հ, էջ 367]:

**Հայրենասիրական:** Համեմատութիւնները հնչում են մեղեդիների պէս, որտեղ լսում են հպարտութիւն, նուիրեալի սէր դէպի արեւակենտրոն դարձած հայրենիքը: Խումբն իր ամբողջութեան մէջ կազմում է օրատորիա.

«Հայրենիքի չափ նուիրական է եւ պատերազմը հայրենական» [Հ, էջ 346]:

---

<sup>29</sup> Ռ. Համբարձումեան, *Գարեգին Նժդեհ, Կենսագրական յավելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ*, «Նախիջեան» հրատ., Երեւան, 2005 թ., էջ 380:

«Հապա Ահարոնեա՞նը՝ իշխանն ու փառքը մեր նորագոյն գրականութեան, որի սիրտը արեւածաղիկի պէս միշտ էլ արելը – Արարատեան արելը փնտռեց» [Հ, էջ 469]:

«Չկայ աւելի մեծ յանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմութեանն անձանօթ լինելը»<sup>30</sup>:

«... Իմ ցեղն աւելի՛ն է տուել մարդկութեան, քան ստացել է նրանից» [Հ, էջ 246]:

«Ինչ վերաբերում է հայոց հայրենիքին, նրա հոգեւոր եւ աշխարհագրական տարողութիւնները իրար համեմատում են ճիշտ այնպէս, ինչպէս Արարատն ու Արարատեան դաշտում ընկած մի համեստ բլուր» [Հ, էջ 399]:

«Ինչպէս այքս՝ լոյսը, այնպէս էլ սիրտս Հայաստանն է փընտռում» [Հ, էջ 575]:

«Հայրենասիրութի՛ւն... Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մէջ, որքան փոքր է այդ ժողովուրդը եւ որքան ամբարիշտ են նրա հարեւանները» [Հ, էջ 28]:

«... ժողովուրդը առանց հայրենասիրութեան այն է, ինչ որ մի մարմին՝ առանց հոգու» [ն. տ.]:

«Ինձ վստահուած զինուած ոյժերը... պէտք է յաղթեն թշնամուն, որը յանդգնել է ստրկացնել հպարտ եւ անպարտելի, ինչպէս իր լեռան գագաթները, հարազատ Ղարաբաղը»<sup>31</sup>:

**Քաղաքական:** Այստեղ արդէն հնչում է Նժդեհի հոգու ճիչը, որովհետեւ հայութեան ներքաղաքական կեանքը, մեծ պետութիւնների վերաբերմունքը նրա սրտի ցաւն է: Հակաազգայնականութիւնը, մտաւորականութեան ու գաղթականութեան վիճակը, իր խօսքերով ասած, *հիւանդացնելու չափ*\* մտահոգում, ուրեմն եւ պայքարի են հանում նրան: Սոյն խմբում արտայայտող անհանգստութիւնն այսօր էլ արդիական է.

«... դեռ այսօր էլ, հայութեան քաղաքական ճակատագրէն աւելի՛ դառն է նրա ներքին ճակատագիրը» [Հ, էջ 155]:

---

<sup>30</sup> «Ռեզումիկ» օրաթերթ, 1943 թ., թթ.. 169-174:

<sup>31</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ.. 21-22:

\*Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

«Այսօր աւելի հեշտ է եօթը շնագայլերի քաղցը յագեցնել, քան անցեղաշունչ հայ ստամտաւորականի չարութիւնը» [Հ, էջ 532]:

«Թերթեր ունենք, որոնց, ինչպէս եղինճին, չի կարելի ձեռք տալ՝ առանց խայթելու» [Հ, էջ 33]:

«Պատմագիտօրէն տգէտ՝ նա (հակայեղափոխական հայութիւնը/հեղ.հեղ./) իր նախնիքներին համարում է իրեն բնութենակից, որոնց, սակայն, հոգուով այնքան կը նմանի, որքան աղաւնի՝ արծուին» [Հ, էջ 459]:

«Բազմանալու զարմանալի կարողութիւն ունի (գաղթակաւորութիւնը/հեղ.հեղ./): Որպէս ձնագունդ, որքան թաւալում, որքան առաջանում է, այնքան աճում, մեծանում է» [ԱՍ]:

«Չկայ աւելի մեծ չարիք, աւելի մեծ աղէտ ժողովրդի համար – մասնաւորապէս մեզ նման փոքրիկ ժողովրդի համար – քան կոյր կուսակցամոլութիւնը» [Հ, էջ 35]:

«Որքան մոռացկոտ, այնքան տկար ու դժբախտ է դա: Մոռացա՞ւ իր պատմութիւնը, ասել է՝ անխրատ է ժողովուրդը եւ պատժի արժանի» [Հ, էջ 457]:

**Կենսափորձային:** Համեմատութիւնները խարսխուած են Նժդեհի սեփական կենսափորձի ու տառապանքի վրայ, որ ապրել է ռազմադաշտերում տարիներ անցկացրած մարդը, նաև ոչ պատերազմական, բայց յոռի կեանքն ու առաւել եւս յոռի մարդկանց ճանաչած գործիչը.

«Զգուելի է եսասերը: ... իր յանցաւոր եսի մէջ փակուած, ինչպէս իխունջն իր պատեանի մէջ» [Հ, էջ 30]:

«Եթէ հայկական նախանձի չափ զօրաւոր լինէր հայ մարդու թրքատեացութիւնը, տարբեր պիտի լինէր հայութեան եւ Հայաստանի ճակատագիրը» [Հ, էջ 568]:

«Կշտացած առիծը կորցնում է իր կատաղութիւնը: Իսկ մարդն անկշտում է. որքան խժռում, որքան հարստանում, այնքան կատաղում է նա» [Հ, էջ 360]:

«Լաւ է Դիոգենէսի տակառով բաւականանալ, քան Արիստիպոսի նման քարշ գալ թագավորների ետեւից ու հացկատակել նրանց սեղանների շուրջը» [Հ, էջ 360]:

«...թշնամիները նման են շների, որքան որ վախեցար, այն-  
քան կյարձակուեն» [Հ, էջ 43]:

«Հերոսական գործերից աւելի ոգեշնչող է մահը հերոսական»  
[Հ, էջ 348]:

«... կռուի ժամանակ զինվորը աւելի բարոյական մենակու-  
թիւնից է վախենում, քան մահից» [Հ, էջ 143]:

«Զօրաւորի հետ չափուելն աւելի հեշտ, նաեւ՝ աւելի պատուա-  
բեր է, քան նենգողի» [Հ, էջ 385]:

«Նահատակի, հերոսի ... չափ սիրելի է նաեւ զոջացեալ ուրա-  
ցողը» [Հ, էջ 331]:

«...Չկայ աստուածօրէն աւելի վսեմ եւ գեղեցիկ շարժումէ,  
քան մեր սրից ու գնդակից զարնուած հակառակորդի վերքերը  
կապելը: Ինչպէս չկայ աւելի բարբարոս արարք, քան վիրավորին  
նոր վերքեր հասցնելը» [Հ, էջ 137]:

«Կռիւներում հերոսանալուց աւելի դժուար է կեանքում հերո-  
սավայել կեցուածք ունենալը» [Հ, էջ 365]:

**Նոնհական:** Տիեզերքի, պատմութեան, ժողովրդի էութեան,  
միով բանիւ ժամանակի քննութիւնն է այս խումբը: Այստեղ իրար  
են յաջորդում ժամանակի պէս մշտատեւ ճշմարտութիւնները եւ  
հնչում համանուագի պէս: Բոլոր խմբերում համեմատութիւն-  
ները գեղեցիկ են, դիպուկ, խորիմաստ: Դրանք խոր ընդհանրա-  
ցումներ են եւ, մեծ մասամբ, հնչում են որպէս ասոյթներ:

Եւ այսպէս. «...Ճշմարտութիւններ կան, որոնք անմեռ են, յա-  
ւիտենական, ինչպէս ինքը՝ ժամանակը» [Հ, էջ 552]:

«Լաւ է դժբախտ, քան նուաստամիտ լինել» [Հ, էջ 364]:

«Աշխատի՛ր, որ փառքդ ստուերի պէս ընթանայ յետեւէդ,  
բայց երբէ՛ք առջեւէդ» [Հ, էջ 364]:

«Բաներ կան տիեզերքում, որոնց մասին մարդը գիտէ այն-  
քան միայն, որքան միօրեայ կեանքով ապրող միջատը Պլատոնի  
նախայաւիտենական գաղափարների մասին» [Հ, էջ 373]:

«Մեծ պաշտօններն առանց հոգեկան մեծութեան նման են  
կաւէ անդրիի՝ դրուած ոսկէ պատուանդանի վրայ» [Հ, էջ 366]:

«Գիտես, Դիոգենեսն իրեն աւելի երջանիկ կը զգար՝ քան իրեն այցի եկած աշխարհակալը» [Հ, էջ 99]:

«...Ժողովուրդներն աւելի ուժեղ են, քան ժամանակաւոր դժբախտութիւնը, կարիքը, բռնութիւնը» [Հ, էջ 89]:

«Ժողովուրդները չունեն՝ն աւելի մեծ թշնամի, քան վատ գիրքը՝ դրուած իրենց նորահաս սերունդի ձեռքը...» [Հ, էջ 587]:

«Եօթնիցս հեշտ է պարտութեան մատնել մի կառավարութիւն, մի կուսակցութիւն, մի բանակ, քան մի ժողովուրդ » [ԷԼԳ]:

«Աւելի հեշտ է արդար լինել, քան ամէն գնով արդարութիւնը պաշտպանել» [Հ, էջ 628]:

«...մարդն ու աշխարհը աւելի են շահում շատերի համեստ, բայց մարդկօրէն բարի գործերից, քան սակավաթիվ անհատների մեծագործութիւններից» [Հ, էջ 362]:

«Բարոյական դեմոկրատիան, մարդկային արարածի անկատարելութեան պատճառով, կը մնայ երազ, ինչպէս երազ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը» [Հ, էջ 606]:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐ

### ՄԱԿԴԻՐՆԵՐ

#### **§ 11. Ինչպիսիք են մակդիրները**

Գարեգին Նժդեհի պատկերաւոր մտածողութեան երկրորդ դրսեւորումը գեղարուեստական մակդիրներն են, որոնցով նա բնութագրում է մարդուն, կեանքի այս կամ այն երեւոյթը, բնութիւնը: Հեղինակն, անշուշտ օգտագործել է ժողովրդական մտածողութեան, այսպէս կոչուած, կայուն մակդիրները իրենց մակդիրակիրների հետ, ինչպիսիք են՝ *սար դարդ, ծով ցալ*, ապա նաեւ՝ համընդհանուր ճանաչում ստացած, այլեւայլ հեղինակների կողմից մշտապէս գործածուող մակդիրներ՝ մակդիրակիրների հետ՝ *խենթ քամի, բոցավառ շրթունքներ, առիծածին մայրեր* եւ ուրիշներ: Սակայն մեր բառաքաղած մակդիրների մեծագոյն մասը Նժդեհի ներշնչանքի, մտքի արգասիքներն են, որոնց վրայ էլ հիմնականում կձանրանանք:

Լեզուական առումով քննուող մակդիրներն արտայայտում են մեկական բառով եւ անհամեմատ սակաւ՝ բառակապակցութիւններով: Վերջիններից կարելի է յիշատակել (մակդիրները մշտապէս ներկայացում են մակդիրակիրների հետ). *հոգով արծիւ հայ, Արարատեան արեւով օծուն ճակատ, հոգեպէս քանդուած էակ, ճշմարտութեամբ օծուն գրիչ* և այլն... «... ջերմ համբոյր ... մեծ վշտակրին (Սևարունեանի/հեղ.հեղ./) **Արարատեան արեւով օծուն ճակատը** այնքան սիրով յանճարի ձեռքը շօշափեց» [Հ, էջ 151], «Նա, իբր **հոգեպէս քանդուած էակ**՝ նաեւ պատրապաշտ է.» [Հ, էջ 197], «Ցեղակրօնը ... **հոգով արծիւ հայն է**, որ... թեւահարում է վերստին... դէպի հայոց պատմութեան կատար-

ները» [Հ, էջ 243-244], «Տեսնել ու հասկանալ կ'սկսին ... շարժուիլ կ'սկսին **ճշմարտութեամբ օծուն գրիչներ**» [Հ, էջ 88]:

Հանդիպում են համեմատութիւններ, որոնք այս դէպքում ծառայում են իբրև մակդիրներ. *ծովի պէս յուզւած ջահել, արեւի պէս տաք գիւղել*. «Գուցէի իմ ստուերն է յուզել ծովի կապուտաչեայ աղջիկներին ...,- մտածեց **ծովի պէս յուզւած ջահելը**» [ԳԵ, էջ 86], «... կռով փախցրեց երազին տեսած **արեւի պէս տաք** էն արեւ **Գիւղելին**» [ԳԵ, էջ 87]:

Մակդիրների մեծագոյն մասն արտայայտուած է մեկական բառով, ինչը եւ ընդհանրապէս աւելի տարածուած է գրականութեան մէջ: Ահա այդպիսիներից հինգը. *ալեւոր իմաստութիւն, անարեւ ծերութիւն, դժոխատիպ բանտ, կարմիր վրեժ, հաւերժաշունչ ոգի*. ««Ինչ որ Աստուածն է, այն էլ իր երկրպագուներն են», - ասել է արեւելքի **ալեւոր իմաստութիւնը**» [Հ, էջ 498], «... կա՛յ մի բան, որ թունաւորում է... սարսափեցնում՝ **անարեւ ծերութեան** ու մահուան ուրուականներով» [Հ, էջ 93], «...ժողովուրդների երեւակայութիւնն ահաբեկող **դժոխատիպ բանտերն** ու գնդանները, ...» [Հ, էջ 414-415], «Ես **կարմիր վրեժով** բռնուած կ'ուզեմ հարա յ տալ... - էյ գիտի նամարդ աշխարհ...» [ԳԵ, էջ 10], «Պատմական անձը քարեղէն արձան, քարացած էութիւն չէ, այլ՝ **յաւերժաշունչ ոգի**» [Հ, էջ 359]:

Խօսքիմասային առումով, սովորաբար, այսպէս է նաեւ ներկայ պարագայում, մակդիրներն արտայայտուում են ածականներով, ինչպիսիք էին վերը բերուած մեկական բառով արտայայտուածները: Այդպիսիք այլ առիթներով կլինեն նաեւ յետագայ շարադրանքում: Նժդեհի ստեղծագործութիւններում նոյնպէս կան գոյականով կամ դերբայներով արտայայտուած մակդիրներ: Գոյականական են՝ *աղամանդ գեղեցկութիւն, բարտի հասակ, բոց շուրթեր, գայլ հարեւաններ, արծիւ ռազմիկ*. «Ո՞վ կը կոտրէ սիրոյ գրիչն **գեղեցկութեան աղամանդ...**» [ԳրԵ, էջ 119]: «...**Բարտի հասակս** աւիշի էր կարօտ, ...» [ԳրԵ, էջ 112], «...**Բոց շրթներէ**լ փերթ առ փերթ, Թափէ ժպիտդ աչքերուս մէջ...» [ԳրԵ, էջ 120], «... այսօր կը չարախնդան իր **գայլ հարեւաններէն** թուրքն ու

թաթարը» [Հ, էջ 448], «...նա սիրւած էր, Էն հպարտ **արծիւ ուզ-  
միկը...**» [Հ, էջ 413]: Դերբայներից, ինքնըստինքեան, գործածուած են հարակատարն ու ենթակայականը՝ *գերեզմանացած Թրքա-  
հայաստան, շպարուած թուլութիւն, խաչուած արդարութիւն*, ապա նաեւ՝ *ժպտացող յոյս, խայթող թերթ, հառաչող ազգեր*. «Թշնամին հսկում է ոչ միայն **գերեզմանացած Թրքահա-  
յաստանի**, այլև Խորհրդային Հայաստանի խաղաղութեան վրայ» [Հ, էջ 57 ], «... նուաստութիւն – ասել է **շպարուած թուլութիւն...**» [Հ, էջ 138], «Էականը դա դաւադրուած Նժդեհը չէ, **խաչուած ար-  
դարութիւնը...**»: Եւ ապա. «Այո, երեխան ... խոստումնալից կա-  
րելիութիւն է, մի **ժպտացող յոյս**՝ լաւագոյն ապագայի» [Հ, էջ 252], «...շուկայիկ յիշոցներ, ...գրախոսութիւն – ահա մեր «**խայթող**» **թերթերի** հրապարակախօսութիւնը» [Հ, էջ 33], «**Հառաչող ազգե-  
րը**՝ ստրուկ, ... միշտ էլ դիմել են յեղափոխութեան» [Հ, էջ 84]:

Քննուող մակդիրների մեծագոյն մասը փոխաբերական բնույթի է, իսկ անհամեմատ փոքր մասը՝ *ուղղակի իմաստ* ունեցող: Վերջիններից են՝ *գինետնային հայրենասիրութիւն, հայրենա-  
կրօն մայրեր, ոգելից երիտասարդութիւն, քաղաքականապէս  
մուրացիկ ժողովուրդ, գոհայօժար հայրենասիրութիւն*, որոնք բա-  
նաստեղծական են իւրովի. «**Գինետնային հայրենասիրութիւնը...**  
այնքան էլ հեռու չէ անհայրենասիրութիւնից» [Հ, էջ 117], «Բնչ-  
պիսի՛ աստուածային հաճոյք մարտնչողի համար՝ լսել խրախու-  
սիչ ձայնը **հայրենակրօն մօր**: *Մայր անունը\** պիտ դառնայ ...  
սրբազան մենաշնորհը **հայրենակրօն մայրերի**» [Հ, էջ 123-124],  
«Դէպ մեզ է գալիս մեր **ոգելից երիտասարդութիւնը**» [Հ, էջ 169],  
«Տկար, քաղաքականապէս **մուրացիկ... ժողովուրդ**» [Հ, էջ 133],  
«Հայաստանը պետք ունի հանապազօրեայ եւ **գոհայօժար հայ-  
րենասիրութեան**» [Հ, էջ 602]:

*Փոխաբերական իմաստ* ունեցող մակդիրները դիտարկելիս հարկ է ուշադրութիւն դարձնել յետեւեալ ոճական հնարների վրայ, որոնցով արտայայտուածները առաւել շատ են: *Շնչաւո-  
րում* եւ աւելի նեղ իմաստով՝ *անձնաւորում*. բնութեան երեւոյթ-

\* Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:



ներին, առարկաներին վերագրում են կենդանիների կամ մարդու յատկություններ: Մարդկանց ծայր աղքատութեան մեջ պահող կարիքը բնորոշում է, իբրև *բոնակալ*, զվլացող առուակը՝ *լալկան*, (համապատասխանեցնելով նկարագրուող իրավիճակին) մեղմ զեփիւոր՝ *հեզ*, վերջալոյսը՝ *տխուր*, գիշերային կիսախաւարով պատուած դաշտերը՝ *քնաթաթախ*. «...հազար հազարներին սեւ ցան է ընկերանում, **բոնակալ կարիքը նեղում...**» [Հ, էջ 412], «Նա սիրում էր մորմոքը **լալկան աուակի ...**» [Հ, էջ 413], «Իմ սէ՛րը – դա **շունչն է հեզ զեփիւորի**» [ԳԵ, էջ 45], «Ահ, նա (Հրանտը/հեղ.հեղ./) սիրում էր եւ **վերջալոյսը տխուր ...**» [Հ, էջ 413], «... եկայ պատմելու, թէ ինչպէս **քնաթաթախ դաշտերում՝** մխացի ես...» [ԳԵ, էջ 34]:

Քանակով շատ անելին են այն մակդիրների ու մակդիրակիրների կապակցությունները, որոնցում բնութեան երեւոյթների կամ առարկաների յատկությունները վերագրում են մարդուն: Այս կերպ *բուռն ու ջերմ սէրը* հեղինակը բնորոշում է՝ իբրև *արեւոտ*; *բուռն զգացմունքներ արտայայտող շրթունքները՝ բոցավառ, ջարդարար* հարեւան *ժողովուրդներին՝ գիշատիչ; գոհունակութիւն արտայայտող ժպիտը՝ լուսափայլ; բուռն ու ջերմագին կարօտը՝ հրեղեն; յաղթական, խիզախ առաջնորդին՝ շանթանման*. «**Ճապոնացու արեւոտ սիրով** սիրի՛ր հայրենիք...» [Հ, էջ 418]. «Այս խօսքերը շնչացին Արծիւ Լաթոյի **բոցաւառ շրթունքները...**» [Հ, էջ 416], «...դա ասել է՝ հեշտացնել մեր **գիշատիչ հարեւանների** գործը...» [Հ, էջ 34], «... բաւականութեան **լուսափայլ ժպիտը** երեսիդ...» [Հ, էջ 412], «... օրւայ հայութեան միջոցով ... **հրեղէն կարօտով** եւ կամքով իր հին փառքերը կը փնտռէ» [Հ, էջ 174], «Այո, ... նման գրքերին է յաջողում ժողովրդէն **շանթանման առաջնորդներ** ու մահապատրաստ վիտիազներ քամել» [Հ, էջ 595]:

Մի երրորդ ոճական հնարով բնութեան մի երեւոյթի, առարկայի յատկութիւնը վերագրում է դարձեալ բնութեան մեկ ուրիշ երեւոյթի, առարկայի. եթէ համեմատութիւններով արտայայտունք, *զեփիւորը* հաճելի է ու մարմնին դուրեկան, ինչպէս

*թաւիշը, այբուբենը՝ սրբագան ու գեղեցիկ՝ ասես լուսեղեն, աստղերը՝ ոսկու պէս շողացող. «Իմ սէ բը, դա շունչն է ... թաւշեայ գեփիտի...» [ԳԵ, էջ 45], «...լուսեղեն այբուբեն ... մեզ տւել է Տարօնը» [Հ, էջ 525], «Ահ, նա սիրում էր ե՛ւ ՚ւ երգն անխօս ոսկեշող աստղերի...» [Հ, էջ 413]:*

## ***§ 12. Մակդիրների կիրառութիւնը***

Գարեգին Նժդեհի երկերում տեղ գտած մակդիրների ցանկը քննելիս աչքի է զարնում յետեւեալ հանգամանքը: Նա առանձնակի հակում ունի դէպի որոշակի բառեր ու արմատներ եւ դրբանցով է կազմում իր մակդիրների մեծ մասը: Այդ բառերն ու արմատները բնորոշում են նրա իսկ էութիւնը, ներդաշնակում նրա իսկ իդձերին ու նպատակներին, արտայայտում նրա սիրելի կամ գարշողական վերաբերմունքը դէպի ինչ-ինչ առարկաներ, երեւոյթներ, մարդիկ՝ ներշնչելով նրան ստեղծելու իր խօսուն մակդիրները: Ահա այս կերպ առանձնանում են՝ *Աստուած, արեւ, բոց, հայ, լոյս, հուր, շանթ, ոսկի* բառերը եւ դրանցով կազմուած բարդութիւնները: Դրական բնորոշումների պարագայում՝ *աստուածաշունչ, աստուածագարդ արեւադէմ, արեւոտ, բոցավառ, բոցեղեն, բոցաշունչ, լուսադաւան, լուսափայլ, լուսեղեն, հրաշունչ, հրեղեն, հրաբերան, շանթանման, շանթընկեց, շանթոդ, ոսկեղեն*: Բացասական բնորոշումների դէպքում՝ *հայակեր, հրատանջ, մահաշունչ, գայլ, գիշատիչ, թղթե, շնացեղ*: Շատ այլ մակդիրների շարքում ահա սրա՛նց վրայ է սեւեռում ընթերցողի ուշադրութիւնը: Ճիշտ նոյն կերպ աչքի են զարնում մեծ թուով որոշակի մակդիրակիրներ, որոնք հանդիպում են նկատելիօրէն յաճախ՝ կապուած հեղինակի որդեգրած գաղափարների, ապա նաեւ այն հասարակական երեւոյթների, խնդիրների, մարդկային ներաշխարհի, հասարակական միջուայրի հետ, որոնց մասին գրում, լուսաբանում կամ նկարագրում է նա: Առանձին-առանձին կանգ առնենք Նժդեհի նախասիրած այն թեմաների վրայ, որոնց նուիրուած երկերում գոհարների պէս սփռուած են առաւել

յաճախ գործածուած մակդիրների ու մակդիրակիրների կապակցութիւնները՝ առիթը ներկայանալիս անդրադառնալով նիւթի հետ ներդաշնակող այլեւայլ մակդիրների նոյնպէս:

**ա. Հայրենասիրութիւն:** Այս կէտում ընթերցողը Նժդեհի հետ միատեղ ապրում է բանաստեղծական շնչով արտայայտուած նրա նուիրական զգացմունքները դէպի հայրենի երկիրը, ազգը, ամենաընդհանուր ընդգրկմամբ՝ ցեղը եւ նրա մշակոյթը. «...**առիծաբնակ երկրամաս**» [Հ, էջ 659], **արեւադէմ ժողովուրդ** [Հ, էջ 594], **«երկաթե ժողովուրդ»** [Հ, էջ 450], **«լուսեղեն այբուբեն»** [Հ, էջ 525], **«հոգով արծիւ հայ»** [Հ, էջ 243], **«հոգով արծիւ ժողովուրդ»** [Հ, էջ 442]. դէպի այդ երկիրը բնակեցրած ու բնակեցնող հայրերը, մայրերը, որդիները. **«առիծածին մայրեր»** [Հ, էջ 125 ], **«աստուածաշունչ նահատակ»** [Հ, էջ 78], **«աստուածաշունչ որդի»** [Հ, էջ 546], **«լուսադաւան նախահայրեր»** [Հ, էջ 354], **«հայրենակրօն մայրեր»** [Հ, էջ 123], **«հրաշունչ Մամիկոնեան»** [Հ, էջ 382], **«հրաշունչ Վարդաններ»** [Հ, էջ 550]: Ընթերցողը նոյնպիսի վիշտ է ապրում հեղինակի հետ՝ իր տառապաշատ ժողովուրդի համար ու դառնում ատելավատ դէպի այդ վիշտը պատճառողները. **«գայլ հարեան»** [Հ, էջ 448], **«գայլ ցեղ»** [Հ, էջ 78], **«գերեզմանացած Թրքահայաստան»** [Հ, էջ 57], **«գիշատիչ հարեաններ»** [Հ, էջ 34], **«հառաչող ազգ»** [Հ, էջ 84], **«հրատանջ Ազգ»** [Հ, էջ 435], **«որբացած երկիր»** [Հ, էջ 416]: Սակայն Նժդեհը ոգեպնդում է իր ժողովրդին, ոտքի հանում դէպի յառնում. **«բոցեղեն հայրենաբաղձութիւն»** [Հ, էջ 468], **«դիւցազնաշունչ ցեղականչ»** [Հ, էջ 533], **«հրաշունչ ցեղայնութիւն»** [Հ, էջ 488], **«ոգելից երիտասարդութիւն»** [Հ, էջ 169], **«շանթանման հերոսներ»** [Հ, էջ 346], **«վրիժավատ հայորդի»** [Հ, էջ 417]:

**բ. Կոխ ու պայքար:** Բոլորի պարտականութիւնն է հայրենիքի պաշտպան դառնալ՝ ճակատելով թշնամիների դէմ, ըստ ո-րում միշտ պատրաստ լինելով նահատակուելու նրա համար, հոգեպէս գերազանցութիւն ունենալ նուաճողների նկատմամբ, դրանով իսկ յաղթական լինել ռազմադաշտերում: Արծարծելով այս գաղափարը՝ Նժդեհը դիմում է ռազմաշունչ մակդիրների՝

հայրենի պաշտպաններին վերագրելով գերհզոր ոյժ ու խիզախութիւն: Ուվքեր են նրանք ու ինչպիսին են նրանք: Ահա՛. «աստուածաշունչ դիւցազն» [ԳԵ, էջ 67], «աստուածաշունչ Հսկայ» [Հ, էջ 410], «աստուածաշունչ նահատակ» [Հ, էջ 78], «արծիւ ռազմիկ» [Հ, էջ 413], «հրաշունչ զինուոր» [Հ, էջ 568], «հրաշունչ Մամիկոնեան» [Հ, էջ 382], «հրաշունչ ռազմիկ» [ՆՆ, էջ 24], «շանթընկեց բազուկ» [Հ, էջ 489], «շանթող զորաւար» [Հ, էջ 383], «փոթորկաշունչ այրուծի» [Հ, էջ 380]:

**գ. Խօսք:** Գ. Նժդեհը բազմաթիւ առիթներով արծարծել է խօսքի վճռական նշանակութիւնը եւ նրա ներգործութիւնը զանգուածների վրայ՝ համարելով զենքից աւելի ուժեղ միջոց՝ բոցավառելու հայրենասիրութիւն, ապա եւ ռազմադաշտերում յաղթական դուրս գալու համոզուածութիւն: Ներակայացուող մակդիրաւոր բառակապակցութիւնները բնութագրում են խօսքը իր դրական, ապա նաեւ բացասական դրսեւորումներով. «աղտեղաբան թռուցիկ» [Հ, էջ 211], «թղթե կարգադրութիւն»<sup>32</sup>, «խայթող թերթ» [Հ, էջ 33], «հայհոյանքներով խնկած յողուած» [Հ, էջ 104], «մահաշունչ կեղծիք» [Հ, էջ 86], «մեռեալ շեշտ» [Հ, էջ 460], «ուռուցիկ խօսքեր» [Հ, էջ 30]... Բայց նաեւ. «աստուածաշունչ խօսք» [Հ, էջ 413], «աստուածաշունչ մունետիկ» [Հ, էջ 593], «Մարգարեաշունչ Քրիստափորներ» [Հ, էջ 171-172], «երկաթ խօսք» [ԳԵ, էջ 20], «խաչուած խօսք» [ԳԵ, էջ 23], «հրեղէն խօսք» [Հ, էջ 470], «հրաբերան պերճախօս» [Հ, էջ 107], «հրեղէն պատգամ» [Հ, էջ 413], «ոսկէ խօսքեր» [Հ, էջ 96], «տաք խօսք»<sup>33</sup>, «ցեղաշունչ խօսք» [Հ, էջ 148]:

**դ. Մարդ:** Ինչպիսի՞ն է մարդը՝ իր ֆիզիկական, հոգեկան, բարոյական առումներով: Նա է կրողը հայրենասիրութեան կամ հակահայրենասիրութեան (հեղինակի բնորոշմամբ՝ զինետնային հայրենասիրութեան), *կարճաշունչ հայրենասիրութեան*: Նա է վախկոտօրէն տեղի տալիս եւ կամ գրեթէ առանց զենքի սրբազան զգացումներով օժտուած, յաղթում թշնամուն: Նրանն է թե՛

<sup>32</sup> Դատական գործ 9698, թթ.. 321-339:

<sup>33</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ.. 19-20:

*տգեղատգեղ*, անբովանդակ, թե՛ ոգեշունչ *իմաստախոր* խօսքը: Այս ամենին Գ. Նժդեհը յաճախ է անդրադարձել՝ վերլուծելով կերպարներ եւ մարդկային ներաշխարհը: Ներքոյիշեալ մակդիրային կապակցութիւնները վերաբերում են մարդու ֆիզիկականին. «**ադամանդ գեղեցկութիւն**» [ԳրԵ, էջ 119], «**ադամանդ ճակատ**» [Հ, էջ 180], «**բարտի հասակ**» [ԳրԵ, էջ 121], «**Արա-րատեան արեւով օծուն ճակատ**» [Հ, էջ 151], «**բոց շրթներ**» [ԳրԵ, էջ 120], «**լուսափայլ ժայիտ**» [Հ, էջ 412], «**կայծկլտուն նայուածք**» [ԳրԵ, էջ 127], «**կարօտավառ հայեացք**» [Հ, էջ 326], «**վիուկատիպ կանայք**» [Հ, էջ 210]:

**ե. Հոգեկան աշխարհ:** Բնութագրում է մարդու ներաշխարհը, նրա դրական ու բացասական յատկութիւնները. «**անյատակ տգիտութիւն**» [Հ, էջ 115], «**գաղջ վերաբերմունք**» [Հ, էջ 581], «**բնաեղծուած սրիկա**» [Հ, էջ 194] «**թղթէ յիմարութիւն**» [Հ, էջ 534], «**ժանգոտ մտածում**» [Հ, էջ 102], «**հիւանդոտ փառասիրութիւն**» [Հ, էջ 23], «**խորշակահար հոգի**» [Հ, էջ 135], «**հողմավար հոգի**» [ԳրԵ, էջ 102], «**հոգեպէս քանդուած էակ**» [Հ, էջ 197], «**շպարուած թուլութիւն**» [Հ, էջ 138], «**ցեխտոտ ոսկի արշաւանք**»<sup>34</sup> (Նժդեհի դէմ)... Բայց նաեւ. «**ալեւոր իմաստութիւն**» [Հ, էջ 498], «**աստուածային արհամարհանք**» [Հ, էջ 333], «**արեւոտ սեր**» [Հ, էջ 418], «**բիւրեղ նկարագիր**» [Հ, էջ 597], «**բոցավառ զգացում**» [ԼԳ, «**գրանիտէ հաւատ**» [Հ, էջ 90], «**կարմիր վրէժ**» [ԳԵ, էջ 10], «**հաւերժաշունչ ոգի**» [Հ, էջ 359], «**հրեղէն կարօտ**» [Հ, էջ ], «**նուշ հուշ**» [ԳրԵ, էջ 97], «**ոսկի երագ**» [Հ, էջ 24], «**վարդագոյն լուստեսութիւն**» [Հ, էջ 22], «**տաք կարեկցութիւն**» [Հ, էջ 410]...

**զ. Բնութիւն:** Եւ, վերջապէս, աշխարհը, միջավայրը, որի մէջ ապրել են եւ ապրում են մարդկային սերունդները: Ըստ նկարագրուող իրավիճակի, բնութիւնը դառնում է վշտայար ու վշտացնող. «**անապատ կուրծք**» (բնութեան) [ԳԵ, էջ 22], «**լալկան առուակ**» [Հ, էջ 413], «**վայոդ քամի**» [Հ, էջ 413], «**տխուր վերջալոյս**» [Հ, էջ 413]... Բայց, ընդհանրապէս, նա, մանավանդ հայրենի բնութիւնը, գեղեցիկ է ու քնարաշունչ. «**աստուածագարդ բնութիւնը**»

<sup>34</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 88-90:

[Հ, էջ 150], «արեւի հետ համբուրուող լեռ» [Հ, էջ 359], «արծուանիստ գահ» [Հ, էջ 413], «թաւշեայ զեփիւռ» [ԳԵ, էջ 45], «հեզ զեփիւռ» [ն.տ.], «լալկան զեփիւռ» [ն.տ.], «կապուտաչուի շուշան» [Հ, էջ 376], «ոսկեշող ցոլքեր» [Հ, էջ 415], «քնաթաթախ դաշտ» [ԳԵ, էջ 34], քնաթաթախ ծաղիկներ [ԳԵ, էջ 62], «անխոս ոսկեշող աստղեր» [Հ, էջ 413] ...

### § 13. Մակդիրային ծաղկաքաղ

Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններից բառաքաղել ենք աւելի քան 150 բանաստեղծական մակդիր: Դրանցից 40-ը՝ չափածոյ եւ արձակ բանաստեղծութիւններից, ըստ որում, գրեթէ կեսը *Դաշնակցութեան պանթոնը* շարքից: Մնացած աւելի քան 110-ը քաղուած են գիտական ու հրապարակախօսական աշխատութիւններից, նամակներից, կոչերից: Շատ մակդիրակիրներ միանգամից կարող են ունենալ երկու, նոյնիսկ երեք մակդիր: *Զեփիւռ* եւ *նայուածք* գոյականներն ունեն երեքական մակդիր. Առաջինը՝ *լալկան, հեզ, թաւշեայ*, երկրորդը՝ *խածնող, հոգի հատցնող, կայծկլտուի*<sup>35</sup>: Լինում են քնարական խտացումներով նախադասութիւններ, ինչպիսին է յետեւեալ մեջբերումը, ուր առկայ է երեք մակդիր եւ փոխաբերութիւններ. «Նա սիրում էր **մորմորը լալկան** առուակի ու **հառաչը հեծկլտող** ու **վայող** քամիների...» [Հ, էջ 413]:

Մենք կատարել ենք 40-ի չափ մակդիրների մի ծաղկաքաղ, որը ներկայացնում ենք ստորեւ: Դրանցից իւրաքանչիւրը մի-մի գեղագիտական գիւտ է, իսկ նրանց ամբողջութիւնը ասես երաժշտական, քնարական մի ստեղծագործութիւն եւ վկայում են հեղինակի արտասովոր բանաստեղծական մտածողութեան մասին:

---

<sup>35</sup> Տե՛ս մակդիրների ներքոբերեալ ցանկը:

**Ադամանդ գեղեցկութիւն.** «Ո՛վ կը կոտրէ սիրոյ գրիչն գեղեցկութեան ադամանդ» [ԳրԵ, էջ 119]:

**Ադամանդ ճակատ.** «Առաքեալի սիրտ, իմաստասերի գլուխ, ադամանդ ճակատ - ահա՛ կատարեալ առաջնորդը» [Հ, էջ 180]:

**Ալեւոր իմաստութիւն.** ««Ինչ որ Աստուածն է, այն էլ իր երկրպագողներն են», - ասել է Արեւելքի ալեւոր իմաստութիւնը»: [Հ, էջ 498]:

**Աղտեղաբան թռուցիկ.** «...Ազգայնական հայութիւնը յղացավ վատութեան մի միւզէի գաղափարը, ուր պիտի հավաքէր ... աղտեղաբան թռուցիկներ, անստորագիր նամակներ ...» [Հ, էջ 211]:

**Անապատ կուրծք.** «Մեռնող բնութեան անապատ կրծքին Անվերջ, յուսահատ աշունն է լալիս» [ԳԵ, էջ 22]:

**Անյատակ տգիտութիւն.** «... Ես ծիծաղում եմ նրա (թրքութեան) անյատակ տգիտութեան վրայ... Պիտի կարողանա ս ըսպանել հայ ժողովրդի պատմական յիշողութիւնը» [Հ, էջ 115]:

**Աստուածագարդ բնութիւն.** «Իր (Ահարոնեանի/հեղ.հեղ./) խօսքը Հայաստանի աստուածագարդ բնութեան թախծութիւնն ունի» [Հ, էջ 150]:

**Աստուածաշունչ խօսք.** «Այսպէս է պատգամում իմ մարգարէն իր աստուածաշունչ խօսքը» [ԳրԵ, էջ 76]:

**Աստուածաշունչ նահատակ.** «... հայիոյեցին յաճախ յեղափոխութեանը եւ խզբզեցին նրա աստուածաշունչ նահատակներին» [Հ, էջ 78]:

**Աստուածաշունչ քնար.** «Նա (Եավորովը/հեղ.հեղ./) մեզ իր աստուածաշունչ քնարը տրամադրեց, քանզի երգիչ էր» [Հ, էջ 591]:

**Արեւի հետ համբուրուող լեռ.** «Հոգու համար ... արեւի հետ ամեն օր առաջինը համբուրուող լեռը՝ հողեղէն կարկառ, բարձունք չէ՛ միայն...» [Հ, էջ 359]:

**Բոցավառ զգացում.** «Կռիւր նրա (սյունեցու/հեղ.հեղ./) համար ... մի արնոտ դրամա, որի մէջ առաջին դերերը կատարում են

բոցավառ զգացումը եւ յաղթական մահը» [ԼԳ]:

**Բոցեղէն հայրենաբաղձութիւն.** «Բոցեղէն հայրենաբաղձութիւնը ... հայրենագուրկ Հրէան հրէայ պահեց...» [Հ, էջ 468]:

**Գաղջ վերաբերմունք.** «Հայ հասարակագիտակ մտքի աղքատութեամբ պիտի բացատրել հին սերունդի գաղջ վերաբերմունքը՝ դէպի նորը» [Հ, էջ 581]:

**Գայլ ցեղ.** «... Այլապէս քոյ ժողովուրդը իր տեղն արեւի տակ աստիճանաբար պիտի զիջի իրեն շրջապատող ... գայլ ցեղերին ...» [Հ, էջ 78]:

**Գեղատխուր հողաթումբ.** «Նա, անցո՛րդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձած պատանին» [Հ, էջ 413]:

**Գիշատիչ կառաւարութիւն.** «Խրիմյանը ... հայ եկեղեցու նյութական հարստութիւնը փրկելու համար ռուս գիշատիչ կառաւարութեա՛ն դէմ մաքառեց» [Հ, էջ 213]:

**Գորտի հոգով.** «Գորտի հոգով առօրեապաշտ պաղ մահկանացուն ...» [Հ, էջ 576]:

**Գրանիտէ համոզում.** «Դա Գանդին է, ... որը գրանիտէ համոզում ունի» [Հ, էջ 180]:

**Գուժկան բու.** «Լուռ մտիկ տուէք մոխրակոյտներուն կարմիրով ներկւած: Լսեցէ՛ք ողբերգն բուերու գուժկան ...» [ԳրԵ, էջ 115]:

**Դիւցազնաշունչ ցեղականչ.** «Հայ ստամտաւորականը ... Իգուր անցան Ալիշանի ու Րաֆֆիի, Ահարոնեանի ու Վարուժանի եւ այլոց դիւցազնաշունչ ցեղականչերը ...» [Հ, էջ 533]:

**Ջրահապատ թաթ.** «Մուդրոսի հաշտութեան պայմանագրի ոյժով յաղթականները ազատ էին իրենց զրահապատ թաթը դնել թուրքական երկրի ամէն մի կէտի վրայ» [Հ, էջ 267]:

**Թեւատ ունայնութիւն.** «Անցեղաշունչ է, որով ... թեւատ ու առօրեական ունայնութիւններից ... բարձրանալու անգօր» [Հ, էջ 532]:

**Թղթ բարեմակութիւն.** «... հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց ակելի շահավէտ թւաց, նրանք ... լքում են իրենց նախկին զինակիցներին» [Հ, էջ 56]:



**Թղթ կարգադրություն.** «...զբաղուած էին... հանգամանքներին անհարիր նախագծեր մշակելու վրայ՝ ես բոլոր այդ ձեւի թղթ կարգադրութիւններն անուշադրութեան էի մատնում ...»:<sup>36</sup>

**Լալկան զեփիւռ.** «Իմ սէ՛րը՝ դա շունչն է հեզ ու թաւշեայ, լալկան զեփիւռի» [ԳԵ, էջ 45]:

**Լուսեղէն այբուբեն.** «... Լուսեղէն այբուբեն – մեզ տուել է Տարօնը» [Հ, էջ 525]:

**Խածնող նայուածք.** «Ու նայուածքներդ, ախ այդ խածնող, հոգի հասցնող կայծկլտուն նայուածքներդ...» [ԳրԵ, էջ 127]:

**Խորշակահար հոգի.** «Խօսէք հետները ... եւ պիտի հասկանաք սրանց խորշակահար հոգին, որ մատնում են իրենց ամեն մի խօսքի ու շարժուձեւի մէջ» [Հ, էջ 135]:

**Ծիածանային անուրջներ.** «Փշրեցի՛ն Տէր, վատ արարածները մէկիկ-մէկիկ ծիածանային անուրջներս ...» [ԳԵ, էջ 44]:

**Կապուտաչուի շուշան.** « Կ՛անցնեն օրեր ... եւ նա կապուտաչուի շուշանները կը վերածի աղբի» [Հ, էջ 376]:

**Կիսագոյն կազմակերպություն.** «... կազմում են թխովի հեռագրեր ... կիսագոյն կամ բոլորովին անգոյն կազմակերպութիւնների անունից եւ ուղարկում Մոսկուա...» [Հ, էջ 206]:

**Հայաստանասպան քաղաքականություն.** «Իբր ցեղօրէն ընկած տիպ՝ նա ուզում է Քրիստոսն անգամ դարձնել բոլշեւիկեան գործակալ եւ լծել կոմունիստների հայաստանասպան քաղաքականութեան» [Հ, էջ 216]:

**Հեծկլտող ու վայող քամի.** «Նա սիրում էր ... հառաչը հեծկլտող ու վայող քամիների ...» [Հ, էջ 413]:

**Հոգեպէս քանդուած էակ.** «Նա իբր հոգեպէս քանդուած էակ՝ նաեւ պատրապաշտ է» [Հ, էջ 197]:

**Յորանջող տգիտութիւն.** «... այդ տողերի իմաստը պէտք է բացատրել ռամկավարների յորանջող տգիտութեամբ, այլ հոգեբանութեամբ» [Հ, էջ 190]:

**Հրաբերան պերճախօս.** «Դու դառնում ես հրաբերան պերճախօսը» [Հ, էջ 107]:

---

<sup>36</sup> ՀՅԴ Գերագոյն ատեան: Դատական գործ 9698, թթ.. 321-339:

**Հրատանջ ազգ.** «...բանտարկեալները ... ուզեցին Ագատու-  
թին եւ Արդարութիւն գողանալ իրենց հրատանջ Ազգի հա-  
մար...» [Հ, էջ 435]:

**Ճշմարտութեամբ օծուն գրիչներ.** «... տեսնել ու հասկանալ  
կը սկսին ... շարժուիլ կը սկսին ճշմարտութեամբ օծուն գրիչներ»  
[Հ, էջ 88]:

**Մահաշունչ կեղծիք.** «Մահաշունչ կեղծիքէն խորշակահար  
լինում ... խեղդվում ես շրջապատիտ մահաշունչ կեղծիքի մէջ»  
[Հ, էջ 86]:

**Ոսկեգրիչ մտաւորական.** «Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկե-  
գրիչ մտաւորականի թիկունքում» [Հ, էջ 468]:

**Պերճուհի շամանդաղ.** «Շղթաներդ ոսկեցնցուղ, ո՛վ պերճու-  
հի շամանդաղ ...» [ԳԵ, էջ 119]:

**Տաք խօսք.** «... պետք է ժողովրդին կենդանի գործ ցոյց տալ,  
տաք խօսքի հետեւանքն ապացուցել»:<sup>37</sup>

**Ցեխտտ արշաւանք.** «Այսօր շատերը ... պարսկական չարչի-  
խանաներից տմարդաբար ցեխտտ արշաւանք են սկսել իմ եւ  
Լեռնահայաստանի հերոս ժողովրդի հասցէին»<sup>38</sup>:

**Ուռուցիկ խօսքեր.** «... յաճախ փորձում է իր հոգու այլանդա-  
կութիւնները քողարկել այս կամ այն ուռուցիկ եւ գեղեցիկ խօսքե-  
րով» [Հ, էջ 30]:

**Փայտե ժողովուրդ.** «... սրանց համար ... հայութիւնը փայտե  
ժողովուրդ է, անընդունակ նոյնիսկ զգալու եւ երազելու լաւ օրերի  
մասին» [Հ, էջ 82]:

**Քնաթաթախ ծաղիկներ.** «Գիշեր էր: Մարմանդ հովերը քնքշօ-  
րէն սիրաբանում էին քնաթաթախ ծաղիկների հետ» [ԳԵ, էջ 62]:

---

<sup>37</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ.. 19-20

<sup>38</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 88-90:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐ

### ՓՈԽԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

#### § 14. Ինչպիսիք են փոխաբերությունները

Գարեգին Նժդեհի պատկերաւոր մտածողութեան մի երրորդ, աչքի զարնող կողմը փոխաբերություններն են: Դրանց մի մասը ընդհանուր գործածութեան զանձարանից են՝ *աստղերը երկնքի աչքեր, խունկ ծխել, դատաւորի պատմուճան յագնել, առյուծ* (քաջ մարդ)...., իսկ մեծ մասը սեփական մտքի արգասիք է: Խօսքիմասային առումով ակնյայտ են երկու կարգի՝ գոյականական եւ բայական փոխաբերական բառերն ու բառակապակցութիւնները: Նախ առաջինների շուրջ: Մի կողմ թողնելով առարկաների ու երեւոյթների ուղղակի անուանումները՝ հեղինակը դրանք բնորոշում է բանաստեղծօրէն. Գաղափարին նուիրուածութիւնը՝ *գաղափարային գինովութիւն*, գաղափարները փոփոխելը՝ *գաղափարային զգեստափոխում*, անյայտութեան անորոշութիւնը՝ *անյայտութեան մթննշաղ*, մտաւոր անլրջութիւնը՝ *մտքի յուպուպութիւն*, պատմութիւնը՝ *ոգու դայեակը*: Այժմ կատարենք յիշեալ փոխաբերությունների մասին վկայող մեջբերումներ. «Ահա՛ Պրոմէթէան այն գիտակցութիւնը՝ անսպառ աղբիւրը Լեապոլի ... **գաղափարային գինովութեան**» [Հ, էջ 597], «Դաշնակցութեան **գաղափարական զգեստափոխումը**, նրա «սալոնային» սոցիալիզմը, ոչ մի օգուտ չբերեցին հայ աշխատաւորներին ...» [Հ, էջ 682], «Նրա (Ավ. Ահարոնեանի/հեղ.հեղ./) ...գրականութիւնը... եղաւ ... **անյայտութեան մթննշաղի** միջից իր ցեղի ապագան նշմարելու մի գերագոյն ճիգ» [Հ, էջ 148], «...**մտքի յուպուպութիւն** չէ՞ դա: Արդէ՛օ՛ք, գիտութիւնը յարաբերական հասկացողութիւն է՝ կապուած այս կամ այն կացութեան հետ» [Հ, էջ 544], «Սեփական

պատմութիւնն է մեր իմաստուն խորհրդականը, մեր **ոգու դայեակը...**» [Հ, էջ 647]: Այսպէս, Ժամանակային միաւորների անվերջանալի յաջորդականութիւնը՝ քարաւաններ են, իսկ այդ ընթացքում ծանր ու անյայտ պատմական շրջանը՝ *անաստղ գիշերք*: Եթէ կայ յեղափոխութեան նուիրեալը՝ *յեղափոխական ճգնաւորը*, ապա կայ նաեւ քաղաքական կողմնակիցներ ձեռք բերելու անագնի գործունեութիւնը՝ *քաղաքական որսորդութիւնը*: Իսկ չարութիւնն արտայայտող բառերն ու մտքերը բնորոշում են իբրեւ *թոյն*, *կատաղութեան լորձունք* ու *քացախ*. «... դէպ յավերժութիւնը դիմող **վայրկեանների** ու **հազարամեակների** անվերջ **քարաւանները...**» [Հ, էջ 409], «... իբրեւ հրեղէն կանթեղ ... **պատմութեան անաստղ գիշերներին** հայի դարաւոր ճամբան լուսաւորեց» [Հ, էջ 659], «Ամէն ինչ տուած հայրենիքիդ, դու **յեղափոխական ճգնաւոր**, բարոյապէս ազատ չհամարեցիր քեզ՝ մտածել նաեւ քոյ անձի մասին» [Հ, էջ 597], «...գաղութահայութեան ամբոխացում՝ իր **քաղաքական որսորդութիւնը** հեշտացնելու համար...» [Հ, էջ 208], «**Չարութեան թոյն, կատաղութեան լորձունք, եւ քացախ** – ահա՛ թէ ինչ են գործածում որոշ գրիչներ ու գրչակներ» [Հ, էջ 103]:

Եւ շէնք նաեւ *Արշակաւան*<sup>39</sup> տեղանւան փոխաբերական գործածութիւնը իր երկու նամակներում՝ այն գիւղերի վերաբերեալ, որոնք դաւաճանելով Լեռնահայաստանին, կամաւոր յանձնուել էին թշնամուն:

Բայական բառակապակցութիւններում, ինչպէս յայտնի է ուղղակիօրէն չէն տրում գործողութիւնների անուանումները, այլ ինչ-ինչ ընդհանրութիւնների, նմանութիւնների հիման վրայ բանաստեղծօրէն փոխարինում են այլ գործողութիւնների անուանումներով: Այս կերպ՝ *երկինքը վառում է իր լոյսերը, ծովը թելածում է, մի ձեռքում խունկ կրող լինել, միտում՝ ցեխ, հոգիներում ջահը բարձրացնել, կամքը ջրցողել*, որոնք համապատասխանաբար ուղղակիօրէն նշանակում են՝ *աստղերը սկսում են շողշո-*

<sup>39</sup> ՀՀ ՊԱ Ֆ. 499, ց. 1, գ. 18, թ. 1 և շրջ.: Եւ9698, թթ.. 88-90.: ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 88-90:

ղալ, ծովը թեթեւ ծփում է, պատրաստ ըստ շահի գովաբանել կամ անուանարկել, ողեշնչել ու ձգտումների մղել, կամքն ու միտքը թարմացնել. «**Երկինքն** արդեն **վառել էր իր լոյսերը**, երբ երկու ճամփորդները կանգ առան» [ԳԵ, էջ 85], «Վեօրէն ու խաղաղ **թեւածում էր ծովը...**» [ԳԵ, էջ 86], «Մի աստուածութիւն ունեն օրուա իշխանաւորները՝ ... եւ միշտ էլ ունեն – **մի ձեռքում խունկ, միւսի մէջ՝ ցեխ**» [Հ, էջ 570], «Հայրենասիրութեան թէ հայրենապաշտութեան... համար պէտք է **ջահ բարձրացնել հոգիների մէջ**» [Հ, էջ 50], «**Ջրցողենք** մեր **թուլացած կամքն** ու **ցանկութիւնը** եւ պատրաստուենք ընդհանուր գրոհի»<sup>40</sup>: Եւ կամ. Մէկի կործանումը վճռել ասելու փոխարեն հեղինակը աւելի առարկայօրէն շոշափելի, ուրեմն՝ տպաւորիչ է համարել՝ *տապանագիրը գրել*, սպառնալիքներ ու լուտանքներ թափելը՝ *կա-տաղութեան փրփուր ու ցեխ ժայթքել*, արհամարհական խօսքեր ու գնահատականներ տալը՝ *արհամարհանքի քարեր նետել*, հարցի բուն էութեանը հասնել՝ *հարցի սիրտը շոշափել*, կեղծ ճշմարտութիւն ձեւացնելը՝ *ճշմարտութեան քղամիդ յագնել*: Այժմը համապատասխան մէջբերումներ. «Տաճկաստանը պիտի չտատանուէր **գրելու** Անդրկովկասում փակկաձ **հայութեան տապանագիրը**» [Հ, էջ 570], «Թերթերն ու թռուցիկները անգօր **կատաղութեան փրփուր** ու **ցեխ են ժայթքում**» [Հ, էջ 322], «Ամերիկեան մի լուրջ ամսագրի էջերէն դուք **արհամարհանքի ծանր քարեր եք նետել** մեր ցեղի հասցեին» [Հ, էջ 461], «... դժուար է բառերով «ինչ է ցեղը» **հարցի սիրտը շոշափել**» [Հ, էջ 480]: «Մեր կեանքում, հրապարակի վրայ, յաճախ կը տեսնէք կեղծիքը՝ **ճշմարտութեան քղամիդը յագած**» [Հ, էջ 646]:

Ինչպէս նախորդ ենթազլխում, փոխաբերական մակդիրների պարագայում, այժմ էլ փոխաբերութիւնների կարեւոր աղբիւրները երկուսն են: Դրանցից մէկին դիմելիս բնութեան յատկութիւնները վերագրուում են մարդուն կամ անձը անուանուում է բնութեան առարկաների, երեւոյթների անուանումներով: Ինչ-ինչ ընդհանրութիւնների դէպքում կարող է հիմք ծառայել կենդա-

<sup>40</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, էջ 93:

նական աշխարհը. եթե քաջութիւնը խորհրդանշում են *առիւծը, վագրը*, ապա վախկոտութիւնը՝ *աղուեսը*: Գովերգային, փառաբանող գրականութիւնը հեղինակը համարում է *ճովողին*. «Ու մի օր, Ռեւանդուզի ճակատամարտում, Խեչոյի մեծ ստուերը **ալեւոր առիւծին** առաջնորդեց դէ՛պ հաղթութիւն ...» [Հ, էջ 412], «... ըսպասում են փրկարար խաւարին, երբ մեր **ռազմիկը** դառնում է **կատաղի վագր**, իսկ **թշնամին՝ վախկոտ աղուես**» [ԷԼԳ], «**Անհատապաշտական ճովողիւններ** – սրանից, կարծեմ, աւելի բան չէ մեր օրւայ գրականութիւնը» [Հ, էջ 50]: Հաստատուն լինելու, չկործանուելու համար պէտք է լինել *անխորտակելի ժայռ, բարոյական շանթարգել, երկաթ ...* «Եւ նա (ժողովուրդը), որ գոյութեան կռում չկորչելու համար... պիտ լինէր **անխորտակելի ժայռ**, իր աննպատակ գոյութեամբ պիտ դառնայ **փոշէ բլուր**» [Հ, էջ 48], «...որոշ տարրերը... բարոյալքումի օրերին ... չկարողացան **բարոյական շանթարգել** հանդիսանալ զանգուածների համար...» [Հ, էջ 33], «...ժողովուրդներն անկախ ապրելու համար պարտադրօրէն ... ցոյց են տալիս, որ **իրենց մէջ երկաթ կայ...**» [Հ, էջ 41]:

Հեղինակը բնութեանն է դիմում նաեւ պատկերաւոր ներկայացնելու յոյզերը: Ահա երկու յոյզ՝ միմեանց հակադիր. մէկը աֆեկտիվ է՝ զայրոյթ, միւսը՝ քնարական՝ երջանկութիւն. Առաջինը զուգորդում է կայծակների, երկրորդը՝ վարդերի հետ. «...կատաղութեան կայծակունք էր թափում Լենինի եւ նրա հայացեղ ճտերի գլխին...» [Հ, էջ 277]: Եւ. «Ժպտա՛յ, հրեշտակս, ժպտա՛յ, երբ ժպտում ես՝ **կրծքիս տակ վարդեր են բացում**» [ԳԵ, էջ 75]:

Փոխաբերութիւններ ստեղծելու միւս աղբիւրը, դարձեալ, ինչպէս փոխաբերական մակդիրների պարագայում, անձնաւորումն է: Նժդեհը շատ ու շատ յաճախ մի տեսակ սիրով է բնութեանը, առարկաներին օժտում մարդկային յատկութիւններով: Նա այդ անում է քնարական հերոսի, խօսքային իրավիճակի տրամադրութիւններն արտայայտելու համար, որոնցից, մասնաւորապէս, երբ վիշտ արտայայտող տողեր ենք կարդում, լսում ենք *առուակի մորմոք, քամիների հառաչ. առուակը լալիս է, տխուր է նոյնիսկ լռութիւնը*. «**Առուա՛կը**, էն **առուակը** քաղցրահնչիւն **ինչո՛ւ է**

մորմոքում, **ինչո՞ւ է լալիս** օրնիրուն» [ԳԵ, էջ 13], «Նա սիրում էր **մորմոքը լալկան առուակի ...**» [Հ, էջ 413], «Նա սիրում էր **հառաչը ... քամիների**» [ ն.տ. ]: Իրականությունն անողոր է եւ չի ընդունում ազատութեան վսեմ զգացումներն ունեցողներին. երազող գործիչը, պայքարի ձգտող մարտիկը լսում են *գալիքի քրքիջը*, նրանց *ժպտում է մահը*. «...լսուեց **գալիքի** չար **քրքիջը**, շարժուեց մանգաղը մահաբեր ու սպանեց երազն ու երազողին ...» [Հ, էջ 415], «Մի օր **ժպտաց Մահը**, երբ հայ խաչակիրը խթանեց իր ջահել նժոյգին եւ շնջաց. – Տար ինձ, դէպ Միջագետքին աւազուտ անապատները, թոցուր ինձ, ուր կիզիչ արեւի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում ...» [Հ, էջ 417]: Հարկ է առանձնակի նշել հեղինակի՝ բնութեան զգացողությունը, որի ազդեցութեամբ ընթերցողը նրա հետ ունկնդրում է *աստղերի ու լռութեան փսփսոցը*, *աստղերի երգը*, զգում՝ *արեւի համբոյրը*. «**Աստղէ՛րը**, էն վառվռուն *աստղէ՛րը*, խորհրդօրէն ու տխուր **ի՞նչ են փսփսում**» [ԳԵ, էջ 13], «Գնո՛ւ մ եմ երազելու ... գնում եմ պլպլան **աստղերի** միստիկ **երգը** լսելու ... գիշերը ...» [ԳԵ, էջ 9], «Գիշեր է ... **լռութեան** խորհրդաւոր **փսփսոցն** եմ լսում» [Հ, էջ 415], «Նա սիրում էր եւ լեռները ... որոնց ամպոտ կատարներին յաճախ իր հպարտ ճակատին **արեւի** առաջին **համբոյրն** էր ընդունում» [Հ, էջ 413]:

### **§ 15. Փոխաբերութիւնների կիրառութեան շուրջ**

Նախորդ ենթագլխում, անձնաւորման եղանակի առիթով, խօսք եղաւ այն մասին, որ Նժդեհը հակուած է փոխաբերութիւնների դիմելու բնութիւնը, մարդկային վիշտը նկարագրելիս: Այժմ եւս փոխաբերութիւնների մղող մի քանի ոլորտի մասին:

Նախ՝ դա **հոգին** է, մարդու հոգեւոր բնոյթն ընդհանրապէս, որին այնքան մեծ նշանակութիւն էր տալիս հեղինակը: Չի կարող լինել կենսունակ գործունեութիւն, առաջադիմութիւն, ընդհանրապէս մտքի շարժ, հավաստում է նա, եթէ *հոգեւոր անապատ է, հոգեւոր դեղնախոտ, հոգեւոր մրափ, հոգեւոր սատակութիւն*. «Մեր նորահաս սերունդը փախչում է մեր գաղութահայ կեանքի **հոգեւոր անապատից...**» [Հ, էջ 171], «Մեր մտաւորականութեան

**հոգեւոր դեղնախտով** տառապող այդ մասը չուզեց օգտւել Ամերիկայի մեր ցեղահոգ մտաւորականների թարմ օրինակէն – ցեղակրօնութենէն» [Հ, էջ 532], «... մի միլիոն արենակիցներիդ ողջակիզումն իսկ չկարողացաւ խռովել հայրերիդ մի մասի **հոգեւոր մրափը** [Հ, էջ 139], «... տիրող **հոգեւոր մրափողութեան** պատճառով նոր հեղինակութիւններ չեն ստեղծվում եւ հիները չեն յարգում» [Հ, էջ 77], «Այո, առանց բարոյական համարձակութեան ու քաջութեան ամէն հավաքականութիւնն կը դառնայ **հոգեւոր սաստակութիւն**» [ Ազգ ], «Ո՛չ **հոգեւոր թգուկը**, որ յաջողում է բարձրանալ հսկայի վրայ... ունակութիւնը եւ մնում են **հոգեւոր հնաւաճառներ, հոգու թգուկներ...**» [Հ, էջ 183], «... հին սերունդի **հոգեւոր ցնցոտիների** փոխարէն նորահասին յագցնենք ցեղի **ոգու զրահը**» [Հ, էջ 588], «Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ **հոգով թգուկներիդ** դարձնի կատարեալ մարդ եւ Հայ, արժանի Անկախութեան...» [Հ, էջ 79], «Ծո՞յլ է մտաւորապէս (առաջնորդը)՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները» [Հ, էջ 179]:

*Յեղ, հայրենիք, կրօն* – դաւանում է Նժդեհը: Հեռանալ կրօնից, նշանակում է. «Ով հեռանում է կրօնից՝ ... կտրում է իր **հոգեւոր զարկերակը**» [Հ, էջ 642], «Պէտք է **ջահ բարձրացնել** մեր **հոգիների մէջ**» [Հ, էջ 50] եւ կսկսուի «**հոգու զարումը**» [Հ, էջ 83]: Կբորբոքուի հայրենապաշտութիւնը, կ'արթնանայ ցեղի ոգին, «**հոգեւոր զրահ են ծառայում**», «**հոգեւոր կրաշաղախի դեր են կատարում**» մեր պատմական արժեքները, մեր պատմութեան աւանդոյթներն ու աւանդութիւնները<sup>41</sup>:

Այժմ միւս ոլորտը՝ *խօսքը*: Այն բնութագրում է հոգեւոր էութիւնը, զարգացնում միտքը, ներգործում զանգուածների վրայ, ինչպէս արդէն հաւաստուեց նախորդ գլխում՝ մակդիրների առընչութեամբ: Իսկ հոգեւոր էութիւնը իրականութեան մէջ լինում է յոռի եւ լաւագոյն կողմերով: Չարութիւն ու ասելութիւն արտա-

---

<sup>41</sup> Ռ. Համբարձումեան, *Գարեգին Նժդեհ, Կենսագրական յուշումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ*, «Նախիջեւան» հրատ., Երեւան, 2005 թ., էջ 394:



յայտելիս *թոյն են փսխում, փրփուր ու ցեխ ժայթքում*. «...բանա-  
տուր ու գրատուր խօսքի **թոյն են փսխում իմ հասցէին**» [Հ, էջ 270],  
«Թերթերն ու թռուցիկները **կատաղութեան փրփուր ու ցեխ են  
ժայթքում**» [Հ, էջ 322]: Հիմքից զուրկ սպառնալիքները՝ *անշանթ  
ասպրոպներ են*. «Կարդացիք կարմիր զօրավարի հրաման-մար-  
տագիրը, լսեցիք նրա **խօսքի անշանթ ասպրոպները**» [Հ, էջ 292]:  
Ստեղծագործ մտքի պակասի դեպքում խօսքը *շնչաւեղձ է լինում*.  
«...**շնչաւեղձ է լինում** հայ **խօսքը** Հայաստանից դուրս: Պակասում  
է խանդն ստեղծագործ՝ բեղմնաւորիչը մտքի, սրտի» [Հ, էջ 398]:  
Բարոյադաստիարակչական հսկայական նշանակութիւն տալով  
մամուլին՝ Նժդեհը նկատում էր, որ այն զուտ նկարագրական է,  
հրապարակախօսութիւնը՝ զուրկ ոգեշնչուածութիւնից: Մինչդեռ.  
«...անհամ... դէպքերի նկարագրութիւնը հրապարակախօսու-  
թիւն չէ: **Խօսքի լուսանկարչութիւն** պիտի չլինի մամուլը» [Հ, էջ  
33]: Իսկ մտաւորականութեան կոչումն է խօսքի միջոցով ազնիւ  
ու բարոյական զգացումներ ներշնչել: Ոչ թէ *թոյն, ցեխ ու փրփուր*  
պետք է լինի, այլ *խօսքի բոց, կայծակ ...* «Ճշմարիտ մտաւորա-  
կանութիւնը ... ցեղի ոգու գրականութեամբ, ցեղի **խօսքի բոցով  
հրդեհում է** ապրումները ... նուիրումի, զոհաբերութեան ու գործի  
մղում» [Հ, էջ 255], «Նա (Ահարոնեանը/հեղ.հեղ./) **խօսքի կայ-  
ծակներ ունի** եւ **գիտէ շանթել** տկարն ու տգեղը, անփառն ու  
աննուերը ...» [Հ, էջ 149]: Այդ դեպքում *խօսքից արիւն է կաթում:*  
Այսպէս պիտի խօսել սրբազան առարկաների մասին, պահան-  
ջում է Նժդեհը. «**սիրտ դնել ամեն մի խօսքի մէջ**» [Հ, էջ 43 ], «...եւ  
այդ դեպքում կլինի **մտքի արիւն ...**»<sup>42</sup>: Ջանգուածների վրայ  
խօսքի ազդեցութիւնը այս անգամ փոխաբերութեամբ ցոյց տալու  
համար հեղինակը դիմում է բանակի առաջնորդի վարուելակեր-  
պին. «Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ **խօսքը ... եր-  
բեմն որպէս սանձ** եւ **միշտ էլ որպէս խթան**» [Հ, էջ 47 ]:

Նժդեհը փոխաբերութիւնների միջոցով բնորոշում է նաեւ  
հակաբարոյական այլեւայլ կողմեր՝ առաւել շօշափելի դարձնե-

---

<sup>42</sup> **Գ. Նժդեհ**, *Բանտային գրառումներ*, «Մ. Վարդանեան» հրատ., Երեւան,  
1993 թ., էջ 52:

լու, դրանց էութիւնը ընդգծելու նպատակով: Մոյն գլխում այդպիսի մի շարք փոխաբերութիւններ արդէն հանդիպեցին՝ *արհամարհանքի ծանր քարեր նետել, ճշմարտութեան քղամիդ յագնել* (կեղծիքը ճշմարտութեան տեղ ներկայացնել), *մի ձեռքում խունկ ունենալ, միսում՝ ցեխ ...*: Յիշատակենք եւս ուրիշ երեքը: Կրոնաուսադաշտում հակառակորդի դիակի անարգումը Նժդեհը համարում է *հոգեւոր շնագայլութիւն* [Հ, էջ 393 ], անազնուրէն քննադատելը բնորոշում է՝ *տեգ ու նիզակները մէկի դէմ ուղղել* [Հ, էջ 281], խստօրէն մերժում է օտարատեսացութիւնը. «հայրենիքի շէնքը պետք չէ բարձրացնել օտարատեսացութեան **ժայռին վրայ ...**» [Հ, էջ 157 ]:

Որպէս ենթագլխի եզրափակում՝ ցանկանում ենք կատարել եւս չորս մեջբերում: Դրանք բանաստեղծական արուեստի խտացումներ են մէկական նախադասութեան մէջ: Առաջինում առկայ է չորս փոխաբերութիւն. «Լեռնէ՛րը ... ես սիրում եմ այդ անմահ **իգիթներին**, որոնց բարձր ու բաց **ճակատներն** ամեն օր կարմիր արշալոյսն է **նսկեզօծում**, կարմիր վերջալոյսը՝ **համբուրում ...**» [ԳԵ, էջ 9]: Երկրորդի մէջ երկու փոխաբերութիւն կայ՝ անսովոր ու տպաւորիչ. «Վաղուց է, ինչ մարդկութիւնը **իրեն զգում է նստած հրաբուխի վրայ: Ականւած է** հին աշխարհը» [Հ, էջ 527]: Ակնարկը 1930-ական թուականների վերջում քաղաքական-հասարակական ցնցումներին է վերաբերում: Երրորդ հատուածը մասամբ մեջբերուած է երրորդ գլխում. այստեղ համեմատութիւններ են եւ երեք փոխաբերութիւն: Նժդեհը *Ջաւախ* յօդուածում հետեւեալ փաստն է հաւաստում, որը հնչում է իբրև զգուշացում. «Մինքրորներ կան, ... Ջրի պէս շարժուն, ջրի պէս ամէն ձեւ ու գոյն առնելու ընդունակ՝ սրանք **մէկի ստուերն են, միւսի՝ արձագանգը, երրորդի՝ կապարճակիրը**» [Հ, էջ 570]: Վերջապէս չորրորդն առնչում է Նժդեհի գաղափարախօսութեան հետ, որտեղ պատկերաւոր կերպով բնութագրում է ցեղի նշանակութիւնը. «Յեղն է, որ **ժողովրդի սուրը սրել կը տայ** իր **նահատակների գերեզմանաքարի վրայ**՝ զայն աւելի՛ եւս հատու, ... զարհուրելի եւ յաղթական դարձնելու համար» [Հ, էջ 486]:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### ՀԱՐՑ ԵՒ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

#### *§ 16. Հարցերի ծաւալն ու յաճախականությունը*

Գարեգին Նժդեհը, լինելով ճարտասանութեան մեծավարպետ, իր երկերում խօսքը ներգործուն ու համոզիչ դարձնելու նպատակով մշտապէս դիմում է ոճական պատկերաւոր եւ ճարտասանական տպաւորիչ միջոցների: Սոյն եւ յաջորդ գլուխներում մեր խնդիրը կլինի քննութեան առնել Գ. Նժդեհի ստեղծագործութիւններին բնորոշ ոճական ճարտասանական միջոցները: Այստեղ քննութեան կառնուի ճարտասանական հնարներից **հարցը**: Ուրեմն նախ՝ ինչ նշանակութիւն ունեն շարադրանքում հարցերը, որոնց մեծագոյն մասը, ինչպէս կերեւայ յետագայ մեջբերումներից, հռետորական բնոյթի են: Հարց տալու միջոցով հեղինակը պարզաբանում է ինչ-ինչ խնդիրներ, դրոյթներ, հարցադրումներ, հանգամանքներ կամ պահանջում դրանց պարզաբանումը՝ միաժամանակ արտայայտելով սեփական դրական կամ բացասական վերաբերմունքը: Հարցի ձեւով ներկայացնելով ասելիքը, Նժդեհը ձգտում է, որ ընթերցողը սելեռուի դրա վրայ, համակուի դրա բովանդակութեամբ, կռահի կամ մտովի փնտրի պատասխանը: Այս ամէնը յուզախառն, ըստ ասելիքի երբեմն հնչեցնելով հաստատականութիւն ու հաւատ, երբեմն զայրոյթ, ցաւ կամ վիշտ, տարակուսանք, երկընտրանք, նախատինք ...

Սակայն առայժմ կանգ առնենք այս ճարտասանական միջոցի արտաքին կողմերի վրայ:

**1. Հարցերի ծավալն ու հաճախականությունը:** Ինչ չափի են լինում հարցերը, ինչպիսի խտութեամբ: Նախ հարցը կարող է արտայայտուած լինել մեկ բառով, ինչպէս յետեւեալ մեջբերում-

ներում. «**Զիջո՞ւմ** – հերոսի համար չէ դա» [Հ, էջ 655]: «Հարուածելուց առաջ ողջունել իր հակառակորդին – հնում այսպես էին վարում ասպետոզի կուռղները: **Իսկ այսօ՞ր ...**» [Հ, էջ 392], «**Ազատութի՞ւն** – այո, երբ ... ազատօրէն գործելու կարելիութիւն կայ: **Իրաւո՞ւնք** – միայն սեփական հայրենիքում ... **Երջանկութի՞ւն** – հայրենագուրկներիս համար խաբուսիկ են բոլոր տեսակի երջանկութիւնները»<sup>43</sup>: Անշուշտ, ստեղծագործողը կարող է ընդգրծուած բառերում հանել հարցական նշանն ու յուզականութիւնը պահպանելու համար փոխարինել, ասենք, բացականչական նշանով, կամ կախման կետերով, և կամ դնել վերջակէտ: Ի դէպ, այս կերպ գրուած դրուագներ էլ կան: Յիշատակենք վերջին եղանակով մի նմուշ. «Մակայն **այդպէ՞ս է** հասկացել մեր ժողովուրդը. ո՛չ, դժբախտաբար: **Հետեւանքը**: Մեր նկուն ու ողբալի վիճակը: **Պատճառը**: Կոյր եւ բարբարոս կուսակցամուլութիւնը ...» [Հ, էջ 37]: Բայց հարցը, մասնաւորապէս՝ հոետորական հարցը, Նժդեհի ամենասիրած ճարտասանական միջոցներից է, որին էլ տալիս է նախապատուութիւնը յիշեալ հնարաւորութիւնների ընտրութեան դէպքում: Իսկ հարցի կամ հոետորական հարցի դիմելու դէպքերը բազմաթիւ են ու բազմաթիւ:

Աւելի մեծ ծաւալի հարցերի մի ուրիշ մաս բաղկացած է բառակապակցութիւններից (յետագայ շարադրանքում շատ ենք հանդիպելու), իսկ մի երրորդ մաս՝ ամբողջական նախադասութիւններից: Ինչպէս. «**Ղե՞մ ես վերանորոգմանը** – դեմ ես կյանքին» [ՌԽՄ]: «**Մոռացա՞ւ իր պատմութիւնը**, ասել է՝ անխրատ է ժողովուրդը եւ պատժի է արժանի» [Հ, էջ 457], «**Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանութեան ընդունակութիւնից** – նշանակում է նա գուրկ է ամէն մի առաքինութիւնից, գուրկ՝ գոյութեան բարոյական իրավունքից» [Հ, էջ 64], «... մենակութեան սարսափը: **Համակվե՞լ է մի ժողովուրդ այս սարսափով** – պարտուած է, կորած» [Հ, էջ 62]: «**Չկա՞յ վստահութիւն** – բարոյա-

<sup>43</sup> «Ռեալիկ» օրաթերթ, *Խօսակցութիւն մը գորավար Գ. Նժդեհի հետ*, 1943 թ., թթ. 169-178: Այսույետեւ տոյն աշխատութեանը վերաբերուող յղումները կարուեն յետագայ շարադրանքում [ՌԽՄ] հապաւման տեսքով:

պէս անդամալոյծ է բանակը: **Պակասում է հավատը՝** կենդանի դիակ է բանակը» [ԱՍ]:

Այժմ Գ. Նժդեհի ստեղծագործութիւններում քննուող սոյն ճարտասանական միջոցի կիրառութեան մի առանձնայատկութեան՝ հարցերի խտութեան մասին: Ջարմանք է յարուցում, թէ որքա՛ն ու որքա՛ն յաճախ է նա դիմում հարցախմբերի. ըստ որում, հարցերն անմիջականօրէն յաջորդում են միմեանց, նաեւ նոյն նախադասութեան մէջ. ասելիքը կառուցում է հարցա-կան նշանների հիմքի վրայ: Բերենք օրինակներ. «Պիտ ապրի՛ եւ հայ ժողովուրդը: Պիտ ապրի՛, որովհետեւ այդպէ՛ս է ուզում ինքը: Բայց **ի՞նչպէս, ինչի՞ շնորհիւ, ի՞նչ տվեալներով, գրաւակա՞նը**» [Հ, էջ 26], «Կա՛յ մի պատուհասող ոյժ, մի ձեռք, որ դատում է մեզ, պատժում ամէն օր, ժամ, վայրկեան: **Ի՞նչ է նշա-նակում սա: Ո՞վ է, ի՞նչ է այդ խորհրդաւոր ոյժը:** – Դա մեր խիղճն է ...» [Հ, էջ 93-94]: Ահա մի հատուած *Պատմութեան դատաստանը* յօդուածից: Այստեղ փաստերի թուարկում է, որ հնարաւոր էր կատարել հաւաստման տարածուած եղանակով: Իրար է յաջորդում եօթ հարց՝ ներկայացնելով փաստերը՝ ասես դիմելով դիմացինին ու պատասխան պահանջելով. «... «պրոլետարական դիկտատուրա»-ի դէռ առաջին տասնամեակում Ռուսաստանում կային 25 անգամ աւելի բանտեր, քան գոյութիւն ունէին Ցարի օրով: Հապա կոնցենտրացիոն **լագերնէ՞րը ...** արհեստական **սովէ՞րը**, Չեկայի կողմից «բեմադրուած **ապրստամբութիւննէ՞ր**»-ը, զանգուածային **ջարդէ՞րը**, կղերականութեան **գողգոթա՞ն**, սպայութեան **ոչնչա-ցո՞ւմը ...** մութ ... **կատակումբնէ՞րը**, որոնց մասին դէռ ոչինչ գիտէ արտաքին աշխարհը» [Հ, էջ 622]:

Շատ աւելին. որոշ ստեղծագործութիւնների ամբողջ հատուածներ, որոշ յօդուածների գրեթէ կեսը շարադրուած է հարցախմբերի հիման վրայ: Ըստ որում, արծածում են հայ ժողովրդի համար վճռականօրէն կարեւոր՝ գոյութեան, անկախութեան, բարոյական վերանորոգման, պատմութիւնն ու լեզուն չմոռանալու, ինքնաքննադատութեան ունակութեան ու նման գաղափարներ: Ահա *Օրերի օրը* համարեա չորս էջանոց յօդուածը, որի

մէջ Մայիսի 28-ը պաշտամունքի օր է հռչակուում: Այստեղ միմեանս են յաջորդում *քսանի չափ* հարցեր. Իւրաքանչիւրը ազգային մի խոտելի կողմ է վեր հանում, կողմեր, որոնց գոյութեան համար ընդունուած է օտարին մեղադրել: Մոռացուել է մայիսի 28-ը, հայրենապաշտ չենք, դատապարտել ենք մեզ թուլութեան, ազատ երկրներում հայը կամաւոր թրքախօս է, մեր կեանքում մտաբարոյական անիշխանութիւն է ..... Յիշեալ քսան հարցից բերենք վեց օրինակ. «Ո՞վ է ստիպում մեզ չլինել հայրենապաշտ», ... «Ո՞վ կարող է ինքնանուաստացումի գոհ դարձնել մեզ», ... «Ո՞վ եւ ի՞նչը ... կարող է արգիլել ... օգտակար լինել Հայրենիքիս»: Կամ. «Օտա՞րն է մեղաւոր, երբ ... հայութեան մի մասը ... կը շարունակէ գործածել ... շնական ժողովրդի լեզուն», ... «Օտա՞րն է մեղաւոր, որ կան հայեր, որոնց կողմից հնագոյն ժողովրդի անդամ լինելը չէ գիտակցում որպէս գերագոյն երջանկութիւն»: Հետեւում է վերջին ամփոփիչ հարցը՝ «Օտա՞րն է մեղաւոր այդ բոլորի համար ... ո՛չ, ո՛չ ...»: Յօդուածը տպագրուած է 1926թ. «Արաքս» պարբերականի թիւ 99 համարում: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ այսքան շատ լինելով հանդերձ, հարցերը մերվում են նիւթի բովանդակութեանը. տպաւորութիւն է առաջանում, թէ շարադրանքը հենց այդպիսին էլ պիտի լիներ, այդ կերպ են ընթերցողի մէջ բարձրանում համապատասխան զգացմունքներ, ուրեմն նաեւ համապատասխան եզրահանգումներ ու մղում ի գործ:

*Տարածուող Անին* երկու էջի չափ յօդուածում իրար են յաջորդում դարձեալ քսանի չափ հարցեր: Գաղթ, նիւթական անմխիթար վիճակ, ուժացում, երկրաշարժ, այլեւայլ վտանգներ, տառապանք. հարցերը գալիս են խորհել տալու՝ *հայ մա՞րդն է* աւելի ձգտում օգնելու իր ազգակիցներին, թէ մահը, *հայն արժանի՞ է* անկախ հայրենիք ունենալու, *տառապանքը ազնուացնո՞ւմ է* մեր ժողովրդին ...: Խօսքը դարձեալ 1926 թ. օրերի մասին է, իսկ յօդուածը տպագրուած է նոյն «Արաքս» թերթի թիւ 233-ում:

*Մեր յեղափոխութեան արարիչը* երեք էջից էլ պակաս յօդուածում, տպագրուած Պլովդիւում, «Հայաստան» պարբերականի

1924 թ. թիւ 29-ում շարադրուած է մի մեծ հարցախումբ: Այն հանգամանալից, բայց յուզականօրէն պարզաբանում է Նժդէի գաղափարախօսութեան մի ամբողջ ուղղուածութիւն: Մի ժողովուրդ այլեւս տառապանքներ չի կրի ուրիշներից, նրան կօգնեն ու կընաշնակցեն, եթէ աւելի ու աւելի ոյժեղ լինի, ամէն ինչի հանցանքը նրանն է, ով թոյլ է: Բայց մեջբերենք այդ յատուածը. «...Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավատ խաչեցեալի... Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր կը պատասխանէր. - **Օտրա՛ւ ես**, արբ արցունքդ ... - **Կոտորո՛ւմ ես**, ջրի չա՛փ էլ արժէք չունի արիւնդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես ... - **Կողոպտո՛ւմ ես**, տէր չէ՛ս վաստակիդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես ... - **Շղթաների մէ՛ջ կը ծնին**, կ'ապրեն, կը մեռնեն **գաւակներդ՝** դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես ... - **Կա՛խ է գլուխդ**, խոնա՛րի է ճակատդ, բռնութեան լծի տակ երկտակուա՛ծ է մեջքդ, պատուիդ տէրը չէ՛ս, ցեղիդ սրբազան լեզուէն օգտուելու իրաւունքն իսկ չունէ՛ս, վաղո՛ւց է ինչ եկեղեցիներիդ գանգերի քաղցր դողանջը չէս լսում, առանց իտեալի եւ վեհութեան կը սողաս միայն - ստրո՛ւկ ես, դու ես մեղաւոր, դու ի՛նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: **Ո՛վ սասաց**, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է ... - **Ուզում ես վերջ տալ գերմարդկային տառապանքի՞ դ**, որի Շէյքսպիրը դեռ չէ յայտնուել: **Ուզում ես վերջ տալ գողգոթայի՞ դ**, որի վրայ որպէս յոյսի ժողովուրդ, կը մեռնես ամէն օր եւ չես մեռնի: **Ուզում ես փրկուի՞լ**. - եղիր ոյժեղ, քանզի թոյլերը բարեկամ չունեն աշխարհում ... Յոյց տուր... առաջինը, որ գիտես մեռնել գիտակցօրէն, երկրորդը՝ որ գիտես մեռնել: **Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինութիւնները ... փրկուած ես»:**

Դժուար է, չասելու համար անհնարին է, հայ գրականութեան մէջ մատնացոյց անել մեկ այլ գրչի մարդու, որն այդպէս արուեստօրէն եւ այդպիսի ծաւալով ու նման խտութիւն ունեցող խմբերով դիմեր հարցերի ճարտասանական միջոցին:

Որոշակի հարցախմբերում իւրաքանչիւր հարց՝ դրան յաջորդող յետեւութիւնը հնարաւոր է արտայայտել շարահիւսական մեկ այլ ամբողջական միաւորով, այն է՝ գլխաւոր նախադասութեամբ՝ իր պայմանի երկրորդական նախադասութեամբ, ստորադասուած *եթէ* շաղկապով, կամ նաեւ ժամանակի երկրորդական նախադասութեամբ՝ ստորադասուած *երբ* շաղկապով: Այսինքն՝ տուեալ խօսքային հատուածը հարցական նախադասութիւնների փոխարէն շարադրել պատմողական նախադասութիւններով: Այսպէս. բնութագրելով ժողովրդի առաջնորդին՝ Նժդեիը մերժում է ինչ-ինչ բացասական հատկութիւններ՝ գրելով. «**Եսակա՞ն է՝** անասնանում են նրա հետ առնչուողները: **Տո՞յլ է մտաւորապէս՝** հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: **Անհայրենապա՞շտ է՝** հակահայրենիք հրէշներ են վխտում նրա շուրջը» [Հ, էջ 179]: Այո, հնարաւոր է վերը նշուած կերպով փոխաձեւել հատուածը եւ շարադրել պատմողական նախադասութիւններով խօսքաշարեր: Ի վնաս իմաստային կողմի գուցէ շատ բան չի փոխուի, բայց չի լինի պահանջուող խօսքի ոյժը, ինչի համար էլ հեղինակը նախընտրել է ճարտասանական հարցերի միջոցը: Բերենք մեկ այլ հատուած: Այստեղ վերլուծում է կռուի մարտավարութիւնը. «Որեւէ համառ կէտի վրայ ուժաթափել թշնամուն եւ ապա անցնել յարձակողականի ... **Ցո՞ւրտ է,** աւելի լաւ, **թո՞յլ է թշնամին** – յարձակլի՛ր: **Անձրեւո՞ւմ է,** աւելի լաւ, **թո՞յլ է թշնամին** – յառաջացի՛ր: **Բո՞ւք է, մառախո՞ւղ** – ուրախացի՛ր, որպէս զայլը, եւ առաջ: Իսկ երբ իջաւ եօթնիցս օրհնուած գիշերը – ցնձա , դու արդէն յաղթել ես» [Հ, էջ 46]: *Երբ* կամ *եթէ* շաղկապներով սկսուող նախադասութիւններով շարադրելու փոխարէն, հեղինակը նախընտրել է վեց հարց: Եւ կամ. «Դերեր կան, որոնք միջակութիւն չեն վերցնում: **Կա՞յր ես՝** եղի՛ր Մարկ Աւրելիոս. **Իմաստասէ՞ր ես՝** եղի՛ր Պղատոն. **Զորավա՞ր ես՝** Աւարայրի Վարդա՛ն եղիք» [Հ, էջ 366]:

Եւ այսպէս. հարցերը՝ մեծ մասամբ հոռտորական, արտայայտում են մեկական բառով, բառակապակցութեամբ կամ ամբողջական նախադասութեամբ, շատ յաճախ հանդէս են գալիս



խմբերով, որպես ճարտասանական միջոց եւ նախընտրում են նոյն իմաստը պարունակող պատմողական նախադասութիւններից:

### **§ 17. Հարց եւ պատասխան**

Ինչպէս միշտ, այժմ էլ տրուող հարցերը կարելի է քննութեան առնել՝ կապուած այն հանգամանքի հետ, թէ ինչ պատասխաններ են ակնկալուում: Ըստ այսմ, լինում են յետեւեալ խօսքային իրաւիճակները:

**ա. Հարցեր, որոնց պատասխանները չեն ակնկալուում կամ ինքնին հասկանալի են:** Այսպիսի հռետորական հարցերով Նժդեհը հասարակութեան ուշադրութիւնն է հրաւիրում կյանքի ամենատարբեր կողմերին՝ պատմական, քաղաքական, բարոյադաստիարակչական, ցեղային, ռազմավարական, հասարակական, նոյնիսկ օրուա կենսակերպին վերաբերող, միով բանիւ իր գաղափարախօսութեան դրոյթների վրայ: Սկսենք հեղինակի հոգու ցաւից, որ համընդհանուր հայութեան ցաւն է: Ահա հարցը. «... իր անօրինական ցաւերէն եւ ամօթանքէն լեզու ելած հայաստանցին իր հարցումը կ'ուղղէր ճակատագրին. **ինչո՞ւ այսպէս, եւ մինչեւ ե՞րբ**» [Հ, էջ 171]: Այլ է յաջորդ հարցը, որ մատնանշում է հայ ժողովրդի փրկութեան ուղին. «Ա՛հ, Յեղայայտութեան երանելի օր, **պիտի ուշանա՞ս, արդեօ՛ք հեռո՞ւ ես**» [Հ, էջ 184]: Այլ թեմաներ: *Բանտարկեալները* յօդուածում ուշադրութեան առարկան ազատագրկուածներն են. «Բայց, աւա՛ղ, այդ կարմիր բանտարկեալների տասնեակից միայն մէկն է ազատուում, **իսկ միւսնե՞րը...**» [Հ, էջ 436]: Այդ մտահոգութեամբ, բանտից Սիմոն Վրացեանին գրած նամակում յուզախոռով բացականչում է. «Սիբեի Սիմոն, Գիտեմ, տեսնելով ձեռագիրս՝ պիտի խոռովես հոգով: Նժդեհը **կենդանի՞, հաւատա՞լ**» [Հ, էջ 699]:

Հռետորական հարցերը նոյնպէս լինում են փնջերով, համաձայն հեղինակի սիրած գրելաոճի՝ այդ կերպ շիկացնելով խօսքային իրավիճակը. «Ո՞ր հայ գրողը, ո՞ր ճշմարիտ հայրենասէրը,

եւ մասնաւորապէս, **ո՞ր ռազմիկը** Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չէ ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել՝ ուխտած Մամիկոննեանների օրինակը: **Ե՞րբ է** հայ սուրը գործել առանց Վարդանի եւ գրիչը շարժել առանց Մեսրոպի անունը տալու: **Դեռ երէկ չէ՞ր**, որ հայ գրողներէն ամենացեղաշունչը – Ահարոնեանը ... Ղարաքիլիսը անուանեց «Նոր Աւարայր»: Եվ **ի՞նչ է Աւարայրը** ... եթէ ոչ տարօնական ոգու մէկ գործը», - հնչում է *Բնչո՞ւ տարօնականութիւն* յօդուածում [Հ, էջ 540-541]: Նոյն յօդուածի առաջին երկու մասում, յատկապէս երկրորդում, այսպիսի հարցափնջեր են: Մի փունջ էլ երկրորդ մասից. «**Ի՞նչ**, Հերոսականութեան ... Մամիկոնեանի բարոյականի **կարիք չէ՞** զգում օրւայ հայութիւնը: Այլեւս «արիաբար առաջ անցնող»-ներ **պետք չէ՞ն**. Հապա վտանգւած **Հայաստա՞նը**: **Զարմանալի՞ է**, որ հայ զինուորը ... Մամիկոնեանների ոգուց ... է խօսում: **Այդ ո՞ր օրւանից** ... հերոսապաշտութեան քարոզչութիւնը ... վտանգաւոր հերետիկոսութիւնը համարւեց» [Հ, էջ 547-548]:

Ինչպէս յայտնի է, որոշակի հռետորական հարցեր, արտայայտած բովանդակութեամբ պայմանաւորուած, ենթադրում են պատասխաններ, ու թէեւ վերջինները չեն շարադրում, միեւնոյնն է, ընթերցողը կամ ունկնդիրը ներքուստ զգում է ակնկալուող պատասխանը: Ըստ որում, եթէ հարցը բացասական երանգով է ձեւակերպուած, եւ գործածուած բայերն էլ ժխտական խոնարհման են, պատասխանը սպասւում է դրական՝ հաստատական: Ահա այդպիսի հարցերից մի քանիսը. «**Մի՞ թէ** եօթնիցս **զգուելի չէ՞** հայրենիքի զգացումէն ու պաշտամունքէն զուրկ անհատը» [Հ, էջ 471], - իր բաց նամակում հարցնում է Նժդեհը Մայքլ Արլէնին. «Անարի լինել եւ անկախ հայրենիք երազել – **ծիծաղելի չէ՞** դա: **Անմտութիւն չէ՞** ե՛ւ ոչխար լինել ե՛ւ գանգատել գայլերից» [Հ, էջ 109], «Ժամանակը չէ՞ խոստովանել ... որ հայն իր պատմութիւնից բնաւ չի սովորում» [Հ, էջ 586]: Ակնկալուում է, որ այս հարցերով հեղինակը ցանկացել է ասել համապատասխանաբար՝ *զգուելի է, ծիծաղելի է, անմտութիւն է, ժամանակն է*: Եւ ընդհակառակը, եթէ հարցը ձեւակերպուած է դրա-

կան երանգով եւ գործածուած բայերն էլ դրական խոնարհման են, պատասխանն ակնկալում է բացասական. «... մեր ժողովուրդը **գիտակցո՞ւմ է**, թէ երբեք իր գլխովին կորչելու վտանգն այնքան մեծ չի եղել, ինչպէս այսօր: **Գիտակցո՞ւմ է**, թէ անցեալում իր վիճակը ... նւազ մտահոգիչ է եղել, քան այսօր» [Հ, էջ 26], «**Ցեղաճանա՞չ** են օրւայ մեր ուսուցիչները» [ՌԽՄ], «Իսկ արտաքին **պայմաննե՞րը**, **Եւրոպա՞ն**, որը Հայկական հարցը ծառայեցրեց իբրեւ առիթ՝ Թուրքիոյ ներքին գործերին միջամտելու եւ սակարկելու նրա հետ – **ճանաչո՞ւմ էին** Եւրոպան (հայ մտաւորականները/հեղ.հեղ./)» [Հ, էջ 631-632]: Ակնկալուող պատասխաններն են՝ *՛ չի գիտակցում, ցեղաճանաչ չեն, չէին ճանաչում:*

*բ. Հարց, որին յաջորդում է պատասխան:* Հարցերի միջոցով շարադրելով իր գաղափարները՝ հեղինակը, բացատրութիւնների անհրաժեշտութեամբ պայմանաւորուած, այլ դէպքերում անմիջապէս տալիս է նաեւ իր պատասխանը: Իր իսկ հարցին, թէ այսօր կամ վաղը *հնարաւո՞ր է* համաշխարհային եղբայրութիւն, տրում է հետեւեալ պատասխանը. «Ո՛չ, ո՛չ ի հարկէ» [Հ, էջ 455]: Ուրեմն՝ «**Ո՞ւր է ելքը: Ո՞վ կը փրկէ** հայ հոգին ստոյգ մահից ... »: *Ցեղի յաւիտենական զէնքը* յօդուածում յետեւում է մի պատասխան, որը նրա գաղափարախօսութեան հիմնաքարերից մեկն է. «- Ցե՛ղը, միա՛յն ցեղը» [Հ, էջ 535]: Այդ գործում դիմելով հայ երիտասարդութեանը, հարցնում է, թէ նա դիւցազնական սերունդ **պիտի դառնա՞յ** եւ **պիտի կարողանա՞յ** փրկել մեր ժողովրդի ապագան. Վստահութիւն ներշնչելով՝ պատասխանում է. «Ցանկութեան դեպքում՝ ԱՅՈ՛՛» [Հ, էջ 142]:

Ստքի կարեւորութիւնն ընդգծելու համար տալիս է մի փունջ հարցեր՝ մեկ ընդհանուր պատասխանով՝ գաղափարական հիմնաքարերից եւս մեկով: Յաջորդող հարցախումբը ընդգծում է յետեւեալ մտքի կարեւորութիւնը: «**Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդի** – ահա Հայ եկեղեցւոյ նոր հաւատամքը: **Զընդունե՞ց** այս ճշմարտութիւնը, **չքարոզե՞ց**, **չտարածե՞ց** ամէն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով **չնպաստե՞ց** մեր ինքնապաշտպանութեան գործին – **կործանուած է դա**» [Հ, էջ 66]:

Երբ հարցը պահանջում է հանգամանալից պատասխան, տրուում են բացատրություններ՝ արդեն ո՛չ մեկ բառով կամ նախադասությամբ: *Որդիների պայքարը հայրերի դեմ* գրքում հեղինակը հարցնում է մարդկային տառապանքի պատճառը, որին յաջողո՞ւմ է մանրամասն պատասխան. «**Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը: - Որովհետեւ միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռի երջանկութիւնը: Որովհետեւ նիթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը ...**» [Հ, էջ 93]:

Այլ դեպքերում, հարցախումբն առաջ քաշելով, Նժդեհը իւրաքանչիւր հարցում մատնանշում է հասարակական կեանքի մի կողմը եւ պատասխանելով հարցերին առանձին-առանձին, վեր հանելով հետեւանքները՝ իր ժխտողական վերաբերմունքն է արտայայտում իրականութեան պատկերի վերաբերեալ: Այսպէս է *Խօսակցութիւն մը գօրալար Գ. Նժդեհի հետ* աշխատութեան *Ընտրանի* ենթագլխում, որտեղ բնորոշում է ժողովրդի ընտրանուն եւ պարզաբանում նրա դերակատարութիւնը, նրա վարքի հետեւանքները. «**Կրօնապէս պա՛ղ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը: Հոգեպէս Էսնա՛ֆ է ուսուցիչը, այլեւս կարիք չկա՛յ աւելի մեծ դժբախտութիւն բաղձալ նրա ազգին: Յաւիտենականի շունչից գո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիօրէն պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը: Պարտուողակա՞ն է զինուորը՝ այլեւս նա հեռացած է իր ... հայրենիքից ... Շահասէ՛ր է ազգային գործիչը՝ նուազ ազգասիրութիւն ու նուիրում փնտռե՛ք ազգի լայն խաւերի մէջ: ... ընտրանին ... Շեղունց՞ իր կոչումէն – ժողովրդի անկումը դառնում է անխուսափելի»** [Հ, էջ 650]: *Ինչո՞ւ տարօնականութիւն*. [Հ, էջ 537-552] սա հարցվերնագիր է: Պատասխանը մի ամբողջ յօդուած է, որի էութիւնը յետեւեալն է: Տարօն աշխարհը Հայաստանի սիրտն է, այստեղից է ծագել մեր մշակոյթի հիմքերի հիմքը՝ հայոց այբուբենը, հայրենիքին ու հաւատին անձնուրաց նուիրուելու «Վարդանանց ուխտը»: Մամիկոնեան տոհմին յետեւելով՝ ցեղի արթնութեամբ կփրկուի հայ ժողովուրդը:

**գ. Հարց՝ ի պատասխան հարցին:** Տրում է հարցը: Ենթադրու-  
 ամ են երբեմն այլընտրանք չունեցող կամ հնարաւոր պատաս-  
 խանները, որոնք թուարկուում են հարցերի տեսքով: Սրանց յետե-  
 ւում են հեղինակի պատասխանները, բացատրութիւնները: Խօս-  
 քային իրավիճակը տրամաբանական զարգացման մէջ է. դիմա-  
 ցինին հեղինակը ոչ մի հնարաւորութիւն չի թողնում: 1921թ.  
 Փոխվարչապետ Ա. Հովհաննիսյանը թուրք քոչվորներին է վաճա-  
 ռել Սիսիանի արոտավայրերը: Այս կապակցութեամբ ՀՅԴ Գերա-  
 գոյն դատական ատեանին ուղղած բացատրագրում Նժդեհը վեր-  
 լուծում է իրավիճակը. «Որպէս ի՞նչ էր հիսուն միլիոն ռուբլի հայ-  
 կական չեկերով ծախում այդ շրջանը: Ճակատ: Դա դաւա-  
 ճանութիւն կլինէր: Արոտատեղիները – այդ դէպքում հարկաւոր  
 էր հարցնել Սիսիանի ժողովրդին, որովհետեւ ամբողջ երեք տա-  
 րի նա այդ արոտատեղիի, ճակատի համար էր կռուել»<sup>44</sup>, «Ի՞նչը  
 հայերիս դարձրեց յաղթական Սարդաբաղում եւ Ղարաքիլի-  
 սում ...», - հարցնում է Նժդեհը իր *Մեռնելու կամք* յօդուածում եւ  
 ապա տալիս հարցեր, որոնք կարող էին միայն անհիմն հիմնա-  
 տրումներ մատնանշել, - «... չգոյ թի՞ւր, սպառազինութի՞ւնը,  
 կռի՞ հանճարեղ յատակագի՞ծը», - ապա պատասխանում է, -  
 «վճռապէս ո՛չ, ո՛չ մէկը եւ ո՛չ էլ միւսը, այլ՝ մեր ուխտը, մեր  
 կամքը՝ մեռնե՛լ, բայց թուրքը չտեսնել Էջմիածնում, Երեւանում»  
 [Հ, էջ 558]: Հիմնական հարցին ի պատասխան տրուող հարցերով  
 ու վերջիններիս յաջորդող բացատրութիւններով է կատարուում  
 1921թ. մայիս-հունիս ամիսներին Լեռնահայաստանում հաս-  
 տատուած հայկական զօրամասերում տիրող իրավիճակը: Բոլ-  
 շեիկները ներում են շնորհել Երեւանից արտասահման հեռա-  
 ցածներին՝ վերադարձի համար ստեղծելով բարենպաստ պայ-  
 մաններ. «Ինչպիսի՞ տպաւորութիւն կարող են թողնել այդ բո-  
 վանդակութեան նամակները մի զօրամասի վրայ, որը բոլշեիկ-  
 ների հալածանքներից էր փախել Երեւանի շրջանից: Չէ՞ որ այժմ  
 վերանում են նրա վերադառնալու երկիրդի բոլոր պատճառները  
 ... Ո՞ւմ համար նա պիտի կռուի, Երեւանը գրաւելու համար:

<sup>44</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 213-230:

Առանց կռուի էլ՝ նրան թոյլ են տալիս այնտեղ գնալու: **ՀՀ կառավարութեան համար:** Դրա մեծ մասը վաղուց է թողել իրեն եւ օր առաջ անցել Թաւրիզ: **Լեռնահայաստանի՝** համար: Բայց դա իր հայրենիքը չէ, եւ ոչ մի բանով կապուած չէ նրա հետ»<sup>45</sup>: Եվ մի վերջին դէպքում էլ հեղինակի ներկայացրած հարցափնջին եւ ի պատասխան առաջ քաշուած հարցերին պատասխանում է դիմացինը: Եվ որովհետեւ պատասխանը թերի է կամ սխալ, պահանջում են հեղինակային բացատրութիւններ. «Իսկապէս, **ինչո՞ւ պարտուեց** եւ բարեկամներից լքեց **հայ ժողովուրդը: Ո՞վ է մեղաւոր,** երկրի **աշխարհագրական դի՞րքը,** քրիստոնէական **Եւրոպա՞ն,** մահմեդական **Ասիա՞ն, ճակատագի՞րը:** - Բոլորը՝ բացի մեզնից,- այսպէս կը տրամաբանէ մեր անուղղայ քաղքենիամտութիւնը» [Հ, էջ 58]:

Եւ այսպիսով, իսօքը շարադրում է հարցական եղանակով. առաջ են քաշում հարցեր, որոնք հռետորական են եւ պատասխաններ չեն ակնկալում կամ հարցեր, որոնց յետեւում են հեղինակի կամ դիմացինի պատասխանները, ինչպէս եւ հարցեր, որոնց ի պատասխան տրւում են այլ հարցեր՝ վեր հանելով հնարաւոր պատասխանները:

### ***§ 18. Տրամադրութիւններ, հոգեվիճակներ***

Նախորդ երկու ենթագլխում շարադրուեց, որ Գ. Նժդեհը հարցախմբերի միջոցով ներկայացնում է գաղափարախօսութեան հիմնադրոյթներ, վերլուծում հասարակական իրավիճակներ, պարզաբանում երեւոյթների, այս կամ այն վարքի պատճառներն ու յետեւանքները: Այդ ամէնի հետ միատեղ նա ներկայացնում է նաեւ տրամադրութիւններ, հոգեվիճակներ անհատի (նաեւ սեփական), հասարակական խաւերի, մամուլի, երիտասարդութեան կամ ողջ հայութեան: Կանգ առնենք առաւել տարածուած տրամադրութիւնների վրայ առանձին-առանձին: Բաժանումն ըստ ենթակէտերի, այստեղ հարաբերական են, քանի որ

---

<sup>45</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 109-162:

տրամադրություններն անխառն չեն հանդիպում: Ուստի հընթացքս, առիթը ներկայանալիս, կանդրադառնանք եւ այլ տրամադրությունների, զգացումների, իրավիճակների:

**ա. Երկրնտրանք-այլընտրանք:** Մեծ անհատների երկընտրանքն աղերսում է հասարակական կեանքի հետ: Նժդեհն, ահա, գնահատում է մի այդպիսի անհատի՝ Աւետիս Ահարոնեանի գործունեությունը, դրուատում նրան, որովհետեւ մնաց իր ժողովրդի հետ եւ իր գրականությամբ ծառայեց իր ժողովրդին: Զուգայեռ է անցկացում Ահարոնեանի եւ Մովսէսի միջեւ. «Մովսէսը երկընտրանքի առջեւ ... **Ո՞ւր գնալ, դէպի** ժողովուրդը եւ նրա հետ դէպի **Անապա՛տ, թե՛ մնալ** Փարաւոնի անդորրաւետ ապարանքում» [Հ, էջ 148]: *Էջեր իմ օրագրէն* աշխատութեան մէջ երկընտրանք է առաջադրում հայկական թերթերին. «... **կարո՞ղ են** հայրենասիրություն դաստիարակել, այդ դէպքում. ...յուսալի է մեր ապագան: **Չէ՞ն կարող** – թող դադարեն թուրթ սեւացնելուց» [Հ, էջ 35]: Երկընտրանք է առաջարկում նաեւ հայ երիտասարդութեանը. *պիտի կարողանա՞յ* կենդանի սուր լինել հայրենիքի համար. «*պիտի չկարողանա՞յ*, – ի գո՛ւր է ապրում: *Յե՞ղ, թե՛ կուսակցություն*. երկընտրանքային վերնագիր մի ամբողջ յօդուածի. *ցեղ՝* բոլոր ժամանակների ու սերունդների հավաքականութեան ըմբռնում, որ տանում է հայրենիքը համընդհանուր հաղթանակների եւ՝ *կուսակցություն*. Ժամանակի իրավիճակով պայմանաւորուած հաւաքականություն, որն յետաքրքրուած է խմբակցային շահերով [Հ, էջ 630-633]:

**բ. Դիմում:** Անհատին, հասարակութեան մի հատուածին, երիտասարդութեանը, ժողովրդին ուղղուած հռետորական դիմումներն ուղեկցում են հարցերով, մեծ մասամբ՝ հռետորական հարցերով: Իսկ դիմումների առիթները բազմազան են՝ դատապարտող, սթափեցնող, յուզառատ, մի բանի վրայ ուշադրություն հրաւիրող, պարտաւորեցնող ... Անհատներից յիշատակենք երկուսին: Տարբեր նկատառումներով հեղինակը դիմում է անցորդին: *Դաշնակցութեան պանթեոնը* արձակ բանաստեղծությունների շարքում նկարագրում է Հրանտի գերեզմանը. «Նա, ան-

ցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող պատանին, սիրում էր ե՛ւ լեռները, ... ե՛ւ երգն անխօս ոսկեշող ասողերի...», - ապա դիմում անցորդին, - «**Ղու լալի՞ ս ես**, անցո՛րդ ...» [Հ, էջ 413]: *Բանտային գրառումներ* աշխատութեան մէջ հանգիստ հանգչելու համար երագում է, որ Մասիսը, Նեմրուքն ու Միփանը էլի հային են ... Ապա հռետորական հարցով դիմում է անցորդին, սթափեցնում նրան՝ վերջում դիմելով հռետորական կոչով. «Անցո՛րդ, ասա՛, **հեռո՞ւ է այդ օրը**: Բարե՛, **դու լալի՞ ս ես, դու զինաթա՞փ ես**, ... Ի մա՛րտ, անցո՛րդ, ի մա՛րտ ...» [Հ, էջ 407]:

Պատմական, իրական անձերից որոնց հռետորական հարցերով դիմել է Նժդեհը, հիշատակենք Գեղեոն Տեր-Մինասեանին: *Իմ պատասխանը* հուշագրութեան ենթազույսներից մեկը հեռակայ դատ է մի մարդու, որը ժամանակին Լեռնահայաստանում կռուել է Նժդեհի հետ, իսկ արտասահմանում, եկամտաբեր պաշտօն ստանալով բուլեիկներից, *Յուշեր անցեալից* յօդուածաշարով հանդէս է եկել իր կեանքը փրկողի անուանարկուամբ: Յամառոտակի մէջբերենք այդ հարցաշարը: «...Գեղեո՛ւն...**Չգիտէի՞ ք, յիմա՛ր**, որ քո ստութեան ետեւէն ճշմարտութիւնը կը հասներ կրնկակոխ ... **Գոհ չե՞ս**, որ իմ վարած կոիւների շնորհիւ միայն Մինիքն այսօր կազմում է մայր երկրի անբաժան մասը: **Չե՞ս ընդունում**, որ հայ բուլեիկն իսկ կարող է զարշել ապսպրանքով իմ դէմ թխածդ սողերէն» [Հ, էջ 283]:

*Ինչո՞ւ տարօնականութիւն* բացատրական յօդուածը հեռակայ խօսակցութիւն է Նժդեհի եւ *Նոր օր* պարբերականի խմբագրակազմի միջեւ: Մի շարք հռետորական հարցերից հետո նա հարցերով դիմում է նաեւ խմբագրութեան անդամներին. «**Չե՞ք լսում** յուսահատ ճիչերը, թէ դժուար է օտարութեան մէջ հայը հայ պահել ... **Կ՛ուզէի՞ ք**, որ եկող մեծ օրերը իրենց առջեւ գտնէին ...

անգօր – մի պզտիկ սերունդ» [Հ, էջ 541-542]:

1920 թ. սեպտեմբերի 15-ի նախատալից հրամանը թշնամուն յանձնուելու կապակցութեամբ Նժդեհի դիմումներից մեկն է հասարակութեան մի հատուածին՝ դափանցիներին. «... բայց **գի-**



տե՞ս, Ղափա՛ն, թե որքան ուժեղ է նա (թշնամին/հեղ.հեղ./) ա-  
տում եւ արհամարհում քեզ ... **Գիտակցո՞ւմ ես, չափո՞ւմ** կա-  
տարածող տմարդութեան անչափելի մեծութիւնը» [Հ, էջ 424]: 1920  
թվականի սեպտեմբերի 17-ի կոչում հանդիմանական, հիշողու-  
թիւն արթնացնող հարցերով դիմում է Ղափանի ժողովրդին [Հ, էջ  
424-426 ]:

*Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ, որն  
ամբողջովին վերցրած, հանդիպում է հեղինակի եւ նոր սերնդի  
միջեւ, ահա ինչպիսին է դիմումը հայ երիտասարդութեանը.  
«Հա՛յ երիտասարդութիւն, վաղը, երբ թրքութիւնը փորձեց պղծել  
Հայրենիքիդ սահմանների սրբութիւնը, **պիտ կարողանա՞ս** աւելի  
սարսափելի լինել, քան թշնամին: **Պիտ կարողանա՞ս** վագրային  
կեցածք ցուցադրել: Պատասխանի՛ր, **պիտ կարողանա՞ս** ...» [Հ,  
էջ 132]:

Այս ամէնի հետ մէկտեղ Նժդեհի մշտական խօսակիցը, գրեթէ  
գրչընկերը, ուղղակի թէ անուղղակի, ընթերցողն է, որի հետ կի-  
սում է իր մտքերը, տրամադրութիւնները, ձգտումները, զգաց-  
մունքները՝ դիմելով ամենատարբեր՝ ուշադրութիւն հրաւիրող,  
պարզաբանող, յիշեցնող, սթափեցնող, ցուցական եւ այլ կարգի  
հարցերով: Վերցնենք, թէկուզ, *Բանտային գրառումներ* աշխա-  
տութիւնը, որը այլեւայլ բնագաւառների քննութիւն լինելով հան-  
դերձ, գրոյց է իր հեռակայ խօսակցի հետ, որին մերթ դիմում է ե-  
զակի, մերթ յոգնակի (*գիտե՞ս ... գիտե՞ք ...*), մերթ՝ *ընթերցող,  
բարեկամ, անցորդ ...* Ի՞նչ ասել կուզի, այսպիսի գրելաձեւը մը-  
տերմիկ է, կապը՝ երկկողմանի:

**գ. Տարակուսանք:** Որքան տարածուած, որքան շատ են թիր  
զաղափարների, ըմբռնումների հարցադրումները, այնքան մեծ է  
տարակուսանքը, մեծ է հարցախումբը: Իւրաքանչիւր հարց-տա-  
րակուսանքի հետ մէկտեղ ժխտումն է թիր մի հարցադրման: Մի  
այսպիսի հարցափունջ *Էջեր իմ օրագրէն* աշխատութիւնից՝ տը-  
պագրուած 1924 թ., հակադրութիւնն է աշխարհաքաղաքացիու-  
թեան, սեփական ազգի շահերը մարդկութեան շահերին ստորա-  
դասելու զաղափարական ըմբռնումների: Մէջբերենք այդ հար-

ցափունջը. «Մերը պիտի չսիրե՞լ, որովհետեւ պետք է սիրել եւ օտարի՞նք: Մի մասը պիտի չսիրե՞լ, որովհետեւ սիրում ենք ամբողջութի՞ւնը: Անհեթեթութիւն չէ՞ դա: Իսկ եթէ բոլորն էլ, ի դժբախտութիւն աշխարհի, դադարեին իրենց ազգը սիրելուց, կը շահէ ը մարդկութիւնը: Եւ ինչո՞ւ միայն մե՛ր ազգը չսիրել, ինչո՞ւ միայն մերի՞նչ չօգնել, չէ՞ որ դա էլ մի մասն է կազմում մարդկային ցեղի» [Հ, էջ 31]: Հիրաւի, ինչո՞ւ մենք՝ հայերս, պիտի լինեինք առաջինը, աւելի ճիշտ՝ միակը, որպէսզի, երբ ուրիշները տարածքներ էին շահում, մենք կորցնեինք յանուն այն գաղափարի, թէ «միեւնոյնն է, շուտով սահմանները վերանալու են» ... Մի հարցափունջ էլ 1927 թ. տպագրուած *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութիւնից՝ հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ, որ նոյնքան արդիական է եւ նոյն ուժգնութեամբ հնչում է այսօր՝ գրեթէ 90 տարի անց: «...յաղթականի իրաւունքն է՝ զրկել պարտւածին փոխվրէժի դիմելու, ինձ վնասելու հնարաւորութիւնից: Եթէ դարաւոր թշնամիդ այսպէ՛ս խօսեց քեզ հետ: Եւ կարիք կա՞յ խօսքի՛՝ թրքութիւնը ճանաչելու համար: Մի՞ թէ խօսուն եւ հասկանալի չէ նրա հայադաւ լռութիւնը: Միջազգային բարոյակա՞նք: Բայց այդ երբւանի՞ց է, որ գոյութիւն ունի դա: Արեւելքի խուժն ու ստրո՞ւկը, հակաբարոյական թուրքն ու հայ պարտադակա՞նք հիմքը պիտի դնեն ցեղամիջեան բարոյականութեան» [Հ, էջ 136]: Այժմ էլ նոյն տարակուսանքը, զայրոյթախառը նոյն տարակուսանքն է հնչում ի պատասխան այն տրամադրութիւնների, թէ՛ «Այժմեան թուրքը նոյն թուրքը չէ»:

**դ. Զայրոյթ:** Գարեգին Նժդեհն արդարացի զայրոյթ ապրելու պատճառներ շատ ունեցաւ: Կուսակիցները (մասնաւորապէս՝ Ռուբէն Տէր-Մինասեանը) դաւեցին նրան եւ խոչընդոտեցին ցեղակրօնութեան շարժմանը, գաղութահայութեան որոշ տարրեր շարունակ զրպարտեցին եւ անուանարկեցին նրան, եղան մարդիկ, ինչպէս նշուեց, (օրինակ՝ Գեդեօն Տէր-Մինասեանը), երախտապարտ լինելու փոխարէն, սեփական շահից ելնելով, թշնամիներ դարձան, պաշտպանեալ Լեռնահայաստանի որոշ գիւղեր, ենթարկվելով քարոզութեանը, հակառակորդի կողմն անցան,

զինուորական նախարարին ուղղուած օգնութեան դիմումներն անպատասխան մնացին, փոխվարչապետ Արշակ Հովհաննիսեանը վնասարար կերպով միջամտում էր ռազմական հարցերում եւ այլն, եւ այլն, եւ այլն ... Այս ամէնը պակաս անհատական եւ շատ անելի հասարակական, ապա նաեւ պետական նշանակութիւն ունեցող հանգամանքներ էին, ուստի դրանց դէմ պետք էր պայքարել գրչով՝ հրապարակաւ, եւ Նժդեհի գայրոյթի, նախատինքով ու դառնութեամբ խառն գայրոյթի կայծերը թափում էին մեղապարտների գլուխներին: Այստեղ մեր խնդիրը նշուած հարաբերութիւնների վերլուծութիւնը չէ, այլ թէ ինչպէս էին հարցերը, մասնաւորապէս հռետորական հարցերը, դառնում գայրոյթ արտայայտելու միջոց: Եւ այս առումով դասական նմուշ է Նժդեհի *Բաց նամակ Մայքլ Արլէնին* հրապարակախօսական յօդուածը: Սկզբից մինչեւ վերջ յօդուածը հնչում է գայրացկոտ, դատապարտող հարցերը յաջորդում են միմեանց: Խնդրի բերումով մեզ առանձնակի զբաղեցրել է *նամակի* 2 մասը: Այստեղ մե՛րթ անմիջաբար, մե՛րթ փոքր ընդմիջումներով իրար են յաջորդում քրսանի չափ հարցեր: Մայքլ Արլէնը միակ պատմական անձն է, որին միանգամից այսքան շատ եւ ամոթաբեր հարցեր է ուղղում Նժդեհը: Որպէս արդիւնք՝ ընթերցողի առջեւ է կանգնում գրողի ոչ բարոյական մի կերպար, որովհետեւ իւրաքանչիւր յուզախոռով հարցական ի ցոյց է դնում միաժամանակ մի յատկանիշ, մի դիմագիծ՝ հայածին, բայց հայատեաց, ցեղի դասալիք, բայց դատաւոր, «գրչի կուրտիզանութեամբ» զբաղվող մէկի: Բայց ահա այդ հարցերը. «**Դուք գիտե՞ք հայ գրողի ճակատագիրը՝** ... մեռնել գրկանքների մէջ: **Դուք գիտե՞ք այդ ... Ի՞նչ, արդա՞ր է,** որ նման մէկը ... օտար մամուլի մէջ իր ազգը *կենդանի մեռեալ* հռչակէ: **Դասալիքը դատաւորի դերո՞ւմ ... Մի՞թէ եօթնիցս զգուելի չէ՞** հայրենիքի զգացումէն ու պաշտամունքէն զուրկ անհատը: ... **Զգիտե՞ք, որ** ... ձեր տողերը կարող են արդարացնել ու սնուցանել օտար ժողովուրդների արհամարհանքը դէպի հայ անունն ու դատը: ... **Զգիտե՞ք, որ** ... կարող են ինքնանուաստացումի մըղել ... հայութիւնը, ... **ինչո՞ւ եք ուզում խախտել հայութեան հա-**

ւատքը դէպի իր ապագան: Տմարդութիւն չէ՞ փողոցի լեզուով խօսիլ ... մի բուռ ժողովուրդի մասին: Ինչո՞ւ էք ուզում փութացնել նրա յոյսերի մահը ... Ի՞նչ, դրանո՞ւմ է գրչի մարդու կոչումը: Տաղանդը տրուում է նրանով կուրսիզանութի՞ւն անելու, զայն հարստութեան ու հանգստի վերածելու ւ համար: ... միայն նա՛ է ճշմարտօրէն մեծը, որը մեծ զաւակ է նա՛խ իր ժողովրդի, եւ ապա՝ մարդկութեան: Իսկ դո՞ւք, ինչի՞ կը ծառայեցնէք ձեզ տրուած տաղանդը: ... ինչպէ՞ս թիկունք ցոյց տուիք ձեր ցեղի գողգոթային: Ինչո՞ւ չուզեցիք, հրեայ օտարալեզու գրողների պէս, լինել նա՛խ ձեր ցեղի տաղանդաւոր զաւակը: Դժո՞ւար է: Ծա՞նր է հայ խօսքի խաչը: ... Բայց չէ՞ որ հէնց այդ ծանր խաչը սիրով կրելու մէջ է ճշմարիտ մեծութիւնը: Սակայն, ինչո՞ւ կ'երկարեմ, ... Չէ՞ որ դուք սկսել էք ամաչել ձեր ծագումից: Այո՞: Ուրեմն, գրչի կոկետութիւն չէ՞ ձեր չանգրածը Հայաստանի մասին» [ Հ, էջ 471-473 ]:

Այլ են զայրոյթի շարժառիթները Լեոնահայաստանի արեւմրտեան ճակատի հրամանատար Կուռոյի հետ կապուած, եւ այլ՝ հարցերի նպատակը: Կուռոն 400 կարմիր գերիների, իրենց զենքով, թոյլ է տալիս սիւնեցիների հետ կռուել նախկին իւրայինների դէմ: Սկսուում է կործանարար ներքին քարոզչութիւն: Հայաստանի հանրապետութեան նախարարական խորհրդրդին ուղարկած բացատրագրերում իրար յաջորդող հարցերով ցոյց են տրուում կատարուածի անխոհեմութիւնը եւ ակնկալուող յետեւանքները. «Ո՞վ էւ ո՞րտեղ է տեսնուած, որ քաղաքացիական կռուի ժամանակ թշնամուց գերի վերցրած զօրամասերն օգտագործելու նպատակով իսկոյն եւեթ մտցնէ առանց այն էլ հոգով վարակուած իր զօրաշարքերի մէջ: Մի՞ թէ այդ ճակատում մենք այնքան քիչ զինուոր ունէինք, ... Մի՞ թէ այդ անհեռատես ... քայլը չէ՞, որ պատճառ դարձաւ Լեոնահայաստանի համար անելանելի վիճակ ստեղծելուն»<sup>46</sup>: Իսկ Հայաստանի պառլամենտի անդամներին 1920 թ. հոկտեմբերի 23-ին հասցեագրուած դիմումն ուղղակի բողոքի ճիչ է՝ խառն տարակուսանքի հետ: Յաջորդաբար տրուող

<sup>46</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 109-162:

հռետորական հարցերը ներկայացնում են, թե ինչ ծանրածանր իրաւիճակում է շարունակում կռուել Նժդեհը. «Այլեւս ինչո՞ւ եմ կռում, երբ ստիւած պիտի լինեմ վերցրածս գերիներին բաց թողնելու: Այդպիսի գերողբերգական դրութեան մէջ կարելի՞ է դնել մի ղեկաւարի, ... որը արիւն է թքում ... Մինչեւ ե՞րբ, ընկերներ՛ր, մինչեւ ե՞րբ ես յաղթեմ, բայց եւ այնպէս ինձ պարտուած զգամ: Մինչեւ ե՞րբ ռազմամթերք ... աղաղակեմ, եւ Երեւանի սպանիչ լռութիւնը լինի ինձ պատասխան: Մինչեւ ե՞րբ ...»<sup>47</sup>:

**է. Նախաստիճք:** Յաճախակի հանդիպող տրամադրութիւններից է: Հարցերը ի ցոյց են հանում իրականութեան կողմեր, որոնք չպէտք է լինէին, յատկութիւններ, որոնք իրենց գործունեութեամբ հասարակութեանը յայտնի մարդիկ չպէտք է ունենային, վարք, որ դատապարտելի է, բայց առկայ է: Նժդեհը նախատինքով դիմում է այն հայերին, որոնք ազատ երկրներում շարունակում են թրքախօս մնալ՝ հարցնելով. «Օտա՞րն է մեղաւոր» [Հ, էջ 445 ]: Հարցի պատասխանն ակնյայտ է՝ իհարկէ, ո՛չ: Երախտամոռ մարդիկ յաճախ են եղել հեղինակի շրջապատում: Դրանցից մէկին՝ Գեղեոն Տեր-Մինասեանին, որի կեանքը փրկել էր, *Իմ պատասխանը* յուշագրութեան մէջ դառնութեամբ ու հանդիմանանքով հարցնում է. «Մոռացա՞ր, որ անարժէք կաշիդ փրկելու համար ... անցար Պարսկաստան» [Հ, էջ 284]:

Ծանր նախատինքի եօթ հարց է հնչում յաջորդաբար *Էջեր Լեռնահայաստանի գոյամարտի* յուշագրութեան մէջ՝ ուղղուած «ապերախտ ժողովուրդ»-ին: Մի շարք գիւղեր ու Ղափանն ամօթալի կերպով յանձնուել են թշնամուն: Գոյամարտող զօրամասերը քաշուել են Խուստուփ լեռը: Ադրբեջանը երեք մլն. է խոստացել Նժդեհի գլխի համար, եւ լրտեսները փնտրում են նրան: 1920 թ. սեպտեմբերի 17-ի կոչում իւրաքանչիւր հարց տրում է արթնացնելու բնակչութեան մշուշուած հիշողութիւնը, իւրաքանչիւր հարց մի խղճի խայթոց է. «... դու կանչեցիր ինձ եւ ես հասա ... ասա՛, ժողովուրդ, այն օրէն քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի քար, որի վրայ դրած չլինէի իմ հոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ

<sup>47</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1., գ. 73, թ. 1:

**տեսէ՛լ ես** մի օր, մի ժամ անհոգս ... դու ինձ **տեսէ՛լ ես** փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լսո՞ւմ ես, քարերը, քարերը կաղաղակէն, կասէն՝ ո՛չ: Ասա՛, **մնա՞ց մի քան**, որ ինայէի, չգոհաբերէի քո ազատութեան ... համար: ... **ի՞նչ, մոռացա՞ր** իշխան Ղաջարին, որի գորքերին պատերի տակից եմ քշել: Վա յ քեզ, ժողովո՛ւրդ, **ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուդ, խղճիդ, պատմութեանը**» [ԷԼԳ]:

**գ. Անորոշութիւն:** Թերեւս երբեք այնքան հարցականներ չեն ծագում, որքան անորոշութեան մէջ լինելիս: Պահանջ է առաջանում պարզելու, թէ *ինչո՞ւ է կատարւել փաստը, ե՞րբ, ո՞վ է մեղաւոր, ի՞նչ հետեւանքներ են լինելու*, վերջապէս, թէ *ի՞նչ պէտք է անել*: Մի այսպիսի իրավիճակ է պատմում *Ազատ Միւնիք* յուշագրութեան մէջ: Ախտայի գորամասը նահանջել է, առանց այդ մասին նախապէս տեղեկացնելու միւս գորամասերին: Ճակատում շփոթ է: Հարցերով ներկայացում է դրութեան անորոշութիւնը. «... այժմ Նոր Բայագետի հրամանատարութիւնը չգիտէ՝ **ե՞րբ եւ ինչո՞ւ է նահանջել** Ախտայի գորամասը, թշնամու **ճնշման տակ, թէ՛ տակտիկական նկատառումներով** է յետ քաշւել, **ո՞ր է կանգ առնելու՝** դիմադրութիւն ցոյց տալու համար: **Ի՞նչ անել**» [ԱՍ]:

1920 թ. օգոստոսի 10-ին Նժդեհը ստանում է զինուորական նախարարի յանկարծական, պարզաբանումներ չպարունակող գրութիւնը, որով հանձնարարում է համաձայն կնքուած զինադադարի թողնել Չանգեզուրը եւ անցնել *մեր տերիտորիան*: Դրութիւնն աւելի քան տարակուսելի է: Այդ կերպ ոչ միայն Չանգեզուրն էր յանձնում կարմիրներին, այլեւ Արարատեան Հայաստանը: Յետեւում է Նժդեհի գրութիւնը զինուորական նախարարին եւ գեներալ Նազարբեկովին՝ մէջբերուած *Հայ-բոլշեփկեան կռիւները* յուշագրութեան մէջ: Հարցերը ուշադրութիւն են հրաւիրում, թէ *ինչպէ՞ս կարելի է գործել* մի այսպիսի անորոշ իրավիճակում, երբ. «Ես չգիտեմ, թէ՛ 1. **Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ (Ադրբեյջանի՞, թէ՞ սովետական Ռուսաստանի)** եւ որքա՞ն ժամանակով է կնքուած զինադադարը, 2. ... Եթէ իմ ոյժերը պէտք է թողնեն իրենց երկիրը, ... ապա բոլշեփկները եւ ադրբեյջանա-

կան բանդաները ե՞րբ եւ ո՞ր են քաշուելու: 3. Ի՞նչ է լինելու Գողթանի դրութիւնը ... 4. Չե՞ք կասկածում, որ թշնամին կարող է ... տէր դառնալ Կապարգողթի ապստամբ շրջաններին: 5. ... Չե՞ք ենթադրում, որ այդ ոյժերը հեշտութեամբ կարող են տէր դառնալ Երեւանին: Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ բոլշեիկները շարունակում են իրենց շահատակութիւնները ...»<sup>48</sup>:

*Է. Խոհականութիւն:* Մէկ այլ կարգի հարցախմբեր էլ մղում են ընթերցողին խորհելու, վերլուծելու իրականութիւնը: Իսկ իրականութիւնը բազմակողմանի է, վերլուծութիւնն էլ՝ տարբեր ուղղուածութեան՝ քաղաքական, հայրենապաշտական, անհատական-ներհայեցողական, հոգեբանական, մարդկութեան ապագայի հետ կապուած ...: ... 1920-1940 թթ.. տասնամեակներում տարապատկեր ու հակասական էր հայ հասարակական կեանքը: Արեւմտահայութիւնը, հնարաւորինս խուսափելով թուրքական ջարդարար քաղաքականութիւնից, ցրուել էր աշխարհով մէկ ու ստուարացրել գաղութները՝ իր հետ տանելով ընկճուածութիւն, յուսալքութիւն. Արեւելեան Հայաստանը խորհրդայնացուել էր, ապրում էր մի դեռեւս չտեսնուած իրաւակարգում՝ հակաազգայնական կողմնորոշումով ու բռնաճնշումներով, սակայն արտաքին վտանգից ապահով: Քաղաքական որոշ ոյժեր հայութեան մէջ քարոզում էին հակաազգայնականութիւն, պարտուողականութիւն, ընդհուպ մինչեւ թրքասիրութիւն: Այլ ոյժեր՝ հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն, գոտեպնդում ու հոգեբանական յարութիւն էին ներշնչում ժողովրդին: Մարդկութիւնը քաղաքական ցնցումներ էր ապրում: Զգացում էր պատերազմի մօտալուտ լինելը: Այսպիսի տարիների է Նժդեհը հանդես եկել իր հասարակական-քաղաքական վերլուծական աշխատութիւններով ու հրապարակախօսական յօդուածներով: Նա տազնապում էր սեփական ժողովրդի համար, հեռում մնացած հայրենիքի համար, հայրենամոռացութեան պատճառով: Իր հոռետրական հարցերը նախ այս ամենի շուրջն էին ու մղում էին ընթերցողին հեղինակի հետ մեկտեղ մտածելու. «Ո՞վ է ստիպում մեզ՝ չլինել

<sup>48</sup> «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր-նոյեմբեր, 1923 թ.:

հայրենապաշտ: **Ո՞վ կարող է խլել մեզնից անկախ հայրենիքի սրբազան գաղափարը: Ո՞վ կարող է ինքնանուաստացումի զոհ դարձնել մեզ ... Ո՞վ եւ ի՞նչը**, վերջապէս, կարող է **արգելել** բոլորին եւ ամէն մէկին՝ իրենց կեանքի գերագոյն հարցը դարձնելու ... թէ «**Ի՞նչ ձեռով կարող եմ է՛լ ասելի օգտակար լինել Հայրենիքիս**»: **Կա՞յ**, մեզնից դուրս **գոյութիւն ունի՞ այդ** սեւ **ոյժը ...**, - չկա՛յ մեզնից դուրս, կա՛յ մեր հոգու մէջ» [Հ, էջ 445-446]:

Ուժացումը գաղութներում, ռուսացումը հայրենիքում, հայութեան հատուածականութիւնն ու անմիաբանութիւնը, պետութիւնների բախման ահագնացող վտանգը, (եւ այս ամէնը այնպիսի պատմական պայմաններում, երբ ժողովուրդները ձգտում են ինքնավերանորոգման, համախմբման՝ պահանջելու իրենցից խլած իրաւունքները), Նժդեհին ներշնչում են խօսելու հայ հասարակութեան հետ, նրան մղելով կշռադատման ու վերլուծութեան: Ահա ինչպիսին է *Յեղի յաւիտենական զէնքը* յօդուածի բնաբանը. «Ես հարցնում եմ այնպէս, ինչպէս ո՛չ ոք դեռ չէ հարցրել - **ո՞ւր ենք գնում: Մեզ համար տեղ կա՞յ պատմութեան մէջ: Գիտե՞ մէկը, որ բոլորովին մենակ ենք մնացել**, որ ներկայ չունենք: **Գիտե՞ մէկը**, որ եթէ դադարենք գոյութիւն ունենալէ՝ տիեզերաշէնքի մէջ մի հատիկ հիւլէ իսկ պիտի չշարժի» [Հ, էջ 525]: Այսպիսի հարցախմբերից հետո վերլուծութիւնն ընթանում է տարօնականութեան, ցեղի, ոգու շուրջ:

Եղեռնից մազապուրծ հին սերունդը հոգեկան ընկճախտի մէջ է, անընդունակ նոր շարժի, գործունէութեան, այլ է նոր աճող սերունդը, որն ի վիճակի է եւ պէտք է պայքարի անցեալ դարձող հոգեվիճակի ու գաղափարախօսութեան դէմ: *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ հէնց այս առումով հնչում են հռետորական հարցեր, որոնք հաւաստում են երիտասարդութեան կարողութիւնները եւ հին սերնդին հակադիր ձգտումները, մղում դէպի մեծագործութիւններ. «**Ո՞վ չի զգացել** երբեմն իր մէջ կորովի յանկարծական ծովացում: **Ո՞վ չի ունեցել** երբեմն հանճարեղ ներշնչումներ, յայտնութիւն, պարզատեսութիւն: **Ո՞ւմ յաճախ չի թւացել**, որ ինքը որոշ արտասովոր վայրկեաններում ընդու-



նակ է զարգացնելու իր մէջ շատ աւելի մեծ ոյժ, քան այն, որ զգում է իր մէջ սովորական վիճակում» [Հ, էջ 97]: Այսպիսի խոհերի են տանում հարցերը սեփական ժողովրդի վերաբերեալ:

Գալով մարդկութեանը, նախորդ երկու ենթազլխում արդէն առիթներ եղել են հեղինակի հետ մեկտեղ խորհելու ընդհանուր խնդիրների շուրջ: Դա *երջանկութեան պրոբլեմն էր*. «**Չէ՞ս յիշում**, ընթերցո՛ղ, այն ծանօթ պատկերը, որ երջանկութիւնը կը խորհրդանշէ: Կախարդական զօրութեամբ օժտուած կանացի մի թեւաւոր էակ ... փախչում է՝ իրեն հետ վազեցնելով մարդկային ցեղը ... **Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը**», - ցուազին հարցնում է հեղինակը *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ, «- Որովհետեւ միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռէ երջանկութիւնը: Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը եւ իր կեանքը վերածեց դժոխքի» [Հ, էջ 92-93]: Դա համամարդկային համերաշխութիւնն է, որը ներկայ հակամարտութիւնների պայմաններում անիրականանալի է. «Արդեօք **այսօր հնարատ՞ր է** աշխարհը լցնող «ազգ եւ ազինք»ների համաշխարհային եղբայրութիւնը ... Հնարատ՞ր է դա ... վաղը, մոտիկ ապագայում», - անհանգիստ ու դարձեալ ցուազին տրւում է հարցը, - «Ո՛չ, ի հարկէ» [Հ, էջ 455]: Եւ ահա ամենամտահոգիչ, տագնապալից խնդիրը. *ո՛ւմ եւ ինչի՞ կճառայի ատոմային էներգիան*. «Ատո՛մ, դու անսիրտ աստուածութի՛ւն, **ո՞վ, ո՞վ է գործի դնելու քո տարերային ոյժը** - չարութեան ձեռք՝ **պատերա՛զմը, թե՛ խաղաղութիւնը**» [Հ, էջ 375]:

Գարեգին Նժդեհի խոհական հարցերը, իրենց պատասխաններով հանդերձ, կարող են լինել կարճ, հատու, սեղմ եւ ընդգրկուն բովանդակութեամբ՝ հաւասարուելով ասոյթների: Երկու նմուշ, թերեւս. «**Ներե՞լ եք ուզում** - յաղթե՛ք նախ» [Հ, էջ 136]: «**Փա՞ռք ես փնտրում՝** վտա՛նգ փնտրիր» [Հ, էջ 392]:

Այսպիսով. հարցերը, այդ թւում հռետորական հարցերը, որպէս ճարտասանական միջոց Գարեգին Նժդեհին առաւել յաճախ գործադրում է փնջերով: Դրանք կարող են ուղեկցուել պա-

տասխաններով կամ իբրեւ պատասխան ակնկալուող այլ հարցով. արտայայտում են ամենատարբեր զգացմունքներ ու տրամադրություններ, ընդգծում, շեշտում նախադասությունների իմաստը, աւելացնում խօսքի յուզականությունը՝ ընթերցողին կենտրոնացնելով իր ասելիքի վրայ:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

### ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

#### *§ 19. Կրկնությունների տեսակները և քանակական կողմը*

Կրկնությունը Գարեգին Նժդեհի ստեղծագործություններում խիստ տարածուած ոճական միջոցներից է: Այն հանդիպում է թե՛ գեղարուեստական, թե՛ գիտական երկերում, ինչպէս նաեւ կոչերում ու նամակներում: Որպէս ճարտասանական հնար՝ թերեւս աւելի յաճախ է գործադրում, քան հռետորական հարցը:

*1. Կրկնությունների բազմազանությունը և քանակական կողմը: Հնչյունային, բառային, շարահիւսական տեսակներ:* Տեսակներից առաջինը հագուադէպ է լինում, ուստի սկսենք բառայինից: Ամենապարզունակը *n 'չ, n 'ջ; չէ՛, չէ՛* ժխտական, վե - րաբերական (եղանակավորող) բառերի կրկնությունն է վճռակա նութիւն արտայայտելիս, որ հանդիպում է գործերի մեծագոյն մասում՝ մեծ, թէ փոքր: Համաձայն բառային տեսակի պահանջի, մեջբերենք նմուշներ, որտեղ կրկնում են առանձին բառերը. «Ցեղօրէ՛ն, ցեղօրէ՛ն ապրենք, որպէսզի ... Վարդաններն ու Վահաններն անպակաս լինեն Հայոց աշխարհում» [Հ, էջ 486], «Զգո՛յ՛, զգո՛յ՛, դարձեալ զգո՛յ՛, ... ահա՛ արդի քաղաքական պահի հրամայականը»<sup>49</sup>, «Քաջերին, միայն քաջերին է զօրա-վիգում պատերազմների քմայաճ Սստուածը» [ԱՄ], «... կրեցիր անմարդկային զրկանքներ ... մտածելով միա՛յն, միա՛յն ու-րիշների մասին» [Հ, էջ 596]: Այս չորս օրինակում գործածուած են բառային միաշար կրկնություններ: «Դո՛ւ, երիտասարդ զրուցընկեր, դո՛ւ, որ հրամայողաբար պիտ լինես ուժեղ, դո՛ւ եւս ապաւինիր վսեմ

<sup>49</sup> «Ռազմիկ» օրաթերթ, թթ.. 169-174, 1943 թ.:

մտածումի փրկարար ոյժին» [Հ, էջ 102]: Իսկ այստեղ բառային յարակրկնություն է, քանի որ *դու*-ն հանդէս է գալիս նախադասությունների սկզբում:

Շարահիւսական տեսակի պահանջով բերենք նմուշներ, որոնցում կրկնում են ամբողջական նախադասություններ. «...ամէն տեղ կրկնէք հպարտութեամբ՝ **մենք էլ հայ ենք**: ... Ձեր նոր աղոթքը թող լինի՝ **մենք է՛լ հայ ենք**» [ԱՍ], «**Գիտե՛նք այդ ամէնը**: ... **Գիտե՛նք այդ ամէնը**, տեսնում ենք, թէ ի՛նչպէս աստիճանաբար բարձրանում է թրքական տապարը ... **Գիտե՛նք այդ ամէնը**, անհանգիստ ենք, բայց **ոչի՛նչ, ոչի՛նչ** չենք անում...» [ Հ, էջ 127]: Առաջին հատուածում շարահիւսական վերջնակրկնություն է: Երկրորդ հատուածում շարահիւսական յարակրկնություն է՝ համատեղուած միաշար բառային կրկնութեան հետ:

Բազմաթիւ են դէպքերը, երբ միեւնոյն նախադասութեան կամ կից մի քանի նախադասութեան մէջ առկայ են զանազան կրկնություններ: Յետեւեալ հատուածներում երկուական են. «Նա **կուել է**, անդադրում **կուել է** գիշեր-ցերեկ ... բայց եւ այնպէս նա **ապրել է, ապրել է**, որովհետեւ ունեցել է վեհ հաւատ»<sup>50</sup>, «... էն **մենք ենք, մենք**, որ եօթն անգամ **ոյժեղ**, մահից էլ **ոյժեղ** գիտենք ատել մեր դարաւոր թշնամուն ... » [Հ, էջ 422]: «**Ռու է՛լ, դու էլ** կարող էիր հարուստ լինել, բայց ... **մեռար** մենաւոր, **մեռար** անշուք ու չորս պատերի մէջ, **մեռար** ինչպէս վայել է մեռնել հո-գով մեծերին» [Հ, էջ 597]: Առաջին հատուածում կրկնում են *կուել*, *ապրել*, երկրորդում՝ *մենք* եւ *ոյժեղ*, երրորդում՝ *դու էլ*, *մեռար* բառերը՝ բոլորն էլ միաշար եղանակով:

Յաջորդ երկու հատուածում կայ երեքական կրկնություն. «Մէկ էլ **կրկնէք** այդ սրբազան խօսքերը: **Կրկնէք ամէն** օր, **ամէն** ժամ եւ **ամէն** տեղ, **կրկնէք** հպարտութեամբ...[ԱՍ], «... **բոլորը, բոլորը** պիտ համակլին նոր մտայնութեամբ, պիտ **կրկնեն** նոր ճշմարտություններ, **կրկնեն** անվերջ, անդադրում, **մինչեւ որ** ... ինքնապաշտպանութեան գաղափարը դառնայ ժողովրդական մտայնություն ... **մինչեւ որ** հայութիւնը դառնայ ինքնապաշտ-

<sup>50</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ.. 19-20:

պանունակ» [Հ, էջ 65]: Առաջինում կրկնում են՝ *կրկնեք, ամէն*, երկրորդում՝ *բոլորք, կրկնեն, մինչեւ ոյր*: Ինչպէս դեռ կտեսնենք, տարբեր կրկնութիւններ կազմող բառերն ու նախադասութիւնները կարող են լինել չորսը, հինգը կամ աւելին, մանաւանդ, եթէ հատուածներն աւելի մեծ են:

Խօսքաշարերում, խօսքի մէջ կրկնութիւնները տարբեր բաշխուածութիւն ունեն: Որոշակի դէպքերում, համաձայն համատեքստի, դրանք գործածուած են մէկ նախադասութեան մէջ՝ անմիջաբար՝ միաշար միմեանցից անջատուելով ստորակետով, երբեմն՝ կախման կէտերով: Սա առաւելապէս վերաբերում է բառերին ու բառակապակցութիւններին: Յուզական տեսակետից այսպէս յաջորդական լինելն աւելի արտայայտիչ է. «**Ամէն ինչ, ամէն ինչ** նրա (Քեռու՝ Արշակ Գաֆաֆեանի/հեղ.հեղ./) մէջ մատնում էր Հերոսին» [Հ, էջ 410], «Ապրեց (Եաւորովր/հեղ.հեղ./) ... եւ **տառապեց, տառապեց** գերմարդկօրէն: ... երգեց ե՛ւ հայ ցար: ... երգելէ առաջ **ապրեց, ապրեց** խորապէ՛ս» [Հ, էջ 590-591], «**Գարշի՛ր, գարշի՛ր** թուկութիւնից – եւ պիտ ուզենաս լինել եւ պիտ լինես ոյժեղ» [Հ, էջ 142]: Այլ դէպքերում կրկնութիւնները մէկ նախադասութեան մէջ ընդմիջում են բառակապակցութեամբ, դերբայական դարձուածով, իսկ աւելի մեծ ընդհատումներով անջատուելիս՝ նախադասութեամբ, յաճախ կրկնուող բառը պարզաբանող երկրորդական նախադասութիւններով. «**Այսպէ՛ս**, ցեղից պարպուած ժողովուրդներին, **այսպէ՛ս** է պատժում պատմութիւնը» [Հ, էջ 619 ], «Հայ ոսկեբերանն է նա (Աւ. Ահարոնեան/հեղ.հեղ./): Նա **խօսքեր** ունի ... **Խօսքե՛ր**, որպէս վառուող կերոններ. **խօսքե՛ր**, որոնցից արին կը կաթի, **խօսքեր**, որոնք կը շնչեն, հոգի կու տան» [Հ, էջ 149]: Յետեւեալ ընդմիջուածութիւնն աւելի մեծ է՝ մի քանի նախադասութեամբ. «Կ՛ուզէի, որ դո՛ւ, հա՛յ երիտասարդ, որ դու իւրացնէիր ինքնաձանաչութիւնը ... **Ծանի՛ր զքեզ**: Մի նախադասութիւն անց. «**Ծանի՛ր զքեզ** ... իմաստասիրական այդ հրամայականը ...»: Մի քանի նախադասութիւն անց. «Ինքնաձանաչմամբ մարդը դառնում է ինքնավրս-

---

\* Հասարակ գոյականի մեծատառով գրութիւնը Գ. Նժդեհինն է:

տահ ... **Ծանի՛ր զքեզ**» [Հ, էջ 95-96]: Երկերում կան է՛լ ասելի մեծ ընդմիջուածութեամբ կրկնութիւններ՝ անջատուած մի-մի մեծ պարբերութեամբ, էջով կամ էջերով, որոնց մասին դեռ խօսք կլի-նի սոյն գլխում:

Այժմ, այն մասին, թէ Նժդեհի երկերում կրկնութիւնները նու-ազագոյն երկուսից (որոնք շատ-շատ են եւ յղում չենք կատա-րում) բացի եւս քանի անգամ են կրկնուում: Քանակական աճին համապատասխան նմուշները ցոյց կտրուեն մեկական օրինա-կով:

**Եռանդամ յարակրկնութիւն.** «Անդրօշա՛կ – անցե՛ղ, անպա-տի՛ւ, անհայրենի՛ք: Անդրօշա՛կ – անսի՛րտ, անսո՛ւրբ, ան-հոգի՛: Անդրօշա՛կ – անարի՛, աներկի՛նք, անդէ՛մ» [Հ, էջ 225 ]: Հատուածը *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխա-տութիւնից է: Բնորոշումները վերաբերում են այն զինուորներին, որոնք, հեռացել էին լեզեոնական միութիւնից ու հրաժարուել հա-յոց եռագոյն դրօշակից: Եռանդամ յարակրկնութեան դասական նմուշ է՝ տարողունակ բովանդակութեամբ եւ ինքնատիպ կազ-մութեամբ: Ուշագրաւ է, որ -*ան* նախածանցի տասներկու անգամ կրկնութիւնը ստեղծում է տպաւորիչ հնչիւնակապակցական կրկնութիւն, ինչը հազուադէպ է քննուող արձակ նիւթերում, քա-նի որ առաւելապէս յատուկ է չափածոյ խօսքին:

**Քառանդամ բաղիյուսում.** «... *ժխտականութիւնը հետեւանք է նախ իրենց* (բուշեւիկների) *բարոյական քանդուածութեան՝ ... Չկա՛յ Աստուած, բարոյականութիւն չկա՛յ, ազգութիւն չկա՛յ. չկա՛յ ...*» [Հ, էջ 207]: Մէջբերումը դարձեալ վերը յիշատակած աշխատութիւնից է: Համապատասխան նոյն միտքը հնարաւոր է արտայայտել բազմակի ենթականերով, մէկ *չկայ* ստորոգեալով: Բայց կրկնութիւնը քառանդամ է, ուրեմն՝ այդ կերպ՝ ասելի յու-զական:

**Հնգանդամ կրկնութիւն՝** ընդմիջուած միաշար. «Բայց եւ այն-պէս պէ՛տք է **ապրել, ապրե՛լ** անհանգիստ հոգիով, **ապրե՛լ** թրքական եղեռնի ամբողջ յիշողութեամբ, **ապրե՛լ** ցեղօրէ՛ն,

---

՝ Շեղ գրութիւնը Գ. Նժդեհին է:

**ապրե՛լ** ամոթ համարելով մեկուսի եւ եսական երջանկութիւնը ...» [Հ, էջ 500]: Այս յուզական կոչը *Յեղային արթնութիւն* աշխատութիւնից է ու հինգ անգամ ներշնչում է ապրելու ձգտումը:

**Վեցանդամ յարակրկնութիւն**. *Մեռնելու կամք* յօդուածում վեց պարբերութիւն սկսւում է *հեքոս է* բառերով. «**Հեքոս է** նա, որի համար կյանքն արդարացում ունի ...**Հեքոս է** նա, որի հայեացքը ուղղւած է յաւիտենականին ... **Հեքոս է** բիբլիական Գեղեոնը ... **Հեքոս է** Կլեմանտն ... **Հեքոս է** Քեոնին ... **Հեքոս էր** Դանտոնը ...» [Հ, էջ 560]: Եվ այս վեցանդամեայ կրկնութիւններէից իւրաքանչիւրին յաջորդում են հաստատող պարզաբանումներ:

*Իմ օրագրէն* աշխատութեան մէջ *ոյժեղ* բառով կազմուած է եօթանդամ յարակրկնութիւն [Հ, էջ 27-28]: *Ազատ Մինիք* յուշագրութեան մէջ առկայ է *ոյժեղը նա չէ* նախադասութեամբ ութանդամեայ յարակրկնութիւն՝ երկար ընդմիջումներով:

Մրցանիշայինը, թերեւս, *Ե՛ւ զոհ է՛ւ զոհարար* մօտ երկվեջանոց յօդուածն է, որտեղ հեղինակն ունի *տեսաւ* բառով կազմուած *կրկնաբանական բաղհիւսում*՝ բաղկացած 11 յարակրկնութիւնից եւ 4 միջնակրկնութիւնից: Պատկերւում են եղեոնի սարսափները՝ իւրաքանչիւր *տեսաւ*-ից հետո՝ մէկ այլ ահաւոր տեսարան, մէկ այլ զարհուրանք, մէկ այլ ոճրագործութիւն ... Բայց մէջբերենք այդ հատուածը եւս. Հասկանալի է, կատարուած են կրճատումներ, մասնաւորապէս հանուած են ընդմիջող նախադասութիւնները. «... ծագող արելը Հայաստան երկրի փոխարէն **տեսաւ** մի կատարեալ գեհէն: **Տեսաւ** խաչի նսեմ ստուերն ընկած մեր հազարամեայ հայրենիքի վրայ: **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս մի խաւարասէր ազգ ... կը հրոսէր մի անգէն ... ժողովրդի դէմ ... **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս կը մոխրանային ... գիւղերը ... **Տեսաւ** խուժողով գործը տապարի, յեաթաղանի ... **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս կը խլուէին կանայք ու կրոնաբարուէին: ... Գործի վրայ **տեսաւ** թրքական սանձարձակ շնութիւնը ... **Տեսաւ** ... մեր աղջիկները, որոնք Եփրատի ալիքները կը գրկէին: **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս հայրը հաւաքեց ընտանիքին իր յարկի տակ եւ այրեց ողջ... Արելը **տեսաւ** տուն, տանիք, ճամբաներ՝ արիւնով ներկուած: **Տեսաւ** ... մահուան հետ

կռուի մտած արնաթաթախ հայորդիներ: **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կը կրծէին»: **Տեսաւ** ... վաճառքի հանուած հայ կիներ ու մանուկներ ... **Տեսա՛ւ**, հայոց արեւը **տեսա՛ւ** այդ ամէնը, եւ խաւարեց այդ օրը» [Հ, էջ 613]:

Տարբեր երկերում գործածուած են ոչ միայն բազմանդամ, այլեւ համատեղ մի քանի կարգի կրկնաբանութիւններ: Այսպէս. *Հայու ճամբան. մեծ գրջումի ճամբան* յօդուածում կան տասի չափ տարբեր բառեր, որոնք կրկնուում են համապատասխանաբար երեքից ութ անգամ [Հ, էջ 616-620]: Բազմանդամ ու բազմակի, բառային ու շարահիւսական կրկնութիւններ են գործածուած համատեղ 13.06.1920 թ. Ղափան Գենուազի ռազմական ոյժերին ուղղուած կոչում եւ ուրիշ-ուրիշ գործերում:

### **§ 20. Կրկնութիւնների մի քանի յատկանիշ**

Ինչպէս ընդհանրապէս խօսքում, այնպէս էլ Նժդեհի ստեղծագործութիւններում, կարելի է մատնացոյց անել խնդրոյ առարկայ ոճական միջոցի մի քանի յատկանիշ:

**ա. Խաչակերպ (շրջուն) կրկնութիւն:** Շրջուն լինելը յատուկ է երկանդամ գոյգերին. երկրորդը առաջինի կրկնութիւնն է՝ շրջուն շարադասութեամբ: Տեղի է ունենում յետեւառաջութիւն, որի յետեւանքով ենթական դառնում է ստորոգելիական վերադիր եւ հակառակը, հանգոյցը նախորդում է ստորոգելիական վերադիրին, ստորոգեալը՝ ենթակային: Սրանք ըստ էութեան խաչակերպեր (խաիզմ) են: Հաշուել ենք տասի չափի խաչակերպեր: Երեքի դեպքում տեղաշարժում է ենթական՝ միւս փոփոխութիւններով հանդերձ. «**Հայը լինելիական է,**- հաստատում է հայոց հեթանոս կրօնը: **Լինելիակա՛ն է հայը** – ահա՛ ակն ու աղբիւրը մեր մեծ Յոյսի Ջօրոյթի» [Հ, էջ 487], «...**Ճշմարտօրէն զօրավո՛րն է արդար:** Եւ, միայն **արդա՛րն է ճշմարտօրէն զօրաւոր**» [Հ, էջ 368]: Կամ. «**Ղեկաւարը – դա ինքը զօրքն է: ... Ջօրքը – դա ինքը ղեկավարն է**» [ԼԳ]:



Չորս դեպք վերաբերում է ստորոգելիական վերադիրին ու հանգոյցին, որոնցից երեքում նոյն *եղիր* բայաձեւն է. «Չկորցնել չափի զգացումը, երբ դիպւածը մեր ախոյանին մեր ձեռքն է յանձնել: **Եղի՛ր արդար, արդա՛ր եղիր ...**» [Հ, էջ 368], «...Նորահաս սերունդ, ... կանչում եմ եւ ասում քեզ. -**Եղի՛ր ցեղակրօն, ցեղակրօ՛ն եղիր ...**» [Հ, էջ 494], «...առաջնօրէն ես, ուրեմն՝ **եղի՛ր ազնիւ, ազնիւ եղի՛ր ...** – Դա ճակատագրական նշանակութիւն ունի ժողովրդիդ ... համար» [Հ, էջ 578], «...խնայիր տկարներին, եթէ թշնամիդ իսկ լինի: ... **Մնա՛ մարդ, մարդ մնա՛**». [Հ, էջ 392]: Մէկ դեպքում բայից առաջ դրուած կոչականը շարժում է բայից հետո. «**Անցո՛րդ, կա՛նգ առ, կա՛նգ առ, անցո՛րդ,** այս անյայտ հողաթմբի առջեւ ...» [Հ, էջ 407]: Մէկ այլ դեպքում էլ փոխատեղում են շաղկապական յարադրութեան բայերը. «Սիւնիքի տեղագրութիւնը այդ երկրում շարժուողից անվերջ **բարձրանալ ու իջնել, իջնել ու բարձրանալ** է պահանջում» [ԼԳ]: Շրջուն (իսաչակերպ) կրկնաբանութիւնն ասելիքն անելի հաստատուն դարձնելու միջոցներից մէկն է:

*բ. Կրկնութիւնը հարցի տեսքով:* Այսպիսի կրկնութիւնը միատեղում է հոետորական հարցի հետ: Հարցական բառը կամ նախադասութիւնը հնչում են երկու կամ անելի անգամ: Ճարտասանական երկու միջոցների միաժամանակեայ գործածութեան յետեւանքով ուժգնանում են մտքի իմաստային ու յուզական կողմերը: Այդպէս է հնչում *օտա՛րն է մեղավոր* հարց-կրկնութիւն նախադասութիւնը *Օրերի օրը* հրապարակախօսական յօդուածում, որտեղ նշում է հայութեան կեանքի վեց թերացում. «... **օտա՛րն է մեղաւոր**, որ ... հայրենասիրութեան կրակն ու լոյսը չեն թափանցել մեր ժողովրդի բոլոր խաւերի մէջ: **Օտա՛րն է մեղաւոր**, երբ ... հայութեան մի մասը ... կը շարունակէ գործածել ... շնական ժողովրդի լեզուն ...: **Օտա՛րն է մեղաւոր**, որ դեռ կան հայեր, ... որոնց կողմից ... հնագոյն ժողովրդի անդամ լինելը դեռ չէ գիտակցւում որպէս գերագոյն երջանկութիւն: **Օտա՛րն է մեղաւոր** մեր կեանքում տիրող մտաբարոյական անիշխանութեան համար: **Օտա՛րն է մեղաւոր** այդ բոլորի համար: Թողնենք օտարնե-

րին մեղադրելու թոյլերին յատուկ ցարը ...» [Հ, էջ 446]: Նկատելի է, որ նշուած համատեղութիւնը Նժդեհի երկերում տարածուած է: Նոյն այս յօդուածում *ն՝վ կարող է հռետորական հարցը տրուում է վեց անգամ: Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ, մարդկութեան երջանկութեան խնդրով մտայոգ, *ինչո՞ւ հարցը կրկնում է երեք անգամ. «Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը»* [Հ, էջ 93]: *Ինչո՞ւ տարօնականութիւն* յօդուածում *ն թ* հարցական դերանունը կրկնուում է երեք անգամ՝ վերաբերելով տարբեր գոյականներին. «**Ո՞ր** հայ գրողը, **ն՞ր** ճշմարիտ հայրենասէրը, եւ մասնաւորապէս, **ն թ** ռազմիկը Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չէ ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել ուխտած Մամիկոնեանների օրինակը» [Հ, էջ 540]: *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխատութեան մէջ, այն կապակցութեամբ, որ ամենուրեք, կեանքի նոր պայմաններին համապատասխան ժողովուրդները կատարելագործում են իրենց հայրենիքների պաշտպանունակութիւնը, *ն իր* հարցը հնչում է հինգ անգամ. «... **ն իր, ն իր** «նոր երգ» չի երգում, **ն իր** հայրենիքի փրկութեան համար ձեռք չեն առնում «գերագոյն միջոցներ», **ն իր**, մեր երկրագնդի վրայ, ... **ն իր** չի գործում կեանքի բնաշրջումը» [Հ, էջ 257]: Այսպէս՝ ճարտասանական նպատակներով ուրիշ-ուրիշ երկերում:

**գ. Բազմաշաղկապութիւն:** Ոճագիտութեան մէջ ոմանք բազմաշաղկապութիւնը համարում են առանձին ոճական միջոց, ուրիշները՝ որպէս կրկաբանութիւն ոճական միջոցի մի դրսեւորում: Մասնաւորապէս՝ այդպէս է ներկայացնում Լ. Եզեկեանը ոճագիտութեան իր բուհական դասագրքում, մի մոտեցում, որին մենք նոյնպէս հակամէտ ենք<sup>51</sup>: Իրոք. ի՞նչ է բազմաշաղկապութիւնը, եթէ ոչ միեւնոյն կամ անմիջականօրէն կից նախադասութիւններում շաղկապի բազմակի կրկնութիւն, որով առանձին-առանձին ընդգծում է այն ամէնը, ինչը խօսելու պահին առնչում է ներկայացուող իրականութեան հետ: Գարեգին Նժդեհի երկերում քննուող ոճական հնարը, մասնաւորապէս, վերա-

<sup>51</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, *Ոճագիտութիւն*, ԵՊՀ հրատ., Երևան, 2003 թ., էջ 364-365:

բերում է *ՀԷ* շաղկապին, որը, ինչպես ընդունուած է ամէն կրկնութեան հետ, նաեւ շեշտում է: Ինչպէս. «... արիութեան պատգամախօսները պիտ դառնան հայ մտաւոր եւ հոգեւոր կեանքի բոլոր դեկավարները: **Ե՛ւ** դպրոց, **ե՛ւ** եկեղեցի, **ե՛ւ** քաղաքական կուսակցութիւններ, **ե՛ւ** մամուլ, **ե՛ւ** ապակուսակցական կազմակերպութիւններ ... մինչեւ որ ... հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ» [Հ, էջ 65]: Կամ. 17.09.1920 թ. կոչում. «... դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երեւա ինձ **ե՛ւ** Ղափանը, **ե՛ւ** Գենվազը, **ե՛ւ** Գողթանը, **ե՛ւ** Գեղվաձորը» [ԷԼԳ]: Յաջորդ նմուշում մէկ նախադասութեան մէջ շաղկապներն ընդգծում են թէ՛ գործողութիւնը կատարողներին (ենթակայ), թէ՛ գործողութիւնն կրողներին (ուղիղ խնդիր): Մէջբերումը կատարում է 25.08.1920 թ. ՀՀ զինուորական նախարարին ուղղուած գրութիւնից. «Եւ այսօր այդ բոլորը, **ե՛ւ** Ադրբեյջան, **ե՛ւ** Ղարաբաղ, **ե՛ւ** բուն Զանգեզուր, ոտքի հանած իրենց բովանդակ ոյժերը՝ **ե՛ւ** զօրք, **ե՛ւ** տեռոր, **ե՛ւ** թղթադրամների դէգեր, կաշուից դուրս են գալիս ընկճելու ... Ղափանը»:

Բազմաշաղկապութեանը Գարեգին Նժդեհը դիմել է նաեւ իր քնարական երկերում, որտեղ ոչ թէ գաղափարախօսութեան տարածում կամ մարտական տրամադրութիւններ են, այլ խոհական կամ թախծի ու ջերմութեան: Իրողութիւնները գատ-գատող թուարկումները թէեւ կարելի էր բաժանել միայն ստորակետներով, սակայն հեղինակը դարձեալ օգտագործել է նաեւ շաղկապները, որոնք ուշադրութիւնն աւելի են գրաւում հարկ եղածի վրայ, ինչը ցանկալի է համարում. «Եվ ինձ թվում էր ... Որ **ե՛ւ** մարդ, **ե՛ւ** սողուն, **ե՛ւ** թուփ, **ե՛ւ** թռչուն, ... իմ անունն են օրհնել...» [Հ, էջ 409]: Եւ կամ. «Ա՛հ, նա սիրում էր **ե՛ւ** արշալոյսը պուրպուր, **ե՛ւ** վերջալոյսը տխուր, **ե՛ւ** երգն անխօս ոսկեշող աստղերի ...» [Հ, էջ 413]:

*դ. Առանց լրացումի կամ լրացումով կրկնութիւններ:* Որոշակի խօսքաշարերում յարակրկնութեան անդամները հանդէս են գալիս առանց լրացումների եւ նոյնական յաջորդում են միմեանց: Այդպիսիք արդէն եղել են եւ դեռ կլինեն յաջորդ ենթա-

գլխում: Մի անդամը միւսից առաւելապէս տարբերում է ինչ-ինչ լրացումներ ունենալով: Սովորաբար այսպիսին է լինում երկրորդ կամ յաջորդ անդամները, սակաւ դէպքերում՝ առաջինը: Լրացումները բերում են իմաստային նրբագծեր, թարմ հնչեղութիւն եւ նպաստում ասելիքի ամբողջացմանը: Եթէ կրկնուող բառերը գոյականներ են, նախորդ անդամից տարբերում են յատկացուցիչ կամ որոշիչ ունենալով. «**Համբո՛յր, ջերմ համբոյր** Հայ Հայրենիքին եւ իր մեծ վշտակրին ...» [Հ, էջ 151], «Եւ **սովորութիւն կայ**, գրչի ու գրքի տէր բոլոր ժողովուրդների **իմաստուն սովորութիւն կայ**, պատերազմից յետոյ հաշի նստել, պարզել իրենց յաջողութեանց եւ պարտութեանց պատճառները» [Հ, էջ 82], «**Պատմութիւնը, անկաշառ պատմութիւնն իր խօսքը, իր անեծքի խօսքն** ունի ասելու նրանց» [ԱՍ]:

Եթէ կրկնուող բառերը բայեր են, միմեանցից տարբերում են խնդիրներ (առաւել յաճախ ուղիղ խնդիր) կամ պարագաներ ունենալ-չունենալով: Նախ ուղիղ խնդիրների օրինակներ. «**Անցի՛ր**, հա՛յ երիտասարդութիւն, **անցի՛ր Ռուբիկոնը**, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում» [Հ, էջ 95], «Նա **յաղթել է** այլեւս, **յաղթել** իր բանակի **անիւնքնավստահութեանը, վախին**» [Հ, էջ 46]: Եթէ գոյականների դէպքում յատկացուցիչների համեմատութեամբ շատ ու շատ անելի որոշիչներ ունեցող բառերն են, ապա այժմ խնդիրների համեմատութեամբ շատ անելի բազմաթիւ են, բազմազան պարագաներով տարբերուող անդամները: Այսպիսիներից են. «Կուզէի, որ այդ ամէնը **գիտակցէիր**, եւ **լա՛ւ գիտակցէիր**, ամերիկահայ ուսանողութիւն» [Հ, էջ 257], «Եւրոպական երեք մեծ ազգերի ընտրանին վաղուց է **դատել** թուրքը, **դատել բարոյապէս**» [Հ, էջ 611], «Կայ մի ողբերգական թիրիմացութիւն, որը **պէտք է փարատել – օր, ժամ, վայրկեան առաջ պէտք է փարատել**» [Հ, էջ 497]: Երբ կրկնուողը ստորոգելիական վերադիրն է, լրացումն աղերսում է դրանցից մէկի հետ. «Արդարութիւնը ... պաշտպանելու համար **պէտք է լինել** ոչ միայն արդար, այլ եւ՝ **տղամարդ, եօթնի՛ցս տղամարդ**» [Հ, էջ 628], «**Հի՛ն է, աշխարհի չափ հի՛ն է** այդ երեւոյթը: ... ամէն մեծ

գաղափար ունեցել է իր մանր թշնամիները» [Հ, էջ 636], «**Գռեհիկ, անհայրենասիրութեան աստիճան գռեհիկ է** ոմանց հայրենասիրութիւնը» [Հ, էջ 602]:

**է. Ենթակայի ու ստորոգեայի կրկնութիւն:** Միեւնոյն կամ կից նախադասութիւններում կրկնուում է նոյն ենթական՝ ամէն անգամ ունենալով մէկ այլ ստորոգեալ, որոշ դէպքերում՝ մէկ ընդհանուր ստորոգեալ: Ուշադրութիւնը կենտրոնացում է գործողութիւնը կատարողի վրայ: Եւ կամ. նոյն կերպ կրկնուում է ստորոգեալը՝ ունենալով ընդհանուր, որոշ դէպքերում՝ տարբեր ենթականեր: Ուշադրութիւնը կենտրոնացում է գործողութեան վրայ: Առաջանում են իւրատեսակ բազմակի ենթականեր կամ բազմակի ստորոգեալներ: Ինչպէս. «Մխիթարական չէին եւ ինտելիգենտ ոյժերի, ինչպէս եւ մեր կուսակցական ընկերների մի մասի փոխյարաբերութիւնները: **Դժգոհ էին բոլորը, քննադատում էին բոլորը, մեղադրում ու մեղադրում բոլորը**»<sup>52</sup>: «...Հա՛յր, հա՛յն է յաղթանակած այդ գոռ գոյամարտում» [Հ, էջ 332], «Առանձին չի լսում բոլշեիկեան հայամերժ խօսքը. այո՛, **թո՛ւրքը, թո՛ւրքը, թո՛ւրքն է ամէն տեղ**» [Հ, էջ 203]: Եւ կամ. «...արցունք կար նրա աչքերի մէջ: **Լալի՛ս էին, լալիս բոլորը**» [Հ, էջ 564], «Ես **տեսել եմ** մեր **ժողովրդին** նման հոգեվիճակում. **տեսել նրան** իր բիբերի մէջ, **տեսել** խռովքոտ **սողանցն** իր սերունդների, **տեսել** ռազմի իր **սուրբերին ...**» [Հ, էջ 344], «**Կա՛յ, կա՛յ մի քան**, որ թունաւորում է մեր կարճատեւ ուրախութեան վայրկեանները ... **Կա՛յ** մի խորհրդաւոր **ձեռք ... Կա՛յ** մի պատուհասող **ոյժ ...**» [Հ, էջ 93]:

**2. Կրկնութիւնների կիրառութիւնները:** Կրկնութիւնները, որպէս ճարտասանական միջոց, գործադրում են տարբեր նպատակներով: Որո՞նք են դրանք Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում: Մենք կանգ կառնենք առաւել յաճախ հանդիպող շարժառիթների վրայ: Բայց նախ վերյիշենք, որ գործածում են ինքնուրոյն բառերը, նախադասութիւնները, որոնք կրկնուում են երկուսից տասը, սակաւ դէպքերում աւելի անգամ. լինում են խաչակերպ-շրջուն, հարցական բնոյթի, առանց լրացումների կամ

<sup>52</sup> ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 213-230:

լրացումներով: Խնդրոյ առարկայ ստեղծագործութիւններում ի՞նչ են արտայայտում այդ կրկնութիւնները:

**ա. Չափ ու քանակ:** Անուանական խօսքի մասերի հետ առնչուող կրկնութիւնները ցոյց են տալիս առարկաների, առարկայօրէն ըմբռնուող երեւոյթների մեծաքանակ, բազմաթիւ լինելը: Ընդ որում որքան աւելի է կրկնութիւնը, այնքան աւելի է թուի մեծութեան տպաւորութիւնը: Երկու անգամ կրկնելով *դարեր* բառը՝ հեղինակը նկատի է ունենում շատ դարեր, երեք անգամ կրկնելով *շուշաններ* բառը՝ շատ շուշաններ. «**Դարե՛ր, դարեր** են անցել ... Դեռ դրդում է Վարդանի Աւարայրեան խօսքը...» [Հ, էջ 405], «Ես տեսնում եմ ... **շուշաննե՛ր, շուշաննե՛ր**, աւելի փարթամ ... **շուշաններ ...**» [Հ, էջ 376]: Նոյն կերպ գոյականաբար կրկնուում է *նոր* ածականը, *բոլոր* դերանունը. « - Թող ... դիւցանօրէն ընկնեն **նորերն** ու **նորերը** ... մեր Հայրենի-քում ...» [Հ, էջ 417], «... ցեղի գաղափարն է հոգեբանօրէն միատարրում ... **բոլորի՛ն, բոլորի՛ն**» [Հ, էջ 635]: Ի դէպ, *բոլոր* դերանունան կրկնութիւնը այքի է զարնում Նժդեհի երկերում [Հ, էջ 25, 93]:

Բայական կրկնութիւնները ցոյց են տալիս, թէ քանի անգամ է կատարում գործողութիւնը, ինչ չափով, երբեմն նշում է թիւը. «Ու յուզված ու մտախոհ ... պատից խլեց հոր հրացանը, **համբուրեց, համբուրեց** մէկ էլ, **համբուրեց** եօթն անգամ, գրկեց ու ...» [Հ, էջ 416], «Գիւղը ... բազմաչարչար որդին **կը քրտնէ, կը քրտնէ, մէկ էլ, կը քրտնէ եօթն անգամ** եւ այսպիսով հողից հաց կը քամէ» [ԳԵ, էջ 11], «...Կամաւորներ հասան ... Եւ **ընկան** նրանք, **ընկան** Եւտրովի հայրենիքի համար, **ընկան** ժպտադէմ» [Հ, էջ 592]:

**բ. Յորդոր, խնդրանք, կոչ:** Ի տարբերութիւն մէկ անգամ հնչելու, երկու, կամ մանաւանդ, աւելի անգամ հնչողութեան դէպքում կրկնութիւնները դառնում են առաւել ներգործուն ու յուզական: Տարբեր տրամադրութիւններով, նրբերանգներով, նրպատակներով հանդիպում են բոլոր ժանրային ստեղծագործութիւններում. կան չորս-հինգ անգամ կրկնուողներ մի փոքր հատուածում: Բարեկամներին գրած նամակներում մտահոգութիւններ են արտայայտում տարբեր հանգամանքների վերաբերեալ:

Ինչպես. «**Զգո՛ յշ, զգո՛ յշ**, էլի **զգո՛ յշ** պիտի լինել, սիրելի Օհաննես...» [Ազգ]: Լեռնահայաստանի գոյամարտի տարիներին մըշտապես զգացում էր սննդի, բայց յատկապես ռազմամթերքի սպառնազին պակաս, եւ Հայաստանի Հանրապետութեան զինուորական նախարարին ուղղուած գրութիւնները տանում էին աղաղակող խնդրանք ... «... ռազմամթերքի սպառման վտանգը իր հրէշաւոր հասակով... տղաները **փամփուշտ, փամփուշտ եւ փամփուշտ** էին խնդրում» (26.10.1926 թ.), «**Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն՝** իր վերջին փամփուշտը կրակող Ղափան-Գենվազին» (19.10.1920 թ.), «**Արագացրէ՛ք**. Ժամը, վայրկեանը ճակատագրական նշանակութիւն ունի, **արագացրէ՛ք** օգնութիւնը»<sup>53</sup>: Իսկ ընդհանուր առմամբ, Նժդեհի յորդորները գիտական աշխատութիւններում ու հրապարակախօսական յօդուածներում հնչում են որպէս մի-մի պատուիրան՝ ուղղուած հայ ժողովրդին, երիտասարդութեանը, մտաւորականութեանը եւ բխում են նրա մի գաղափարախօսութիւնից: Ամէն, ամէն յորդոր՝ գաղափարական մի դրոյթ: *Թոյլերին չեն յարգում, ճնշում են*: Ելնելով սրանից, իր տարբեր երկերում նա քարոզում է մոռանալ թուլութիւնը: Ահա մասնաւորապէս սինեցիներին ուղղուած պատուիրաններից վերջինը՝ *Ազատ Միւնիք* յուշագրութիւնից. «7. **Եղի՛ր ոյժեղ**, էլի՛ ոյժեղ ու միշտ ոյժեղ»: Սա համարում է հոգեբանական պաշտպանութեան միջոց: Միւս յորդոր-պատուիրանը՝ *Խորհրդածութիւններ* յօդուածից. «- Ժողովո՛ւրդ, ... երդուեցնում եմ սերունդներիդ – **չներե՛լ, չներե՛լ** թուրքին ... ներում են թշնամուն, բայց ո՛չ եւ իր կէսի սպանիչին ...» [Հ, էջ 568]: Երրորդ պատուիրան-յորդորն ուղղուած է հայ ցեղային զգացողութիւնը մոռացողներին, որ դարձեալ արծարծում է տարբեր երկերում, իսկ *Հայու ճամբան՝ մեծ գղջումի ճամբան* յօդուածում՝ յետեւեալ կերպ. «... - փորձեցին սպանել ցեղը հայութեան մէջ՝ ոչնչացնելով մեր ազգի ցեղազգաց տարրը: **Զմոռանա՛նք, չմոռանա՛նք, չմոռանա՛նք** այդ իրողութիւնը ...» [Հ, էջ 618]: Ցանկանալով, որ երիտասարդութիւնը ճանաչի ինքն իրեն, իր կարողութիւնները *Որդիների պայ-*

<sup>53</sup> ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 7, շրջ.:

*քարը հայրերի դէմ* աշխատութեան հինգերորդ՝ *Ինքնաճանաչութիւն* մասում, չորս անգամ կոչ է անում. «**Ծանի՛ր զքեզ**» [Հ, էջ 96, 98]: Եւ ապա համընդգրկուն ու քաջալերիչ կոչը՝ *այրե՛լ*, որ հնչում է *Յեղային արթնութիւն* աշխատութեան հինգերորդ խօսքում, մէկ նախադասութեան մէջ՝ հինգ անգամ. *այրե՛լ* յանուն գաղափարի, ինչպիսին էլ լինի հոգեբանական վիճակը. «Բայց եւ այնպէս պէ՛տք է **այրե՛լ**, **այրե՛լ** անհանգիստ հոգիով, **այրե՛լ** թրքական եղեռնի ամբողջ յիշողութեամբ, **այրե՛լ** ցեղօրէն, **այրե՛լ** ամօթ համարելով մեկուսի եւ եսական երջանկութիւնը ...» [Հ, էջ 500]: Ընդհանրապէս, կրկնութեամբ չորս-հինգ կամ անելի անգամ հնչող յորդորանք-կոչերը կամ կոչ-յորդորանքները մըշտագոյ են մարտագրերում ու մարտական հրամաններում՝ յարձակում սկսելուց առաջ, ուղղուած գինուորութեանն ու բնակչութեանը՝ իւրաքանչիւր դէպքում կրկնութեամբ ուշադրութիւն հրաւիրելով տուեալ պահին առաւել կարեւոր հանգամանքի վրայ [տե՛ս Հ, էջ 421-423]: Սակայն այսպիսի մարտակոչերը ոգեշնչում են ոչ միայն ռազմադաշտում կռուողներին: Նոյնպիսի մարտակոչեր կան գիտական աշխատութիւններում՝ ուղղուած հասարակութեանը: Մէջբերենք երկու հատուած *Բանտային գը-րառումներից*, առաջինը *Ռազմական խոհեր* մասից, որտեղ վեր է հանում յանուն գաղափարի մարտի նետուողների վեհութիւնը եւ նրանց կուում ոգեւորելու դեկավարի ունակութիւնը. «**Ի զե՛ն**: Որքա՛ն թափ ու թեւ կայ այդ սեղմ խօսքի մէջ: Քիչ լեզուների է տրուած հայոց այդ մի գոյգ բառերի արտայայտչական թափը: **Ի զե՛ն** – վազներեան մի ամբողջ սիմֆոնիա է դա, հերոսական խելայեղիչ մի մարշ ... - **Ելե՛ք, ելե՛ք**, կռուի **ելե՛ք** նորէն ... - **ի զէն** ... եւ կ'ուզէի այդ ռազմականչը շրթունքներիս մեռնել ...» [Հ, էջ 395-396]: Հատուածը կառուցուած է երկու յարակրկնութեամբ՝ *ի զէն* եւ *ելեք*: Երկրորդը աշխատութեան վերջնամասից է՝ *Իմ տապանագիրը* յաւելուածից: Հեղինակը դիմում է իր հողաթմբի առջեւ կանգ առնող անցորդին, այն է՝ հասարակութեանը. «**Անցո՛րդ**, ... դու լալի՞ս ես ... **Ի մա՛րտ**, **անցո՛րդ**, **ի մա՛րտ**, որ-



պէսգի տարաբնակ հայը՝ հայրենադարձ, եւ մեր մեռելները գերեզման ունենան: **Ի մա՛րտ ...**» [Հ, էջ 407]:

Ընթերցող հասարակութեանը ուղղուած այսպիսի ռազմակոչերը նոյնքան բորբոքուն են, որքան Սիւնիքի բնակչութեանը ուղղուածները գոյամարտի տարիներին: Յետեւեալ նմուշը կառուցուած է նախորդներից տարբեր՝ մէկ այլ եղանակով՝ տրական յոլովի գոյականային բառաձեւերով. «**Ուտքի՛**, խաբւած ժողովուրդ, **ուտքի՛** ել, փրկութիւնդ մօտ է: **Ուտքի՛**, գէնքը **ձեռքիդ ...**» [Հ, էջ 426]:

Եւ այսպէս. յորդորները, կոչերը Գարեգին Նժդեհի երկերում կառուցուած են չորս կարգի կրկնութիւններով՝ հրամայական եղանակի բայաձեւերով, անորոշ դերբայներով, /ի նախդրաւոր բառակապակցութիւններով, տրական յոլովի գոյականային բառաձեւերով:

**գ. Ժամանակ ու տեւականութիւն:** Կրկնութիւնների միջոցով ցոյց է տրուում գործողութեան կատարման ժամանակը կամ տեւական բնոյթը: Որոշակի դէպքերում ուշադրութիւն է հրաւիրում յատկապէս որեւէ կոնկրետ ժամանակահատուածի վրայ. «Զինուորնէ՛ր, ... **Վաղը**, երբ Ձեր խենթ ... զարկերից թշնամին կը թողնի իր գյուղերը ... **Վաղը**, երբ հայ գերիները ... ծնկաչոք կ'աղօթեն ... **Վաղը**, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, յիշէ՛ք Խալիլբեգեան սեւ օրերը ... Յիշէ՛ք այդ եւ եղէք անխնա՛յ ...» (1919 թ., 30 նոյեմբեր, հրամանից) [Հ, էջ 420]: Կամ. «Ինքնապաշտպանութիւն ... պիտ կրկնեն ... կրկնեն անվերջ ... **մինչեւ որ** արիական ինքնապաշտպանութեան գաղափարը դառնայ ժողովրդական մտայնութիւն ... հոգեբանութիւն, **մինչեւ որ** հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ» [Հ, էջ 64-65]: Համապատասխան ժամանակային բայաձեւերի միջոցով կրկնութիւններն իրենց մէջ են ներառում ընդհանրական կերպով անցեալն ու ներկան, ներկան ու ապագան, անցեալն ու ապագան. «Նա (հակադաշնակցականը/հեղ.հեղ./) **չհասկացավ, չի հասկանում եւ պիտի չհասկանայ** մեր մեծագործ ցեղի խոյանքների իմաստն ու արժէքը» [Հ, էջ 199], «Ազգերն **ունեցել են, ունեն** ու **պիտի ունենան** իրենց

արժանի ճակատագիրը» [Հ, էջ 113], «Հայրենիք: ...Դա, հայրենի հողը լինելուց զատ ... միութիւն է նաեւ նրանց, որոնք **ապրել են**, որոնք **կապրեն** եւ որոնք **պիտ ապրեն**» [Հ, էջ 114]:

Գործողութեան տեսականութիւնը եւս ցոյց է տրուում բայի կրկնութեամբ. «Նա (դաշնակցականը/հեղ.հեղ./) չի հաւատում ... նպաստաւոր պայմանների «կախարդական» ոյժին՝ – **նա աշխատում է, աշխատում** եւ **աշխատո՛ւմ**» [Հ, էջ 235], «...նա(Գեղեոն Տեր-Մինասեանը/հեղ.հեղ./) **գրում է, գրում է**, որովհետեւ իրէն ապսպրուած է **գրել**, որովհետեւ չի կարող **չգրել...**» [Հ, էջ 282], «Նա (ժողովուրդը/հեղ.հեղ./) **կռուել է**, անդադրում **կռուել** ... Բայց եւ այնպէս նա **ապրել է, ապրել է**, որովհետեւ ունեցել է վեհ հաւատ»<sup>54</sup>:

**դ. Զայրոյթ:** Դարձեալ զայրոյթ, ինչպէս նախորդ գլխում, որտեղ արտայայտուում է նաեւ հռետորական հարցերի միջոցով: Այժմ էլ կրկնութեամբ կարելի է ասել, որ Նժդեհը ունէ՛ր, ունէ՛ր, ունէ՛ր պատճառներ զայրանալու: Արդ, անդրադառնանք պատճառներից մի քանիսին, եւ թէ ինչպէս է արտայայտուում զայրոյթը՝ այս անգամ կրկնութիւնների միջոցով: Դրանցից մէկը 1921 թ. փետրուարի 1-ին 11-րդ բանակի զինուորայեղափոխական խորհրդի անդամ Հեկկերից ստացած գրութիւնն է, որին պատասխանում է բաց նամակով: Նախ թուարկելով 11-րդ բանակի՝ Ղարաբաղին, Սիւնիքին, Վայոց Ձորին հասցրած չարիքները, Նժդեհը գրում է նաեւ հետեւեալը. «Ձեր դաւադրութեամբ Հայաստան երկիրը դարձաւ Քեմալստան»: Ապա բացայայտում է թշնամու պատերազմի մարտավարութիւնը: Նրա իւրաքանչիւր ամօթալի միջոցից առաջ, այն է՝ խաբէութիւն, թալան, ահաբեկչութիւն, սադրանք, հակառակորդի երեսին ութ անգամ նետում է «**Ոյժեղ նա չէ, ...**» [ԱՍ] յարակրկնութիւնը: Գարեգին Նժդեհը պարտողական մտաւորականութեանը մեր ժողովրդի ամօթն էր համարում. նրա հոգու ցաւոտ տեղերին էին դիպչում այն առաջարկները, թէ պետք է ներել թուրքին, հաշտուել ու մերձենալ նրա հետ: Այս կապակցութեամբ նա որոտում է *Որդիների պայքարը հայ-*

<sup>54</sup> ՀՀ դաշնակցութեան բիւրօյին: ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ.. 19-20:

րերի դեմ աշխատութեան մէջ. «Ներէ՛լ նրան, որից ծեծել ես, թըքել, անարգել: Ներէ՛լ նրան, որին քեզնից ուժեղ ես զգացել եւ ծունկի եկել նրա առջեւ: Ներէ՛լ իր բռնակալին ... Ինչպիսի մահացու տգիտութիւն եւ բարոյական անկում: Իսկ եթէ թրքութիւնը, հա՛յ պարտողական, ... թքեց քո եւ քո ներումի երեսի՛ն» [Հ, էջ 135]: Զայրացուցիչ էին 1920-30-ական թուականների հայութեան ներքաղաքական կեանքը, կուսակցութիւնների գործունեութիւնը, մամուլը: Շարունակելով իր վերն արտայայտած միտքը՝ պարտողական մտաւորականի կեցուածքը որակում է իբրեւ *ժողովրդասպանութիւն*: Այս որակումին նա անդրադարձաւ նաեւ երկու տարի հետո՝ 1929 թ. *Բաց նամակներ հայ մտաւորականութեան* աշխատութեան մէջ՝ գրելով. «... շարունակում են նեղսիրտ եւ իրարամերժ կոիւր ... կատարում այն, ինչ որ պետք է արտաքին թշնամուն: Եւ այդ ամէնը միամտօրէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս ժողովրդասպանութիւն է տեղի ունեցողը (ընդգծումը Նժդէհիին է): Այո, ժողովրդասպանութիւն» [Հ, էջ 69-70]: Իսկ լրագրութեան բնոյթը զայրացկոտ խօսքերով ներկայացուած է եւս *Բաց նամակներ հայ մտաւորականութեան* աշխատութեան մէջ՝ Ե մասում: Եօթ պարբերութիւն սկսում է *Լրագրութիւն* բառ-յարակրկնութեամբ, որին յաջորդում է հերթական արատը եւ դրա վերլուծութիւնը՝ ճշմարտութիւնը գտնելու անկարողութիւն, քծնութիւն, արհամարհանք ազգայինի նկատմամբ, թայֆայականութիւն, ազգերին ուղղուած հայիոյաբանութիւն, դիւանագիտական մակերեսայնութիւն ... Եվ ապա եզրակացնում է. «Այսպիսի լրագրութիւնը անելորդ է հայ ժողովուրդին» [Հ, էջ 67-68]:

**Է. Դիմում:** Հէղինակը, տարբեր շարժառիթներով, ինչպէս եւ նախորդ գլխում՝ հռետորական հարցերի պարագայում, դիմում է ժողովրդին, բնակչութեանը, երիտասարդութեանը, ընթերցողներին, նաեւ անհատներին, ներկա դէպքում՝ կրկնութիւնների միջոցով: Դիմում արտայայտելու համար գործածուած են կոչականները, որպէս ենթակայ երկրորդ դէմքի դերանունը, հռետորական հարցերը՝ կոչականով կամ առանց կոչականի՝ երկրորդ դէմքի

բայաձեւերով: Որտե՞ղ պէտք է առաջին հերթին փնտրել կոչականներով դիմումներ, եթէ ոչ գրութիւններում ու *Խուստուփեան կանչեր* շարքի հրամաններում ու կոչերում՝ ուղղուած զինուորութեանը, սինեցիներին՝ լի յուզումնաթրթիռ զգացմունքներով, սպասումներով կամ զայրոյթով: 13.05.1920 թ. կոչում որպէս դիմում-յարակրկնութիւն հնչում է *Պափանցիներ՝ ը բառը՝* երկու անգամ, 12.02.1920 թ.՝ *զինակիցներ՝ ը՝* երեք, 05.10.1920 թ. *Ղափան՝* երեք, 19.09.1920 թ.՝ *ընկերներ՝ ը՝* երեք, 17.09.1920 թ. *ժողովն՝ ւրդ՝* տասն անգամ: Մէջբերենք վերջին կոչը՝ որոշ կրճատումներով: *ժողովուրդ* կոչականը մե՛ր ըթ հնչում է նախադասութիւնների սկզբում՝ իբրեւ յարակրկնութիւն, մե՛րթ նախադասութիւնների միջնամասում՝ իբրեւ միջնակրկնութիւն, եւ մե՛րթ նախադասութիւնների վերջում՝ իբրեւ վերջնակրկնութիւն: «Ղափանի ժողովրդին. - **ժողովն՝ ւրդ**, քեզ հետ խօսողը քո հրամանատարն է ... դու կանչեցիր ինձ եւ ես հասայ քո հաւարին: Ասա՛, **ժողովն՝ ւրդ**, այն օրէն քո երկրում մնա՞ց ... մի քար, որի վրայ դրած չլինէի իմ յոգնած գլուխը: Դեռ չեն փակուել թշնամու ինձ հասցրած վերքերը, իսկ քոնը, **ժողովուրդ**, քո հասցրածը միշտ թարմ պիտ մնայ ... **ժողովն՝ ւրդ**, այսօր ... դու ... լքում ես, մենակ թողնում քո վիրաւոր հրամանատարին: ... Քո լրտեսները ... իմ գլուխն են փնտրում՝ երեք միլիոնով Ադրբեյջանին ծախելու: Ապերա՛խտ **ժողովուրդ**: ... Վա՛յ քեզ, **ժողովուրդ**, ի՞նչ պատասխան պիտ տաս Աստծուդ ... **ժողովն՝ ւրդ**, կ'անցնեն օրեր, թշնամին ... կը սկսի ... բնաջնջել քեզ: ... **ժողովն՝ ւրդ**, ինձ լքելուց ... առաջ զլացար իմ խնդիրը կատարել ... Ներում եմ, թէեւ պատմութիւնը չի ների քեզ եւ խնդրում՝ երբ ինձ սպանուած գտնես, դիակս թաղի Խուստուպի ամենաբարձր կատարին ... Աստուած եւ իմ սերը քեզ հետ, ապերա՛խտ **ժողովուրդ**» [Հ, էջ 425-426]:

Գիտական աշխատութիւններից ներկայ պահանջով հարկ է առանձնացնել *Բանտային գրառումներից Իմ տապանագիրը* վերնագրով ենթագլուխը: Կէս էջից էլ պակաս հատուածում *անցորդ* կոչականը գործածուած է վեց անգամ, *կանգ առ* հարադիրը՝ երկու անգամ՝ *լսո՞ւմ ես, գերեզման են ուզում, ասա՛, ի մարտ* բառերից յետոյ [Հ, էջ 407]:

Պու ենթակայի կրկնությամբ դիմումներ կան ուղղուած երիտասարդութեանը եւ անհատների: Առաջինը, իհարկէ, մի քանի առիթներով նախ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ. «**Պու՛ւ**, երիտասարդ գրուցընկեր, **դո՛ւ**, որ հրամայողաբար պիտ լինես ուժեղ, **դո՛ւ** եւս ապաւինիիր վսեմ մտածումի փրկարար ոյժին» [Հ, էջ 102]:

Անհատների առումով յիշարժան են յետեւեալ հատուածները Գարեգին Նժդեհի Տրաեանովին ուղղուած նամակից եւ Լեապովի դագաղի առաջ նրա արտասանած դամբանականից. «**Պու՛ւ ք էլ, դո՛ւ ք էլ**, երբ խօսում եք մի գետի, մի պուրակի, մի լեռան մասին, ոգիանում է, լեզու առնում ո՛ղջ բնութիւնը» [Հ, էջ 593], «**Պու է՛լ, դու էլ** կարող էիր հարուստ լինել, բայց ապրեցիր աղքատ եւ մեռար մենաւոր ...» [Հ, էջ 597]:

Հարցերի ու կրկնութիւնների միատեղումը նոյն նախադասութեան մէջ, որպէս դիմում արտայայտելու միջոց, տարածուած իրողութիւն է: Այդպիսին է, օրինակ, յետեւեալ հատուածը դարձեալ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութիւնից՝ դարձեալ ուղղուած երիտասարդութեանը. «Հա՛յ երիտասարդութիւն, վաղը, երբ թրքութիւնը փորձեց պղծել Հայրենիքիդ սահմանների սրբութիւնը, **պիտ կարողանա՞ս** աւելի սարսափելի լինել, քան թշնամին: **Պիտ կարողանա՞ս** վագրային կեցածք ցուցադրել: Պատասխանի՛ր, **պիտ կարողանա՞ս ...**» [Հ, էջ 132]: Կամ վերը մէջբերուած կոչից՝ ուղղուած Սիւնիքի բնակչութեանը. եւ կամ Մայքլ Արլէնին ուղղուած յետեւեալ հռետորական դիմումը. «**Չգիտե՞ք ...** որ տողերը կարող են արդարացնել օտար ժողովուրդների արհամարհանքը դէպի հայ դատը: **Չգիտե՞ք**, որ ձեր ծանօթ տողերը կարող են ինքնանուաստացումի մղել օտար ավերի վրայ ծուարուած հայութիւնը ...» [Հ, էջ 472]:

**զ. Ընդգծում:** Թերեւս կրկնութիւնների ամենալայն կիրառութիւնն է: Շեշտում են կոնկրետ զգացումը, առարկան, երեւոյթը, պահանջը, համոզմունքը, յատկանիշը, գործողութիւնը ... Ընթերցողի ուշադրութիւնն է գրաւում կրկնուող բառը, ըստ որում ինչքան յաճախ, այնքան սեւեռուն կերպով: *Դաշնակցութեան պան-*

թեոնը շարքի *Գերեզմանատանը* խոհագրութեան մէջ ընդգծում է քնարական հերոսի շուտափոյթ, հնարաւորինս արագ հեռանալու ցանկութիւնը՝ երեք անգամ կրկնելով **փախչել** բայը. «... հոգիս խեղդող թախծի գիշերն ավելի սե՛ւ, ավելի ճնշող է դառնում ... Եւ ուզում եմ ճշալ ու **փախչել** ես ... **Փախչել** աշխարհից ... հեռո՛ւ, շատ հեռու ... **Փախչել**՝ դուրս գալ աշխարհից ...» [Հ, էջ 415]: Ս. Վրացեանին գրած իր նամակում Նժդեհը ուշադրութիւն է հրաւիրում գաղափարի մարդկանց պակասի վրայ. «... Բայց կար **մարդը**, ... ընկեր Վրացեան, **մարդը**, գաղափարի աստուածաշունչ **մարդն** է մեռել, մարդն է պակասում մեզ ... այս անփառունակ եւ կոշմարային օրերում»<sup>55</sup>: Իսկ *Տարածուող Անին* յօդուածում՝ վեց անգամ կրկնելով *օգնութիւն* բառը, ուշադրութիւն է հրաւիրում տարագիր դարձած հայերի փրկութեան վրայ. «...հեղ հարյուր հազար հայեր իրենց հայեացքն ակամայից կը դարձնեն դէպի հայ գաղութները: **Օգնութեան** կը կանչեն, **օգնութիւն** կը սպասեն, **օգնութիւն**՝ շուտափոյթ, սրտաբուղխ եւ լիաբուռն: Ուշացա՛նք մենք – **օգնութեան** կը փութայ մահը» [Հ, էջ 448]: *Իմ պատասխանը* յուշագրութեան հինգերորդ մասը կարդալիս զգացում է, թէ որքա՛ն միայնակ է եղել Միւնիքը. «... Միւնիքի դրութիւնը աւելի եւս պիտի ծանրանար: Այժմ դա կտրուած էր ամբողջ աշխարհից: Դա **մենակ** էր այժմ, ողբերգօրէն **մենակ, մենակ** քաղաքականապէս, անգինակից՝ կռուադաշտում» [Հ, էջ 301]: Բայց եւ տարածում են եզրափակիչ հաղթական ակորդները. «**Պիտի յաղթել, պիտի յաղթել** գոյութեան իրաւունքը չկորցնելու համար» [ԼԳ]: Նոյն կերպ նաեւ ուրիշ-ուրիշ ընդգրծումների պահանջով: Ահա այդպէս *Բանտային գրառումներ*-ի 12-րդ մասի մի հատուածում չորս անգամ կրկնելով *անուն* բառը՝ իւրաքանչիւր դէպքում մատնանշելով մի կարեւոր հանգամանք՝ առաքինի մի կողմ, ընթերցողին է ներկայացնում Վարդան Մամիկոնեանին, վերջին՝ չորրորդ յիշատակման մէջ գրելով. «**Մի անուն** – մի ամբողջ դաւանա՛նք, մի ո՛ւխտ, մի բարոյական իմաստասիրութի՛ւն» [Հ, էջ 404]: Ի հակադրութիւն հայրենանուեր

<sup>55</sup> ՀՅԴ ԿԱ, Ս. Վ., թթ.. 5- 22:

մարդու, *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան հինգերորդ մասում ներկայացում է սեփական, առօրեայ հաճոյքների համար ապրող անձը՝ հինգ անգամ **նա** դերանունան կրկնութեամբ. Իւրաքանչիւր դէպքում նշում է մի արատ՝ վերջում ըստ պատելի եզրահանգմամբ. «... Նա դառնում է մեռեալ թիւ եւ ոչ ստեղծագործող անհատ իր ժողովրդի համար» [Հ, էջ 99]:

\*\*\*

Ամփոփենք: Որպէս կրկնութիւն ոճական միջոց Նժդեհի երկերում հանդէս են գալիս ինքնուրոյն բառերը, բառակապակցութիւնները, նախադասութիւնները, որոնք կրկնում են 2-10, սակաւ դէպքերում՝ աւելի անգամ՝ կա՛մ յաջորդելով միմեանց, կա՛մ փոքր ու մեծ ընդմիջումներով: Ըստ բնոյթի կարող են լինել հարցական, պարզ կամ երկրորդական լրացումներով: Արտայայտում են առաւելապէս՝ քանակ, յորդոր, ժամանակ ու տեսականութիւն, գայրոյթ, դիմում, ընդգծում:

Նկատի ունենալով քննութեան առած կրկնութիւնները, այդ թում նաեւ՝ յարակրկնութիւնները, ինքնաբերաբար պահանջ է առաջանում զուգայեռ անցկացնելու Գ. Նժդեհի՝ չափածոյում յարակրկնութիւնների, վերջնակրկնութիւնների անգերազանց վարպետ Համո Սահեանի միջեւ: Միալուած չենք լինի, եթէ ասենք, թէ նրա գրեթէ ամէն բանաստեղծութեան մէջ կան կրկնուող տողեր կամ բառեր, որոնք մշտապէս այնքա՛ն տեղին են ու ներդաշնակ համատեքստի ընդհանուր հիւսուածքին: Դժուար է (չասելու համար՝ անհնարին) ցոյց տալ մէկ այլ հայ բանաստեղծի, որի ստեղծագործութիւններում նոյնպիսի յետեւողականութեամբ ու նոյնչափ համատարած լինեն կրկնութիւնները: Ահա՛ արձակում նոյնը պէտք է ասել Գարեգին Նժդեհի վերաբերեալ: Ոչ մի այլ հայ արձակագիր այսպիսի յաճախականութեամբ ու ստեղծագործօրէն չի դիմել կրկնութիւններ ոճական միջոցին: Ըստ որում, ասուածը վերաբերում է ոչ միայն Նժդեհի արձակ բանաս-

տեղծություններին կամ հրապարակախօսական յօդուածներին, այլև գիտական աշխատութիւններին ու պաշտօնական գրութիւններին, ինչը հարկ է ընդգծել: Այլ է գեղարուեստական խօսքը (մանաւանդ, քնարականն ու հերոսականը) իր հնարաւորութիւններով, որոնք բխում են այդպիսի ստեղծագործութիւնների բնոյթից, եւ այլ՝ գիտականն ու պաշտօնականը, որտեղ կրկնութիւններ չեն ենթադրում:



## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

### ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

#### § 21. Հակադրություն

Ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ Գ. Նժդեհն իր երկերում դիմում է շարադրանքի որոշակի եղանակների, որոնց ընտրությունը՝ իւրաքանչիւր դէպքի համար պայմանաւորուած է ասելիքով, նրանով, թէ ինչ նիւթ է քննարկում, որն է բացատրությունների նպատակը, ինչի վրայ է յատկապէս ուշադրություն հրաւիրում, ինչպիսի յետեւություններ է անում: Սոյն գլխում ունեցած կոնկրետ կիրառությունների հիման վրայ քննութեան կառնուէն համապատասխան եղանակները: Արդ, առաջին եղանակը՝ հակադրություն:

Շարադրանքը կատարում է հակադիր եզրերի միջոցով. Մատնանշում է նախ մէկի, ապա միւսի միմեանց հակադիր էությունը, ընտրելով հասարակայնօրէն օգտակարը, պատմականօրէն ճշմարիտը՝ ընդհանրապէս, բայց մասնաւորապէս՝ հայ ժողովրդի համար:

#### **1. Ծաւալային առումով հակադրությունները կազմուած են.**

**ա.** մէկ կամ մէկ-երկու նախադասութեան շրջանակում: *Ամերիկահայությունը – ցեղը եւ իր տականքը* աշխատութեան մէջ, կարեւորելով ապագայի վերաբերեալ ժողովրդի ըմբռնումը, նա գրում է. «Դա է մեզ դարձնում **ստեղծագործ կամ անպտուղ, մարտիկ կամ դասալիք, մուրացկան կամ արքայ, ի մի բան՝ յաղթական կամ պարտեալ**» [Հ, էջ 231]: Հեղինակը միատեղում է չորս հակադիր եզրեր՝ չորս տարբեր կետերից դիտելով հարցի էությունը: Ինչպէս կտեսնենք, երկու, առաւել յաճախ, ասելի մեծ թուով մոտեցումներով հակասությունների վերհանումը բնորոշ է

քննուող երկերին: Յետեւեալ նախադասութեան մէջ ի ցոյց է հանում Թուրքիայի կեղծ սոցիալիստական յեղափոխութեան բնոյթը. «Յետադիմական փաշաներն ու սոցիալիզմը. արեւելքի բորենիներն ու յեղափոխական աշխատատրութիւնը: Ի՛նչ պղծանք ու հայիոյանք սոցիալիզմի ու յեղափոխութեան հասցեին» [ ԱՍ ]:

**բ.** Հակադրութեամբ են կազմուած որոշակի երկերի մասերից մէկը, ենթագլուխը կամ մի քանի պարբերութիւն ընդգրկող մի մեծ հատուած: Ասպէս. *Յեղային արթնութիւն* աշխատութեան *Խօսք վեցերորդ* ենթագլուխը կառուցուած է *ժողովուրդ* եւ *ցեղ* հասկացութիւնների հակադրութեամբ. բացատրելով մէկի եւ միւսի մի շարք միմեանց հակադիր յատկանիշներ՝ բոլոր դէպքերում նախապատուելին ու գերական, դրականօրէն օժտուածը համարելով ցեղը [տե՛ս Հ, էջ 501]: Նոյն կերպ *Բաց նամակ Մայքլ Արլէնին* հրապարակախօսական յօդուածի *է* մասը՝ *Մայքլ Արլէնի* ու *հրեաների մարգարէների* հակադրութեամբ [Հ, էջ 469]:

**գ.** Հակադրութեամբ կարող է կառուցուած լինել ամբողջական ստեղծագործութիւնը, օրինակ՝ յօդուած: Այդպիսիներից է *Յե՛ղ, թե՛ կուսակցութիւն* յօդուածը: *Կուսակցութիւնը* հատուածական է դարձնում ժողովրդին, անհատին ծառայեցնում կուսակցական շահերին: *Յեղը* համախմբում է ժողովրդին, անհատները ծառայում են ցեղին, դաստիարակում է հայրենապաշտութիւն, մղում անցեալի պատմութեան իմացութեան, անձնուրացութեան՝ յանուն ցեղի [տե՛ս Ա, էջ 630]:

**2. Այժմ հակադրութիւններ՝ բովանդակային առումով:** Վերը նշուած ծաւալներով հակադրութիւնները կիրառուած են տարբեր վերլուծութիւնների, բացատրութիւնների, փաստարկումների համար: Ստորեւ առանձնացուած են կիրառութիւններից հինգը ամենից էականները:

**ա. Հակասական յատկութիւններ:** Վեր են հանում անձերի, երեւոյթների, հասարակական հոգեբանութեան հականիշ յատկութիւններ՝ դրանց միջոցով հասնելով հակադիր էութիւնների բացայայտման: Այս կերպ Գ. Նժդեհը քննութեան է առնում իր գաղափարախօսութեան որոշակի դրոյթներ, բնորոշում է

գաղափարախօսութեան կրողներին եւ հակառակորդներին. հոգեւոր բեւեռացումն է – **ազգայնական** եւ **հակազգայնական**: ... «... **ազգայնականը՝ ուխտասպահ, հակազգայնականը՝ ուրացող**»: [Հ, էջ 258]: Ահա՛ այսպիսի հակադրութիւններով է շարադրում Գ. Նժդեհը իր գաղափարախօսութեան կարեւոր հիմնադրոյթներից մէկը: Աւելի լայն առումով ներկայացնելով տարաբեւեռ կողմերը՝ *Մեծ գաղափար* յօդուածում հարցը քննում է ցեղային մակարդակով՝ *հակազգայնականին* անուանելով *ցեղաշէղ, ազգայնականին՝ ցեղավար*: Առաջինը իր հոգեւոր իշխանութիւնը կառուցում է տգետներին ու միամիտներին չարարուեստ մարդկանց տկարութեան հիման վրայ, իսկ երկրորդը ազգի դատը վստահում է հայօրէն ապրող անշահասերներին, առաքինիներին [Հ, էջ 636]: Մէկ այլ յատկանիշ. *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ Նժդեհը արհուրթիւն է ներշնչում երիտասարդութեանը. «**Արհուրթիւնն** է ոստայնանկում ազգերի անկախութեան ու հզօրութեան դրօշը: **Անարհուրթիւնը՝** պատանքն ազգերի...» [Հ, էջ 107]: Ապա շարունակելով՝ ճակատամարտերի իր փորձից յիշում է *արի զինուորին*, որ յաղթելու վճռականութեամբ խոյանում էր դէպի թշնամին եւ *վախկոտութեան յանցանքի մէջ բռնուած անարհիւն*: Առաջինը ապրեցնում էր իր ազգը, երկրորդը աւելացնում թշնամու փառքը. «Առաջինը ինձ համար **աւելի բարձր էակ է, քան մարդ**: Երկրորդը՝ **աւելի անասուն, քան Հայ եւ մարդ**» [Հ, էջ 107]:

Եւ մի երրորդ գոյգ բեւեռներ՝ *ճշմարտութիւնը* եւ *կեղծիքը*: Դարձեալ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ հեղինակը երիտասարդութեանը այս անգամ համակում է ճշմարտութեան պաշտամունքի ոգով, քանի որ այն սնուցում է անհատի ու ժողովրդի հոգեբանութեան *ոյժեղ եւ ազնիւ*, իսկ կեղծիքը՝ *թոյլ եւ արատաւոր* կողմերը: Մէջբերենք այդ հատուածը ամբողջութեամբ. «- **Ճշմարտութիւնը ...** – դա աստուածային այն լոյսն ու ջերմութիւնն է, որով կը սնւի ու կը հզօրանայ հոգին՝ անհատի եւ ժողովրդի: **Վեղծիքը կը ստրկացնի, ճշմարտութիւնը՝ կը փրկի**: **Վերջինն ոյժ է, առաջինը՝ տկարութիւն**: **Վախկոտն ու**

**ստորը** – ահա՛ կեղծիքի աշակերտները: Ճմարտութիւնը կը դաստիարակէ **արին ու ազնիւր: Պարտութիւն, ստրկութիւն, տառապանք** – ահա՛ **կեղծիքին** հարկատու ժողովուրդների ճակատագիրը: **Ճշմարտութիւնն**, ընդհակառակը, կը **զօրացնէ ու կը փրկի**, դարձնելով **ազգերին յաղթական: Առաջինը** տխուր ախտանիշն է հոգիների խանգարման: **Երկրորդը**, կրկնէնք իմաստունի հետ՝ ամենամեծ աստուածութիւնն է, որ բնութիւնը յայտնաբերել է մարդկութեան համար եւ օժտել զայն ամենամեծ ոյժով: **Ճշմարտութեան** մէջ ապրող անհատի եւ հաւաքականութեան **հիմքը դրուած է լինում ժայռի, կեղծիքի մէջ խարխափողինը՝ աւազի վրայ**» [Հ, էջ 86]:

*բ. Իրավիճակի նկարագրութիւն:* Ներկայացում են որեւէ իրադրութեանը յատուկ երեւոյթները, հասարակական հոգեվիճակը, ըմբռնումները ի հակադրութիւն այլ իրադրութեան, այլ հոգեվիճակի եւ ըմբռնումների: Ահա 1920-ական թուերի հայ մտատրականութեան բարոյահոգեբանական վիճակը. կուսակցութիւնների կատաղի իրարամերժ պայքար, որ ջլատում է ժողովրդի հաւաքական ոյժը՝ առաջ բերելով բարոյական եւ ազգային անկումայնութիւն: Խօսքը կառուցուած է *չկայ* (ինչ որ պահանջուում է) եւ *կայ* հակադրութեան հիման վրայ. «*Չկայ, չի նկատուում մտքի ու ոգու լարում, ... Չկայ ստեղծագործութիւն, չկայ բարոյական ոյժերի մթերում: Կայ* ընդհակառակը, *կայ հասկացողութիւնների քառս եւ անիշխանութիւն, կայ հոգեկան լճացում, կայ բարոյական մակարոծութիւն – հոգեբանական մի աղիտալի մթնոլորտ, ... Կայ օտարահակ կողմնորոշումների գերազնահատումն, ... Կայ* այն ամէնը, ինչ որ անյոյս եւ վտանգուած է դարձնում մեր ժողովուրդի ապագան», - գրում է Նժդեհը *Բաց նամակներ հայ մտատրականութեան* աշխատութեան մէջ [Հ, էջ 70]:

*Ազատ Միւնիք* յուշագրութեան մէջ նա ցոյց է տալիս, թէ ինչպիսին են պատերազմական վիճակում եղող եւ չեղող տարածքները, մասնաւորապէս պայքարունակութեան տարբերութիւնները պատերազմող Միւնիքում ու խաղաղ Նոր Բայազետում 1921 թ. փետրուար - մարտ ամիսներին. «Հոգեբանօրէն երկու տարբեր

աշխարհներ են Մինիքն ու Նոր Բայազետը: *Առաջինը* մարտական, ապստամբական ինքնագիտակցությամբ անկախ, *երկրորդը*՝ կրաւորական, զուրկ յանդգնելու արուեստից»: *Առաջինը*՝ վերջին կաթիլը Հայրենիքին. *Բայազետում* անտարբերութիւն է, անշարժութիւն, անհայրենասիրութիւնը դեռ չդատապարտուած: *Մինիքը* թատերաբեմ թուրք-թաթարների պատերազմների, *Բայազետը* ապահով, հեռու կռիւներից» [ԱՍ]:

*գ. Անհատների բնութագրում:* Ի ցոյց են դրում պատմական անձնավորութիւններ՝ ազգի նուիրեալը լինել-չլինելու դիտանկիւնից: Երկու տիպիկ օրինակ: *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխատութեան մէջ նկարագրում է ամերիկահայոց Ղեւոնդ արքեպ. Դուրեանի հակակեղեցական, հակազգային գործունեութիւնը. կերպարն ամբողջանում է յետեւեալ անձնական հակադրութիւնների շարքով. «Դուրեանը թե՛ Յիսուսի գատորոշումն է ընդունում, թե՛ բոլշեիկների պետականացումը, թե՛ նրա «ուշը», թե՛ սրա «այոն», թե՛ Աւետարանը, թե՛ բոլշեիկեան դեկրետը: Դուրեանը թե՛ քրիստոնէայ է, թե՛ բոլշեիկ, թե՛ աստուածապաշտ է, թե՛ անաստուած: Դուրեանը գռեհիկ տեսակի ստահակ է – ահա՛ ճշմարտութիւնը: ... Նա ա՛յն դժբախտներից է, որոնք գործում են իրենց ասածներին հակառակ, եւ ասում են իրենց գործածին հակառակ» [Հ, էջ 214, 219]: Յաջորդը հայ ազգի գրող, բայց անզլագիր Մայրլ Արլէնն է: Այս գրողը մամուլի էջերից, Նժդեհի արտայայտութեամբ, *արհամարհանքի ծանր քարեր էր նետել* Հայաստանի հասցէին, հայերին համարել *անարգ նահատակութեան ու գծուծ փախուստների ժողովուրդ*: Եւ քանի որ դրա հետ մէկտեղ հեռու քաշուած սեփական ազգի ողբերգութիւնից, հարստութեան ու ճոխութեան մէջ, գեթ մատը մատին չէր խփում ի սեր հայրենիքի, Նժդեհը *Բաց նամակ Մայրլ Արլէնին* հայրենաշունչ ու զայրոյթայրոյթ, նախատալից յօդուածում ի ցոյց է դնում նրա իսկ աչքերի առջեւ նրա իսկ անձնաւորութիւնը: Սա կատարում է նաեւ հակադրութիւնների եղանակով: Նախ Արլէնին հակադրում է հրեայ մարգարէներին (*Եսայի, Երեմիա*), որոնք *զայրոյթով դատապարտում էին իրենց*

*հայրենիքի յոռի կողմերը, բայց եւ միաժամանակ խորապէս ցաւում նրա համար ու յուսադրում:* Երկրորդ հակադրութիւնը հրեայ տարագիր մտաւորականութեան, մասնաւորապէս գրողների հետ է: Վերջիններս, ինչպէս Արլէնը, թէեւ գրում էին ոչ մայրենի լեզուով, սակայն երբեք չէին մոռանում իրենց ժողովրդի հոգսերը եւ գրում ու գործում էին հրեայ ժողովրդի փառքի համար: Ամաչեցնելու համար թուարկում է մի մեծ շարք գրողների, գիտնականների ու միլիարդատերերի: Եւ ապա Արլէնին հակադրում է *հայոց վշտակիր ու տրիբուն* Աւ. Ահարոնեանին՝ բնորոշելով. «...որքան ոյժեղ է իր ցեղասիրութիւնը, այնքան կատաղի է իր բարոյական զայրոյթը, որը սակայն իր սիրող սրտէն կը բղխէ ... գլխէ շանթել այն ամէնը ... որ տկար է ու տգեղ, աննուէր ու անփառ.» [Հ, էջ 470]:

Այսպէս, հակադրութիւնների ու հակասութիւնների մէկտեղմամբ հեղինակը ներկայացնում է անհատների: Նոյն կերպ խոր ընդհանրացումներ կատարելով՝ նա ստեղծել է իր մտատիպարները, որոնցից երկուսին այստեղ հարկ է անդրադառնալ: Ահա դեկաւարը. նրան կա՛մ նշանակում են, կամ նա ինքն է իրեն դեկաւար հայտարարում: Նժդեհի մտատիպարը, իհարկէ երկրորդն է, որովետեւ առաջինը կատարում է այն, ինչ հնարաւոր է համարում, մինչդեռ երկրորդը զօրքին կամ ժողովրդին ներշնչում է անկարելին կարելի դարձնելու հաւատը: *Առաջինը* իրեն պատասխանատու է համարում օրենքների եւ իշխանութեան, *երկրորդը*՝ նաեւ խղճի ու պատմութեան առջեւ: *Նշանակուածը* գուցէ ճարպիկ ռազմավար է, մինչդեռ *յայտարարուողը* նաեւ մահն արհամարհող զինուոր, որ մղում է հերոսութեան (տե՛ս ԱԳ):

Միւս մտատիպարը ժողովրդի առաջնորդն է: Ինչպիսի՞ն պէտք է լինի նա եւ ինչպիսի՞ն չպէտք է լինի: Հասարակութեանը առաջնորդը ներկայանում է 1932 թ. գրած *Յեղի ոգու շարժը* աշխատութեան մէջ: Աւելի քան 15 զոյգ գծերով, հոգեբանական տարբեր առումներով, մանրամասն ցոյց է տրուում, թէ ինչն է մերժելին, ինչը՝ անհրաժեշտ: Հազիւ թէ նպատակայարմար է խօսքերով վերապատմել այդ հատուածը. այն պէտք է անձամբ

կարդալ, լեզուագեղագիտական բառականութիւն ստանալ ու խորհրդածել: Արդ, ինչպիսի՞ն է Նժդէհի՝ ժողովրդի առաջնորդի մտատիպարը. «Ո՛չ մարդկային նախիրը բազմացնող կոտորակային անհատը, որ սեփական այո՛ւ եւ ո՛չ չունի, ... այլ՝ հայն ու մարդը՝ ամբողջական, ինքնուրոյն ու զօրեղ: Ո՛չ կրաւորաբար խորհրդածողն ու սովեւտը, այլ՝ մեծագործութեանց ծարաւի մշակը մշտաջան: Ո՛չ ... բիւրիցս զգուելի էպիկուրեանը, որն իր բառականութեանց զոհ է բերել կեանքի ողջ սրբութիւնը, ո՛չ, ո՛չ նմանը, այլ կեանքի լի՛ բաժակը արհամարհել գիտցող իդէալիստը՝ վսեմախոհ: Ո՛չ հոգով գոեհիկը, որ եսականօրէն ըմբոստանում է սրբացուցիչ տառապանքի դէմ – այլ՝ հոգու պայագատութեամբ շեշտուածը ... Ո՛չ ելեւմտական խելքի տէր քաղաքական գործիչը, որ զգուշաբար պարագաները կը կշռէ կը վերակշռէ, ամէն բան թողնելով անորոշ ժամանակին, այլ՝ արի՛ն յառաջահայեաց, որ խիզախել գիտէ: Ո՛չ հոգեւոր թգուկը, որ յաջողում է բարձրանալ հսկաների վրայ՝ մի քիչ հեռուն տեսնելու համար, այլ՝ նա՛, որ փարոսօրէն լուսաւորել գիտէ իր ժամանակաշրջանը ... Ո՛չ այս կամ այն դասակարգի ջատագովը – հիմնախո՛րը Հայրենիքի, ո՛չ էլ ներկայով կլանուած կարճայուշ ժողովրդասէրը, այլ՝ ցեղամերձը, որն իր բոլոր խորհուրդները ցեղէ՛ն կ՛առնէ: Ո՛չ անկապաշտը՝ նուաստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խուժանավարը՝ շոգմոզ, հերձուածողը՝ որոմնացան, ո՛չ էլ նեղահաւատ ու բաժանասէր կուսակցական ցանցարկուն ... Ո՛չ նմանները, ոչ էլ խորթաբարոյ վարդապետութեամբ զանգուածները թունաւորող լենինադաւան հայրենասպանը, այլ՝ հայր ցեղագոյեցիկ ու խորարթուն, նա, որ ունայն է հոչակել այն ամէնը ... որոնք ... մեզ չեն դարձնէր աւելի՛ հայ, աւելի՛ զօրեղ: Ո՛չ պարտուողականը – համակ վախ եւ եսականութիւն ... այլ՝ նա՛, որ չի տենչար աւելի գերագոյն ճակատագիր, քան ստեղծագործօրէն հասունանալ յաղթական մահուան համար ... Այսպիսի՛ն պիտի լինի առաջնորդը ...» [Հ, էջ 182-183]: Հատուածը մէջբերուեց որոշ կրճատումներով՝ գեղարուեստական կորուստով հանդերձ: Մակայն, նկատի ունենալով ծաւալը, այն ամբողջական ներկայաց-

նելն այստեղ նպատակայարմար չէ, քանի որ նշուող ամեն յատկանիշից հետո կան յաւելեալ բացատրութիւններ ու մանրամասներ: Յետեւելով հեղինակի խօսքի ընթացքին՝ զուգորդութիւններ են առաջ գալիս պատմութեան ընթացքում ժողովուրդների ունեցած այլեւայլ առաջնորդների հետ: Թուարկումների մեծ շարքը, տարբեր յատկանիշների ցուցահանումը յիշեցնում է Գ. Նարեկացու գրելաոճը, *Մատեան ողբերգութեան* ազդեցութիւնը նկատելի է, որին բնորոշ են նմանատիպ դրուագները:

**դ. Հայութեան հատուածների բնութագրում:** Հակադրութեան շատ աւելի լայն ծաւալի եզրեր, այն է՝ մեր ժողովրդի հատուածներ՝ գաղափարօրէն տարբեր հոգեկերտուածքով, ուրեմն եւ տարբեր ձգտումներով ու կենսական ուղղուածութեամբ: Ուշադրութեան է ներկայացում երկու հատուած *Յեղի ոգու շարժը* եւ *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխատութիւններից: Երկուսում էլ վերլուծութիւնը կառուցուած է *մէկը* եւ *միւսը* անուանումներով եզրերի հակադրութեան հիման վրայ. վեր է հանում առաջինի էութենական կողմերը, որոնց տարամէտ են երկրորդի կողմերը. «Ուայքա՛ր կայ հայոց գաղթաշխարհում,- գրում է Նժդեհն *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխատութեան մէջ՝ վեր հանելով կողմերի պայքարի էութիւնը. ... կողմերից **մէկը** – ազգայնական հայութիւնը, աշխարհն ու երեւոյթները դիտում է իր ցեղի յաւիտենականի բարձունքէն, **միւսը**՝ իր առօրեական վաղանցիկ հաշիւների անկիւնէն: **Մէկն** իր որոշ ճամբան եւ ազգային դատը ունի, **միւսը**՝ անուղի է, աննպատակ: **Մէկը** կուում է իր նուիրական դրօշի, **միւսը** վարձկան է օտար զէնքի տակ: **Մէկը** իր ցեղային լիարժէքութեան գիտակցութիւնն ունի ... **միւսը** նուաստ՝ իր ընկածութեան գիտակցութիւնն ունի ... » [Հ, էջ 186]:

Նմանօրինակ պայքարի վերլուծութիւն է *Յեղի ոգու շարժը* աշխատութեան մէջ. «Դեռ այսօր էլ հայութիւնը մնում է պառակտուած ... Կան եւ պայքարի մէջ երկու կողմեր: **Մէկը**՝ *հոգեփոխուած՝ իր հեռաւոր անցեալի եւ երէկուայ հերոսականի պաշտամունքն ունի: Միւսը՝ հայ ստրկականութեան աւանդա-*



գահը, որ սեփական պատմութեան մէջ միայն ստրկութիւն է պարտութիւն է տեսնում: **Մէկը** ձգտում է ինքնահզօրացման եւ նուաճումների՝ յանուն ապագայի: **Միւսը** երես է դարձրած անցեալից, չի հաւատում ապագային, ցեղի հին փառքը նրան թուում է հեզնանք, իսկ յոյսը՝ արկածախնդրութիւն: **Մէկը՝ վրեժի ծարաւունի, սակայն, միայն իբր նախադրեալ՝ իր ազգային գոյութեան եւ մշակոյթի: Միւսը՝ թէեւ թօթովում է մշակոյթի մասին, բայց հայրենի հողի համար մի կաթիլ արհուն չունի: Մէկը ճիգեր է թափում կենտրոնացնելու ցեղի ոյժերը մեր հաւաքական գոյութեան սպառնացող թշնամու դէմ, միւսը՝ թշնամի մեր ազատագրական պայքարի ... որի վրայ տարիներ է, ինչ ընդունայն ուժասպառում է հայութիւնը՝: Հերձասիրութեան հին դէպ գործի վրայ է եւ այսօր ... տարբեր անուան եւ ձեւերի տակ ... »\* [Հ, էջ 154-155]:**

**Է. Ժողովուրդներ:** Անհատի եւ ժողովրդի որեւէ հատուածի յարաբերութեամբ առաւել լայն հասկացութեան վերլուծութիւն է: Նժդեհի գրական ժառանգութեան մէջ ժողովուրդների հակադրութեան երկու օրինակ կայ միայն: **Մէկը** վերաբերում է ճապոնացիներին եւ եւրոպական ժողովուրդներին: Նժդեհի համակրանքը երկրորդների կողմը չէ: Ճապոնացիների վերաբերմամբ մատնանշում է առաքինութիւններ, որոնք չկան արեւմուտքում: Այն է՝ ճապոնացին, որ երկրում էլ ապրի, ենթարկւում է իր հայրենիքի օրենքներին, արեւմուտքում շատ են հակահայրենիք մարդիկ. արեւմուտքում գերական մեքենան է, ճապոնիայում՝ մարդը: Եւրոպացին սարսափում է մահից, ճապոնացին, երբ պէտք է, մեռնում է: Արեւմուտքում հասարակական դարվինականութիւն է, ճապոնիայում գոյութեան կռում մարդը դեռ մնացել է մարդ [տե՛ս Հ, էջ 182]: **Միւսը** թուրքի եւ հայի հակադրութիւնն է, ոչ կանխակալ, այլ առարկայական՝ հիմնուած պատմական փորձի վրայ: Թուրքի մեկնաբանուող յատկութիւններն են՝ վայրագութիւն, ահաբեկչութիւն, սեռակենտրոնութիւն, երկչոտութիւն (որից՝ յարձակողականութիւնը), ճակատագրապաշ-

---

\* Մէջբերուած հատուածում շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

տութիւն, ծուկութիւն. ունի երկիր, բայց ոչ՝ հայրենիք: Հայի հատկութիւնները. Մարտիրոսութիւն, հերոսականութիւն, յաւիտենականութիւն, հայրենիքի եւ մոր նուիրական զգացողութիւն, ձրգտումներ դէպի սեփական մշակոյթը, կրթութիւնը (ձեռնափայտով աւագի վրայ այբուբեն գրելով ու սովորելով անգամ) [տե՛ս Հ, էջ 492, 497]:

Խոր ընդհանրացումներ կատարելով՝ Նժդեհը տարոյրշում է ժողովուրդների անցնելիք պատմական ուղին՝ դէպի վերե՛ք, թե՛ դէպի վայրէջք: Այստեղ որոշիչն այն է, թէ նրանց մէջ անկումային կամ վերանորոգիչ գաղափարներից որն է իշխում. «**Կը բարձրանան, կը յաղթեն ու կ'ապրեն ժողովուրդները**, երբ նրանց մէջ տիրաբար կ'իշխէ բացարձակ անկախութեան ոգին ... **Ընդհակառակը՝ կ'ընկնեն, կը պարտւեն, կը մեռնեն ժողովուրդները**, երբ կը թունաւորուն անասնացող նիւթապաշտութեամբ ... **Կը բարձրանան, կը փարթամանան, կը հզօրանան ժողովուրդները** ... անկախութեան ու մեծութեան իդէալը կը լուսաւորէ ու կը ջերմացնէ իրենց անցնելիք պատմական ճամբան: **Հոգեվարել կը սկսին նրանք**, երբ նրանց մէջ տժգունել կը սկսէ այդ իդէալը ...» [Հ, էջ 447]:

Այս կետի մէջ պէտք է ներառել նաեւ ժողովուրդ-ցեղ հակադրութիւնը՝ ցեղակրօնութեան գաղափարախօսութեան անկիւնաքարը: *Տեղակրօնութիւնն իբր յաղթանակի գօրոյթ* յօդուածում թուարկում են երկուստեք բնորոշող մի շարք հակադիր յատկանիշներ: Գերական, անշուշտ, ցեղն է եւ դրական յատկանիշները նրանն են: Նժդեհի պատուիրանն է՝ հայ ժողովուրդը, նրա անհատները պիտի ցեղօրէն ապրեն, որովհետեւ. «... **ցեղի** ուժակշիռն աւելի մեծ է, նրա ներքին տարողութիւնը բիրաբիր անգամ աւելի՛ հարուստ, քան՝ **ժողովրդին** ... **Տեղը** չի ծերանում, թիկնադարձութիւն չգիտէ եւ չի պարտում: ... **Տեղն** արարիչ է, **ժողովուրդը**՝ արարած: ... Նւաստախոհ եւ նւաստախօս է **ժողովուրդը**, **ցեղը** ... գահընկեցութիւն չգիտէ: Յարանուանական է **ժողովուրդը** – կաթուղիկէ, բողոքական եւ այլն, **ցեղը** մի՛ շտ էլ մի՛ է եւ ամբողջական: **Ճողովուրդ** – ասել է դասակարգ եւ դասա-

կարգային եսականություն, **ցեղն** ընկերային արդարություն է եւ հնարատր հաւասարություն ... **Ժողովուրդը** հաշւետես ուղեղ է, **ցեղը**՝ աւելի սիրտ, որ անհաշիւ կերպով զոհաբերել գիտէ: ... **Ժողովուրդը**, յաճախ, տարակոյսի եւ վարանումի կը մատնւի, **ցեղը** բնագոյօրէն գիտէ իր կտրելիք ճամբան» [Հ, էջ 481- 482]: Նշում են նաեւ մի շարք այլ հակադիր յատկանիշներ եւս:

## **§ 22. Համադրություն**

Ի տարբերություն նախորդ ենթագլխում քննութեան առած հակադրութիւնների, այժմ երկու եզրերը համադրում են միմեանց հետ, վեր են հանում ունեցած ընդհանրութիւնները, կամ մէկ այլ մոտեցմամբ, ցոյց են տրւում, թէ եզրերի մէջ տարբերութիւններ չկան, ուստի թէ՛ մէկ, թէ՛ միւս մոտեցմամբ դրանք նոյնական են: Սա կատարում է հարցը, դրոյթը վերլուծելիս: Ընդ որում, յստակ պարզաբանման համար, ըստ հարկի եզրերից *մէկը* համապատասխան տեսարանի նկարագրություն կարող է լինել, որի էութիւնն ընդհանրութիւն ունի *միւսի* հետ:

**Օտալայային առումով**, հակադրութիւնների նման, համադրութիւնը եւս կարող է դրսեւորուել մէկ նախադասութեամբ, երկու կամ աւելի նախադասութիւններից կազմուած փոքր կամ մեծ հատուածով: Ադպիսիք են.

**Մէկ նախադասութեամբ** . «... գիտակցական ստրուկի եւ յանցագործի մէջ չկայ տարբերութիւն ...» [Հ, էջ 445], «...պատմութիւնը արձանագրած չէ մի հատիկ իրողութիւն, որ իր անարգութեամբ զուգահեռուել կարողանար հայութեան դէմ ուղղուած թրքո-բոլշեիկ զինակցութեան փաստի հետ» [Հ, էջ 173]:

**Հատուածով**. «... Գիտէք չէ՞, որ Ռիշըլիէօն սովորութիւն ունէր իրեն ներկայացած զեկուցագրերի վրայ միայն երեք բառով յայտնել իր վճիռը, **vidi, legi, probavi**: **Տեսայ** ձեր տողերը, միստր, **կարդացի, գարշեցի**: Ներեցէ՛ք, ինդրեմ, եթէ ձեր գրչէն գարշէ ամէն ճշմարիտ հայ» [Հ, էջ 762] (Հատուածը բերուած է *Fug նամակ Մայքլ Արլէնին* յօդուածից):

***Բովանդակային առումով համադրում ու վերլուծում են.***

**ա. Երեւոյթներ.** «Երկաթը մաշում է իր ծնած ժանգից: Մարդս տառապում է իր անկատարելիութիւնից, որ արդիւնքն է իր անմաքուր, իր «ժանգոտ» մտածումների» [Հ, էջ 102]:

**բ. Իրավիճակներ:** Ինչ ասել կուզի, նիւթը մեր ժողովրդի անցեալից է ու ներկայից՝ լի մտահոգութեամբ, աւելի ճիշտ՝ տագնապով՝ նրա ապագայի նկատմամբ: Ահա մի տեսարան *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութիւնից, որը կառուցուող համադրութեան մի եզրն է. «Կռիւր կը սկսի Ձիրաւի տափարակի վրայ ... երբ Ներսէս Մեծը կը բարձրանայ Նպատ լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դէպ երկինք եւ աղօթելով, կ'իջեցնի ձեռքերը, մինչեւ որ չեն յաղթի Հայերը ... Ներսէս Մեծը լեռան վրայ՝ Ինչպիսի՛ վեհ պատկեր»: Ապա յաջորդում է ընդհանրացումը. «... այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ոյժերը եւ չի տկարացել հոգով, մինչեւ որ տեղի կը տար թշնամին – մի՛շտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ զինուորի ճակատը: Իսկ երբ չի գտնուել պարթեւատիպ առաջնորդը, որ կարողանար լարած պահել ժողովրդի ոյժերը, չթուլացնել ժողովրդի բազուկը ... պարտութիւնն ու ամօթն են եղել հայ զօրքի բաժինը» [Հ, էջ 141]: Նոյն աշխատութեան մէջ մէկ-երկու էջանոց մէկ այլ իրավիճակային համադրում կա: 1927 թիւն է: Շատ քիչ ժամանակ է անցել Մեծ եղեռնից եւ արեւմտահայ բընակչութեան աշխարհով մէկ սփռուելուց: Նժդեհը տեսնում է հայութեան գլխին դամոկլէսեան սրի պէս կախուած թուրքական վտանգը եւ զգուշացնում, որ առաջին իսկ հնարաւորութեան դէպքում այն կշարունակի հայաջնջման սեւ գործը: Այս իրավիճակի հետ համադրուող միւս եզրի համար նա դիմում է գերմանացի գրող Կարլ Հաուպտմանի թարգմանութիւններից մէկին: Լեռներում փոթորիկ է, բայց այնտեղ, փրկարար տանը ապաստանած մարդիկ շարունակում են զուարճանալ՝ երգ ... երաժշտութիւն ... Մասակացող փոթորիկի պէս աշխարհի բոլոր կողմերից անհամար զինավառ զանգուածներ շարժում են Գեր-

մանիայի վրայ: Հայտնում են ոյժի խորհրդանիշ «լեռների պահակը» եւ Գերմանիայի միութեան եւ ազատութեան խորհրդանիշ քանբերը: Երեք անգամ շեփորում են նոյն կոչը. «**Հէ՛յ, Հայրենիքը վտանգի մէջ է, արթնացէ՛ք, փրկեցէ՛ք ...**». բոլորը ոտքի վրայ են, բոլորը շտապում են զենք վերցնելու. «Դո՛ւ, հա՛յ երիտասարդութիւն,- դիմում է Նժդեհը, - պիտ ուզէի, որ դու լինէիր «Լեռների պահակ»ը մեր կեանքում ...: Եւ պահապան հրէշտակը մեր Ազատութեան ու Միութեան: Պիտ ուզէի, որ դու յաճախ ու յաճախ հայ աշխարհի ամբողջ տարածութեամբ արձակէիր անհանգիստ աղաղակդ. - **Հէ՛յ, վտանգ կայ, թրքական վտանգը, սեւ ամպի պէս կախած Հայաստանի գլխին, վտանգ ...**»: [Հ, էջ 144]:

**գ. Անհատներ:** Այստեղ անդրադարձ կլինի միայն պատմական անձանց: **Ա. Ահարոնեան:** *Յեղի ոգու շարժը* աշխատութեան մէջ տարբեր առիթներով համադրում է երեք անձանց հետ, որոնք են. 1) *Միքէլանջէլօ*. քանդակագործը կուրանալուց հետո եւս շարունակում էր շօշափել իր մարմարէ կոճղը. «Ահարոնեանի համար,- գրում է Նժդեհը,- նոյնպիսի, մարմարէ կոճղ եղաւ մեր ցեղի ճակատագիրը»: 2) *Տիխտէ*. Ահարոնեանը «... խորշեց Հեզելէն, որը անդորրապէս կը փիլիսոփայէր Իենայի մէջ ... երբ իր շուրջը գերման հայրենիքը կը կործանուէր» [Հ, էջ 147]: *Նա նմանուեց Տիխտէին*, «... որպէսզի հրեղէն խօսքով իր ժողովրդի սիրտը վառէ ու սրբէ: Յեղը կռուի էր բռնուած մահուան հետ ...» [Հ, էջ 147]: 3) *Եւ Մովսէս*. Նա քառասուն տարի անբաժան եղաւ իր ժողովրդից անապատում: «Ահարոնեանը մնաց միշտ էլ ժողովուրդի ու նրա ճակատագրի հետ եւ նրա մէջ արթնցուց ցեղը ...» [Հ, էջ 148-149]:

Յաջորդ պատմական անձը ամերիկահայ արքեպիսկոպոս **Ղեւոնդ Դուրեանն է**: Ի տարբերութիւն Ահարոնեանի դրական կերպարի, այստեղ առնչում ենք բացասականի հետ: *Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը* աշխատութեան մէջ Նժդեհը ի ցոյց է դնում նրա հակաազգային, հակակեղեցական դէմքը, ինչպէս այլ առիթով էլ ասուել է նախորդ ենթագլխում: *Համա-*

---

<sup>1</sup> Թաւ գրութիւնը Նժդեհինն է:

դրում է թուրքի եւ բուլղերիկի հետ. «Թուրքն ու բուլղերիկը դէմ են մեր նահատակների յիշատակին՝ նրանց սգատօնին – դէմ է նաե՛ւ Դուրեանը: Նրանք դէմ են մեր դրօշակին – դէմ է նաե՛ւ Դուրեանը: Նրանք դէմ են մեր ցեղի ժամանակակից պատմութեան հերոսականին – Մայիս 28ին – դէմ է նաեւ Դուրեանը» [Հ, էջ 221]: Առկայ է երեք համադրութիւն՝ մէկական նախադասութեամբ:

Եւ մի պատմական անձ եւս՝ **Գեղէն Տէր-Մինասեանը**, որի վերաբերեալ նոյնպէս անդրադարձ է եղել 18-րդ ենթագլխում, այլ առիթով: Իմագիծը դարձեալ բացասական է: *Համադրում է 19-րդ դարի աստրիացի գրող Յեակովի հետ: Գեղէն Տէր-Մինասեանը Լեոնահայաստանի գոյամարտի տարիներին, երբ Նժդեհի հետ էր, դրուատում էր նրան ու մեծարում՝ անուանելով Խուստուպի արծիւ, եօթն անգամ սիրուած հրամանատար, երկրորդ Դաւիթ Բէկ, հերոս ...*: Արտասահմանում, դառնալով Խորհրդային Հայաստանի մատակարարը նաւթի գծով, 1935թ. *Ապագայ* պարբերականում տպագրում է *Յուշեր անցեալից* յօդուածաշարը, որտեղ վատաբանում ու զրպարտում է Նժդեհին: Գրող Յեակովը նոյնպիսի փոփոխամիտ վարք է դրսևորում Ֆրանսիսկ թագաւորի եւ Գարիբալդիի վերաբերեալ՝ մե՛րթ փառաբանելով մէկին, մե՛րթ միւսին՝ նայած տուեալ ժամանակահատուածում ում ձեռքում էր Նեապոլը:

**դ. Ժողովրդի հաստուածներ:** Համադրումը պարզաբանում է հասարակական խաւերի, կուսակցութիւնների, ներքաղաքական ուղղութիւնների էութիւնը: Եւ այստեղ յատկապէս, տարբեր առիթներով անդրադառնում է ազգային մշակոյթի, անկախութեան գաղափարի հակառակորդներին՝ դրանց անուանելով *ներքին թշնամի*: Էութեան պարզաբանումը կատարում է տարբեր համադրութիւններով: *Յեղի ոգու շարժը* աշխատութեան մէջ նրկարագրում է, թէ ինչպէս Տրապիզոնում եղեռնի տարիներին թուրք խուժանը կտրում է մի հայ մարդու ձեռքը ու դրանով խփում գոհի երեսին. «Ճիշտ այսպէս, թրքօրէն կվարուի մեզ հետ եւ ներքին թշնամին: *Հակադաշնակցականը–դա կտրուած ձեռքն*

*է հայութեան, որով թշնամին կ'ապտակէ մեզ»*<sup>1</sup> [Հ, էջ 174]: Նոյն աշխատութեան մէջ մէկ այլ համադրումով յիշատակուում է Հռոմի պատմութիւնից յայտնի Տարկովինոսի կնոջ արարքը, որը կառքով գնալիս տեսնում է փողոցում ընկած հօր դիակը եւ չի էլ ցանկանում ճանապարհը շեղել, այլ քշում է կառքը եւ անցնում՝ տրորելով հօր դիակը: Նոյնն է կատարում հակաազգայնականը՝ հայ գաղթաշխարհով քշում է իր կառքը՝ մոռանալ տալու համար Լոզանը, հայ դատը, մեր եղեռնը [տե՛ս Հ, էջ 176]: *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ Հիսուսի դատի տեսարանն է: Ամբոխը պահանջում է ազատել աւագակ Բարաբբային եւ խաչ հանել Յիսուսին, որովհետեւ հռոմեական թագաւորից բացի ուրիշ թագաւորի չի ճանաչում. «Նոյն տխուր տեսարանը եւ այսօր, մեզանում: Նոյն ամբոխը, դատաւորը՝ նոյն: Տարբեր է միայն գոհը գերագոյն: Այսօրանը Հիսուսը չէ, այլ՝ մեր Անկախութեան Գաղափարը: Նոյն աստուածասպան ամբոխն է ... որ օտարի միջոցով խաչել է տա-լիս ... ինչ որ ազգային է... [Հ, էջ 121]:

Նժդեհը այն համոզմունքն ուներ, որ մտաւորականութիւնը ժողովրդի առաջնորդն է, պարտաւորական չպէտք է լինի այն, նրա տրամադրութիւնը փոխանցում է զանգուածներին: Նոյն աշխատութեան մէջ խորին հիասթափութեամբ կատարում է յետեւեալ համադրութիւնը. «... նա առանց մի հատիկ իսկ հարւած փոխանակելու փորձի, թշնամուն յանձնեց իր դիրքերը, որին այնքա՛ն մեծացրել էր տկարի իր երկչոտ երեւակայութիւնը: Նա բառացիօրէն բաժանեց ճակատագիրը ծանօթ առակի այն դժբախտ եղնիկի, որը օդի մէջ քամուց տարբերուող փետուրից սարսափահար, նետում է ... ուղղակի որսորդի գիրկը» [Հ, էջ 133]:

**է. Ժողովուրդներ, ազգեր:** Եթէ նախորդ ենթագլխում ցոյց էին տրուում ժողովուրդների հակադիր յատկանիշներ, ապա շարադրանքի ներկայ եղանակով ցոյց են տրուում ընդհանրութիւններ, նմանութիւններ: Մասնաւորապէս, եթէ ճապոնացին հակադրում էր եւրոպացուն, ապա *ճապոնացու եւ հայի* միջեւ

---

<sup>1</sup> Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

համադրությամբ մատնանշում են ընդհանուր յատկանիշներ: *Ցեղի ոգու շարժը* աշխատութեան *Նոր հայր – վաղուայ առաջնորդը* ենթազվխում Նժդեհը դիտարկում է, որ «Ցեղաշունչ Հայու, ինչպէս եւ Ճապոնացու համար ... Հայրենիքը միայն սեփական երկրամաս չէ ... այլ՝ սրբազան երկիր, «ուր գտնուում է աճիւնը նախահայրերի» ... Ճապոնիան ունի իր Բուշիդօն, մենք՝ մեր Վահագնը: Նա արիապաշտ է, մենք՝ էինք: Նա ցեղապաշտ է, մենք պիտի դառնանք՝ չկորչելու համար» [Հ, էջ 182]: Լրացնենք այս շարքը. Ճապոնացին ունի իր սրբազան լեռը՝ Ֆուձիյաման, մենք՝ մե ը սրբազանը՝ Արարատը:

Տարբեր առիթներով արդեն երեւաց, որ հարցերի, իրավիճակների, երեւոյթների պարզաբանման նպատակով Նժդեհը դիմում է նաեւ տեսարանների նկարագրութեան՝ զուգայեռ անցկացնելով ներկայացուող տեսարանի ու քննուող հանգամանքի միջեւ: Այսպիսի մի տեսարան նոյնպէս կայ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ՝ բացատրելու համար հակառակորդ ազգերի հարաբերութիւնները: Անտառում միմեանց են հանդիպում վագրն ու առիձը, հաւասարապէս միմեանց ահաբեկում, ապա զգուշօրէն, համարեայ աննկատ ոտքերը յետ-յետ տանելով հեռանում, մինչեւ յարձակողական ոստիւնի անհնարին լինելը, ապա միայն թիկունք դարձնում. «Նոյնը, գրեթէ նոյն բանն է կատարում եւ ազգերի կեանքում, երբ նրանք երես առ երես սպառազէն հանդիպում են իրար, իրենց երկրի սահմանագլխին: Վա՛յ նրան, ով տկարութիւն ցոյց տվեց. մա՛հ է: Վա՛յ նրան, ով անկարող եղաւ անթարթափ ու շեշտակի նայելու հակառակորդի աչքի մէջ. մա՛հ է ստոյգ» [Հ, էջ 132]:

**գ. Համամարդկային հարցեր:** Նժդեհին միշտ էլ զբաղեցրել են մարդկութեան խնդիրները, ժողովուրդների ճակատագրերը՝ կապուած պատմական իրադարձութիւնների, յեղափոխութիւնների, պատերազմների, ատումային ռումբի, բարոյահոգեբանական համընդհանուր ըմբռնումների հետ: Համադրման եղանակով նա անդրադարձել է երջանկութեան հիմնահարցին, որ ձրգտումների առարկայ է իւրաքանչիւր անհատի եւ մարդկութեա-



նը՝ ընդհանրապես: Իսկ համադրման մի եզրը նորից տեսարան է, պատկեր, որ խորհրդանշում է երջանկությունը: Կանացի մի կերպար, մի ըղձանույշ՝ կախարդական գործեամբ օժտուած, ժպտում է ու փախչում, նրա յետեւից վազում են հազարներ ու հազարներ՝ ջանալով արժանանալ ժպիտներին ու շնորհներին: Խելայեղօրէն այդ էակին ձգտողները, սակայն չարժանացածները, դիմում են ինքնասպանութեան (հեղինակը թուարկում է եղանակները): «Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը: - Որովհետեւ միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռի երջանկութիւնը: Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը եւ իր կեանքը վերածեց դժոխքի» [Հ, էջ 93]:

### ***§ 23. Լեզուական միջոցներ***

Յուզաարտայայտչական, ոճախմաստային առումներով Գարեգին Նժդեհի երկերի շարադրանքում իրենց կարելոր նշանակութիւնն ունեն լեզուական միջոցները՝ քերականական ու շարահիւսական: Կանգ առնենք դրանց վրայ առանձին-առանձին:

***ա. Անցեալ կատարեալը ըղձական սպառնիի փոխարեն:***  
Շարադրանքի տարածուած եղանակներից են: Ապագայում ենթադրուող սպասելի գործողութիւնը ներկայացում է իբրեւ արդեն կատարուած, վերջացուած: Սրանով ընդգծում է գործողութեան յանկարծական անակնկալ բնոյթը, ուրեմն եւ՝ թողած խոր ազդեցութիւնը: Այսպէս. ցոյց տալու համար հասարակութեան ընտրանու վարքի կարելորութիւնը զանգուածների համար, Նժդեհը Խօսակցութիւն մը գորավար Գ. Նժդեհի հետ շեղ յօդուածում գրում է. «... բաւական է, որ ընտրանիին պատկանող մէկը կոպտօրէն **մեղանչեց** իր կոչումի դէմ – այլեւս քանդուած համարէք ժողովրդի հաւատքը, համարումը, բարոյականը» [Հ, էջ 649-650]: Առաւել սովորական շարադրանքում ենթադրում է *մեղանչի* բայածերը: Սակայն դա նշանակում է դեռեւս կատարելի գործողութիւն, այդ պատճառով հոգեբանական անհանգստու-

թիւնն էլ համեմատաբար թոյլ է: Ուժգին է հեղինակի ցանկութիւնը մեր ժողովրդին տեսնելու յեղափոխուած, ոչ թոյլի հոգեբանութեամբ. «Մարդկութեան վերաբերմունքը դէպի մեզ կը փոխուի, երբ **հոգեփոխուեց** մեր ժողովուրդը, երբ մի անգամ ընդ միշտ **հասկացանք**, թէ ազգերի դժբախտութեան գլխաւոր պատճառը իրենց շրջապատող ժողովուրդների մէջ չէ, այլ՝ իրենց թոյլի հոգեբանութեան ...» [Հ, էջ 446]: Ասել՝ **հոգեփոխուի, հասկանանք**, քիչ է, ասելի ճիշտ՝ ուշ է. անցեալ կատարեալի գործածութիւնը շտապեցնող է, արագացնող:

Այսպիսի ոճի շարադրանքի նախադասութիւններում լինում է նաեւ **եթէ** ստորադասական շաղկապը՝ երկրորդական լրացուցիչ նախադասութիւններով: Թւում է՝ ասելի է շեշտում բայաձեւերն ըղձականով արտայայտելու պահանջը: Բայց Նժդեհը դիմում է անցեալ կատարեալին՝ դիտել տալով գործողութիւնն իբրեւ կատարուած փաստ. «Իսկ **եթէ** թրքութիւնը, հա՛յ պարտուողական, կարիք չզգաց քո ներումի ստրկական արտայայտութեան եւ **թքեց** քո եւ քո ներումի երեսի՛ն: Իսկ **եթէ** թրքութիւնն **ասեց**. «Սրի քաշելով հայութեան կէտը՝ ես արձանի ու պսակի արժանի գործ եմ կատարել իլլամի համար: Եւ **եթէ** վաղը սուրս **երկարեց** քո միւս կէսի վզին ... յաղթականի իրաւունքն է՝ զրկել պարտուածին փոխվրէժի դիմելու ... հնարավորութիւնից» [Հ, էջ 135-136], «Եթէ դարաւոր թշնամիդ այսպէ՛ս **խօսեց** քեզ հետ...» [Հ, էջ 136]:

Աւելին. այլեւայլ նախադասութիւններում **եթէ, որ** շաղկապների հետ գործածուում է *վաղը* ժամանակի պարագան: Եւ այդուհանդերձ, Նժդեհը դիմում է անցեալ կատարեալ ժամանակին, գործողութիւնը համարում է կատարուած, ինչն առաջացնում է անմիջաբար համապատասխան հակազդեցութեան զգացողութիւն. «**Եւ որ վաղը**, երբ արտաքին վտանգը Հայաստանի դռները **զարկեց**, այդ անդրօշակ տարրերը մեծապէս պիտի վտանգեն մեր քաղաքա-հոգեբանական թիկունքը» [Հ, էջ 190]: «**Եթէ վաղը**,

---

Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

վերստին, արտաքին վտանգը **պայթեց** հայ ժողովրդի գլխին ...» [Հ, էջ 100]:

**բ. Յետադաս որոշիչ:** Որպես ոճական միջոց՝ յետադաս որոշիչը արձակում նորույթ չէր: Սակայն ընդհանուր առմամբ, հեղինակներն այն գործածում են որոշակի դրուագներում, իբրև տուեալ խօսքաշարում պահանջուող գրական հնար: Գ. Նժդեհի երկերում յետադաս որոշիչը մշտագոյ է, շարունակ գործածուող թէ՛ քնարական, թէ՛ հրապարակախօսական, թէ՛ գիտական գործերում, ինչպես նաև նամակներում ու պաշտօնական գրութիւններում, կոչերում: Սա շարադրանքի եղանակ է, գրելաձեւ, արտայայտուելու միջոց: Ինչ խօսք, առաջին հերթին յետադաս որոշիչը անական է: Կատարենք մէջբերումներ, առաջին խումբ օրինակներում յիշատակելով գրուածքների վերնագրերը, ուշադրութիւն դարձնելու համար դրանց ժանրային բնոյթին. «Ա՛հ, նա սիրում էր ե՛ւ արշալոյսը **պուրպուր**, ե՛ւ վերջալոյսը **տխուր** ...» (*Դաշնակցութեան պանթէոնը, Տապանագիր*) [Հ, էջ 413], «Հայրենիքի չափ նուիրական է եւ պատերազմը **հայրենական**» (*Բանտային գրառումներ, Հայրենիք*) [Հ, էջ 346], «Նման մթնոլորտում են յղացում հերոսները եւ ծնունդ առնում գործերը **հերոսական**» (*Բանտային գրառումներ, Ժողովուրդը*) [Հ, էջ 344], «Այսօր կայ մեղքի եւ տկարութեան գիտակցութիւնը՝ **սպանիչ**» [Հ, էջ 675], «Ոչի՛նչ ուներ Սիւնիքը ... կռիւ վարելու համար ... *կար մեր ցեղային բարոյականը՝* զենքերի զէ՛նքը **հրաշագործ**» (*Յեղի ոգու շարժը, Եռագոյնը կարմիր լաթի դէմ*) [Հ, էջ 163], «Այժմ, երբ ... կեանքիս աշունն եմ բոլորում, դարձեալ նոյն իդէալական արժէքներն [են] սնուցանում հայ մարդու իմ սէրն ու հպարտանքն **արդար**» (*Անձնավկայութիւն*) [Հ, էջ 657]: Առաջին ստեղծագործութիւնը քնարական է, յաջորդ երեքը՝ գիտական, իսկ վերջին երկուսը՝ յուշագրական: Յետադաս որոշիչը, որ բնորոշ է չափածոյ խօսքին, գործածուելով արձակում, իր հետ բերում է բանաստեղծականութիւն, երաժշտականութիւն, արտայայտչականութիւն: Սա առաւել էւս, երբ որոշիչները բազմակի են. «Այսպիսին

---

Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

էին Մամիկոնեանները՝ **հայրենահո՛գ, հերո՛ս, ասպե՛տ**» [Հ, էջ 404], «Երկնահաս կատարների վրայ յայտնուում է արծառհայեաց մի տղամարդ՝ **ջահել, գլխաբաց, գանգրահեր**» [Հ, էջ 143], «Հայոց ընդհանուր նկարագրի հիմնական որոշիչներից մեկն էլ շինարարական տենչանքն է՝ **անշէջ, անսպառ**» [Հ, էջ 355]:

Ածականից բացի, ինչպէս արդէն կարելի էր նկատել վերը բերուած որոշ օրինակներում, որպէս յետադաս որոշիչ հանդէս են գալիս նաեւ այլ խօսքիմասային բառեր՝ թէ՛ ինքնուրոյն, թէ՛ բառակապակցութիւնների տեսքով՝ գոյականը, թուականը, յատկապէս՝ դերբայներն ու դերբայական դարձուածները. «...կ'ադմըկէին պահանջելով ազատել Բարաբբային **աւագակ** եւ խաչ հանել Յիսուսին» [Հ, էջ 177], «Տեսաւ, թէ ինչպէ՛ս ... կը պղծուէին եկեղեցիները, վանքերը, գրադարանները **հագա՛ր**» [Հ, էջ 613], «Միայն այսպիսով կարելի է կանխել աղէտը՝ **նախապատրաստուող**» [Հ, էջ 702], «Մեր կեանքում, հրապարակի վրայ, յաճախ կը տեսնեք կեղծիքը՝ **ճշմարտութեան քղամիդ հագած**» [Հ, էջ 646], «Հոգուս այքերով տեսնում էի պարտութիւնը՝ **կախուած մեր գլխին**» [Հ, էջ 166]: Կան հատուածներ, որտեղ միեւնոյն նախադասութեան մէջ միատեղ գործածուած են թէ՛ նախադաս, թէ՛ յետադաս որոշիչներ՝ ի նպաստ խօսքի բանաստեղծականութեան. «**Պռոտ** Բաբելացին, Հոմեացիները **կաշառող, աղուէսաբարոյ** Սասանները, Բիզանդացիք **նենգ**, Արաբն ու Սկիւթացին **ընչաքաղց**, Ալանները, Քուշանները, Կովկասեան լեռնականները **աւարառու** – այդ բոլորի եւ շատ ուրիշների հետ, անհամար անգամ հարուածներ ու վերքեր փոխանակեցինք» [Հ, էջ 164]:

**Յետադաս յատկացուցիչ:** Յետադաս յատկացուցիչը նոյնպէս բնորոշ է չափածոյ խօսքին, սակայն շատ տարածուած է Նժդեհի ստեղծագործութիւններում՝ անկախ ժանրից: Դարձեալ գրելաոճ է, արտայայտման եղանակ եւ խօսքաշարում բերում է բանաստեղծական շունչ ու երաժշտականութիւն: Ինչ խօսք, առաջին հերթին արտայայտուած է գոյանակով: Ինչպէս. «Մի նոր գիրք պիտ դրի մեր ժողովուրդի ձեռքը – Աւետարանը **Արիների**» [Հ, էջ 65], «Հայն իր Վահագնը ունէր – աստուա՛ծը **քաջութեան**» [Հ, էջ

354], «... պատռելով օձիքս՝ զգացի ցարը ո՛ղջ **ազգի ...**» [Հ, էջ 341]:

Ինչպէս եւ յետադաս որոշիչի պարագայում, յետադաս յատկացուցիչը եւս մտովի բերելով համապատասխան գոյականից առաջ, խօսքաշարում զգալի է դառնում շարադասութեան աննրպաստ փոփոխութիւնը, ոգեշնչուածութեան պակասը: Ինչպէս նախորդ կետում, այժմ էլ դեր է խաղում Նժդեհի մշտակայ ձգտումը՝ յիշեցնելու գրաբարը: Յետադաս յատկացուցիչ գործածելու իրողութիւնն աւելի շեշտում է բազմակի լինելու պարագայում. «Հայուն յատուկ է սրբութեան զօրաւոր զգացումը՝ աղբիւրը հոգեւոր անսպառ **ոյժի, նուիրումի, պաշտամունքի**» [Հ, էջ 371], «...Դա (ցեղակրօնութիւնը) պաշտամունքն է ցեղի – իր **ոյժի, յանճարի եւ բազուկի**» [Հ, էջ 243], «...Ահարոնեանը չուշացաւ հայ հոգեբանութեան պատուաստել հիացումը **պայքարի** եւ քաղցրութիւնը **յաղթանակի**» [Հ, էջ 147], «Տեսաւ խուժողուժ գործը **տապարի, եաթաղանի, կապարի ...**» [Հ, էջ 493]: Որոշակի հատուածներում նոյն նախադասութեան մէջ հանդիպում են թե՛ նախադաս, թե՛ յետադաս յատկացուցիչներ. առաջինի գործածութիւնից ընդգրծում է երկրորդը՝ լինելով հակադրութիւններ. «... **պատանու** իմ միտքն ու սիրտը իրենց սնուցիչներն ունէին. - Արարա՛տը ... - Հայ լեզուն ... - Եւ շինարարական խանդը **հայու ...** Սրբազան երրորդութիւն» [Հ, էջ 657]:

Այլ խօսքի մասերին պատկանող բառերից, որպէս յետադաս յատկացուցիչ, գործածուած է դերանունը. «Սպեղանի կը սպասէր երկիրը **մեր** – նոր վերքեր ստացաւ» [Հ, էջ 449], «... կը մոխրանային հազարամեայ օրհնութեամբ լեցուն գիւղերը **մեր**, կպրդունէին վանքերը ...» [Հ, էջ 493]: Ահա նաեւ գոյականաբար գործածուած ածականով արտայայտուած յետադաս յատկացուցիչ. «...իրենց լիաբուռն բաժինն են բերած ... մնալով հիացողն ու խնկարկողը իրենց ցեղի **հերոսականի**» [Հ, էջ 79]:

**դ. Պարբերայթ:** Ինչի մասին էլ, որ գրում է Գ. Նժդեհը եւ ինչ ժանրով էլ, որ գրում է, գրում է յուզավառ, բառերն ասես դիպչում են իր նյարդերին. խօսքային իրավիճակով պայմանաւորուած՝

ոճը դառնում է հանդիսաւոր ու ոգեշունչ, մտքերը՝ յորդաբուխ, որոնք իր պաշտպանած Սինիքի լեռնային վտակների նման վայր են իջնում Բարձունքներից ու գնում խառնուելու ընդհանուր շարադրանքի ծովին: Այսպիսի խօսքը պետք է որ կազմուած լինէր Բազմաբարդ նախադասութիւններից, մասնաւորապէս՝ դրանց մի տեսակից՝ պարբերոյթներից: Գ. Նժդեհի ստեղծագործութիւններում պարբերոյթները ըստ կառուցուածքի լինում են երկանդամից հինգանդամ (հագուադէպ կարող են լինել եւ աւելի բազմանդամ): Ըստ ներքին շարահիւսական բնոյթի՝ մեծագոյն մասամբ պարբերոյթները լինում են զիջման, պայմանի, ժամանակի, ենթակայական: Պատահում են նաեւ այլ կարգի: Պարբերոյթների կամ այլ ծաւալուն բազմաբարդ նախադասութիւնների միջոցով Նժդեհը տալիս է որեւէ ժամանակահատուածի ընդհանուր բնութագիրը, հասարակական-քաղաքական երեւոյթի գնահատականը, բարոյահոգեբանական ըմբռնումների ամփոփ էութիւնը ...՝ անդրադառնալով կեանքի ինչպէս դրական, այնպէս էլ արատաւոր կողմերին, որոնք, թուարկումների ձեւով ամփոփուած լինելով մի շրջանակում, դառնում են առաւել տեսանելի՝ ընդունելի կամ մերժելի: Քանի որ պարբերոյթները մեծ տեղ են զբաղեցնում, ստորեւ կբերենք մի քանի բնոյթի միայն մի-մի նմուշ.

**Զիջման (երկանդամ).** «Ես թէեւ միանգամայն դէմ էի երկրի Հայաստանի Հանրապետութիւն կոչելուն եւ տասն եւ մէկ հոգուց բաղկացած նախարարական կազմին (որոնցից երեքն առանց պաշտօնի էին), մի տեսակետ, որ ես բացորոշ յայտնել եմ դեռ Տաթևի ժողովում, որին մասնակից են եղել մեր բոլոր ընկերները, որովետեւ ժողովը պարզապէս պիտի տեսներ, որ կառավարութեան ղեկը իր վստահած մարդկանց ձեռքին չի, **բայց** իբրեւ ընկերներից կրտսերն ու իբրեւ կուսակցական դիսցիպլինային ենթակայ մէկը, աւելի ակամայից լռում եմ այն համոզմամբ, որ գոնէ կառավարութեան ընդհանուր ղեկը ինձանից խլում են, բայց տալիս են մի մարդու՝ ընկ. Ս. Վրացեանին, որը կարող կլինի իր փորձառութեամբ օգտակար լինել երկրին, եթէ միայն նա մնայ եւ

ձեռք ձեռքի տուած գործի մեզ հետ»<sup>56</sup>: Մի պարբերոյթով ամփոփուում են իշխանութեան փոխանցումը Լեոնահայաստանից Հայաստանի կառավարութեանը եւ կատարուածի վերաբերեալ Նժդեհի բռնած դիրքը: Պարբերոյթի երկու գլխաւոր մասերը կըշտական ներդաշնակութեան մէջ են, մի հանգամանք, որ հեղինակի գործածած որոշ պարբերոյթներում չի պահպանուում:

**Պայմանի (քառանդամ).** «Վատերը չեն հասկանում, որ եթէ անհաւասար ոյժերի միջեւ տեղի ունեցած ամէն կոնի համարուէր արկածախնդրութիւն՝ թուապէս տկարի հաշուին, որ եթէ թուապէս տկարին զլացուէր յանդգնելու, հակահարուածելու իրաւունքը, այն ժամանակ կը մեռնէր արիութիւնը, է՛լ Աւարայրներ ու Վարդաններ չէինք ունենայ, է՛լ հերոսներ ու հերոսականներ չէին ստեղծուի, զոհն ու զոհաբերութիւնը կը կորցնէին իրենց անունն ու վեհութիւնը, Հայրենիքն՝ իր պաշտպանը, արդարութիւր՝ իր ախոյեանը, իրաւունքն՝ իր տէրը. այն ժամանակ աշխարհը կը կորցնէր այն ամէնը, որ հերոսական է ու վսեմ մարդկային ցեղերի պատմութեան մէջ, այն սրբազանը, որով սնուում է եւ դաստիարակուում մարդկային հոգին» [Հ, էջ 332-333]: Ամփոփուած է գաղափարախօսական մի դրոյթ՝ թոյլերի ընդվրձելու խիզախութիւնը եւ արդարացիութիւնը: Կշռական ներդաշնակութիւնը բաշխուած է հաւասարապէս չորս անդամների վրայ:

**Ժամանակի (քառանդամ).** «Այսօր, երբ մեր Հայրենիքում կարմիր գերեզմանափորները հայոց ցեղն ու աստուածն են թաղում, եւ նրանց բրիչների ձայնն արձագանքում է խորհրդային գրծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, երբ թուրքը՝ Լոզանից ձեռք բերած անպատժութեան արտօնագիրը ծոցը՝ բաց ճակատ շրջում է արեւի տակ եւ իր եաթաղանից մազապուրծ հայութեան ոչնչացումը որոճում – այս, մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն են հսկում մեր հաւաքական ճակատագրին – թո՛ղ ցեղակրօնութեան խօսքը հնչէ որպէս կազդուրիչ կանչ» [Հ, էջ 489]: Այսպիսին է *Ցեղակրօնութիւնն իբր*

---

<sup>56</sup> Իմ բացատրութիւնը Լեոնահայաստանի անկման պատճառների մասին, ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ.. 109-162:

*յաղթականի զօրոյթ* յօդուածի վերջնամասը: Մեփական մեկնաբանութեամբ տրուած է 1932 թ. հայոց պատմական իրավիճակի համայնապատկերը: Պարբերոյթի առաջին երեք մասերը հաւասարակշիռ ներդաշնակութեան մէջ են, չորրորդ մասը, որ գլխաւորն է՝ կարճ է՝ մէկ նախադասութեամբ, ոչ ներդաշնակ նախորդներին, թէւ հնչում է հատու եւ վճռական: Ծաւալի պակասը զգալի է, թէւ յօդուածի յաջորդող նախադասութիւնները՝ սոյն պարբերոյթից դուրս գալիս են լրացնելու հեղինակի մտքերը:

*Ենթակայական (հնգանդամ)*. «**Թուրք սպաների**, ինչպէս և **Էդիֆ բեյի** եւ **ուրիշների ներկայութիւնը** Գողթանում, **սրանց՝ Ադրբեյջանի** թելադրութեամբ կազմակերպուած յաճախակի **յարձակումները** Գողթանի եւ Սիսեանի հայ գիւղերի վրայ, **սրանց** վերջին օրերի ընթացքում ցոյց տուած **ակտիւութիւնը**, երբ Ադրբեյջանը կռիւ է սկսել Չանգեզուրի դէմ, վերջապէս **սրանց** պատերազմական **գործողութիւնները** Չանգեզուրի թիկունքում հայ տարրի բնաջնջմամբ, Նախիջեւանի եւ Ադրբեյջանի միջեւ կապ ստեղծելու նպատակով, կրկնում եմ, **այդ բոլորը** ստիպեցին Գենւազի, Ղափանի եւ Տաթեւի զօրամասերին վերջ դնել Նախիջեւանի նուաճողական ծրագիրներին, այսինքն՝ մաքրել Գեղւաձորը (որը այսօր թեւաւորում, դէպի իրեն է քաշում թէ՛ Նախիջեւանի, թէ՛ բուն Ադրբեյջանի ոյժերը) եւ այսպիսով, մի անգամ ընդմիջտ ապահովել Չանգեզուրը»: Պարբերոյթը մարտական գործողութիւններ սկսելու, 30.11.1919 թ. հրամանից է՝ ընդգրկում է յարձակման հիմնաւորումը եւ նպատակը: Գլխաւոր՝ հինգերորդ մասը վերջում է, կշռական տեսակետից ներդաշնակ է նախորդող չորս մասերին:



## § 24. Երկխոսություններ

Գ. Նժդեհը շարադրանքի այս եղանակին է դիմում քննուող հարցը, գաղափարախօսութեան դրոյթը, իրողութիւնն ամենամատչելի կերպով բացատրելու համար: Յայտնի է, որ այսպէս էին վարում դեռեւս հին աշխարհում: Իմաստասերը հարց ու պատասխանի միջոցով էր շարադրում աշխատութիւնը կամ աշակերտներին մատուցում իր ուսմունքը: Նժդեհը, կիրառելով այս վաղուց ի վեր ճանաչուած մեթոդը, երկխօսութեան մէջ է մտնում իրական անձանց, իր ընթերցողի հետ կամ ընտրում մի երեւակայական գրուցակից, նրանց բերանով առաջ է քաշում նիւթի խրթին կողմերը, եւ ինքն էլ վերլուծում, պարզաբանում է դրանք: Ամենափոքր երկխօսութիւնները կազմուած են մի քանի նախադասութիւնից: Բայց հարց ու պատասխանի ձեւով կառուցուած կան մեծ հատուածներ կամ ստեղծագործութեան մի ամբողջ գլուխ: Հանդիպում է տարբեր ժանրերում՝ թէ՛ յուշագրական, հրապարակախօսական, թէ՛ գիտական: Վերջինի դէպքում ընդունում է փաստական հաւաստող գրելաոճը եւ ապա անցնում գեղարուեստականի:

Այժմ անցնենք կոնկրետ երկխօսութիւններին՝ կապուած կիրառութեան երեք կարգի դէպքերի հետ:

**ա. Ներկայացում են հասարակական այս կամ այն ոլորտում տիրող տրամադրութիւնները՝ տուեալ իրադրութիւնում վճռորոշ հարցերի, անելիքների նկատմամբ:** Այդպիսի մի դրուագ կայ *Հայ-բուլղէիկեան կռիւները* յուշագրութեան առաջին գլխում, ուր ներկայացում է կարմիր բանագնացի եւ Նժդեհի միջեւ տեղի ունեցած երկխօսութիւնը: Կարմիր հրամանատարութիւնը պահանջում է ճանապարհ տալ՝ անցնելու Ջուլֆա: Միւնիքի ժողովուրդը տրամադիր չէ այդ անելու, ուստի Նժդեհը մերժում է: Բուլղէիկների իրական նպատակը Միւնիքը գրաւելն է:<sup>57</sup>

Ինքնավար Միւնիքի կառավարութեան դիւանին 5.04.1921 թ. յղած գրութեան մէջ այնտեղ տիրող տրամադրութիւնները, մթնո-

<sup>57</sup> Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, թիւ 12, 1923 թ.:

լորտն ամփոփ ներկայացնելու համար՝ Նժդեիը դիմում է երեւակայական, կարճ, բայց բացահայտող երկխօսութեան. «Դիւանիդ բոլոր հակաժողովրդական որոշումները կայացուած են անդամների մի մասի յամառ ցանկութեան եւ միւս մասի անտարբերութեան շնորհիւ: « - Պիտի կործանե՛լ Սիւնիքը», - ասել է մի կողմը: « - Թող լինի, ինչ լինելու է», - ասել է միւս կողմը»:

Յաջորդ՝ արդեն գիտական խնդրի քննութիւնն ընդմիջող երկխօսութիւնը, յիշատակենք *Յեղի ոգու շարժը* աշխատութիւնից: Խօսելով անցեալում հայ զենքի փառքի, արիների համաստեղութեան եւ այն մասին, որ ժողովուրդը յաղթել է, երբ կռուում արթուն է եղել ցեղի ոգին, վկայակոչում է մեր պատմութիւնը: Յիշում է *Լեոնահայաստանի գոյամարտից* մի դրուագ՝ երկխօսութիւնը վաշտապետերի հետ, որոնք ընկճուել էին ռազմամթերքի ու սննդի պակասութիւնից: Բերում է օրինակներ հայոց պատմութիւնից՝ չնահանջելու, յյանձնուելու վերաբերեալ նախապատրաստում գիշերամարտի. « - Ես, - արդարանալ փորձեց վաշտապետս, - ես ուզեցի ասել, թէ այլեւս ռազմամթերք չունենք: - Բայց ո՞վ ասեց, թէ միայն առատ ռազմամթերքով են յաղթում: Շատ անգամ յաղթում է այն կողմը, որը նուագ է կրակում ... - Յարձակուե՛նք, - միաբերան կրկնեցին վաշտապետերս ...» [Հ, էջ 167]: *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ երեւակայական երկխօսութիւն է Հայաստանի անկախութեան պատմական կարեւորագոյն հարցի վերաբերեալ՝ մերժողական սերնդի եւ ժողովրդի միջեւ. « - Մեզ պէտք չէ՛ Անկախ Հայաստան, - դեռ այսօր էլ աղմկում են քո հայրերէն ոմանք: - Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգով թրջուկներիդ, դարձնի կատարեալ մարդ եւ Հայ, արժանի Անկախութեան, - պատասխանում է Մայիս Քսանութի շէնքը իր ուսերին կրող ժողովուրդ-հսկան: - Պէտք չէ՛, - յամառում են մտքի մանկաբարոյութեամբ բռնաձնները, առանց հասկանալու, թէ Անկախութիւնից զուրկ ժողովուրդները դատապարտուած են մահուան ... - Պէ՛տք է, - կարճ կտրում է ժողովուրդը» [Հ, էջ 79]:

*Բանտային գրառումներ* աշխատութեան մէջ ռազմական ու ռազմավարական նուրբ հոգեբանական տրամադրութիւններն արտայայտելու համար դիմում է արծւի ու լեռների հետ առնչուող յետելեալ երկխօսութեանը. «- Ի՞նչ կ'ուզէիր արծուից: -Նրա թեւերը,- ասաց արուեստագէտը: - Նրա բնագոյր,- յարեց ռազմիկը: Առաջինին պէտք էր թռիչք, երեւակայութիւն ստեղծագործ: Երկրորդին՝ արտաքին եւ ներքին սրատեսութիւն: Մէկը հետամուտ է գեղեցիկին, միւսը՝ յաղթանակին»: Քիչ անց. «-Ի՞նչ են ասում սարերն իրենց խրոխտ լռութեան մէջ,- հարցրի իմաստունի անուն հանած մի ծեր լեռնականի: Հայեացքը դէպի հայրենի կատարները դարձնելով, նա լռեց մի պահ՝ կարծես նրանցից պատասխան սպասէր, ապա իմաստաբանեց. - Լեռներն ասում են՝ պահի՛ր մեզ, լեռնակա՛ն, որ մենք էլ քեզ պահենք» [Հ, էջ 389]:

**բ. Բացատրում է գաղափարախօսական դրոյթներ, քննում տեսական հարցեր:** Հեղինակը կանխատեսում է նիւթի խրքթինութիւնը եւ շարադրանքը տանում հարց ու պատասխանի ձեւով: Որոշ դէպքերում ինքն է առաջ քաշում հարցը, որը գրուցակիցը խոստովանում է, թէ չի հասկանում: Ապա յաջորդում են մանրամասնութիւնները: Այլ դէպքերում գրուցակիցն է սկսում երկխօսութիւնը՝ իր հարցով: *Բանտային գրառումներ* աշխատութեան տասներորդ գլխում հեղինակը նախաձեռնում է յետելեալ ըմբռնման քննութիւնը «- ... հայրենիքներ կան, որոնց քաղաքական ու հոգեւոր սահմանները չեն համընկնում. ասենք՝ յունական, հրէական հայրենիքները: Ինչ վերաբերում է հայոց հայրենիքին, նրա հոգեւոր եւ աշխարհագրական տարողութիւնները իրար համեմատում են ճիշտ այնպէս, ինչպէս Արարատն ու Արարատեան դաշտում ընկած մի համեստ բլուր: Օրուայ մեր հայրենիքը ... խոսացուած էութիւն է: - Չեմ հասկանում քեզ: - Ուրեմն, լսի՛ր, որ հասկանաս» [Հ, էջ 399]: Ապա խօսում է պատմական վայրերի մասին (Արարատ, Տարօն, Անի), որոնք օտարի ձեռքն անցնելուց յետոյ էլ չեն դադարում մերը մնալուց: Ապա յիշատակում է հայոց մեծերին, ճարտարապետութիւնը, մատեանները՝ մարդկութեան մշակոյթի մէջ ունեցած ներդրումները.

«- Ես էլ տեսնում եմ մեծութիւնը մեր հայրենիքի եւ բաժանում արժեքատրումդ ամբողջապէս: - Ուրախ եմ: Եզրակացնենք: Մեր հայրենիքի եւ ժողովրդի մեծութիւնը պէտք է չափել ո՛չ թէ Հայաստանի օրուայ անձուկ սահմաններով, այլ՝ հայ մտքի եւ արուեստի ազդեցութեան հորիզոններով: ... - Այժմ ես հասկանում եմ քեզ ...» [Հ, էջ 399-400]:

Որոշակի դէպքերում հեղինակը ինքն է իր խօսքը վերածում հարց ու պատասխանի. տալիս նիւթի էութիւնը բացահայտող հարցեր եւ ինքն էլ պատասխանում դրանց: Նշուած տեսակետից բնորոշ է *Ինչու տարօնականութիւն* յօդուածի երկրորդ մասը: Մէջբերենք այդ երկխօսութիւնը, որտեղ հեղինակի հարցն, ըստ էութեան, ուղղուած է հասարակութեանը. «... - Ճշդէնք հայ ճակատագիրը շօշափող խնդիրների կարեւորութեան չափը: Ո՞րն է, աւելի ճիշդ՝ ո՞րը պիտի համարել խնդիրների խնդիրը օրուայ հայութեան համար. - Հայութեան ու հայ հայրենիքի ինքնապաշտպանութիւնը: - Ի՞նչն է եղած դարերով այդ ինքնապաշտպանութեան մշտայադթ զէնքը. - Մամիկոնեանների ուխտաճութիւնը, բարոյականը, ոգին: - Իսկ ի՞նչն է եղած եւ պիտի լինի Դաշնակցութեան դերը: - Իր ժողովրդի համար ապահովել այդ զէնքը, որ անւանում ենք Տարօնականութիւն» [Հ, էջ 548]: Նոյն կերպ *Յեղային արթնութիւն* աշխատութեան *Խօսք հինգերորդ* գլխում շարադրում են ցեղակրօնի երեք սկզբունքները. «- Ի՞նչն է հայօրէն ճշմարիտը, - հարցին՝ ցեղակրօնը պէտք է պատասխանէ. - Հայաստանը կար եւ պիտի վերականգնուի Թուրքիոյ անդամահատութեամբ: - Ի՞նչն է հայօրէն բարի: - Անընտրողաբար հարուածել թուրքն ու Թուրքիան: - Ի՞նչն է հայօրէն գեղեցիկը: - ... հասունանալ ցեղի մղելիք ճակատամարտերի համար» [Հ, էջ 500-501]:

***զ.Ներկայացնում է քննուող հարցի վերաբերեալ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող կարծիքները, տեսակետները:***  
Շարադրանքը կատարում է խօսակցութեան եղանակով: Վերջում միջամտում է հեղինակը՝ հայտնելով սեփական կարծիք: Այս կերպ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան մէջ

202ափում է այնպիսի կնճռոտ հարց, ինչպիսին Կարսի անկումն էր. «...Կարսի անկման պատճառների մասին... Կարծիք յայտնեց մտաւորականը, սրճեփը, դիւանագիտական մարզանքներով զբաղւողը, նպարավաճառը, սափրիչը. չմնաց արհեստ եւ արւեստ... - Հայաստանի կառավարութեան անհեռատեսութեան կը պարտինք Կարսի անկումը. պատերազմը դիւանագիտօրէն կազմակերպուած չէր,-ասացին եւ ասում են ոմանք: - Զինւորական նախարարի ապիկարութեան երեսից ընկաւ Կարսը, որովհետեւ զօրք չկար... - Կարսը թշնամուն յանձնեց բարձր հրամանատարութեան անճարակութիւնը. զօրք կար, բայց կուեցնող չկար:

Սրանով չէ սպառուում մեղադրականը» [Հ, էջ 83]: Յայտնելով իր կարծիքը՝ Նժդեհը ուշադրութիւն է դարձնում հինգ հանգամանքի վրայ՝ կարծես շարունակելով խօսակցութիւնը, հինգ անգամ էլ սկսելով նոր տողից ու գծիկով: Ահա վերջինը՝ ամփոփիչը. «- Կարսի ամօթը Հ. Հանրապետական կառավարութեանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդին» [Հ, էջ 85]:

Մէկ այլ կարծիք՝ մէկ այլ կնճռոտ հարցի վերաբերեալ: Շարադրանքը կառուցուած է հեղինակային հարց ու պատասխանի եղանակով. «- Սրանք կ'ուզէին, որ ... հայութիւնը մնար չէզոք եւ կը հաւատան, թէ թրքութիւնը ... պատերազմի օրերին կարող էր դառնալ մարդ եւ հայասեր... - Արդե՞՞ք մեր բացարձակ չէզոքութեան դէպքում ... թուրք կառավարութիւնը պիտի չտեղահանէ՞ր հայութիւնը: - Նա պիտ վարւեր մեզ հետ ճիշտ այնպէս, ինչպէս որ վարւեց: - Ինչո՞ւ: - Որովհետեւ թուրքը աւելի դրական կարծիք ունէր եւ ունի հայ ցեղի մասին, քան մեր հայանուն ստրկամիտները, որոնք ազնւութեան վկայական տալով թրքութեան ...» [Հ, էջ 81]:

## § 25. Աստյոներ

Այստեղ հարկ է ընդգծել Գ. Նժդեհի՝ որպէս հեղինակի, մի աչքի զարնոյ յատկանիշը եւս, այն է՝ իր վերլուծութիւնների ընթացքում հասնել խոր ընդհանրացումների: Քննութեան առնելով անհրաժեշտ նիւթը՝ նա տալիս է առարկաների եւ երեւոյթների համապարփակ բնութագրումը, հասարակական իրավիճակների, աշխարհընկալման ընդհանուր գնահատականը, խորափանցորէն երեւան հանում առարկաների ու երեւոյթների միջեւ եղած խիստ հետաքրքրական առնչութիւնները, բացատրում մեր ժողովրդի ներկայի եւ ապագայի ընթացքն ու պայմանները: Եւ բոլոր այս ընդհանրացումները բովանդակային առումով հազեցած, բայց հակիրճ նախադասութիւններով:

Այստեղից Նժդեհի հակումը դեպի թելաւոր խօսքերն ու առածները: Այսպէս. 1943 թ. *Ռազմիկ* պարբերականում տպագրուած իր *Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ* յօդուածի մասերից մէկում, որը վերնագրուած է *Ազգային բարոյականութիւն*, տրւում է հայ մարդու էութեան տարապատկերը. նշում են ցեղորէն բարոյական, հասարակայնօրէն առողջ եւ արդար, իդէալիստ, հպարտ, աշխատասէր, ազգայնօրէն զգաստ, տղամարդկային ասպետականութեամբ օժտուած հատկանիշները: Բերում են յիշեալ յատկանիշներից իւրաքանչիւրը հաւաստող հայկական ժողովրդական առածներ:

Բայց ընդհանրացումներ կատարելու նրա առաւել սիրած միջոցը ասոյթն է (աֆորիզմ): Նախ արտայայտած այս կամ այն մտքի հաստատման երեւոյթների, ըմբռնումների պարզաբանման ու գնահատման նպատակով ինքը դիմում է հայ եւ այլազգի հեղինակներին: Ահա մի քանի թեմայ եւ դրանց հետ կապուած մի շարք անուններ, որոնցից, ըստ հարկի, կատարուած են ասոյթների մեջբերումներ:

**Հայրենասիրութիւն.** Ռ. Որբերեան, Լամբնէ, Միշելէ, Լամարտին, Ժորէս, Նիցուշէ:

**Պատերազմներ.** Ֆորել, Գուստաւ Ադոլֆ, Վ. Հյուգո, Ա. Ֆրանս, Ն. Բոնապարտ:

**Ազգ, ժողովուրդ.** Մոնթէն, Ռուզելտ, Մասարիկ, Բույե, Գանդի:

**Հակաքարոյական յատկանիշների վերհանում.** Մ. Խորենացի, Մաքիաւելի, Գյունարդինի, Շ. Վագներ:

**Համամարդկային խնդիրներ.** Ֆենելոն, Նիցշէ, Ռոբեսպիեր, Լայբնից, Դոստոեւսկի, Պոլիլի, Լակոբդեր:

Սակայն մեզ համար ուսումնասիրման ու հիացման առարկայ են Նժդէհի սեփական ասոյթները, այն իմաստութեան մարգարիտները, որոնք, ինչպէս նրա հովանաւորող ու նրան հովանաւորած լեռների անթիւ-անհամար բազմաբոյր ու բազմագոյն ծաղիկները մարգագետիններում, սփռուած են ողջ գրական ժառանգութեան էջերում: Ասել, թէ նա հակուած էր մտքերը շարադրել ասոյթ-նախադասութիւններով, նշանակում է նոր միայն սկսել ընդհանրացումների նրա արուեստի մասին խօսքը: Այս գրելաոճը բովանդակային առումով վերաբերում է յուրաքանչիւր գրուածքի՝ ծաւալային առումով՝ ամենավոքորից մինչեւ ամենամեծը: *Մի զինուորի ճշմարտութիւններ* լրագրային յօդուածը (Ռազմիկ 1941 թ. թիւ 33) մոտ երկու գրքային էջ է. բաժանուած է 14 հատուածի՝ իւրաքանչիւր հատուածում կայ երկու-երեք սեփական ասոյթ: *Անձնավկայութիւն* յօդուածը [Հ, էջ 656-659], որ երկու էջից քիչ աւելին է, նոյնպէս պարունակում է ասոյթների մի մեծ շարք: Սակայն ահա առաւել զարմանալին: Աշխատութիւններ կան, որոնց ամբողջ հատուածներ շարադրուած են միայն ու միայն ասոյթներով. «Զինուորական եմ, չեմ սիրում երկարաբանել. – Թո՛ղ, ընթերցո՛ղ, թող մտքերս հայրենասիրութեան մասին արտայայտեմ աֆորիզմների ձեւով», – գրում է նա եւ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան իններորդ գլխի վերջին հատուածը այդպէս էլ շարադրում է: Անընդմէջ միմեանց են յաջորդում 16 ասոյթ [Հ, էջ 116-118]: Նոյն կերպ. *Բաց նամակ հայ մտաւորականութեան* աշխատութեան Զ գլխի առաջին հատուածը, որ գրեթէ ամբողջովին բաղկացած է միմեանց յաջորդող 15

ասոյթներից [Հ, էջ 68-69]: *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերում գրեթէ իւրաքանչիւր նախադասութիւն մի ասոյթ է [Հ, էջ 91-102]: Ի վերջո, այս առումով, առանձնապէս յիշատակելի է *Բանտային գրառումներ*<sup>58</sup> 95 էջանոց աշխատութիւնը: Զուր չէ, որ այն վերնագրուած է նաեւ *Խորհրդածութիւններ*: Բաժանուած է 12 գլխի՝ 12 թեմայի: Իւրաքանչիւր գլխում ասոյթների բոլորը: Որոշ հատուածներ, օրինակ 8-րդ՝ *Ռազմական խոհեր* գլխի երկրորդ մասը, շարադրուած է միայն ասոյթներով:

Այժմ կանգ առնենք հեղինակի գրական ժառանգութեան մէջ գործածուած ասոյթների բովանդակային կողմի վրայ: Պայմանականօրէն դրանք բաժանուած են 8 թեմայի: Սոյն մէկ աշխատութեան ենթագլխի շրջանակներում հնարաւորութիւն չունենալով անդրադառնալ թեմաների բովանդակութեանն ամբողջապէս՝ իւրաքանչիւրի վերաբերեալ եղած բազմաթիւ ասոյթներից կմէջբերուի 5-6-ը:

**ա. Ազգ, ժողովուրդ:** Առաջ են քաշուում ու գնահատուում այն գործոնները, որոնցով պայմանաւորուած է ազգերի անկախութիւնն ու ապագան: Վճռորոշ է սեփական ոյժին ապաւինելու, իդեալ-նպատակ ունենալու, կրօնի, մշակոյթի, անմահ ննջեցեալների պաշտամունքի, մտաւորականութեան, երիտասարդութեան դերն ու նշանակութիւնը. «Իր ոյժերից զատ ամէն ինչի ապաւինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու» [Հ, էջ 39], «... կուսակցութեանս հետ, բայց ազգիս համար» [Հ, էջ 89], «Դեռ Ազգերն ապրում են իրենց կազմակերպուած եսականութեան շրջանը, որոնց «մարդասիրութեան» ապաւինելը միամտութիւն լինելուց բացի եւ վտանգատու է» [Հ, էջ 89], «... կուլտուրան, եթէ ազգային չէ, կուլտուրա չէ, ինչպէս ազգը, եթէ կուլտուրական չէ, ազգ չէ» [Հ, էջ 191], «Ազգերին, որպէս իրենց սուերը, հետեւում է իրենց արժանի բախտը: Իր ճակատագրի դարբինն է ամէն մի ժողովուրդ: Վաղ թէ ուշ, նա դառնում է այն,

---

<sup>58</sup> **Գ., Նժդեհ,** *Բանտային գրառումներ*, «Մ. Վարդանեան» հրատ., Երեւան, 1993 թ.:



ինչ որ ուզում է լինել այսօր» [Հ, էջ 47], «... ժողովրդի ճակատագրի դարբինը նրա մտաւորականութիւնն է» [Հ, էջ 42]:

**բ. Պատերազմներ:** Ինչո՞ւ են յաղթում ժողովուրդները եւ ինչո՞ւ են պարտուում: Պատերազմների էլքը վճռուում է նրանով, թէ ինչպիսին են մշտապէս պատերազմի պատրաստ լինելու, ինքնապաշտպանութեան, հայրենի հողի վրայ չպարտուելու, սեփական պարտութեան վախը յաղթահարելու, յաղթութիւնների ու պարտութիւնների անցեալի փորձը գնահատելու ժողովուրդների կարողութիւնն ու հոգեբանութիւնը. «Ամէն մի պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, որովետէ չափւած կողմերից ոչ ոք է իրեն վերջնականապէս պարտուած կամ յաղթական համարում» [Հ, էջ 24], «Եթէ երկուսն այսօր բարեկամ են – նշանակում է թէ նրանք զինակցել են մի երրորդի դէմ» [Հ, էջ 24], «... յոյս չկայ թէ մեր դարում սուրը կը վերածւի արօրի» [Հ, էջ 25], «Ինքնապաշտպանութիւն – դա միակն է արւեստներից, որի թերութիւնները գրչի, վրձինի, մուրճի փոխարէն սրբագրում է թշնամու արնոտ սուրը» [Հ, էջ 39], «Պատերազմներն են օրօրել մարդկութեան մանկութիւնը եւ ո՛չ խաղաղութիւնը, որը բնական վիճակը չի եղել, այլ՝ պատերազմների կարճատէս դադար միայն» [Հ, էջ 23], «Յաղթում է ուժեղը եւ ո՛չ արդարը» [ն.տ.] «Զգացնել տուր թշնամիիդ, որ ամէն վայրկեան պատրաստ էս պատերազմելու, եւ նա կը հրաժարւի զինու ոյժով քեզ անհանգստացնելու մտքից - ահա՛ սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստութեան» [Հ, էջ 39]:

**գ. Առաջնորդ:** Ժողովուրդների առաջընթացը Նժդեհը պայմանաւորում էր նրանով, թէ նա ինչպիսի առաջնորդ ունի, առաջնորդի ստեղծագործ ունակութիւններով, նուիրուածութեամբ գործին, նոյնիսկ կենցաղում անձնական օրինակով. «Առաջնորդ ես, ուրեմն, եղի՛ր ազնիւ, ազնիւ եղի՛ր... – դա ճակատագրական նըշանակութիւն ունի ժողովրդի ճակատագրի համար» [Հ, էջ 578], «Ղեկավարը դա ինքը զօրքն է: Զօրքը – դա ինքը ղեկավարն է» [ԼԳ], «... հակառակ նրանց, որոնք յաճախ լաւագոյն բանակները վերածում են հօտերի, (առաջնորդը) գիտի հօտերը վերածել լաւ բանակների» [Հ, էջ 42], «Եթէ չեն ծնւում, ապա՛ դառնո՛ւմ են ա-

ռաջնորդներ» [Հ, էջ 42], «- Զինուորի համար կռի ժամանակ դրոշակը, ազգը, հայրենի երկիրը եւ սրա սրբութիւնները խորհրդանշողը՝ դա իր առաջնորդն է ...» [Հ, էջ 43]:

**դ. Ոյժ եւ թուլութիւն:** Երկու բեւեռ, դէպի որոնցից մէկի պաշտամունքին է ձգտում Նժդեհը եւ արհամարհում միւսը: Ճակատամարտը շահելու վերելքի ուղիով բարձրանալու, ազգովին ապրելու համար պիտի լինել ոյժեղ, հակառակը տանում է դէպի պարտութիւն եւ մահ. «Քանի դեռ գետափին ես – տկար ես: Անցա՛ր – կեսար ես» [Հ, էջ 95], « Յաղթում է ուժեղը եւ ո՛չ արդարը: Վա՛յ թոյլերին» [Հ, էջ 23], «Քծնանքն է թոյլի ներումը: Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուժեղ էր. նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր: Սիրում է նա, ով ոյժեղ է» [Հ, էջ 66], «Տկարը մեղաւոր է, որ տկար է - ահա՛ դատավճիռը» [Հ, էջ 142], «Չէզոքութեան են դիմում թոյլերը միայն, յաճախ բաժանելով պարտուածների ճակատագիրը: Էապէս չկան չէզոքներ» [Հ, էջ 24], «Թոյլերը զինակից չեն ունենում: Ոչ ոք է իր գենքի պատիւը վրտանգի դնում մարդասիրաբար» [Հ, էջ 40-41]:

**է. Հայրենիք եւ ժողովուրդ:** Այս է ահա Նժդեհի հաւատամքը, ինչպէս նաեւ ամէն-ամէն ինչի, աւելի ստոյգ՝ կեանքի սկիզբն ու վախճանը: Ապացոյցը՝ իր իսկ կենսագրութիւնը. «Փոքր ազգերը պարտադրօրէն աւելի հայրենասէր պիտ լինեն, քան մեծերը, մենք՝ աւելի՛ քան բոլորը» [Հ, էջ 29], «Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաբաղաբացիութիւն – ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից» [Հ, էջ 30], «Հայրենասիրութեամբ հարուստ ժողովուրդը դէպքերի խաղալիքը չէ, այլ՝ նրանց հրամայողը» [Հ, էջ 29], «Միայն ազգասէրը կարող է սիրել ե՛ւ մարդկութիւնը» [Հ, էջ 32], «... մի ժողովուրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ» [Հ, էջ 90]:

**զ. Բարոյախօսութիւն:** Բազմաթիւ առիթներով անդրադառնալով մարդու հոգեբանութեանը՝ Նժդեհը գնահատականներ է տուել նրա ըմբռնումներին ու ձգտումներին, բնաւորութեան թոյլ եւ ոյժեղ կողմերին, սոցիալական երեւոյթներին, այս ամէնի ազդեցութեանը եւ ունեցած հետեւանքներին՝ անհատի եւ հասա-

րակական կեանքում: Ի՞նչ է կեղծիքը, վախը, որոնք են ճշմարտութեան, արիութեան առաելութիւնները, ի՞նչ են եւ ինչի՞ են հանգեցնում սերը, կարեկցանքը, գեղեցիկը, իդեալը, բարոյական ոյժը, տգիտութիւնը, խօսքը ... Ահա թէ այս հարցերից գէթ մի քանիսն ինչպէս են արտացոլուած ասոյթներում. «Քննադատել՝ հոգեպէս տառապել է նշանակում» [Հ, էջ 53], «Անսուեր, անբիծ, անթերի միաժամանակ – բոլորի կողմից չի համարել եւ ո՛չ մի ըսկըզբունք, ո՛չ մի սրբութիւն, ո՛չ մի արժէք: Քննադատելի են համարել ասուածներն ու ասուածութիւններն անգամ» [Հ, էջ 30], «Կեղծիքը կը ստրկացնի, ճշմարտութիւնը՝ կը փրկի» [Հ, էջ 86], «Վախկոտն ու ստորը – ահա՛ կեղծիքի աշակերտները» [Հ, էջ 86], «Սովորի՛ր եւ սիրի՛ր զոհաբերել ու տանջվել՝ բավականության լուսափայլ ժպիտը երեսիդ ... եւ դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ-Աստված ...» [Հ, էջ 412], «Խոնարհի՛ր ճակատդ միայն իդեալիդ առաջ, միայն իդեալիդ ազատ գերին եղիւր ...» [Հ, էջ 413], «... խօսքը – դա մարդուս բարոյական շունչն է, թէ ինչ որ մտքերն՝ այն էլ խօսքերը, եւ որ խօսքը մատնում է մեր ներքին մարդը» [Հ, էջ 33]:

**է. Երջանկութիւն:** Երջանկութեան հիմնախնդրին, որին ձրգտում է հասնել իւրաքանչիւր անհատ, Նժդեհն անդրադարձել է *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան 4-րդ գլխում, որտեղ վերլուծում է երիտասարդութեան համար, ինչն առաջնահերթօրէն անհրաժեշտ է: Խնդրոյ առարկային յատկացրել է նաեւ մի ամբողջ աշխատութիւն՝ *Երջանկութեան պրոբլէմը*՝ սակայն անաւարտ: Հիմնական եզրահանգումն է. Երջանկութիւնը պէտք է փնտրել սեփական հոգում եւ ոչ դրանից դուրս՝ նիւթականացած աշխարհում, յանուն նիւթական բարիքներ ձեռք բերելու մրցավազբում: Մի քանի պարզաբանում ասոյթների տեսքով գրրուած *Երջանկության պրոբլէմը* աշխատութեան առաջին մասից. «Ամենից անհաստատ դաշինքն այն է, որ կնքում ենք բախտի հետ: ... Լավագոյն ճակատագիրը աշխարհում՝ կյանքի քաղցրություններին մի քիչ դառնություն խառնել: ... Գերագոյն երջանկությունը այն է, որ պատճառ կդառնա այլոց երջանկության:

... հաճախ մեզ այցելում է երջանկության ուրվականը... եւ ... երջանկաճարավ մարդը միամտորեն այն երջանկության տեղ է ընդունում: ... Երջանկություն – դա մեղանչելու ազատություն չէ, ինչպես եւ անպատժելիությունն չէ: Ամեն մի ձախորդությանդ դեմ տուր առաքինությանդ եւ հույսիդ վահանը» [Հ, էջ 669-670]: Մի ասոյթ էլ *Որդիների պայքարը հայրերի դէմ* աշխատութեան չորրորդ գլխից. «Հարուստն իրեն աղքատ է զգում իր հարստութեան մէջ, նիւթապէս երջանիկը՝ քարոյապէս դժբախտ» [Հ, էջ 93]:

**ը. Կանայք:** Կինը նոյնպէս դուրս չի մնացել Գ. Նժդեհի ըստեղծագործական ոլորտից: Իր սեռային մտածելակերպով, յատկութիւններով նա բնութագրուել է իրարայաջորդ ասոյթների բոյլերում, երկու՝ կնատեացի եւ հենց իրենց՝ կանանց տեսանկիւններից: Առաջին խումբը վերնագրուած է *Աֆորիզմներ կնատեաց փիլիսոփայի* [ԳԵ, էջ 18, 24-25]: Մրանք հասարակութեան մէջ տարածում ստացած կատակային, հումորիստական մտքերի արտացոլումն են, որոնք, թերեւս, կնատեացը կարող է ունենալ: Մի քանիսը դրանցից՝ պահպանելով Գ. Նժդեհի շարադրանքի ձևը:

\*\*\*

Որքան գեղեցիկ, այնքան անսիրտ է կինը:

\*\*\*

Չգիտեմ, Աստուած ինչո՞ւ է կանանց լեզու տւել: Մի՞ թէ լեզուն տրւած է միայն ու միայն ստելու համար:

\*\*\*

Մարդս հրեշտակ էր, երբ կնոջ հետ դեռ ծանօթ չէր:

\*\*\*

Ո՞ւմ ծնունդն են օձութիւնը, աղւէտութիւնը, դաւաճանութիւնը ... Կնոջ:

\*\*\*

Ո՞վ է ամենաողորմելի մարդը. – Նա, որը հաւատում է կանանց:

\*\*\*

Կանանց ցեղից միայն Եւան էր, որ մտքով չէր դաւաճանել իր ամուսնուն:

\*\*\*

Մի՞թէ շրթնային իդեալից զատ կինը ուրիշ իդեալ է ունի:

Կնոջ մասին հռոետեսական ասոյթներ կան նաեւ *Իմ մարգարէն* շարքում [ԳրԵ, էջ 33]: Ասոյթների երկրորդ խումբը վերնագրուած է *Կինը կանանց մասին*: [ԳրԵ, էջ 41]: Եթէ նախորդում տղամարդկանց ինչ որ մասի դատողութիւններն էին, ապա այստեղ իրենց՝ կանանց՝ եւ շատ աւելի սեռահատուկ:

\*\*\*

Եթէ տղամարդիկ մեզ լաւ ճանաչէին, մենք շատ աւելի յաճախ կկործանուէինք ...

\*\*\*

Եթէ կանայք քմահաճոյ չլինէին, տղամարդիկ տխրութիւնից ուղղակի կմահանային:

\*\*\*

Չկայ մի այնպիսի կին, որը տղամարդին միայն իր խելքովը կարողանար հմայել:

\*\*\*

Չափից դուրս ճարտարախօս տղամարդիկ մեր ճաշակին չեն համապատասխանում:

\* \* \*

Մեզ համբուրելիս մենք դողում ենք, սակայն երբ մեզ այդ բանը չեն անում, մենք աւելի խիստ ենք դողդողում:

Ենթազլխում քննութեան առած 8 թեմաներով չի սպառում ասոյթների վերաբերեալ նիւթը: Կան նաեւ այլ թեմաներ, ինչպէս. ազատութիւն, մահ, քաղաքականութիւն, պատմութիւն, նախահայրեր, հայր, մարդ եւ մարդկութիւն, աշխարհընկալում եւ ուրիշներ: Նիւթի այսպիսի առատութեան հանդիպելով՝ վաստակաշատ նժդեհագետ Ռաֆայել Համբարձումեանը հեղինակի գրական ժառանգութիւնից քաղել է բազմաթիւ ասոյթներ եւ 2002 թ. հրատարակել մի գրքուկով՝ 96 էջ ծաւալով:

\* \* \*

Եւ այսպէս, շարադրանքի մատչելիութեամբ, խօսքը վառ ու գունեղ դարձնելու նպատակներով՝ Նժդեհը դիմել է մի շարք միջոցների՝ փաստերի հակադրութիւն ու համադրութիւն, որոշիչի, յատկացուցիչի յետադարձում, անցեալ կատարեալը ըղձական ապառնիի փոխարէն գործածութիւն, պարբերոյթներ, երկխօսութիւններ, ասոյթներ: Այս ամէնն ի լրումն նրա խօսքի պատկերաւորման ու ճարտասանութեան միջոցների, որոնք քննութեան են առնուած նախորդ գլուխներում:

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Մինչև հիմա նժդեհագետներն ուսումնասիրել են մեծն հայի կենսագրությունը, քաղաքական, հասարակական, ռազմական գործունեությունը, գաղափարախօսությունը, փիլիսոփայությունը: Ներկայ աշխատությունը ամբողջական ուսումնասիրություն է՝ նուիրուած Նժդեհի լեզուին, ըստ որում, մի մասնաւոր կողմին միայն, այն լեզուական ու ոճական միջոցներին, որոնք աչքի են զարնում նրա գրական ժառանգութեան մէջ: Ճոխ բառապաշարը, քերականական միջոցների հմուտ գործածությունը, գեղեցիկ ու տրամաբանօրէն կուռ շարադրանքն առատ նիւթ են տալիս նրա լեզուն համակողմանիօրէն ուսումնասիրելու համար:

Ահա նժդեհաստեղծ բառերը, որոնք հանդիպում են գրեթէ ամէն էջում՝ զարմանալիօրէն տարողունակ ու դիպուկ, թէկուզէ, յաճախ դիպուածային: Դրանց մի փոքր մասը միայն՝ 190 բառ, արդէն հաւաքել ու հրատարակել է վաստակաշատ նժդեհագետ Ռաֆայել Համբարձումյանը: [ԳրԵ, էջ 8-10] **Տողերիս հեղինակների հաշումներով նժդեհաստեղծ բառերի թիւը մի քանի անգամ աւելին է:** Հարցը պարզուեց, երբ զբաղուելով Նժդեհի բառապաշարով, ձեռնամուխ եղանք նրա ստեղծագործությունների լեզուի բառարանը կազմելու՝ գիտականօրէն անհրաժեշտ ու վայել կերպով քննելու հայոց լեզուի հարստությունը ու ճոխությունը ներկայացնող հեղինակներից մեկին նոյնպէս:

Գիտական առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Գարեգին Նժդեհի լեզուական հայացքները» թեման: Լեզուին ու խօսքին նա անդրադարձել է բազմաթիւ հարցերի վերլուծութիւնների ընթացքում՝ քննութեան առնելով լեզուի եւ խօսքի դերն ու նշանակությունը հասարակական կեանքում, լրագրութեան մէջ, դաստիարակութեան գործում, մարդու ներաշխարհում ու հոգեբանութեան մէջ, բանակը դեկաւարելիս զօրավարի

## **գործողություններում, ապա նաև՝ որպես պայքարի միջոց հայ ժողովրդի հատուածականութեան դէմ:**

Իր երկերում Նժդեհը համատեքստի պահանջով դիմել է այլևայլ լեզուների բառապաշարին՝ մեջբերելով լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն, անգլերէն, գերմաներէն, ռուսերէն, թուրքերէն, բուլղարերէն դարձուածքներ ու բառեր, որոնք եւս ի մի բերելու եւ բացատրելու կարիքն ունեն:

Ասենք նաև, որ սերունդների համար շահեկան կլինէր, եթէ հայոց լեզուի դասագրքերում լեզուական իրողությունների բացատրութեան համար յաճախակի օրինակներ քաղուէին Նժդեհի երկերից, որոնք շարունակական ու հարմար միջոց կլինէին միաժամանակ դաստիարակութեան համար:

Ի դէպ, Գարեգին Նժդեհի ստեղծագործությունների ուսումնասիրութեան առումով լայն ասպարէզ ունեն նաև գրականագէտները: Հարկ է հետազօտել նրա գրական ժառանգութիւնը ըստ ժանրերի, ըստ թեմատիկայի՝ համեմատելով նրան այլ հեղինակների հետ, օրինակ՝ «Հայրենասիրութիւնն ու հայասիրութիւնը համադրութեամբ այլ գրողների»: Կամ թէկուզ Նժդեհի արձակ բանաստեղծությունները, որոնք հայրենի գրականութեան փայլուն էջերից են:

Դպրոցական քրիստոմատիաներում Գ. Նժդեհի երկերից հատուածներն ու մտքերը ներառելն ակնյայտ է՝ մանկավարժական նպատակայարմարութեան պահանջներով:

Եւ այսպէս. յետադարձ մի հայեացք ձգելով մինչ այժմ շարադրուածին, եզրակացնում ենք. իր երկերը շարադրելիս Նժդեհը նպատակամղուած է եղել խօսքը դարձնել.

**ա.** Պատկերաւոր՝ դիմելով համեմատությունների, մակդիրների, փոխաբերությունների:

**բ.** Ճարտասանօրէն ներգործուն. կիրառել է հարցն ու հռետորական հարցը, կրկնությունն՝ իր տեսակներով, պարբերոյթը, անցեալ կատարեալը ըղձական ապառնիի փոխարեն, բանաստեղծականութեան համար՝ յետադարձ որոշիչն ու յատկացուցիչը.



գ. Մատչելի ու պարզ, ինչի համար համադրել կամ հակադրել է փաստերը, իրողութիւնները բացատրել երկխօսութիւնների եղանակով.

դ. Սեղմ ու տարողունակ: Մտքերն արտայայտելը ասոյթների ու թեւատր խօսքերի միջոցով:

Թուարկուած լեզուաոճական միջոցները երկերում հանդէս են գալիս զանազան զուգորդութիւններով, այսինքն՝ այս կամ այն ստեղծագործութեան որեւէ հատուածում, շարադրուող նիւթի համաձայն, միատեղ կարելի է հանդիպել դրանցից մի քանիսին՝ մի խմբի:

ե. Գ. Նժդեհը ներկայանում է մէկ ուրիշ, նոր կողմով եւս: Նա մեզ համար հասարակ թուացող հարյուրաւոր գոյականներ, նոյնիսկ ածականներ, գրում է մեծատառով՝ *Հայրենիք, Անկախութիւն, Ազատամարտ, ... Մետերլինգեան, Եռագոյն*, նաեւ ժողովուրդների անուններ, երբ խօսքը նրանց մշակոյթի, ազատաբաղձութեան մասին է՝ *Հոյնը, Հռոմէացին, Չեխը, Լեհը, Մակեդոնացին, Հայը, ...* որոշակի բառակապակցութիւններում՝ բոլոր բաղադրիչները. «...**Աւետարան Արիութեան...**» [Հ, էջ 65], «...**Աւետեաց Երկիր...**, **Ամենակարող Ոգի...**» [Հ, էջ 109 ], «...**Մայիս Քսանութ...**, **...Հին Աստուածներ...**» [Հ, էջ 120], «...**Անկախութեան Գաղափար...**» [Հ, էջ 121], նաեւ նախադասութեան հատուածներում. «...նրա **Աստուածաշունչ Նահատակներին...**» [Հ, էջ 78], «**Անկախ Հայրենիքը – որպէս Աւետեաց Երկիր ... Ամենակարող Ոգու հետ ...**» [Հ, էջ 109], «...**Վիշապաքաղ Արքան Հայոց...**» [Հ, էջ 111], «...**Յաւիտենական Արդարութեան Օրէնքի** ոյժով, նւիրում դէպ **Հայրենիքը...**» [Հ, էջ 124]: *Հայրենիքը* մեծ մասամբ գրուած է մեծատառով. «...**հոգեւոր Հայրենիք...**, նիւթական **Հայրենիք...**, միատիկ **Հայրենիք...**, ...աշխարհագրական **Հայրենիք...**, ...պատմական **Հայրենիքում...**, ...օտարի **Հայրենիք...**, ...աննիւթեղէն **Հայրենիք...**» [Հ, էջ 115], «...վերքերն ... **Հայրենիքի...**» [Հ, էջ 123], «... **Հայրենիքների ...** համար ..., ...երջանիկ **Հայրենիք...**, սգաւոր **Հայրենիքում...**» [Հ, էջ 124],

«...օգնութեան կանչենք **Հայրենիքին...**, սերունդ տալ **Հայրենիքին...**» [Հ, էջ 151] եւ այսպէս շարունակ:

Գ. Նժդեհը մեծատառերի է դիմում համապատասխան բառը յատուկ ընդգծելու, ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելու, ակնածանք ու գնահատանք արտայայտելու համար: Նոյն այս նպատակով ենք մենք առօրեայում գործածում *Մարդ մեծատառով* արտայայտութիւնը: Ուրեմն, կարող ենք պնդել՝ մեծատառերով որոշակի հասարակ գոյականների, ածականների, թուականների գրութիւնը Նժդեհի կողմից ունի բարոյահոգեբանական, դաստիարակչական նշանակութիւն:

\*\*\*

Եւ այսպէս՝ սրանցով է պայմանաւորուած Նժդեհի խօսքի ոյժը՝ խտացած ու տպաւորիչ: Նրա արտայայտութիւնները, դարձուածքները, ձեւակերպումները, բնութագրումները ստեղծագործ մտքի մի-մի գիւտեր են: Ահա այդպիսիների մի շարք. «**Ես մեռայ՝ դեռ չմեռած**» [Հ, էջ 660], «... սրիս եւ **Մասիսին կոթնած...**» [Հ, էջ 663], «...**չոչնչանալու համար պէտք է կենդանի Արարատ լինել**» [Հ, էջ 703], «...**հոգեւոր մահափորձ...**» [Հ, էջ 650], «...**մահը մեռնում է...**» [Հ, էջ 654], «...**փոքրիկ մահով**» մեռնելու վախը ...» [Հ, էջ 655], «...**ոսկու Նիագարա թափել**» [Հ, էջ 624]:

Խօսքային այսպիսի մարգարիտները Ռաֆայել Համբարձումեանն անուանել է «մտամասունքներ» եւ, մասամբ հաւաքելով, հրատարակել Գարեգին Նժդեհի գրական երկերի 2012 թ. ժողովածուում: Նժդեհի խօսքը նոյն ոյժով ու բարձր արուեստով հնչում է ժանրային բոլոր կարգի ստեղծագործութիւններում՝ գիտական, քնարական, յուշագրական, հրապարակախօսական, ինչպէս նաեւ նամակներում, զինուորական կոչներում ու հրամաններում, անգամ, գրասենեակային ոճը մի կողմ թողած, պաշտոնական գրութիւններում ու բացատրութիւններում: Վերջինների վերաբերեալ ասուածում համոզուելու համար բաւական է

ծանոթանալ պաշտօնագրերին՝ ուղղուած ՀՀ զինուորական նախարարին, պառլամենտի անդամներին, վարչապետ Ս. Վրացեանին, նախարարների խորհրդին, դաշնակցական կուսակցական ղեկավարներին:

Գարեգին Նժդեհի խօսքը հնչում է նոյնչափ բոցավառ ու բարձրրարուեստ, երբ արտայայտում է նրա յոյզերն ու զգացմունքները՝ ուրախութիւնն ու վիշտը, հպարտանքն ու արհամարհանքը, գովեստն ու նախատինքը, խրախուսանքն ու բողոքը, սերն ու ատելութիւնը: Այս ամէնը, բառիս ամենադրական իմաստով, համակում է ընթերցողին: Հեղինակի հետ միասին նա ատում է արիւն ու աւեր հեղինակող ազգակուլ ու հայրենակուլ խառնարին եւ *ամենասեռակենտրոն թրքութիւնը*, նրա հետ դաշինք կապած աստուածանարգ, ազգադաւ (մասնաւորապէս հայադաւ) բռնաճնշումների իշխանութիւն բերող, սոցիալիզմն աղաւաղող բոլշեւիզմը. գարշում է նրա ներկայացրած իրական բացասական կերպարներից՝ երախտիքն ուրացող ու սկըզբունքափոխ Գ. Տեր-Մինասեանից, էութեամբ հակաազգայնական ու նիւթապաշտ արք. Ղ. Դուրեանից եւ գրչով անբարոյ, ազգամոռ Մ. Արլէնից: Եւ ընդհակառակը. ընթերցողը լցում է երախտիքի, ակնածանքի բարձր գնահատանքի զգացումներով՝ կարդալով Նժդեհի խօսքը՝ մի-մի գեղոն՝ նուիրուած կեանքով հայրենիքին ծառայած Արշակ Գաֆաֆյանին (Քեռի/հեղ.հեղ./), դաստիարակիչ գրչով իր ազգի ցաւերը, խոհերն ու ազատասիրական իդեալները երգող Աւ. Ահարոնեանին եւ մեծն իմաստասէր Սոկրատեսին՝ պատրաստ հանուն ճշմարտութեան կամովին մահ ընդունելու: Տարբեր է խօսքի բնոյթը, ըստ ասելիքի եւ յոյզերի: Մե՛րթ այն հոսում է յորդ, ջրվեժի պէս՝ պարբերոյթներով կամ այլ կարգի բազմաբարդ նախադասութիւններով ու թուարկումներով, երբ բխում են հոգեկան ապրումները, մե՛րթ կայծակի պէս խոցող է՝ ոչնչացնող մակդիրներով ու բնորոշումներով, երբ մերժելին է, խորշելին, մե՛րթ տողերից բարձրանում է լոյս ու ջերմութիւն եւ դրանց հետ միասին հայացքիդ առաջ է սիրելին, նուիրականը, պատկառելին, մե՛րթ հանդարտ՝ լայնահուն գետի պէս, երբ խոհական է, եւ

մե՛ր թ՞ նկարչագեղ ու պայծառ, երբ տողերի մեջ բնութիւնն է ու մարդկային նուիրական զգացումները ... ասես զանգակ առու-առուակներ են հոսում, իսկ նրանց վերելում արծաթաշող լուսընկան է՝ *աստղերի երգով*:

Վերջապէս, Գարեգին Նժդեհի խօսքի ոյժը ներգործուն է ու բարձրարուեստ, երբ շարադրում է իր գաղափարները, ուսմունքը, ըմբռնումները, աշխարհընկալումը ... Իր ժամանակի հայերէնով շարադրանքի մեջ հնացած բառերը, բառային տարբերակները, գրաբարեան դարձուածքներն ու քերականական տարբերը դառնում են լեզուի պատմական շղթայի շարունակական օղակներ, հաստատում սերունդների ամբողջութեան, ցեղի գաղափարը: Արեւմտահայերէնի բառային տարբերակների, բառերի, յղովական ու բայական բառաձեւերի լայնօրէն գործածութիւնը արեւելահայերէնի հետ լեզուամիասնութեան ծրագրային պայքարի միջոց է ժողովրդի հատուածականութեան դէմ՝ աշխարհագրական ու մշակութային դրսեւորումներով:

Հաղորդակցումն արծարծուած թեմաների հետ, լինելով յուզական, բուռն եւ անմիջական, զուգորդութիւններ է արթնացնում երաժշտական ժանրերի հետ: Օդա՝ ձոներգութիւն են հատուածները՝ նուիրուած Տարօն աշխարհին *Տարօնականութեան մասին*, *Ինչո՞ւ Տարօնականութիւն* յօդուածներում, Մամիկոնեան տոհմին ու Սուրբ Վարդանին՝ *Բանտային գրառումներ*-ի 12-րդ մասում, Նժդեհի մտաստիպար ժողովրդին կամ բանակի առաջնորդին՝ *Յեղի ոգու շարժը* երկի *Նոր հայը* գլխում, ուր հնչում են նրանց թոյլ եւ ուժեղ յատկութիւնները, հանդիսաւոր պատկերներով՝ նրանց կոչումն ու նշանակութիւնը պատմական տուեալ ժամանակաշրջանում ու դրանից հետո: Ինչպէս կանտատներում՝ հանդիսաւոր փառերգերում, գովաբանութիւնն է հնչում հայրենիքին (*Բանտային գրառումներ*, 4-րդ մաս), (*Էջեր իմ օրագրէն*, 1-ին մաս), արիութեանը (*Որդիների պայքարը հայրերի դէմ*, 8-րդ գլուխ), հերոսականութեանը (*Բանտային գրառումներ* 8-րդ մաս), զանգուածների դաստիարակութեանը (*Բաց նամակներ հայ մըտաւորականութեան*, Է մաս), ուժին (*Էջեր իմ օրագրէն*, 2-րդ

մաս), (*Բաց նամակ հայ մտաւորականութեանը*, Դ մաս), աշխատանքին (*Մտերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը*, 13-րդ գլուխ): Եւ ցեղակրօնութիւն-տարօնականութիւնը – մի սիւմֆոնիա՝ համանուագ՝ վսեմ, գոռ, յաղթական: Յեղօրէն ապրելու թեման, առաւել ուժգին կամ մեղմ, անցնում է ստեղծագործութիւնների մեծագոյն մասով, տանում դեպի ֆինալ՝ աւարտանուագ՝ համոզմունք, գործ, ինքնաճանաչում՝ դեպի *Յեղի ոգու շարժ*, *Յեղային արթնութիւն*, *Յեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի գորոյթ*, *Յեղիմաստութիւն* վերնագրերում արտայայտուած գաղափարների ներընկալում:

Նոյն այս ամէնը այսպէս կյանքի կոչելուն, այսպէս այս ամէնով զանգուածներին, մասնաւորապէս՝ երիտասարդութեանը համակելուն է ծառայեցրել գրողական իր տաղանդը, որի դրսեւորման ձեւերից էին նաեւ շարադրանքի եղանակները՝ քննութեան առնուած վերջին 8-րդ գլխում: Դրանք, կրկնում ենք, ոճական միջոցների նման երկերի տարբեր հատուածներում, ասելիքին համապատասխան կիրառութիւն են գտել տարբեր գուգորդութիւններով՝ միատեղ: Այս առումով բնորոշ գեթ մի քանի ստեղծագործութիւնների անուանումներ եւ գրութիւններ. *Օրերի օրը*, *Ե՛ւ զոհ*, *ե՛ւ զոհարար*, նամակներ ՀՀ պառլամենտի անդամներին, մարտական հրաման՝ 30.11.1919 թ., կոչ՝ ռազմական ոյժերին՝ 13.06.1920 թ. ..., որոնցում գաղափարական դրոյթներ են, մորմոք հայրենիքի համար, ռազմի շունչ, բողոք, ընդվզում ... Սրանցում առաջին հերթին աչքի են ընկնում կրկնութիւնները, հռետորական հարցերը, փաստերի համադրումն ու հակադրումը, տեսարանների նկարագրութիւնները՝ վրիժավառ .....

Բայց Նժդեհի գրական տաղանդն, ինչպէս արդէն տեսանք, ունի մէկ այլ դրսեւորում եւս՝ քնարերգութիւնը, որտեղ խոհեր են, թախծանուշ վիշտ, սէր, հոգեկան զմայլանք, բնութեան այս անգամ արդէն չքնաղ նկարագրութիւններ ... Հեղինակի արձակ բանաստեղծութիւնները հայ քնարերգութեան մարգարիտներից են. ինչպիսիք են թեկուզ՝ *Դաշնակցութեան պանթէոնը* շարքից *Փառապսակ Խեչոյին*, *Հրանտին*, ապա նաեւ՝ *Մինիատուր* վեր-

նագրով Բանաստեղծությունները կամ արեւմտահայերէնով գրքուած *Անվերնագիր* սիրերգությունը: Դրանցում աչքի են զարնում կրկնությունները, համեմատությունները, փոխաբերությունները, յետադաս որոշիչները, այդ թւում յետադաս մակդիրները: Ձգացում է տաղաչափական որոշակի կշռոյթ ու մեղեդայնութիւն՝ յի-շեցնելով ազատ ոտանաւորը: Չափածոյ խօսք լինելու համար պակասում են հանգերը եւ անխախտ կարգով բանատողի ոտքերը:

Գարեգին Նժդեհի խօսքի ոյժը... Հաղորդակցուելով նրա ստեղծագործությունների հետ՝ ցանկութիւն եւ զգում գնալ նրա կանխադրոյթների գծած ուղիով, մտքերդ շարադրել նրա նման եւ, մանաւանդ, հակում է առաջանում նրա նման ստեղծել սեփական բառեր՝ նորակազմութիւններ ...

\* \* \*

Ո՞վ էր Գարեգին Նժդեհը: Նա մեր պատմութեան մեծերից էր, որն իր մարմնական ոյժերը սպառեց ռազմի դաշտերում, բանտերում, տարագրութեան մեջ՝ յանուն իր ժողովրդի եւ նրա հայրենիքի՝ Հայաստանի: Պայքարեց սրով ու գրչով: Գրեց շարունակ, գրեց անդադրում, գրեց մինչեւ Բանտային կեանքի վերջին օրերը, երբ, ինչպէս 1953 թ. Ս. Վրացեանին գրած նամակում էր ասում, *ոյժասպառ էր, բայց ոչ ոգեսպառ*, գրեց հոգու յոյգերով շաղախուած գրչով, գրեց այնպէս, որ ընթերցողը, ծանօթանալով նրա կենսագրութեանն ու գրական ժառանգութեանը, մղում է զգում, ինչպէս *Բանտային գրառումներ*-ի 2-րդ մասում, հեղինակի հետ մէկտեղ, կրկնելու. «Կեանքում, խղճմտանքէս զատ, ես ճանաչեցի երկու այլ դատաւորների եւս՝ Աստուած եւ ժողովո՛ւրդ: Առաջինի դէմ մեղանչեցի, երկրորդի դէմ՝ երբե՛ք»<sup>59</sup>:

---

<sup>59</sup> Գ. Նժդեհ, *Բանտնտային գրառումներ*, « Ս. Վարդանեան» հրատ., Հայկանադական ընկերութիւն, 1993 թ., էջ 30:

## ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

- Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատ., հ. 1-2, 1976 թ.:
- Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրայական հնչյունաբանություն, Ձանգակ-97 հրատ., Երևան, 2011 թ.:
- Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրայական քերականություն. ԵՊՀ հրատ., Երևան, 2007 թ.:
- Գեորգեան Ե., Ուղղագրությունը փոխելը թարգմանություն չէ, Էջմիածին, ք. Էջմիածին, թիւ Ը, 2012 թ.:
- Եզեկյան Լ., Ոճագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2003 թ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, ԳԱ հրատ., հ.1-4, 1969-1980 թթ.:
- Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Ասոյթներ, 2002 թ.:
- Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ, անտիպ գրառումներ ու խորհրդածութիւններ, Նախիջեան հրատ., Երևան, 2005 թ.:
- Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Ամբողջական կենսագրութիւն, Գիտություն հրատ., Երևան, 2008 թ.:
- Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, Հայպետ-հրատ, Երևան, հ. 1-4, 1944-1945 թթ.:
- Միրզոյեան Վ., Գարեգին Նժդեհի կենսափիլիսոփայութիւնը, հրատարակիչ՝ Ազգայնական ակումբ, Երևան, 2002 թ.:
- Միրզոյեան Վ., Գարեգին Նժդեհի փիլիսոփայութիւնն ու լեզուաշխարհը, Երևան, 2001 թ.:
- Նժդեհ Գ., Երկեր, Արխիվային գործի գործակալություն հրատ., Երևան, հ. 1-2, 2002 թ.:
- Նժդեհ Գ., Նորահայտ նամակներ, Հայաստանի ազգային ար-խիվ, Երևան, 2011 թ.:
- Նժդեհ Գ., Գրական երկեր, Նախիջեան հրատ., Երևան, 2003 թ.:
- Նժդեհ Գ., Գրական երկեր, Էդիթ Պրինտ հրատ., Երևան, 2012 թ.:
- Նժդեհ Գ., Հատընտիր, Ամարաս հրատ., Երևան, 2006 թ.:
- Նժդեհ Գ., Նամականի (1920-1921 թթ.), հրատարակիչ՝ Ազգայնական Ակումբ, Երևան, 2002 թ.:
- Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, ԵՊՀ հրատ., Երևան, հ. 1-2, 1979-1981 թթ.:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուլյան Թ., Լեզվաբանական  
բառարան, ԳԱ հրատ., Երևան, 1975 թ.:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հրատ.,  
Երևան, 1987 թ.:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան,  
ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերենի բառա- պաշա-  
րային առանձնահատկությունները, ԵՊՀ հրատ., Երևան, 2004 թ.:

Սուքիասյան Աշ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բա-ռարան, ԵՊՀ  
հրատ., Երևան, 2003 թ.:

### **ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

«Ազգ» – օրաթերթ,

«Հայրենիք» – ամսագիր, N8, 1923 թ., Ինչու պայքարեց

Լեռնահայաստանը:

«Ռազմիկ» – օրաթերթ, 1943 թ., թթ..169-178: Խօսակցութիւն մը զօրավար  
Գ. Նժդեհի հետ:



## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՒՆՆԵՐ

- ԱՄ – Ազատ Միւնիք, «Հայրենիք» ամսագիր, №№ 7-12, 1925 թ.:
- ԳԵ – Գրական երկեր, «Նախիջեւան» հրատ., Երևան, 2003 թ.:
- ԳԲԵ – Գրական երկեր, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2012 թ.:
- ԷԼԳ – Էջեր Լեոնահայաստանի գոյամարտից, «Հայրենիք» ամսագիր, 1923-1924 թթ.:
- ԼԳ – Լեոնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք» ամսագիր, թիւ 11, սեպտեմբեր, 1923 թ.:
- Հ – Հատընտիր, «Ամարաս» հրատ., Երևան, 2006 թ.:
- ՀԲԿ – Հայ բոլշեւիկեան կոնիւնտը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր-նոյեմբեր, 1923 թ.:
- հեղ.հեղ. – հեղինակներ
- Ն – Նամականի, «Ազգային Ակումբ» հրատ., Երևան, 2002 թ.:
- ՆՆ – Նորահայտ նամակներ, «Հայաստանի ազգային արխիվ» հրատ., Երևան, 2011թ.:
- ն.տ. – նոյն տեղում:
- ՌԽՄ – «Ռազմիկ» օրաթերթ, 1943 թ., թթ. 169-178: Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ	
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ .....	9
§ 1. Բառեր.....	9
§ 2. Բառային տարբերակներ.....	15
§ 3. Գրաբարեան քերականական տարրեր.....	24
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՏԱՐՐԵՐԸ	
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԵՐԿԵՐՈՒՄ .....	33
§ 4. Բառային տարբերակներ.....	33
§ 5. Արեւմտահայերէն բառեր .....	37
§ 6. Յոլովական ձեւեր.....	41
§ 7. Բայաձեւեր .....	48
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ .....	58
§ 8. Համեմատութիւն կազմող եղանակներն ու կապակցական բառերը.....	58
§ 9. Տեղ գտած կառուցուածքային յատկանիւրջներ.....	67
§ 10. Համեմատութիւնների բովանդակային կողմը.....	70
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	
ՄԱԿԴԻՐՆԵՐ .....	76
§ 11. Ինչպիսիք են մակդիրները.....	76
§ 12. Մակդիրների կիրառութիւնը.....	80
§ 13. Մակդիրային ծաղկաքաղ.....	84

ԳԼՈՒԽ ԶԻՆԳԵՐՈՐԴ	
ՓՈԽԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ	89
§ 14. Ինչպիսիք են փոխաբերությունները	89
§ 15. Փոխաբերությունների կիրառության շուրջ	93
ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ	
ՀԱՐՑ ԵՒ ՀՈՒՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ	97
§ 16. Հարցերի ծաւալն ու յաճախականությունը	97
§ 17. Հարց եւ պատասխան	103
§ 18. Տրամադրություններ, հոգեվիճակներ	108
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ	
ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ	121
§ 19. Կրկնությունների տեսակները եւ քանակական կողմը	121
§ 20. Կրկնությունների մի քանի յատկանիշ	126
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ	
ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	143
§ 21. Հակադրություն	143
§ 22. Համադրություն	153
§ 23. Լեզուական միջոցներ	159
§ 24. Երկխոսություններ	167
§ 25. Ասոյթներ	172
ՎԵՐՁԱԲԱՆ	181
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ	189
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ	190
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ	191

ՅՈՒՆԱՅՍԱ ՎԵՐՈՒ ՎԵՍՆ  
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ  
ԲՆՈՐՈՇ ԼԵԶՈՒԱՈՃԱԿԱՆ  
ՄԻԶՈՑՆԵՐԸ

Համակարգչային շարուածքը՝ Մ. Հարութիւնեանի  
Համակարգչային ձեւաւորումը՝ Ա. Աղուզումցեան,  
Կ. Չալաբեանի  
Կազմի ձեւաւորումը՝ Ա. Պատուականեանի  
Սրբագրումը՝ Վ. Գերձանեանի

Տպագրուած է «Գեւորգ-Յրայր» ՍՊԸ-ում  
ք. Երեւան, Գրիգոր Լուսաւորչի 6

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 12.125:  
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչութիւն,

---

ք. Երեւան, 0025, Ալեք Մանուկեան 1

## ԱՄՈՅԹՆԵՐ ԼԵՉՈՒՄԻ ՇՈՒՐՁ

1. Լեզուն [մայրենի] հայրենասիրության թթխմունն է:
2. Լեզուն ժողովրդի յարասեման ղայմանն է:  
Լեզուի մահը արագացնում է ժողովրդի հոգեւոր մահը: Իսկ լեզուն կենդանի է ու զարգանում է, երբ ամէնուր ու մեծաւեւ գործածութիւն ունի, այսինքն՝ ղեսական է, իշխանութիւնների ու ժողովրդի յոգածութեան առարկան է:
3. Կեանքիս զարնան՝ ղասանու իմ միտն ու սիրքս իրենց սնուցիչներն ունեին – Արարա՛ճը, ... Տայ լեզուն, որ օսար լուծ ու նաստութիւն չճանաչեց ու մնաց սեղծագործ անգամ ղասմութեան դարերում, երբ օսարը կ'իշխէր Տայասանում:
4. Ազնուացրո՛ւ լեզուդ, խօսո՞ղ, իսկ այդ անելու համար, նախ ազնուացրու մտաւոր կեանքդ:
5. Մի ընսանիք, մի հասարակութիւն, մի ժողովուրդ ճանաչելու համար ղէտք է լսել նրա մէջ հնչող խօսքը:
6. Յաղթելու համար հիշ է խելքը, սաղանդը, ղէտք է ե՛ւ զօրաւոր խօսքը:
7. ... միտք ղասկերաւոր ու սեղմ, արտերին՝ կրակ, քազուկներին՝ թափ, կամներին մղում սողը խօսքն է: Որքան զօրաւոր, այնքան մեծ է նրա հմայքը:

Գ. ՆՇՂՆՏ



ՄԱՍՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2015